



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՀՐԱՄԱ ԲԱՐՄԵԴԻ ԱՋՐԱՀԱՄՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՅՈՅԱՄԱՐՏ

ԵՐԵՎԱՆ «ԳԻՏԵԼԻՔ» 1991

Դիրքը ապագրության է երաշխավորել պր.
ֆեոր Խիկար Բարսեղյանը

Արտամյան Հ. Բ.

Ա 161 Արցախյին գոյամարտ.— Եր.: Գյուղելիք, 1991.— 174 էջ:

Գրքում շարադրվում են 1917—1991 թվականներին Արցախում տեղի ունեցած իրադրությունները:

Գառնական փառակերի, արիսիների և պարբերական մատուցի հարստությունների հիման վրա հեղինակը ամփոփ ձեռվ բացահայտում է արցախայության մզան պայքարը իր գոյատեսան և մայր Հայաստանին վերամիավորվելու համար. Այդ պայքարը շարունակվում է ետք մեր օրերում, որին նույնպես անդրադարձ է հեղինակը:

Գրքում կարելու տեղ են գրավում արիսինյին փառատպղթերն ու նյութերը, որոնց մեծ մասն առաջին անգամ է շրջանառության մեջ դրվում:


Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների և պատմարանների համար:

232878

803010413
(01) 1992

ԳՄԴ 63.3 (22) 7

Դիրքը ապագրվել է հեղինակի միջոցներով



ISBN 5-8079-0095-2

Արտամյան Հ. Բ., 1991

1917—1923 թթ. ԱՐՑԱԽԱՅԻ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Ուստի բանաստեղծ, հասարակական գործիչ, հրապարակախոս Սերգի Գորոդեցկին 72 տարի առաջ Արցախի և արցախցիների մասին գրել է «Ազգագրական, տնտեսական, լեզվական առումով լինելով միանական, Ղարաբաղը գարձել է Հայաստանի միջնաբերդը. Նրա արևելյան թևը: Այդպիսին է նա եղել անցյալում, այդպիսին է ներկայումս և այդպիսին կլինի ընդմիջտ, քանի որ առանց Ղարաբաղի տերը լինելու, անկարելի է պաշտպանել Հայաստանի սիրտը. Արարատյան գաշտավայրը»: Եվ ապա՝ «Գործունեության լայն թափ, անձնուրաց քաջություն, կյանքը վտանգելու պատրաստակամություն, ինքնավտակամություն, ինքնատիպ համառություն, շիտակ նպատակամիտություն, կենցաղի նահապետականություն՝ ապա զարարացու համակրելի հատկանիշները, որոնք առեն հայի հին առաքինությունների համակենտրոնացումն են...»¹:

Ամեն անգամ կարդալով հայ ժողովրդի մեծ բարեկամ բանաստեղծի «Ղարաբաղ» վերտառությամբ հոդվածը, ինձ թվում է, որ նա այսօր քայլում է մեր կողքին, կիսում մեր հույզերը. մասնակից լինում մեր ապրումներին, մեզ հետ վրդովվում և անարգանքի սյունին գամում Սումգայիթի, Բաքվի, Խոջալովի, Շուշիի, Կիրովարադի, Գետաշենի, Շահումյանի կոտորածները կազմակերպողներին:

«Հայոց արևելից կողմանց»՝ Արցախ աշխարհի պատմությունը լի է հերոսական դրվագներով և դրամատիզմով: Բայց այսօր առանձնապես կարևոր է իմանալ 1917—1991 թվականներին արցախյան աշխարհում տեղի ունեցած իրադրությունները², մանավանդ, որ վերջին տարիներին

¹ «Կավկազու լեզու», 23 մարտ 1919.

² Արցախի պրոլետի և այդ ժամանակաշրջանների պատմության վերաբերյալ վերջին տարիներին արժեքավոր հոգվածներով և դրերով հանդիս են եկել պատմարաններ Հ. Սիմոնյանը, Խ. Բարսեղյանը, Լ. Խուրշուզյանը, Բ. Ռզվիքարյանը, Հ. Ավետիսյանը, Վ. Միքայելյանը, Գ. Մուրադյանը և ուրիշներ:

Աղբբեշանի որոշ պատմաբանների կողմից այդ իրագարձությունները մի տաւանավոր ներկայացվել են ժուռ հայելու մեջ։ Նրանք ամեն կերպ փորձում են պացուցել, որ «էկանային Ղարաբաղը պատմական ազգրեշանաւ» կան հոգ է», որի բնակիչները «գերազանել են Աղբբեշանի կազմում ապրելու»։ Արցախը երբեք և ոչ մի գարում չի եղել ազգրեշանական հոգ։ Հիշենք, որ երբ 1804—1813 թթ. ուսու-պարսկական պատերազմի ժամանակի գիներալ Ֆիշբանովի բանակը մռանցավ Արցախի սահմաններին, վերջինիս քաջարի զավակները ընդուռաց գնացին նրան։ Ռուսական բանակի օգնությամբ Արցախն ազատագրվեց պարսկական լծից և միացվեց Ռուսատանին։

1867 р. գեղահմբերի Զ-ին Ալեքսանդր երկրորդ ցարը ստորագրեց մի կանոնագրություն («Կովկասյան և Անդրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխումների մասին»), որը գործողության մեջ դրվեց 1868 թ. Հունվարի մեկից: Այդ կանոնագրության համաձայն Անդրկովկասում սահմանվեց մի նոր նահանգ: Հին Գանձակը վերանվանվեց Ելիզավետպոլ, որի անունով էլ կոչվեց նոր նահանգը: Նրա մեջ մտան Արցախը, Զանգեզուրը և այլ Հայկական գավառները: Կանոնագրությամբ գավառների սահմանադժման հիմքում դրված սկզբունքի հիման վրա նրանցից ոչ մեկը իր գրաված տարածությամբ շահեռ է գերազանցեր 6500 քառ. վերագրանքում՝ 10 000 անտեսությունից կամ 80 000 մարդուում:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին նահանգի մեջ մտած Զերբարձիլիք, Շուշիք, Կարյագինոյի, Զանգեզուրի և Եղիզավետպոլիք գավառներում հայ բնակչության թիվը հասնում էր 300 հազարի և կազմում էր բացարձակ մեծամասնություն՝ ազդեցանցիների և մյուս էթնիկական խմբերի համեմատությամբ:

1917 թվականի փետրվարյան բռնժուտ-գիմուկատական հեղափոխությունը հետո հավանություն տրվեց Հայության նվազագույն պահանջներին. ժամանակավոր կառավարությունը արդարացի գտավ Անդրկովկասի նախագծված վարչական նոր բաժանումը, ըստ որի Արցախը, Գանձակը, Ալիևը և այլ հարուստ և նախիշնանք ճանաշվեցին որպես Հայկական տարածքներ⁴.

³ Зв. «Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862 — 6 декабря 1872 гг.», Тифлис, 1873, с. 49—50.

4 Sk'а «Հայրենիք» (Բասման), 1927, № 11, էջ 102.

Փամանակավոր կառավարությունը 1917 թ. մարտի 9-ին ստեղծեց Անդրկովկասյան Հատուկ կոմիտե (Օգակոմ), որի կարգադրությամբ ըստեղծվեցին գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ։ Մարտի 13-ին կազմակերպվեց 40 հոգուց բաղկացած Ղարաբաղի գործերի կոմիտե՝ տարածքի կյանքը ղեկավարելու համար։

1918 թ. սկզբին Ելիզավետպոլը վերանվանվեց Գանձակ (Գյանջա), Այն դարձավ Անդրկովկասում Հակահեղափոխական ուժերի կենտրոններից մեկը։ Այստեղ էին հավաքվել ամենահետադեմ կալվածատերերն ու Հակահեղափոխական ուժերը և մուսավաթականների գլխավորությամբ ձգտում էին իրավուրծել պանթուրքական իրենց ծրագիրը։ Գանձակ էին շտապում օսմանյան թուրք դաշինքներ։

ինչպես հայտնի է, 1918 թ. գարնանից սկսած թուրքական նվաճողները ձգտում էին դեպի Բաքու՝ խեղդելու Անդրկովկասում հեղափոխության օր-րանը:

Աղբբեշանի մուսավաթական նորաստեղծ կառավարության դրդմամբ
Թուրքիան Հայաստանի Հանրապետության կառավարությանը ստիպեց
Նախկին Ելիզավետպոլի ամրող նահանգը ճանաչել մուսավաթականների
տիրապետություն, և Զանգեզուրը, Արցախն ու Գանձակի հայկական գա-
վառները հայտարարվեցին մուսավաթական Աղբբեշանի մաս:

Մուսավաթականները բացահայտ և հետեղական պայքար էին մղում Անդրկովկասում տաճիկների գերիշխանության հաստատման համար: Նրանք Գանձակում անհամբեր ապասում էին հայ ժռղովրդի դաշիճ էնվեր փաշայի եղրոր՝ նուրի փաշայի ժամանմանը: Այդ օրերին էնվեր փաշայի հրամանով Թավլիզի վրայով թուրքական կանոնավոր զորքեր էին փոխադրվում դեպի Գանձակ, որոնք տեղ հասան մայիսի 25-ին: Հավաքակայան ժամանեց նաև նուրի փաշան, որի հրամանատարության տակ դրվեց «վայրի գիվիզիան»: Նրան միծ սիրով ու նվիրվածությամբ օգնում էր ցարական բանակի գներալ-լեյտենանտ Ալի ազա Շիխլինսկին: Նուրի փաշայի հիմնական նպատակներից մեկն էր, ինչպես նշել է Լեռն, «որևէ կերպով անվնաս դարձնել Լեռնային Ղարաբաղը՝ դյուրացնելու իր ուժերի առաջիւղացումը դեպի Բաքու»:

Արցախը խոշնդոտում էր Զուլայի գծով և Գանձակից հվախ շարժվող թուրքական զորամասերի միավորմանը։ Թուրք հրամանատարությունը վճռեց օգտագործել այդ տարածքում կուտակված մուսուլմանական հրոսակախմբերին և արտագացնել նշված զորամասերի միավորումը։ 1918 թ.

Տ ԵՐԱ. ԱՆԳԼՈՎԻՐԵ, ԹԻՖԼԻՍ, 1925, էջ 225.

գարնանը Դաշտային Ղարաբաղի մուսուլմանական գյուղերում, կարդու ենք արխիվային փառաթղթերից մեկում, երկացել էին թուրք զինվորական հրահանգիչներ ու էմիսարներ: Նրանց մեծամասնությունը Կասպից ծովի նարգիս կղզում տեղաբաշխված գերերիների ճամբարից տարրեր ձեռքով աղատված տաճիկ ասկյարներ էին: Թուրքերը հավաքագրում էին այն մուսուլմաններին, ովքեր պատրաստ էին իրենց հովանու ներքո կովել հարևան ոչ մուսուլման ժողովուրդների դեմ: Դրությունը՝ հատկապես սրվեց 1918 թ. ապրիլից, երբ Ղարաբաղի մուսուլմանական բոլոր բնակավայրերում երևացին թուրքական պարետներ և իրենց ձեռքը վերցրին ամբողջ իշխանությունը: Նրանք զենք ունեցող տեղի բոլոր մուսուլմաններից կազմակերպեցին հրոսակախմբեր: Հայերի դեմ հարձակումներն ուղեկցվում էին թուրքերին հատուկ բարբարություններով, դաժանությամբ ու խժություններով: Մասնաւթյունները սովորական բնույթ ընդունեցին, հիմնահատակ արվեց Ամարասի սուլթան Գրիգորիսի վանքը, եռնաշենում (ներկայումս՝ Մարտունի) և այլուր ավերվեցին հարյուրավոր տներ, Հայաստանի Հանրապետության կառավարությանը հզած Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի 1919 թ. հունվարի 31-ի նամակից իմանում ենք, որ 1918 թ. մայիսից սկսած Ղարաբաղում թափառող տաճիկ սպաները նախ օսմանյան կառավարության և ապա Աղրբեշանի անունից սկսեցին Ղարաբաղի հայությանը վերջնագրեր ներկայացնել՝ պահանջելով հպատակություն հայտնել և հանձնել զենքը: Հակառակ դեպում սպանելով բնաշնչել բնակչությանը:

Ահա այսպիսի պայմաններում, Ղարաբաղում գործող քաղաքական կուսակցությունների նախաձեռնությամբ, 1918 թ. հունվարի 22—26-ին Շուշիում անցկացվեց Ղարաբաղի հայության առաջին համաժողովը, որին յուրաքանչյուր գյուղից մասնակցում էր մեկական պատգամավոր: Հետագայում, մինչև 1920 թվականի մայիսի վերջը, հրավիրվեց այդպիսի ինք համագումար ևս:

Ղարաբաղի հայության առաջին համագումարը քննարկեց մուսավաբականներին դիմադրություն ցույց տալու, վարչական ղեկավարություն ընտրելու և երկրամասի ճակատագրի հետ կապված մի շարք այլ հարցեր:

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (արևոտեն՝ ՀՀ ՊԿԱ), գ. 200, ց. 1, գ. 309, թ. 124.

⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 205.

⁸ Այդ մասին առև. Հ. թ. Արշամայան, Ղարաբաղի հայության համագումարների պատմությունից (1918 թ. հունիս—1920 թ. մայիս), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1986, թ. 1, էջ 17—36.

Համագումարը լեռնային Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած Ղարաբաղի ժողովրդական կառավարություն: Համագումարը մերժեց Աղրբեշանին ենթարկվելու պահանջը, որոշեց խիստ միջոցներ ձեռնարկել թուրք-թաթարների կողմից կազմակերպվող վայրագությունների ու կողովուտների դեմ: Կանոնավորել վարչական ու գատական հիմնարկների գործունեությունը, ճանապարհները բաց անել անասնապահների առջև, հոգ տանել նրանց անվտանգության համար և այլն: Ղարաբաղի հայության առաջին համագումարը, ժամանակի վկայությամբ, ստեղծելով կառավարություն, դրանով իսկ հոչայամուկի վկայությամբ, ստեղծելով կառավարություն, դրանով իսկ հոչայամուկի վկայությամբ՝ «անկախության իրավունքը», որը մեծ տհաճություն պատճառեց մուսավաթականներին:

Արցախի հայության վիճակն ավելի ծանրացավ թաքվի կոմունայի անկումից հետո՝ 1918 թվականի օգոստոսից Արցախը կտրվեց Թաքվից և Զանգեզուրից: Նույի փաշան շտապում էր որքան հնարավոր է շուտ հնազանդեցնել երկրամասի ինքնորոշման գոտով հայ բնակչությանը: 1918 թ. օգոստոսի 18-ին նա զրաբարտչական բովանդակությամբ մի կոչով գիմեց հայերին, որտեղ ասված էր. «Իմ ստացած տեղեկությունների համաձայն, վերջին ժամանակներու Շուշու և Զանգեզուրի գավառների հայերը՝ գտնվելով գազանի և հայտնի հարաբերությունների մեջ Գանձակի գավառի լեռնային մասի հայերի հետ ու խրախուսվելով... Անդրանիկի կողմից... հարձակվում են մուսուլմանական գյուղերի վրա և կատարում մասսայական սպանություններ ու կողովուտներ»: Ապա փաշան հայտարարում է, թե «Թուրքերը միշտ էլ պաշտպան են եղել իրենց տարածքի ազգերին»: Նույի փաշանը անամոթաբար շարունակում է շաղաքատել, թե «Թուրքին շատ պաշտոններում հայեր են, նրանք՝ հայերը, մեր երկրում բոլորից լավ են ապրում: Օտարերկրացիների դրդմամբ... հայերը սկսել են զենք կուտակել, որի հիման վրա էլ ծագել է թշնամության հրդեհը հայերի թուրքերի միջև»: Այսուհետև խորհուրդ է տալիս խղճայի իրենց երեխաններին և ընդունել, թե «Ղարաբաղը կազմում է Աղրբեշանի Հանրապետության անքակտելի մասը»: Վերջում նա սպառնում է զենքի դիմել, եթե հայերը շղաղարեցնեն դիմադրությունը¹⁰:

Դրանից հետո նույի փաշան հայերից և թուրքերից կազմված պատվիրակություններ է ուղարկում Շուշի, որպեսզի բնակչությանը նախա-

⁹ Տե՛ս «Մշակ», 23 փետրվարի 1919:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, 18 փետրվարի 1919:

պատրաստեն առանց դիմադրության ընդունելու թուրքական հրամանաւ տարրության և Աղրբեջանի մուսավաթական կառավարության կարգադրությունները¹¹:

Նուրի փաշայի վերոհիշյալ կոչում փաստորեն առաջին անգամ պաշտոնական ձևով Ղարաբաղը հայտարարվում է Ադրբեյջանի մաս և բնակչությունից պահանջում ենթարկվել նրան:

ինչպես թե «Ղարաբաղը կազմում է Ադրբեջանի Հանրապետության անքակտելի մասը», այդ ո՞ր օրվանից, ի՞նչ հիմունքներով: Խսկ ո՞վ էր հարցը և զարարացիների կամքը: Այս հարցերին պատասխանելու համար հրավիրվեցին Ղարաբաղի հայության երկրորդ, ապա՝ երրորդ համագումարները (սեպտեմբերին), որոնք մերժեցին թուրք մուսավաթական ների պահանջը: Թուրքական հրամանատարությունը թաքվում 30 հազար հայերի բնաշնչումը (1918 թ. սեպտեմբերի) շատ քիչ էր: Համարում: Նուրքի փաշան որոշեց պատժել նաև ըմբուտ ղարաբաղցիներին, մանավանդ որ նրանց առաջին համագումարից հետո միանգամայն ակնհայտ դարձավ, որ Արցախ աշխարհը չը ընդունում Ադրբեջանի իշխանությունը և ճգոտում է միանալ մայր երկրին՝ Հայաստանին: Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը փորձում էր թուրք բարբարուների օգնությամբ վերջ տալ Արցախի ինքնուրույնությանը և տիրել նրան: Դրա համար էլ մուսավաթական կառավարությունը «թուրքական բանակին ուղարկում է, որպեսզի զենքի սւով Ղարաբաղը միացնի իր տարածքին»¹²: Թուրք նվաճողները մուսավաթական հրոսակախմբերի ամենագործուն աջակցությամբ Արցախը շրջապատեցին բոլոր կողմերից՝ կտրելով մյուս հայկական շրջաններից: Աղջամամանեց թուրքական երկրորդ դիվիզիայի հրամանատար Քեմիլ Զահիդ բեյը: Նա նուրքի փաշայի անունից մի վերջնագիր ուղարկեց Ղարաբաղի կառավարությանը՝ շդիմագրելու և հպատակվելու պահանջով: Այդ օրհասական օրերին Ղարաբաղի և Զանգեզուրի քաջարի հայությանը հույս ու հավատ, մարտնչելու կորով էր ներշնչում հայոց գոյամարտի քաջարի երրոր զրուալը Անդրանիկը: Նա 1918 թ. օգոստոսի 3-ից մինչև 1919 թ. ապրիլի 1-ը իր զորամասով գտնվելով Գորիսում և Սիսիանում՝ սերտ կապերի մեջ էր Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի և գավառների զրոտը Հայամանատարների հետ: Քանի որ նուրքի փաշայի զորաբանակը վտանգ սպառնում ոչ միայն Ղարաբաղին, այլև ողջ Զանգեզուրին, ուստի Անդրանիկի այստեղ գտնվելը պատասխան բախտորոշ առաքելություն

պետք է համարել, Ղարաբաղի հայությունն այդ պայմաններում իր Փըթ-կությունը տեսնում էր Անդրանիկի օգնության մեջ։ Խըք՝ Անդրանիկը, երբեք չէր թաքցնում իր նպատակը՝ շարժվել դեպի Շուշի և օգնության ձեռք մեկնել Ղարաբաղի հայությանը։

Թուրքերի և մուսավաթականների դրդմասր այդ օրերին աւդրաբերություն ունեցած է պատճեն ելան Զանգեզուրի տարածքի մուսուլմանները: Անհրաժեշտ էր կանխել արյունահեղությունը, բացատրական աշխատանք տանել, ամ-րապնդել թիկունքը: Ուստի Անդրանիկը հետաձգեց Ղարաբաղ մտնելու իր մտադրությունը: Չնայած դրան, Անդրանիկը մնում էր զարարադցիների ամուռ թիկունքը:

Թուրք հրամանատարի վերջնագիրը անակնկալի շրերեց Ղարաբաղի աշխատավորներին։ Այդ օրերին Ազգային խորհրդի և գյուղացիության շրջանային համագումարների կողմից գավառներում և գավառակներում ստեղծվեցին զորակայաններ և նշանակվեցին զորահրամանատարներ։ Վարանդայի զորահրամանատարն էր Սոկրատ բեկ Մելիք-Եահնազարյանը, Դիզակինը՝ Արտեմ Լալայանը, Խաչենինը՝ Ալեքսան Դային, Զրաբերդինը՝ Բագրատ Նազարյանը։ Զորակովածների թիվը մոտ եքեք հազարը էր։ Հնարավոր էր այդ թիվը հասցնել 10 հազարի, սակայն պակասում էին միջոցները, առանձնապես զինամթերքը։ Երկրամասի բնակչության մեծ մասը լի էր թուրք նվաճողներին և մուսավաթականներին դիմադրելու վճռականությամբ։ Սակայն Ղարաբաղի հայության թե՛ երրորդ համագումարը և թե՛ Ազգային խորհուրդը որոշեցին զենքի շղիմել՝ գրտնելով, որ գավառը պատրաստ չէ դիմադրության և զանում էին հարցը լուծել խաղաղ ճանապարհով։ Թուրքական բանակը սեպտեմբերի 22-ին մտավ Լեռնային Ղարաբաղ՝ ավերելով Ասկերանի շրջակալիքի Դահրավ, Վարազարուն, Փիրշամալ, Նախիչևնիկ, Քյափուկ, Խրամորթ, Խանաբադ, Ղլիշրաղ, Քարագլուխ, Միրշալու գյուղերը։ Կողոպտվեցին նաև տասնյակ այլ գյուղեր։ Թուրքական զորամասերը Զահիդ բեյի հրամանատարությամբ և գանձակեցի կալվածատեր, մուսավաթական կառավարության պաշտոնական լիազոր Խմայիլ խան Զիաթխանովի ուղեկցությամբ շարժվում են զեպի Շուշի՝ ճանապարհին ավերելով ամեն ինչ։ Արցախի ողջ հայությունը ուղրի ելավ փրկելու հայրենիքը¹³։ Թուրքմուսավաթական

13 **Թուրք բարերարուների** գել արցախայության պայքարի մասին տես Հ. Բ. Արշակունյան, Թուրքական Խվաճողների գել Ղարաբաղի աշխատավորության մզած պայքարի պատմությունը (1918 թ. գուստոս-հոկտեմբեր), «Բանքեր Հայաստանի արխիվների», 1989, մ. 2, է., 162-177:

Հորդաները ստիպված էին մարտով վերցնել ամեն մի բնակատեղի: Այս պիսով և կուվեց Ղարաբաղի հայ գյուղացիության փառապանծ հերոս պատումը թուրքական նվաճողների դեմ¹⁴:

Թուրքական տռաշատար զորամասերը Շուշի մտան սեպտեմբերի 24-ին: Թանակի հետեւց, ասված է արխիվային փաստաթղթերից մեկում՝ շարժվում էր «տեղական թաթարների հազարավոր խուժանը՝ գրավվագուղերն ու քաղաքը ավերելու և թալանելու նպատակով»¹⁵: Թուրքական հրամանատարությունը քաղաքում մտցնում է ռազմական գրություն: Նրանք զինաթափում են հայերին, բանի կերպով վերցնում անկողին, սպիտակեղեն: գրամ: Քաղաք մտած թուրք ասկյարների թիվը համեստ է 2000-ի:

Թուրքական հրամանատարությունը լուծարքի ենթարկեց Ղարաբաղ կառավարությունը: Քաղաքում սկսվեցին ձերբակալություններ ու խռովարկություններ: Ավելի քան 60 մտավորականներ, այդ թվում և Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի նախագահ Եղիշե Խշխանյանը, ձերբակալվեցին ու ներգեցին բանտ:

Թեսդեմ Շուշին ընկավ: ստկայն Արցախի գավառները մնացին անապահության մեջ: Թուրքական զորամասերը մուսավաթական հրոսակախմբերի հետ միահանձն հարձակում գործեցին Զրաբերդի և Վարանդայի վրա: Ամենուրեք արցախցիները կազմակերպեցին ժողովրդական աշխարհազորային ջկատներ և սկսեցին մարտնչել իրենց հողի և ընտանիքի պատվի համար: Այն օրերին, երբ թուրք մուսավաթական նվաճողները շարժվում էին գեղի Շուշի, ահեղ մարտեր տեղի ունեցան Զիվանշիր գավառում:

Շուշիի անկումից հետո թուրք-թաթարական խառը մի զորամաս, զինված ծաներ գնդացիրներով՝ մտավ Զիվանշիր և շարժվեց Մարտակերտի ուղղությամբ: Սարալանշի գյուղացիները իրենց փոխադրական միջոցներով օգնության են հասնում տափաստանի հայ գյուղացիներին և իրենց մոտ փոխադրում նրանց ընտանիքները, հացն ու բամբակը:

Զիվանշիրի հայերի ինքնապաշտպանության կենտրոնը դառնում է Մարտակերտ գյուղը, որ փակում էր տափաստանից դեպի սարերը տանող գլխավոր ուղիներից մեկը: Թահիճները՝ թուրք սպա Քյամիլ բեյի, թժիշկ Դ. Լեմբերանեսկու, «վայրի դիվիզիայի» սպա Օ. Շիրին բեկի, հայտնի ավագակ Շահմալիի, կալվածատեր Կալարեկովի և ուրիշների առաջնորդու-

14 Յ. Պարզյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովառություն 1917—1918 թթ., Երևան, 1964, է 463.

15 ՀՀ ԳԳ Ա, գ. 200, լ. 1, գ. 49, թ. 47.

թյամբ, երեք անգամ հարձակվում են Մարտակերտի վրա և ամեն անգամ պարտված հետ շպրտվում: Աշխարհազորայինները կովում էին անձնվերխիզախությամբ: Նրանց համար նահանջի ճանապարհ չկար: Կռվող տղամարդկանց օգնում էին կանայք, ժերունիներն ու դեռահասները: Նրանք թիկունք էին տեղափոխում վիրավորներին ու զոհվածների զիակները, թիկունք էին տեղափոխում վիրավորներին ու զոհվածների զիակները, կավողներին հասցնում սննդամբերք, փամփուշտ և անհրաժեշտ այլ պարակավողների: Թուրք-թաթարները՝ շղիմանալով հայերի անընդհատ գրուներին, նահանջում են: Նրանք ճանապարհին ձերբակալում են Զայլու գյուղի և պատվավոր բոլոր մարդկանց, ուղարկում թարթառ կայանը, որտեղ և բոլորին տանջամահ են անում¹⁶:

Զիվանշիրի հայերի հերոսական դիմադրությունը կանխեց թուրք-թաթարների մուտքը Զրաբերդի շրջան և բնաշնչումից փրկեց տեղի հայությանը:

Թուրքմուսավաթական նվաճողներին առանձնապես խիստ անհանդատություն էին պատճառում Վարանդան ու Դիզակը, որոնք մերժել էին անձնատուր լինելու պահանջները: Թուրքական հրամանատարությունը պահպանում է Վարանդայի վրայով մի զորամաս ուղարկել Կարյագին՝ միավոր Մուզանի գաշտավայրով դեպի Ղարաբաղ շարժվող թուրքական մեկ ուրիշ զորամասի հետ և միասնական ուժերով գրավելու վարանդան և ուրիշ զորամասի հետ և միասնական ուժերով գրավելու վարանդան և Դիզակը: Թուրք-թաթարական զորամասը, բաղկացած ավելի քան 400 անդամական հայարդություններով, ուժագրանքում է Վարանդայի Մսմնա գյուղում: Զորամասը զեկագարում էր թուրքական բանակի բարձրաստիճան պայա Քյազիմ բեյը, որը Բարվի սպանդի և հայերի նկատմամբ զորժագում զարբարությունների կազմակերպիչներից էր:

Դիզակի զորամասամանատար Արտեմ Լալայանը, ինչպես վկայում է Ժամանակակիցը, զնում է «Թուրքական այդ զորամասը ոչնչացնել Վարանդայում, նախքան նրա Կարյագին հասնելը»¹⁷: Նա իր «զինակիցներից մեկին՝ Դիզակի կեմրակում գյուղացի Ալլանիկին, խիզախ ու փորձված մի երիտասարդի, կարգադրում է Դիզակի և Վարանդայի զինված ուժերով զարդել թուրքական զոկատը»¹⁸:

Ալլանիկը՝ Ալլան Սարգսի Մուրադիսանյանը, ծնվել է 1888 թվականին Հրավոր գյուղացու ընտանիքում: Պատանի տարիքում հոր հետ մեկնում է

16 Տե՛ս Փաստաթուղթ № 1, նաև՝ «Մշակ», 18 փետրվարի 1919,

17 Մատենադարան, Այլ և այլ հեղինակների արխիվ, թուղթ 240^թ, լ. 74, վաչերագր Ա29, էջ 160 (այսուհետեւ՝ Մատենադարանի...):

18 Նույն ուղղում:

Բաքու, որտեղ բանվորություն է անում նախ շինարարությունում և ապա՝ արանսպարում: Մոտիկից շփմելով բանվորների հետ, տեսնելով նրանց ծանր վիճակը, կեղեքումը՝ ատելությամբ է լցում շահագործողների դեմ և վերադառնալով հայրենի գյուղ՝ փորձում է սատար կանգնել զբավորներին ու հաւածվածներին Ըմբուտ երիտասարդը շատ ծանր է տանում թուրքական իշխանությունների կողմից Արևմտահայաստանում կազմակերպած հայոց եղեռնի մասին լուրերը: Նա ամեն կերպ օգնում է Ղարաբաղ հասած փախստականներին: Երիտասարդներից կազմում է մի շոգավառապետի հրամանով ձերբակալվում է, ճանաշվում է որպես «պատշական խռովարար» և տարվում Ծուշիի բանու: Տարիուկես անց նրան աշխատությունն է բերում Փետրվարյան հեղափոխությունը: Վերադառնալով գյուղ, ժամանակում է ակտիվ գործունեաւթյուն: Արցախահայության համար դժվարին այդ օրերին նա կազմում է մի շոկատ, ժողովում բնակչության մոտ պահված զենքը, անցկացնում զինավարժություններ: Իսկ երր լսում է, որ թաւրքերն Աղդամի կողմից ներխուժել են Ղարաբաղ, իր շոկատով շտապում է օգնության հասնել Ասկերանի պաշտպաններին: Այստեղ էլ ընկերանում է վարդաշենցի Սաղաթել Գասպարյանի հետ: Վերջինս վերադառնալով առաջին աշխարհամարտից՝ իրենց տունը գրանում է ավեր: Թուրքերը տարել էին ամեն ինչ և սրախողիսող արել ընթուրքի բոլոր անդամներին: Նա երդվում է վրեժինդիր լինել: Լսելով, որ Սաղաթելը կողք կողքի հերոսարար մարտնչում են Ասկերանի պարիսպների տակ, Ասկերանի անկումից հետո Ասլանիկն իր շոկատով վերադառնատարաստվում նոր մարտերի: Դիզակի զորահրամանատար՝ հին ֆիդայի և պարսկական հեղափոխության մասնակից Արտեմ Լալայանի ուղագրությունը գրավում է Ասլանիկը: Նրան նշանակեցի Վարանդա մտած թուրք-թաթարական զորամասը:

Թշնամու Վարանդա մտնելու լուրը արագորեն տարածվում է ամբողջ Ղարաբաղում: Գավառներում կազմակերպվում են աշխարհազորներ: Ա-Սմբան, Հաղորտի, Սուշկապատ, Ճարտար, Սոս, Քերք, Քարահոնչ, Մաշտիշեն (այժմ՝ Կոլխոզաշեն), Խերխան, Հերէներ, Սովատեղ, Սիտո-Առաջին հերթին զենք են վերցնում նրանք, ովքեր մասնակցել էին առաջին

աշխարհամարտին, կազի Սարգարապատում, Ապարանում, Ղարաբիլսա-յում և Անգրանիկի շոկատում:

Աշխարհազորայինները՝ մոտ 250 հոգի, ամբանում են Սաշագիշենի արեմայան սահմանների բլուրների և Ղավախանի ու Սամնայի միջև արևմտակած ձորակի բարձունքների վրա: Մեկ որդիշ շոկատ փակում է Սամնայից յած գանվող, գեղի Ամարասի ձորը տանող ճանապարհը: Փակում են նաև գեղի հետ՝ Ծուշի տանող ուղիները: «Տաճկա-ադրբեջանական գումարը կազմում է գեղգերին լավ անցյակ Արքամ Կիսիրեկյանը, — ուսում է անկարգություններ՝ մորթուում են թալանները, ազերում են մեղվանցները և նույնիսկ բռնարարություններ կատարում: Այս ամենին իրազեկ են դառնում գրանցից մի քանի հարյուր բայլի վրա գտնվող զինվորները, որոնք սպասում էին լրտանալում»²⁸:

Հոկտեմբերի 18-ի առավույան Սամնայի բարձունքը թաղված էր մասնախուզաւած: Թուրքերը իմանալով, որ շրջապատված են, սրսշում են գնալ Մուշկապատ-Ճարտար ուղղությամբ և այնտեղից խնուզով անցնել Կարյագինս: Այստեղ է հասնում Ասլանիկը իր երկու հարյուրից ավելի մարտիկներով: Ստանձնելով ընդհանուր հրամանատարությունը՝ նա ուժերը սրագրուում է այնպես, որպեսզի թշնամին շկարողանա դարս գույ շրջապատումից:

«Թուրք-թաթարները վաղ առավույան դուրս գույ գյուղից, — պատմում է այն ժամանակվա Ղարաբաղի Ազգային խորհրդի սովորական դործերի կառավարիչ Հարություն Քումյանը, — մոտենում են ձորով անցնող ճանապարհին և հանկարծ նրանց վրա կարկափ պիս սկսում են զեղակներ տեղալու»²⁹: Թշնամին շարունակում է համառորեն դիմադրել: Ասլանիկը դիրքից էր անցնում, բայրին սպերում: Ամրոց օրը չէին լուս կրակոցները, Աշխարհազորայինները շրջապատման օպակն աստիճանաբար նեղացնում են: Նրանք մարտնչում էին հերոսարար: Քարահոնչի եղբայրներ Սմբատ ու Հարություն Ղահրամանյանները կողք կողքի զավում են, բայց ոչ մի քայլ հետ շեն նահանջում փակելով թշնամու փակում են, բայց ոչ մի քայլ հետ շեն նահանջում փակելով թշնամու փակում է: «Մենք մեր ազգի աղաւությանը զոհեցինք»:

Կորիվը շարունակվում է մինչև մուխ ընկնելը: Վերջապես հաշողվում է շախախիկ թուրքական զորամատար: «առկյարներից աղաւում են քշեցիախիկ թուրքական զորամատար»:

²⁸ ՀՀ 994 թ., գ. 314, ց. 1, գ. 34, թ. 74.

²⁹ Սատենագրան, ..., էջ 100.

ԱՅ, սրբներ կարողանում են մի կերպ վկույներն ազատել...» Հազի՞ Փրկվում է 60 հոգի:

Սամենայի ճակատամարտում տարած փայլուն հաղթանակն էլ ավելի է պահպան զարարադցիներին: Եվ երբ թուրքական հրամանատարությունը մի քանի օր անց մի նոր, ազգելի խոշոր ջոկատ, բաղկացած 600—700 ակարներից, սպարկում է Վարանդա, այն խուճապահար Շուշի է վերաբանում Տօնեավազ (այժմյան Կարմիր գյուղ) շհասած, հայտարարելով, որ Հայերը փակել են բոլոր ճանապարհները: Թուրքերը և թաթարական խուժանը ստիպված հեռանում են Ղարաբաղից:

...Ամենուր խռոված էին Մամնայի հերս Ասլանիկի մասին և նրա գովքն էին երգում. Ասլանիկն արժանացավ Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի և ընդհանուր հրամանատարի գովասանքին. Վերադառնալով Դիզակ, նա ստանձնում է պյուղերի և հարավարեւմտյան սահմանների պաշտպանության դժվարին խնդիրը: «Հաճախ էլ մենքում էր Եռչի, — նշում է Հարություն Թումյանը, — տեղեկություններ տանելու քաղաքի անցությանը...»²¹

Ասլանիկ Սուրադիանյանի համար հայրենիքի, իր մայր ժողովրդի պաշտպանության ամեն ինչց զեր էր: Նա անխնա էր ամեն տեսակ շահպարծողների հանդեպ: Աւա թե ինչու Ասլանիկի շուրջը դավեր հյուտվեցին: 1919 թ.՝ գարնանային մի օր, երբ Ասլանիկը Հադրութից գյուղ էր գնում, զահվամ է նենողուն արձակված զնդակից: Լեռնիդ Հովումը Սամնայի հերոսին պատմվածք է նվիրել՝ «Թաշարի Ասլանը և նրա որդինեալ: Արցախցիները որոշել են հուշարձան կանգնեցնել Սամնայի հերոսամարտի պատվին»:

1918 թ. զերշացավ առաջին աշխարհամարտը, Պարտված Բուլղարին Անդրկովկասուա փոխարինեցին անպիտացիները, Բաքու ժամանեցին Անտանոի Հրամանատարության ներկայացուցիչները, Բաքվի գեներալ-նահանգապետ Հաջակվեց անզիտիական գեներալ Թոմասնը, Նրանք իրենց առջեխնդիր էին դրել աիրանայ Բաքվի նավթին, Անդրկովկասուա հաստատել անզիտիական իմպերիալիզմի գերիշխանությունը, այն գարձնել հեղափոխական Ռուսաստանի գեմ պայքարելու ստրատեգիական հենակետ։ Թողարկեների գեմ մարտնչելու համար մուտագաթական Ազգբեջանը անզիտիական Հրամանատարությանը խստացավ արամագրել, 45000 սինդու-

21 Language and Power

22 bought mbaqq, 11 dmas, p. 47.

²² Леонид Гуруц. Карабахские перекрестья. Москва, 1981, ст. 271.

24 Sk' a 22 994L, p. 370, L. 1, 2, 11, E. 11

14

Անգլիական ուժերը շուտով փաստորեն զորագրավեցին ամբողջ Անդր-
կովկասը և իրենց ձեռքը վերցրին երկրամասի տնտեսական ու քա-
ղաքական կյանքի զեկավարությունը. Այդ ժամանակ Անդրկովկասում կա-
յին անգլիական 30 հազար զինվոր և սպա. Անգլիական հրամանատարու-
թյունը, ընդառաջելով մուտավաթականների նկրտումներին և հետևելով
թուրքերի օրինակին, Ղարաբաղի հայությունից պահանջեց ճանաչելու
Աղրբեզանի իշխանությունը՝ սպասված գիմադրությունը հաղթահարելու
համար ձեռնարկելով հարկ համարած բոլոր միջոցները²⁵.

Հազրդ օրը Անդրանիկի մոտ է գալիս Անտառեար Առաջապահ արք Նրան հանձնում Թոմասինի նամակը, Անդրիացի գեներալ-նահանգապետը սպառնում էր, որ եթե շկատարեք ինձնից ստացված հրահանգները գուք անձամբ պատասխան կտաք ձեր գործողությունների հետևանքով առաջացած արյունահեղության համար: Իմ հրահանգը կատարելուց ձեւ ամեն տեսակ խուսանավումը անպայման լրջորեն կանդրագառնա հայ ժողովի հարցի վրա, երբ այն կդրվի խաղաղության կռնչերանսում...»²⁶

Թոմասին հզած պատասխան հեռագրում զորավար Անդրանիկը բացարձություն է, թե Շուշի գնալու իր մտադրությունը կարեւոր հիմքեր ունի սրբազն ուղղելիք մեկ տարի է, ինչ թաթարները կտրել են կտպը Ղարա

²⁵ Արքայականիան եղածամբ անդիսական գործարարությունը զարդարության ժամկետին մասին առ Գ. Բ. Աբրամյան. «Политика английских завоевателей в отношении к Арцаху (ноябрь 1918 — август 1919 гг.)» «Вестник общественных наук», АН Арм. ССР. 1919. № 7. ст. 12—23.

22-99444, §. 370, p. 1, q. 39, p. 2.

բազի և Զանգեղուրի հայերի միջեւ Զարուխ և Հագարա գետերի ձորով ընկած են մի քանի հարյուր այս հայ զինվորների դիակները, որոնք ապա մաճակատից Ղարաբաղ էին զերազանում Զանգեղուրի վրայով։ Հովհանոս ամիսներին բարբարոսաբար ոչնչացվեցին Հազարավոր առաճաշայ փախտականներ, որոնք ցանկանում էին բնակություն հաստակել Ղարաբաղում։ Մի շաբթ հայեական գյուղերի, այդ թվում և Ղարազավի ազերումը, անընդհատ ասպատակությունները, թալանը և թաթարների կողմից Զանգեղուրում կազմակերպված հայերի կոտորածը, որոնք հետավորություն չունենալով զերազանալ հայրենիք՝ Ղարաբաղ, մնացել էին Զանգեղուրում և, զերջապես, Ղարաբաղում հայերի նկատմամբ ազրբեցանցիների բարբարոս զերարեմունքը՝ այդ ամենը ստիպեցին ինձ երկու երկրամասերը կապելի իրար հետաշ։

Շազմական միսիայի պահանջով Անդրանիկը զերազանում է Գորիս նա, համոզված լինելով, որ կես ճանապարհից զերազանալը սրով ցավով կը դուռնանեն արցախցիները, մի հրամանավ դիմեց Արցախի աշխատավորներին, որով կոչ էր անում նրանց խաղաղվելաց։ Նա ուզում էր հավատալ, որ Արցախը, ինչպես և խլված մյուս տարածքները կվերադարձնեն Հայաստանին ու հայ ժողովուրդը ձեռք կբերի անդորրություն։ Միամասն թյուն էր գա, թէ՞ գիշանագիտական փորձի պահասություն։ Դժվար է պատասխանել։ Սակայն փաստ է այն, որ Անդրանիկի Գորիս զերազանալուց հետո ակտիվացան մուսավաթականները և Աղրբեշանում ապատան գտած թուրք սպանները նրանց զեկազարությամբ թաթարական մութարքները կատաղի հարձակումներ էին գործում հայեական գյուղերի վրա, կողոպտում, ավերում և կոտորում բնակիչներին։ Նրանք ավերածություններ գործեցին Դիզակի Արփա-Դյագուկ, Թեղ-Խարաբ, Սպիտակաշեն, Պետրաշեն, Խեմարեդ, Դուզուկի, Խանձունոր, Վարանդայի ճարտար, Մաշադիշեն, Սոս և այլ գյուղերում։ Եվ այդ ամենի նկատմամբ անզիփական հրամանատարությունը կույր և խուզ գտնվեց, որովհետեւ, ինչպես գրել է լեռնա, նա «Բաքվում մուսավաթի հետ արգեն սակարգություն էր սկսել Ղարաբաղն ու Զանգեղուրը Աղրբեշանին ժամելու մասին»²⁷։

Խշպես արգեն ասվեց, անզիփական նվաճողները թուրքերի նման ձրդում էին Արցախը ևնթարկել Աղրբեշանին։ Արցախցիները կտրուկ մերժում են նրանց այդ անարդարացի պահանջը։ 1918 թ. դեկտեմբերի 30-ին

²⁷ Նորի տեղը, գ. 52, թ. 1 ա.

²⁸ «Наше время», 23 января 1919; Այդ մասին անձ Հ. Բ. Արշամյան, Անդրանիկ Զանգեղուրում, «Մանկագրություն», 1991, № 7, էջ 63-71.

²⁹ Տե՛ս Ան. Անցյալից, էջ 426.

Ղարաբաղի զորահրամանատարները մի նամակ ուղարկեցին Բաքէ Ազգային խորհրդին, որտեղ ասված է, որ դեկտեմբերի երկրորդ կես, քայլավանի ժամանակ անզիփական երկրորդ միսիային հայտնել են հետեւալը։ «Ղարաբաղի հայ ժողովուրդը չի ճանաչել Աղրբեշանի կառավարությունը և ոչ էլ կարող է ճանաչել թե հիմա և թե ապագայում։ Մենք դրա համար շենք կովել տաճիկների դեմ... Մինչև այսօր մենք պաշտպանել ենք մեր անկախությունը և այն համոզմանն ենք եղել, որ անզիփահիների գալուց հետո պիտի թեթևանա մեր քաղաքական ու տնտեսական դրությունը, քանի որ մենք միշտ մեզ համարել ենք նրանց դաշնակիցը և ենթարկվել գեներալ Թոմսոնի հրամանին՝ դադարեցնել կոիվը, բայց երեսում է, որ այստեղ եղած միսիան ձեռնահաս չի համարում իրեն տեղուածեղը վճռելու քաղաքական ժամանակավոր հարցերը և զերազա հում է այդ իրավունքը Թոմսոնին»³⁰։ Այսուհետև հպարտությամբ գրում են, որ թող լավ հասկանա անզիփացի գեներալը, որ Ղարաբաղի հայը թուրքական զորքերի բռնությունների դեմ կովել է «Աղրբեշանի իշխանությունը շճանաչելու համար» և որ «մեր բարեկամ Անգիան շպետք է մեզ ստիպի նրան (Աղրբեշանին) ենթարկվելու դա մեզ համար... ոչ թե միայն պատվի, այլ նաև ֆիզիկական գոյության հարց է, որի համար այնքան արյուն ենք թափելու։ Զորահրամանատարները արտահայտելով իրենց հայրենակիցների անսասան կամքը, իրենց նամակն ավարտում են հետեւալ խոսքերով։ «Մեր ժողովուրդի մի մասը մերկ է ու քաղցած, զորկ նյութական ամեն միշոցից... Նա պատրաստ է նույն զոհաբերությունը անել նաև ապագայում, միայն թե շճանաչի ոչ մի մահմեղական գերիշխանություն ազատ Ղարաբաղի լեռներում։ Ապա ինդրում են հասկացնել Թոմսոնին, որ «ամբողջ մի տարվա ընթացքում ազատության համար կուղղ զարաբաղցին չի կարող իր արշալույսի օրերին ենթարկվել Աղրբեշանի իշխանությանը»³¹։

Արցախահայությունը հետպհետեւ համոզվում էր, որ պետք չէ միամիտ լինել և հավատալ անզիփացիներին, հույսեր կապել նրանց հետ։ 1919 թ. փետրվարի 1-ին Զրաբերդի Հոռաթաղ գյուղացի Մանաս Պատաշյանը Արցախի հայոց Ազգային խորհրդին գրում էր, որ դաշնակից ներկայացուցչության Զիվանշիր գալուց հետո թվում էր, թե տեղում վիճակը կրարելավիր, կվերահաստատի խաղաղությունը, սակայն վերջին օրերին իրադրությունները ցոլց տվին, որ «ինչ որ շար ձեռք» «երկու ժողովուրդների միջև ատելություն է սերմանում, չխորշելով հրահրել արյունոտ միջադեպեր», որ անզիփացիների գալուց հետո Զիվանշիրում սկսվել են կոչ-

³⁰ ՀՀ ԳԳԿ, գ. 223, թ. 1, պ. 75. թ. 5.

³¹ Նույն տեղը.

զոպուտը, սպանությունները, հալածանքները³²:

Անգիտացման հայորդ հականայիկան քայլը եղավ գեներալ Թու. սոնի երաշխավորությամբ, 1919 թ. հունվարի 15-ին, Արցախի գեմ ուղղված էր համարում «անգիտացման բոլոր հարձակումների կազմակերպիչ, մուսավաբական և ուսուռվագի բեկ Սովորվածովի նշանակումը Շուշիի, Զանգեզուրի, Ջիվանշի և Հերեցիի, այսինքն նախկին Ելիզավետպոլի նահանգի հարավարեւյան հայկական գավառների գեներալ-նահանգապետի պաշտոնում: Նա Շուշի ժամանեց փետրվարի 10-ին: Սովորվածովի գլխավոր նպատակն էր ուժի հաղթահարել Արցախի գիմադրությունը: Անգիտացման ներկայացուցությունը ատամներով պաշտպանում էր նորաթուին նահանգապետի ձևուարկումները, ամեն կերպ աշակցում նրան: Անգիտացման հրամանատարությունը հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասվում էր, որ գեներալ-նահանգապետի յուրաքանչյուր հրաման պետք է իրագործվի անուարկելիութեն և որ բնակչության «ամեն տեսակ դիմադրություն կրնչվի ամենավճռական միջոցներով»³³: Ծրկու ամիս անց, ապրիլի 3-ին, անգիտացման հրամանատարության պաշտոնական հաղորդագրության մեջ, որի տակ ստորագրել էր Թումանին փոխարինած Բաքվի անգիտացման բանկի հրամանատար գնդապետ Գ. Շատելվորդը, բացեիրաց ասված էր, որ իրենց գրածո նահանգապետի բոլոր հրամաններն ու օրենքները կրպաշտպանվեն անգիտացման հրամանատարության կողմից³⁴:

Սովորվածովի Շուշի ժամանելը համբնկավ Արցախի հայության IV համագործին, որը տեղի ունեցավ 1919 թ. փետրվարի 12—21-ը: Համագործարը վճռականորեն բողոք հայտնեց Ազրբեջանի կառավարության դեմ, որը շարունակում էր Արցախը համարել իր տարածքը: Համագործարը բողոք հայտնեց նաև Սովորվածովին գեներալ-նահանգապետ նշանակելու առթիվ³⁵:

Արցախահայության այդ համագործարից հետո քաղաքական մինու լորտու ավելի շիկացավ: Անգիտացման հրամանատարությունը Սովորվածովին շտապեցնում էր Արցախը կարելույն շափ շուտ ենթարկել Ազրբեջանի իշխանությանը: Այդ նպատակով Սովորվածովն ստանում է նոր ուժեր և սկսում սեղմ օղակի մեջ առնել Արցախը: 1919 թ. փետրվարի 25-ին իր

³² Տե՛ս Հայտառակի Հաերապետության հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ, այսուհետեւ՝ ՀՀ ՀՊՀ Փ. 4033, գ. 5, գ. 425, թ. 1.

³³ ՀՀ ՀՊՀ Փ. 200, գ. 1, գ. 243, թ. 101, նաև՝ «Մշակ», 10 մարտ 1919.

³⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 244, թ. 4:

³⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 243, թ. 28, փաստաթուղթ Խ. 5:

կառավարությանն ուղարկած գրության մեջ Սովորվածովը շարադրում է Արցախի հայությանը հնագանդեցնելու իր պլանը, որի կատարումը հնարավոր էր համարում «անգիտացման բոլոր համարկումների ազդեցության պայմաններում»: Նա վստահեցնում է, որ ինքն ի վիճակի է «հայերին ստիպել ճանաշել Ազրբեջանի իշխանությունը»՝ հույս ունենալով «անգիտացման բոլոր օգնությամբ... ձերքակալել և արտաքսել» հայերի առաջնորդներին³⁶: Մեկ այլ փաստաթղթում, որը մարտի 14-ին նահանգապետությունից ուղարկվել էր Շուշիում գտնվող անգիտացման ներկայացուցության զեկավար մայոր Սովորվածունին, խնդիր է դրվում երկու շաբաթվա ընթացքում Անգրանիկին հեռու վանքել Արցախի սահմաններից, անհապաղ արձակել հայոց Ազգային խորհուրդը և Արցախից արտաքսել առաջադիմ մտավորականությանը³⁷: Անգիտացման ներկայացուցության զեկավարը գիմելով Արցախի Ազգային խորհրդին, պահանջում է ենթարկվել Ազրբեջանի իշխանությանը³⁸: Հակառակ գեղաքում, սպառնում է նա, ուժ կգործադրվի և հայերի բոլոր դիմադրությունները «արմատախիլ կարվեն ամենավճռական միջոցներով»³⁹:

Արցախի հայոց Ազգային խորհուրդը քննարկելով անգիտացման բոլոր պատասխանեց, որ Ղարաբաղը չի կարող հաշտվել այս փաստի հետ, որ երկրամասում գեներալ-նահանգապետ է նշանակվել մուսավաթական կառավարության ներկայացուցիչը և որ «Հայկական Ղարաբաղը... իրազեկ է պահել ամբողջ աշխարհին, որ նա իր տարածքում չի ընդունել և չի ընդունում ադրբեջանական կառավարությանը, ինչպես ու որոշել է Ղարաբաղի ողջ հայության վերջերս տեղի ունեցած համագործարը»⁴⁰: Ազգային խորհուրդը, ինչպես վկայում է արխիվային մեկ այլ փաստաթուղթ, գենուս հավատում էր, որ Փարիզի խաղաղության կոնֆերանսը կրավարարի «Ղարաբաղի ողջ հայ բնակչության արտահայտած կամքը, և հայկական այդ մարզը կվերամիավորվի Հայաստանի հանրապետության հետ»⁴¹: Ազգային խորհուրդը պահանջում էր Արցախի սահմաններից գուրս բերել մուսուլմանական զորամասերը: Մակայն Ազրբեջանի կառավարությունը կտրուկ մերժում է կատարել Արցախի հայության պահանջը: Բաքվում տպագրվող անկուսակցական «Նաշի վրեմյան թերթն այդ օրերին գրում էր, որ Ղարաբաղի հարցում «Ազրբեջանը օգտը

³⁶ Տե՛ս ՀՀ ՀՊՀ Փ. 4003, գ. 5, գ. 429, թ. 2—4:

³⁷ Տե՛ս նույն տեղը, գ. 422, թ. 8—9:

³⁸ Տե՛ս ՀՀ ՀՊՀ Փ. 252, գ. 1, գ. 1, թ. 4—5:

³⁹ Նույն տեղը, գ. 201, գ. 1, գ. 41, թ. 12:

⁴⁰ Նույն տեղը:

⁴¹ Նույն տեղը, գ. 200, գ. 1, գ. 271, թ. 10:

վում է բրիտանական հրամանատարության ազակցության հրամանականությանը, Այդպիսի քաղաքականությունը, շարունակում է թերթը, ստեղծել է անելանելի դրություն, բնակչությունը վճռականապես հրաժարվում է ճանաչել Աղքա-քանի իշխանությունը, «անգլիական հրամանատարությունը ձեռնարկում է բոլոր միջոցները՝ հաստատելու Աղքաքանի իշխանությունը և ամեն կերպ խոշնդոտում է բնակչությանը՝ ճանաչելու հայկական Ազգային խորհրդի իշխանությունը»: Դժվար է ասել, շարունակում է թերթը, թե «անգլիական հրամանատարությունը ինչ նկատառում են մեր է առաջնորդվում, երբ մի ամբողջ գյուղացիական հասարակության վզին փաթթում է խորթ և թշնամական իշխանությունը»: Թերթը եզրակցնում է, որ անգլիական քաղաքականությունը լի է արյունալի բարդություններով, որովհետեւ Պարարագի բնակչությունը ինքնակամ չի համաձայնի ընդունել աղքաքանական կալվածատերերի և բեկերի իշխանությունը⁴²:

Գեներալ Անդրանիկը, որը գտնվում էր Գորիսում, ուշիուզով հետևում էր Արցախում տեղի ունեցող իրադրություններին, նամակներով խորհրդական տալիս զորահրամանատարներին և Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդին: Բարու՛ գաշնակից զորամասերի գլխավոր հրամանատարությանը ուղղած բողոք-նամակում զորավարը պահանջում է կատարել արցախից արդարացի պահանջը: Նա իր պարտքն է համարում «հայտնել, որ Ղարաբաղի հայությունը և Զանգեզուրի ընդարձակ գավառը՝ Ղափանի, Սիսիանի և Մեղրիի մահաները, ավելի քան 400 հազար բնակչությամբ, ոչ մի դեպքում չեն կարող ընդունել Աղքաքանի իրավունքը իրենց տարածքի նկատմամբ»⁴³:

Արցախի հայությունը Անդրանիկին իր ապահովենն էր համարում: 1919 թ. Հունվարի 20-ին Արցախից նրան ուղարկված մի նամակում ասված էր. «Այսօր Ղարաբաղը... իր աշխերը հառել է Զեզ և իր ամբողջ էլությամբ ցանկանում է Զեզ տեսնել, ունենալ իր մեջ՝ ամբողջ գործի գույն կանգնած: Դրությունը Դուք կարող եք փրկել...»⁴⁴:

Սյունիքի աշխատավորները իրենց սիրելի զորավարի շուրջը համակած, կանխեցին Զանգեզուրում և Ղարաբաղում թուրք-թաթարական ցեղասպանության հրեշտակոր պլանի իրավորումը: Թուրք-թաթարական դաշիճները իրենց ամբողջ պրոպագանուան ուղղեցին Անդրանիկի գեմ: Սուսավաթականների պաշտոնական օրգան «Աղքաքայան» թերթը նորանոր հերլուրանքներ էր թխում Անդրանիկի հասեցին: Զէ՛ որ այդ

⁴² «Наше время», 5 апреля 1919.

⁴³ ՀՀ ՊՊԿ, ֆ. 370, գ. 1, գ. 39, թ. 7:

⁴⁴ Սույն անդր, գ. 40, թ. 8:

Ժամանակ գերմանա-թուրքական գաղութարարները իրենց բարբարուսական քաղաքականությունն էին իրագործում Անդրանիկասի գրեթե բոլոր շրջաններում: Միայն Զանգեզուրը և Ղարաբաղը զերծ մնացին օտար լծից, այս էլ շնորհիվ Անդրանիկի զորախմբի մղած հերոսական կորիների:

Մուսավաթականները ամեն կերպ ձգտում էին Թոմսոնի օգնությամբ Անդրանիկին հեռացնել Սյունիքից և Հայկական Արցախն ու ամբողջ Զանգեզուրը բռնագրավել: Անդրանիկը կարուկ մերժեց անգլիական հրամանատարության հանդուգն պահանջը՝ Զանգեզուրը հանձնել մուսավաթականների իշխանությանը: Գորիս ժամանելուվ, Թոմսոնի ներկայացուցիչներ մայոր Կիպոնը և կապիտան Սիրայտը, Բաքվի մուսավաթական կառավարությունից Արդուլլա բեկ Հասանբեկովը և Բաքվի հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչ Զիլինգարյանը: Անդրանիկի հետ համաձայնության եկան, որ վերջինս Զանգեզուրում պիտի մնա մինչև 1919 թ. մայիսը: Սակայն 1918 թ. գեկտեմբերի 23-ին Անդրանիկի կողմից հրավիրված բոլոր հրամանատարների ժողովը նպատակահարմար գտավ Սյունիքից հեռանալ պահելի շուտ, որովհետև ոչ սննդամբերք կար, ոչ էլ ձմեռն անցկացնելու համար անհրաժեշտ շնչերը: Բացի այդ, զինվորները ցանկանում էին վերադառնալ իրենց տները և ժամանակին կատարել գարնան գյուղատնեսական աշխատանքները: 1919 թ. մարտի 4-ին մայոր Կիպոնը կրկին ժամանելով Գորիս, զորավար Անդրանիկին առաջարկում է Զանգեզուրից մեկնել Երևան՝ Շուշի-Եղվախ-Թիֆլիս ճանապարհով, վստահեցնելով, որ ճանապարհներն ապահովված են և զորամասին կուղեկցի 250 զինվորից կազմված անգլիական մի զորախումբ: Ղարաբաղից Անդրանիկին խնդրում են նախ՝ չհեռանալ Զանգեզուրից, իսկ եթէ գա հնարավոր չէ և զորավարի վճիռը վերջնական է, ապա համաձայնվել գնալ անգլիացիների առաջարկած երթուղով⁴⁵: Նրանք տեղյակ էին, որ մուսավաթական կառավարությունը նախապատրաստվել էր Շամիորի նոր ջարդ կազմակերպել և ամբողջովին ոչնչացնել զորավարի ուժերը: Անդրանիկը մերժում է անգլիացիների մատնանշած ուղիով զորամասի տեղափոխումը: Նրա զորամասը ապրիլի 2-ին հրաժեշտ տվեց Անգեղակոթի փառապանծ գյուղացիությանը և ուղղություն վերցրեց դեպի էջմիածին: Իրոք որ առանց Անդրանիկի կարծես թե Զանգեզուրը, ինչպես և Արցախը որբացան⁴⁶:

Անդրանիկի Սյունիքից հեռանալը ծանր կացության մեջ գցեց Արցախի հայությանը: Սակայն արցախիցները չեին վհատվում, շարունակում էին

⁴⁵ Խույն անդր, գ. 38, թ. 37, գ. 40, թ. 23:

⁴⁶ Տէ՛ս Ս. Գ. Աղայան. Հայ ժողովքի պատարական պայքարի պատմությունը, Երևան, 1976, էջ 687:

Համառորեն դիմադրել անգու-մուսավաթական նվաճողներին՝ հանու իրենց ազատության և գոյատեման:

Մուսավաթական Աղրբեշանը և նրա դրածո Սուլթանովը շէին հրաժար վում Արցախը նվաճելու իրենց ձգտումներից. Սուլթանովը թուրք դահճ-ների և անգլիական իմպերիալիստների ամենաշերմ աշակցությամբ և պաշտպանությամբ պատրաստվում էր «արյան բաղնիք» կազմակերպել արցախական աշխարհում: Այդ մասին թումսոնին իրազեկ են պահու յանը: Թումսոնի պահանջով Արցախից մի պատգամավորություն է մեկ-նում Բաքու և մարտի 26-ին հանդիպում ունենում գնդապետ Շատելվորդի հետ: Ահա հատվածներ Արցախի Ազգային խորհրդի նախագահ Ասլան յանի՝ Շատելվորդի հետ ունեցած զրույցի սղագրությունից, Անգլիական Ազգային խորհրդի նախագահը համարձակ պատասխանում է: «Դեպի ամեն ինչ ընդհանուր է: Շատելվորդի այս պնդմանը, թե Ղարաբաղի հայերը պետք է ենթարկվեն Աղրբեշանին, քա-կառավարությունը ի վիճակի չէ անգամ իր տանը կարգ հաստատելու, ուր մասց թե կարողանա կարգ հաստատել Ղարաբաղում: Գնդապետը փոր-ձում է խոսել ուժի դիրքից, ասելով. «Աղրբեշանի և նրա գեներալ նա-հանգակետության դեմ բոլոր տեսակի անհազանդությունները դեմ են Անգլիային, Մենք այնքան ուժեղ ենք, որ կարող ենք ձեզ ստիպել են-թարկվելու: Քաղաքագույքը կարուկ հայութարարում է, որ Ղարաբաղի դուռը կփակվեն Աղրբեշանի առջեն և երբեք չի ընդունվի նրա իշխանու-

Որոշ ժամանակ անց, ապրիլի երկրորդ կեսին, Արցախ է ժամանում Շատելվորդը և հայոց Ազգային խորհրդից պահանջում իր ներկայությամբ լուծել մուսավաթական Աղրբեշանին հպատակվելու հարցը: Շտապ կերպով հրավիրվում է Ղարաբաղի հայության նոր՝ հինգերորդ համագումարը, որը տեղի ունեցավ ապրիլի 23—29-ը, Համագումարի նիստերից մեկին մասնակցեցին Շատելվորդը և Սուլթանովը: Շատելվորդը թե համագու-դրում միգեր էր գործադրում անցկացնելու անգիտական գաղութատիրական մուսականության մասին անդրդեմի պատգամավորները զայրությունով լի իրենց ելույթ-

47 Տե՛ս 22 ՊԿԱ, գ. 200, թ. 1, գ. 5, թ. 10—11.

ներում շեշտում են, որ Արցախը իր աշխարհագրական դիրքով, էթնի-կական-ազգագրական տեսակետից, պատմականորեն Հայաստանի ան-րաժան մասն է, և թեկուզ ժամանակավորապես, Աղրբեշանին ենթարկվելու խոսք չի կարող լինել: Համագումարը «անհնարին է համարում ընդունել Աղրբեշանի հետ առնչություն ունեցող որևէ իշխանության վարչական ձև», Համագումարը երկրորդ անգամ անդրադառնալով Շատելվորդի պահան-ջին՝ նորից է պաշտպանում իր ժխտական որոշումը, որը թելադրված էր «Ղարաբաղի ամրող հայության անհողող կամքով» և որին գավաճանել ոչ մի գեպքում չեն սկզբ և չեն կարող համագումարի պատգամավոր-ները: Համագումարի բոլոր 48 պատգամավորների ստորագրությամբ ընդունված բանաձևում ասված է, որ ներկայացված պահանջը չի համա-պատասխանում «համագումարին պատգամավորներ ուղարկած Ղարա-բաղի հայ ժողովրդի ցանկությանը և կենսական շահերին»:

Սա է պատմական ճշմարտությունը: Մինչդեռ որոշ հեղինակներ այդ ամենը շուր են տալիս գլխիվայր: Զամիլ Բահատորօղլի Գովիկը ուկենա-յին Ղարաբաղի ինքնավար Մարզի կազմավորման պատմությունից» իր հոդվածում⁴⁸ մեջբերելով 1919 թ. մայիսի 22-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմին հաս-ցեագրված Ա. Միկոյանի զեկուցագրի այն տողերը, ուր ասվում է, թե Ղարաբաղի «հայ գյուղացիությունն իր հինգերորդ համագումարում որոշել է ճանաշել խորհրդային Աղրբեշանը և նույնպես միանալ նրան» (հե-տաքրքիր է, 1919 թ. ի՞նչ լուրջ խորհրդային Աղրբեշանի մասին կարող էր խոսք լինել), եզրակացնում է, թե Լեռնային Ղարաբաղի աշխատավորները հանդես են եկել «իրենց երկրամասը Աղրբեշանին միացնելու» օգտին, Առանց իսկությունը ստուգելու այդ նույնը, բառացիորեն կրկնում է մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի աղրբեշանական մասնաճյուղի դի-րեկտոր Դ. Գուլիելը իր «Ինտերնացիոնալիզմի դիրքերից: Աղրբեշանա-կան և ԱՀՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի կազմավորման պատ-մության շուրջը» հոդվածում⁴⁹, Անշուշտ, մենք հետո կանդրադառնանք նրա ստանոդ հորինվածքներին: Առայժմ մեզ հայտնի չէ, թե Ա. Միկո-յանը որտեղից է քաղել այդ սխալ տեղեկությունը. բայց պատմարան-ներ Գուլիելների համար, կարծում ենք, դժվար չէր գտնել և կարդալ Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարի ընդունած վերոհիշյալ բանաձևը⁵⁰:

48 Տե՛ս «Известия Академии наук Азербайджанской ССР, Серия историй, философии и права», 1973, № 3, էջ 11—19.

49 «Бакинский рабочий», 14 июля 1988.

50 Տե՛ս փաստաթուղթ Ն է:

Արցախի հայության հինգերորդ համագումարից մի քանի օր անընուշի քաղաքագույս Գերասիմ Շահնազարյանը Ետակելվորդի հետ անեցած զրուցի ժամանակ նրան հասկացրեց, որ Արցախի հայերը երրիշեն ենթարկվի Աղբեկջանի կառավարությանը և զենքով կդիմավորեն բռնությունը նրանց, ովքեր ուժով կմտնեն երկրամասուն: Իսկ մի քանի օր անց Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդը բացեիրաց հայտարարեց, որ հայկական Ղարաբաղը մինչև վերջին շունչը զենքը ձեռքին կմարտնչի երբեք չի բնդունի «ուազմատենլ պանիսլամական Աղբեկջանի իշխանությունը»^{52:}

Անդրանիկի Զանգվազուրից հեռանալուց հետո Սուլթանովը դարձավ ավելի սահմարձակ: Նա վճռեց Արքախի հայությանը խեղդել սովոր ճիշտաններում և այդ ճանապարհով ընկնծել նրան: Սուլթանովի կարգադրությամբ մայիսի 20-ից Դաշտային Ղարաբաղի բոլոր ճանապարհները փակվեցին հայերի առջև: Դա չափազանց ժանր կացության մեջ դրեց Ղարաբաղի հայությանը: Խնչպես վկայում է «Կավկազսկոյե սլովո» թերթը, մուսավաթական ասկյարներն ու ավազաները հայերի նկատմամբ ձեռնարկված ու մի միջոցներից չէին խորշում, կողոպտում էին նրանց ունեցվածքը, սպանում երեխաններին, ուժ գործադրում կանանց նկատմամբ: Ղարաբաղցիները բոլոր կողմերից փակվել էին ու զրկվել դաշտային աշխատանքներ կատարելու հնարավորությունիհան⁵³,

Արցախում դրությունը բավականին սրվեց հունիսի սկզբին՝ քոչք սարը բարձրացնելու ժամանակ։ Մուսավաթականների դրդմամբ թաթար քոչ վորները խախտելով սովորությունները, փշացնում էին Հայ գյուղացիների ցանքերն ու այգիները։ Դեռևս գարնանը առանձնապես սանձարձակ էին գործում Սուլթանովի կազմակերպած բանդաները, Նրանք հունիսի 4-ին և 5-ին սարսափելի սպանդ կազմակերպեցին քաղաքամերձ Ղայրալիշեն Կրկան, Փաճլուր, Զամիլու, Խանածախ, Դաշուշեն - և այլ գյուղերում։ Միայն այդ օրերին Հայերի կորուստները կազմեցին ավելի քան 500 հոգի։ Արխիվային նյութերում հաղորդումներ կան այն մասին, որ Ղայրալիշենի 700 բնակիչներից մնացել են կենդանի 11 տղամարդ և 87 կին ու երեխա։

Ժամանակակիցների հուշերում հանգամանորին ներկայացվում է Ղայրալիշենի սպանդը: Ղայրալիշենցի 85 տարեկան Հայրապետ Ավանեսուանո

պատմում է, որ ինքը թաքնվել էր դիակների արանքում և այդպես փրկվել յաթաղանից⁶⁵. Թալանում են գյուղի ամբողջ ռևնեցվածքը, մինչև անգամ տանում են մետաքսագործական ֆաբրիկայի հաստոցները. Մինչև հիմա էլ գյուղի ավերակները, 1844 թ. կառուցված եկեղեցին, ամբողջովին ավերված գերեզմանոցը, սրբավայրը իրենց ճակատագրերն են ողբում։ Ղայրալիշենի սպանդը Արցախում իրագործված անգլո-մուսավաբա- կան քաղաքականության ամփոփումն էր։ Որպես դրա բաղկացուցիչ մաս հանդիսացավ մի շարք հայ գործիչների բռնի արտաքսումը հայրենի երկրից։ Անգլիական միսիայի ավտոմեքենայով Արցախի սահմաններից դուրս բերվեցին Եղիշե հշանայնը, Հարություն Թումյանը և Ավետիս Տեր-Աստվածատրյանը։ Սովորանով պահանջում է ձերբակալել Հայոց Տեր-Աստվածատրյանը։ Սակայն նրանք արդեն փոխա- կզաքին խորհրդի բոլոր անդամներին։ Սակայն նրանք արդեն գավառ։ Անգլիական Հրամանատարությունը որոշել էր «ըն- դրվել էին գավառ։ Անգլիական Հրամանատարությունը որոշել էր «ըն- կընել կեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը»⁶⁶, Նրանք նույնիսկ հայ- կընել կեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը՝ Սահմանադրությունը առարկում են, որ Ղարաբաղի հայերը պետք է Ղարաբաղը թողնեն Աղբերշանին ու տեղափոխվեն Ալաշկերտ, Վան, Բասեն՝ ցանկանալու ցեղասպանությունից փրկված Արցախի հայությանը նորից նետել թուր- դահճների երախլը⁶⁷։

Հունիսյան իրադարձությունները երբեք էլ շվամացրիս օրցար-
թյանը. Հենց այդ օրերին, հունիսի 11-ին, Վարանդայի գյուղացիության
համագումարը արդեն քանիերորդ անգամ որոշեց երբեք չենթարկվել Ա-

51 SL' u 22 994U, p. 200, g. 1, q. 309, p. 9,
52 Unpublished, p. 127.

53 «Кармадон»

«Кавказское слово», 20 июня 1919.

MS. SK. 22. 994U, §. 200, p. 1. q. 309, p. 165.

55 Հայութ Ավանեսյանի հուշերը պահպամ են հեղինակի մոտ

55 Հայրապետ Ազգային 1823 Խ. 8. է. 100

56 «Հայրանիք», 1888, մ.

27. *S. S. & B. 114 - 1, n. 34, P. 92 w.*

54. Краснознаменское слово. 1 июля 1919

գըրբեշանին⁸⁰: Համանման որոշումները ընդունվեցին նաև մյուս գավառում՝ ինչ համագումարներում:

Հունիսյան դեպքերից հետո Արցախի հայությանն ընկավ էլ ավելի ծանր վիճակի մեջ: Մուսավաթական Աղրբեշանը բոլոր կողմերից հարձակման էր անցնում: Հայաստանի Հանրապետությունը գործնական քայլեր չարեց արցախիներին սատար կանգնելու համար: Անդրկովկասում գտնվող դաշնակից ուժերի հրամանատարությունը անդադար ճնշում էր գործադրության վրա:

Անգլիական հրամանատարությունը և Աղրբեշանի մուսավաթական կառավարությունը հայությունից պահանջում են վերջնական պատասխան տալ: Ընդունում են Աղրբեշանի իշխանությունը, թե՛ ոչ: Սակայն արցախիների համար ազատությունը, անկախ և ինքնուրույն լինելը ամենինչից բարձր էր ու թանկ: «Հառաջ» թերթը 1919 թ. մարտին Արցախի հայության մասին գրել է. «Մի ժողովուրդ, որ դարեր շարունակ ապրել է զատա ու անկախ, որ չի ընկճվել, չի ստրկացել խաներին ու փաշաներին՝ այդ ժողովուրդը չի կամենում ու չի կարող ստրկանալ, և պետք չէ, որ ստրկացվի Բաքվի շարդարար Խան Խոյսկիների բռնակալությանը»:

Հայկական՝ լեռնային Ղարաբաղը հայկական է պատմական և ազգագրական տեսակետներից և նա կամենում է կցվել Հայաստանի Հանրապետությանը, որովհետեւ այսպիսով միայն նա կարող է պահպանել իր կյանքից էլ թանկ ազատությունը⁸¹:

Ի՞նչ անել: Սեփական ուժերով թշնամու տառնյակ անգամ գերազանցող ուժերի դեմ կռվել ու հաղթանակ տանել Հնարավոր շեր: Այդ հարցին կարող էր պատասխանել միայն Արցախի հայության նոր համագումարը: 1919 թ. հունիսի 28-ին Վարանդայի Շոշ գյուղում հրավիրված 6-րդ համագումարը, ենելով ստեղծված իրավիճակից, որոշեց ժամանակու համաձայնության գալ մուսավաթական Աղրբեշանի հետ և կազմեց համաձայնագրի նախագիծ ու ներկայացրեց կառավարությանը: Աղրբեշանի մուսավաթական կառավարությունը այն վերափոխեց Շի Արցախ՝ համագումարում հաստատելու համար: Արցախահայության վրա ճնշում գործադրելու նպատակով անգլիական հրամանատարության համաձայնությամբ մուսավաթականները Արցախում գտնվող իրենց կայազորները համալրեցին նոր ուժերով: Այդ

օրերին միայն Շոշի քաղաքում կուտակվել էին 12 հազար ահարեկված փախստականներ⁸²:

Արցախահայության վրա նորից կախվեց վտանգը: Դրա առաջն առնելու և հետագա անելիքները որոշելու համար շտապ կարգով, 1919 թ. օգոստոսին, Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության յոթերորդ համագումարը: Այն տեղի ունեցավ շափազանց ծանր պայմաններում: Համագումար ժամանելու ճանապարհին թուրք-թաթարների կողմից սպանվել էին երկու պատգամավոր, Խանքենդում և Շոշի քաղաքում կազմակերպվել էր խաղաղ բնակչության կոտորած: Համագումարն այս ամենի հանդեպ բողոք ներկայացրեց Սուլթանովին: Վերջինս պահանջեց համագումարը հրավիրել քաղաքում: Ստանալով բացասական պատասխան, օգոստոսի 14-ին մի վերջնագրով Սուլթանովը պահանջեց 48 ժամ-ի վարչությունը ընդունել Բաքվում մշակված համաձայնագիրը:

Արցախահայության յոթերորդ համագումարին մասնակցում էին քաղաքական բոլոր կուսակցությունների, այդ թվում և բոլշևիկների ներկայացուցիչները, թվով 135 հոգի⁸³: Պատգամավորների մի մասը պահանջում էր հրաժարվել և պայմանագիր չկնքել Աղրբեշանի հետ: Այնուամենայնիվ ճնշող մեծամասնությունը հանգեց այն մտքին, որ մուսավաթական Աղրբեշանին դիմադրություն ցուց տալու ուժ չունեն և դրսից էլ օգնություն չի սպասվում: Ուստի օգոստոսի 15-ի նիստում որոշեցին ժամանակավորապես ընդունել համաձայնագիրը: Համագումարի կողմից ընտրված 16 հոգուց քաղացած պատգամավորությունը օգոստոսի 22-ին Սուլթանովի հետ քննարկեց և ստորագրեց 26 կետից քաղացած համաձայնագիրը⁸⁴: Քննարկվեցին նաև համաձայնագրի կենսագործման պայմանները:

Համաձայնագրով Ղարաբաղի հայկական գավառները (Դիզակ, Վարանդա, Խաչեն և Զրաբերդ) և Շոշի քաղաքը մինչև Փարիզի վեհաժողովի որոշումը «իրենց ժամանակավոր ճանաշում են Աղրբեշանի Հանրապետության սահմաններում» (կետ 2), «Հայկական շրջանների ղեկավարությունը նշանակվում է հայերից» (կետ 3 և 4), գեներալ-նահանգապետությանն առնելիք հիմնվում է խորհուրդ քաղաքած երեք հայերից և երեք մուսավաթականներից (կետ 5), Խորհրդի անդամ հայերը ընտրվում են կեռնային Ղարաբաղի հայության համագումարում (կետ 6), «ազգամիջյան բնույթ կրող բոլոր սկզբունքային հարցերը կյանքում չեն կարող իրագործ-

80 Տե՛ս «Աշխատավոր», 19 հունիսի 1919,
81 «Հառաջ», 11 մարտի 1919.

82 Տե՛ս «Կավազսկое слово», 1 августа 1919.

83 Տե՛ս Մատենագրաներ..., մաս II, էջ 68:

84 Տե՛ս ՀՀ գործադրություն, ֆ. 109, ց. 1. գ. 9, թ. 67-68:

վել առանց եռոհրդի նախնական քննարկման» (կետ 7), եռոհը որպես իրավունք ունի հսկելու գեներալ-նահանգապետության վարչության գործունեությունը (կետ 9), քաղաքացիական գծով նահանգապետի օգնական նշանակվում ազգությամբ հայ (կետ 10), Ղարաբաղի հայությունը ստում է «կուտուրական ինքնորոշման իրավունք», որը «իրագործվում Ղարաբաղի հայության համագումարում ընտրված Ազգային խորհրդի ղեկավարությամբ» (կետ 12 և 13), «խաղաղ պայմաններում ուղամական գորամասերը տեղաբաշխվում են Խանքենում և Շուշում» (կետ 15) Ղարաբաղի Շուշիի, Ֆիվանշիրի և Զերբրայիի գավառների հայկական շրջաններում ուղամական զորամասերի բոլոր տեսակի տեղաշարժերը կարող են իրագործվել միայն եռոհրդի անդամների երկու երրորդի համաձայնությամբ» (կետ 16), «քաղաքական համոզմունքների համար ու ոք չի ենթարկվում հետապնդումների ո՛չ դատական և ո՛չ էլ վարչական մարմինների կողմից» (կետ 17), «գաղաքարեցվում է բնակչության զինաթափումը մինչև խաղաղության կոնֆերանսում Ղարաբաղի հարցի որոշումը» (կետ 19); կառավարությունը նյութական օժանդակություն է ցույց տալիս ավերված գյուղերը վերականգնելու համար (կետ 20). Բնակչությանը տրվում է «միությունների, խոսքի և մամուկի լրիվ ազատություն» (կետ 22) և այլն:

Օգոստոսյան համաձայնագիրը ամենից առաջ անգլիական իմպերիալիզմի՝ Անդրկովկասում ազգամիջյան ընդհարումների գլխավոր Հրահրիներից մեկի, Արցախի հայության նկատմամբ իրագործված կեղուս քաղաքականության հետևանք էր: 1919 թ. օգոստոսի 24-ին անգլիական միսիան հեռացավ Արցախից: Արցախական աշխարհի ամրող հայությունը ատելությամբ ու նզովքով ճանապարհեց նրանց: Այնուհետև Արցախի պատմության մեջ սկսվում է ողբերգությամբ և դրամատիզմով լի մի նոր շրջան:

Օգոստոսյան համաձայնագրից հետո արտաքուստ ասես վերականգնվեց արցախահայության անդորրը, որը, սակայն, երկար շտենց: Սուլթանովը շարունակում էր Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդին ստիպելու թե սոսկ խոսքով, այլ գործնականորեն ենթարկվել Աղրբեշանի իշխանությանը: Արցախցիները զնուականորեն մերժում էին այդ պահանջը՝ պատասխան՝ Աղրբեշանի կառավարությունն իր հերթին տեսնդագին նախապատրաստվում էր վերացնել օգոստոսյան համաձայնագրով Արցախին տրված որոշ ինքնուրույնությունը և ուժով տիրանալ նրան:

Օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրից խիստ դժգոհ էր նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Նա այդ առթիվ

բողոք ուղարկեց Փարիզի Խաղաղության կոնֆերանսին և սատար կանգնեց արցախահայությանը: Հայաստանից Արցախ ուղարկվեցին ծառամով արցախցի մի խումբ քաղաքական գործիչներ և սպաներ, որոնց առջև խնդիր դրվեց օգնել արցախցիներին՝ դիմադիր կանգնելու երկրամասի նկատմամբ Աղրբեշանի նվաճողական նկրտումներին (1919 թ. դեկտեմբեր): Անկախության և մայր ժողովրդի հետ վերամիավորվելու համար Արցախի հայության պայքարը մտավ նոր փուլ:

Արցախից անգիտացիների հեռանալուց հետո Սուլթանովը կոպտորեն խախտելով օգոստոսյան համաձայնագիրը, հրամայեց մուսավաթական բանակը տեղաշարժել և կենտրոնացնել ուղամասերական նշանակություն ունեցող կետերում: Միաժամանակ Աղրբեշանի կառավարող շրջանները նախապատրաստվում էին ներխուժել Զանգեզուր, սակայն զավթողական այդ քաղաքականության իրականացման ճանապարհին խոլընդուռ էր հանդիսանում Արցախը: Նշանակում է՝ նախ պիտի էր հաշիվները մաքրել Արցախի հետ: Աղրբեշանի բանակի շտաբի պետ գեներալ-լեյտենանտ Սուլթանիլը 1919 թ. սեպտեմբերի 7-ի 4007 գաղտնի գրությամբ Սուլթանովին հասկացնում է, որ Ղարաբաղի հարցի լուծումը հետարկություն կսեղծի Աղրբեշանին միացնել նաև Զանգեզուրը: Սուլկամիթի խորհրդով Քրդուանի քրգերից կազմակերպվեց մի հեծյալ դիվիզիոն՝ Սուլթանովի եղբայր Սալիմ բեկ Սուլթանովի հրամանատարությամբ, որը հետագայում, 1920 թվականի մարտ-ապրիլյան ողբերգական իրադարձությունների ժամանակ, գործուն մասնակցություն ունեցավ Արցախում և Զանգեզուրում Աղրբեշանի մուսավաթական կառավարության նվաճողական ժարգիրն իրագործելու ձեռնարկումներին⁶⁵:

Նախքան Արցախում մուսավաթական գորքերի կենտրոնացումը և Զանգեզուրի գեմ հարձակում սկսելը, թուրք-թաթարական շարդարարները ահարեկության ենթարկեցին Գանձակի լեռնային շրջանների հայ բնակչությանը, ավերեցին Ղարաշինար, Մանասիշեն, Ներքին և Վերին Աղջալա, Գյուղատան, Էրքեց, Բուղլուխ, Ղարաբուղազ, Արմավիր, Սուկուկ, Ղարադաղուս, Արջախ, Ազատ, Խարիսափուտ, Հայ Բարիս և այլ հայկական գյուղերը: Աղրբեշանն այդ ամենն իրականացնելու հրահանգները ստանում էր մուսավաթականների թիկունքում գաղտնաբար գործող հայոց դահին էնվեր փաշայից: Բայց որտեղի՞ց էր էնվերը երևացել Արցախում, չէ՞ որ մյուս հանցապարտների՝ Թալեաթի, Զեմալի և ուրիշների նման նա էլ էր թաքնվում մարդկության աշքից: Ղարաբաղի Ազգային խորհրդի ան-

65 Տե՛ս Փառտաթուղթ թ. 10.

66 Տե՛ս ՀՀ 994Ա, թ. 200, ց. 1, գ. 427, թ. 240:

դամներից մեկը՝ Միսակ Գաբրիելի Տեր-Դանիելյանը (Արամայիս) 1919 թ. մայիսի 26-ին իր օրագրում գրել է. «Մենք հաստատ պղբյուրներից գիտենք, որ այդ հարձակումների կազմակերպիչը (խոսքը վերաբերում է այդ ժամանակի Արցախի ժայռամասային գյուղերի վրա Թուրք-Բաթարական հարձակումներին—Հ. Ա.) Աղբբեշանն է, իսկ զեկավարողը՝ Քյազի Փաշան։ Այդ մասին գիտի նաև անգլիական միսիան։ Ինչպես մենք, այնպես էլ անգլիացիք տեղեկություն էին ստցել, որ էնվեր բեյը գտնվում է Սովորանովի կալվածքում կամ Հաշիսանլվում... Միսիան... մատների արանքով է նայում ադրբեջանական դավադրություններին Ղարաբաղում»⁷, 1919 թ. Հունվարին Ստամբուլում երիտթուրքական հանցագործների գեներալ Վահագան Հոկողության ներքո, սակայն Ղարաբաղում գտնվող անգլիական միսիան նրան ձերբակալելու ոչ մի փորձ չարեց։

Այսուհետև էնվեր փաշայի կյանքի էջերում, մինչև 1922 թ. հունիսի 26-ը, երբ նա Բալցուանի (Միջին Ասիա) մոտ սպանվեց, կան շատ մոգի հանգամանքներ: Այդ տարիներին էր, որ նա մարթափոխ եղած ճիգեռ էր գործադրում մոլորության մեջ զցելու անգամ քաղաքական ականավոր շատ գործիչների: Իրենց կոմունիստ և ինտերնացիոնալիստ հայտարարած «Ճեմալականները, — գրում է Հ. Սիմոնյանը, — և Կեղծ կոմունիստները տարածում էին այն կեղծիքը, թե Նախկին երիտթուրքերը, այդ թվում Թալեաթ, էնվեր և Ճեմալ փաշանները, ինչպես նաև իթթիչատական յուռա պարագորությները խորհրդային իշխանության և Երրորդ ինտերնացիոնալի հետ են»:

իր՝ էնվերի հաղորդումից իմանում ենք, որ նա եղել է Թեովինում, ևստեղ կովելի և Ռիգայի բանտերում։ Հետո, 1920 թ. սեպտեմբերի 1—3-ը Բաքվում տեղի ունեցած Արևելքի ժողովուրդների համագումարին մասնակցելու համար Թեովինից գալիս է Մոսկվա, այնտեղից էլ՝ Բաքու ևս փորձում էր մուտք գործել համագումար և այնտեղ հանդես գալ Մասկովի, Ալիբրի, Թունիսի, Եգիպտոսի, Տրիպոլիի, Արարիայի և Հնդկաստանի հեղափոխական կազմակերպությունների միավորուների անունից։

Էնվեր փաշան խնդիր ուներ ստեղծել իսլամական բանակ, իրրեք թե մապերիալիզմի գեմ Արևելքի մահմեդական երկրներին ստքի հանելու ամար: Համագումարի պատգամավորների մեծամասնությանը հայտնի

էին էնվերի և երտիթուրքերի շարագործությունները։ Նրա դեմ առանձնապես խիստ ելույթ է ունենում տաճկական կոմունիստ Սուլբհին։ Աղքարբեցանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտության ներկայացուցիչ Հարությունյանը 1920 թվականի սեպտեմբերի 10-ին իր կառավարությանը հայտնում է, որ «Նարիմանովի և էնվերի ցանկությամբ քաղաքի թազա Փիր մեջիդում գումարվել է մահմադականների մի մեծ ժողով, բանախոսել են թե Նարիմանովը և թե էնվերը, կոչ անելով օգոտագործել մեծամասնականների սրբազն պատերազմ, հարյուր հազարնոց մի բանակ կազմել, որի գործիք անցած ինքը մի ամիս հետո կարող է արշավել դեպի Անատոլիա՝ Տաճկաստանն ազատել Անգլիայի գերությունից»⁶⁹։

էնվերը մի «ղեկլարացիա» է հղում համագումարին՝ շողոքորթությամբ ու նենգությամբ շաղախված։ Նա փորձում էր պատգամավորներին համոզել, թե իրեն է վիճակված միշագային իմպերիալիզմի դեմ ռարի հանել Արևելքի ժողովուրդներին և փրկել Տրիպոլիին տրիպոլիտանցիների համար, իսկ «Աղրբեջանի նկատմամբ էլ, — գրում է նա, — մենք ուրիշ միտումներ չենք ունեցել, բացի այն, որ մենք գտնում ենք, որ Աղրբեջանը պատկանում է աղրբեջանցիներին»։ Մի՛թե դա չի նշանակում նոր ցեղասպանության կոչ և ոչ մահմեդական ժողովուրդների, առաջին հերթին հայերի տեղահանում ու ոչնչացում։ Էնվերը կանգ չառնելով ոչ մի կեղծիքի առաջ, իր «ղեկլարացիայում» սրբապղորեն հայտարարում է, թե իրը տաճիկները պաշտպանում են իրենց տարածքում ապրող բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և ցանկանում են «իրավունք վերապահել», որպեսզի նրանք «տնօրինեն իրենց ճակատագիրը»։ Հայոց գահինը, սակայն «մոռանում» է իր իսկ հրամանով Արևմտահայաստանում մեկուկես միլիոն հայերի ցեղասպանությունը, Բաքվում, Արցախում, Արեշում և Անդրկովկասի հայարնակ այլ շրջաններում տասնակ հատակապող հայերի բնաջնջման մասին։

Էնվերը մի քանի ամիս մնաց Խորհրդային Բաքվում որպես Նարիմանովի «Թանկագին Հյուրը»։ Այնուհետև նա մեկնում է Միջին Ասիա, ստանձնում բասմաշական զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոնը և այստեղ էլ ամարտում իր անփառունակ կյանքը։

Ոգևարված թուրք դաշիճների խոստումներով և ամենագործում օգ-
նությամբ, մուսավաթական Աղրբեզանը նորանոր ուժեր է փոխադրում

67 Фундамент м. 2.

22. Ա. Սիմեոնյան, Թուրք պատմակային բարժուազիայի գողափարաբանությունը & ժա-
ղաքականությունը, Երևան, 1986, էջ 522.

~~00 22 994 U. S. 200, g. 2, s. 90, p. 13.~~

70 54. «Первый съезд народов Востока, Баку, 1—8 сентября 1920 г. Стениографические отчеты». Петроград, 1920, §, 108—112.

Արցախ՝ այստեղից Զանգեզուր ներխուժելու միտումով։ Մուսավաթական կառավարության ուղմական նախարարը, ցարական նախկին գեներալ, Բաքվի կոմունայի դահճներից Սամերբեկ Մեհմանդարովը, նրա բարեկից Շիխլիսկին արտակարգ եռանդով նախապատրաստվում էին ներխուժել Հայաստան։ Նրանք ֆինանսական մեծ աշակցություն էին ստանում ոչ միայն մուսավաթական կառավարությունից, այլև Թուրքիա-ից և մի շարք այլ տերություններից՝ պինհելով ինչպես զինակոյիններին, այնպես էլ մինչև 35 տարեկան տղամարդկանց։ Հայաստանում գիտեին, որ մուսավաթական Աղբեջանը շորս կողմից շրջապատել էր Արցախը և փակել դրսի աշխարհի հետ կապող բոլոր ճանապարհները։ Թուրք հրամանատարների գլխավորությամբ մուսուլմանական բոլոր կետերում էին մուսավաթական զինված ջոկատներ։ Արցախցիները կարողանում են ելք գտնել և այդ ամենի մասին հաղորդել զանգեղացիներին։ Մեզ են հասել արցախցի Սաքի (Ասաք)ապոր և ուրիշների անուններ, որոնք արհամարհելով մահը, կապավորի գժվարին աշխատանք են կատարել, Արցախում տիրող իրադարձությունների, մուսավաթականների պատերազմական նախապատրաստությունների մասին տեղյակ պահել զանգեղացիներին, իսկ այստեղից էլ՝ լուր հասցրել Արցախ։

1919 թ. սեպտեմբերի 20-ին թուրք-թաթարական ուժերը հարձակման անցան Խոզնավար, Քայանդուր և Տեղ գյուղերի ուղղությամբ։ Մեկօրյա կատաղի մարտերից հետո զավթիչները պարտված նահանջեցին։ Նրանց օգնելու ուղարկվեցին Շուշիում և Խանքենդում (այժմ՝ Ստեփանակերտ) կուտակված մուսավաթական ուժերը։ Երկրորդ հարձակման հրամանատար նշանակվեց Շիխլիսկին։ Նրա առաջ խնդիր էր գրված գավառը Տեղեկել, բաժանել երկու մասի, արյունալի հաշվեհարդար տեսնել Գորիսի շրջանի, ապա՝ Զանգեղուրի մնացած մասի հայ բնակչության հետ, նվաճել ամբողջ Զանգեղուրը, ապա Երբուր-Դարալագյազ՝ Նախշեանի հետ միասին ու հասնել Թուրքիա։ Շիխլիսկին հարձակման հրաման արձակեց նոյեմբերի 5-ին։ Հայ մարտիկները մարտնշում էին հերոսարար։ Չորս օրից հետո թշնամին հետ շպրովեց գլխովին շախչախված։ Եվ այսպես, Աղբեջանի փորձերը զենքի ուժով նվաճել Զանգեղուրը և ճզմել Արցախի հայությանը, վերջացան անհաջողությամբ։

1919 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում Հայաստանի և Աղբեջանի միջև ստորագրված համաձայնագրով դադարեցվեցին ռազմական գործողությունները և պայմանագրովածություն ձեռք բերվեց տարածքային հարցերի վերաբերյալ վեճերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով։ Հետևեց հերթական նենդ քայլը։ Իրեն հարաբերությունների բարելավման

միջոց՝ Սուլթանովը Աղբեջանի կառավարության անումից Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդին առաջարկեց Արցախի ամբողջ հայությանը փոխադրել նախիշեան, իսկ նախիշեանի թուրք-թաթարական բնակչությանը՝ Ղարաբաղ։ Սուլթանովը այդ առաջարկը հիմնավորում էր նրանով, որ «Ղարաբաղը կապված է Աղբեջանի հետ, իսկ նախիշեանը՝ Հայաստանի...»⁷¹։ Ղարաբաղի Ազգային խորհրդը կտրուկ մերժեց այդ առաջարկը։

Մուսավաթական պարագությունները շարունակում էին փայփայել Արցախն ու Զանգեղուրը նվաճելու ժրագիրը։ Գործելով քեմալական Թուրքիայի թելադրանքով, նրանք կրկին ու կրկին զիմում էին ահարեկման և շարդերի քաղաքականությանը։ Մի քան օրվա ընթացքում Խանքենդում, Խսկերանում և Շուշի-Եվլիախ խճուղու վրա «Աղբեջանի զորքերը և կաղմակերպված բանդաները կոտորեցին 400-ից ավելի անմեղ հայերի», — վկայում է գեպերի ժամանակակից Հարություն Թումյանը⁷²։ Մեկ ուրիշ ժամանակակից՝ Արրամ Կիսիրեկյանը, այդ գեպերի առթիվ գել է. «Աղբերեջանի կառավարությունը չէր կարողանում մոռանալ Զանգեղուրի շարդը և որոշել էր կրկին փորձել իր ուժերը, որի համար նա որոշեց իր թույլ տված «սխալը» վերացնել՝ միանգամայն ապահովվելով Խենային Ղարաբաղից։ Աղբեջանից զորքերի պարտվելու ամենագլխավոր պատճառներից մեկը նա համարում էր Խենային Ղարաբաղը»⁷³, իրոք, այն օրերին, եթե Զանգեղուրի հայությունը կենաց ու մահու մարտեր էր մըզում թուրք-թաթարական վանդալների գեմ, Արցախի հայ աղատագրական զոկատները շարունակ հարձակումներ էին գործում ընդդեմ մուսավաթական այն ուժերի, որոնք գնում էին գեպի Զանգեղուրը, փակում էին հանապարհները, կասեցնում շարժումը, պարտիզանական պայքար էին ծավալում սազմական կետերում տեղադրված զորամասերի գեմ և այլն։

1919 թ. նոյեմբերի 10-ին տեղի ունեցած Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի կողմից ընտրված հանձնաժողովի և Ազգային խորհրդի համատեղ խորհրդակցությունը քննարկեց Զանգեղուրի հարցը և որոշեց հնարավոր բալոր միջոցներով զննել զանգեղուրիցիներին ու գյուրացնել նրանց պայքարը։

1920 թ. փետրվարից սկսած Արցախական աշխարհի գլխին սկսեցին թանձրանալ ու ամպեր։ Շուշի և մամանում նույրի փաշան և գեներալ նովրուղով։ Աղբեջանի կառավարությունը նրանց պարտավորեցնուամ է

⁷¹ ՀՀ 994 թ., գ. 314, ց. 1, գ. 34, թ. 151.

⁷² ՏԵՌ Մատենադարան..., մաս 11, էջ 90.

⁷³ ՀՀ 994 թ., գ. 314, ց. 1, գ. 34, թ. 163.

գործել «Հայն մասշտաբավ և ենթարկել տալ Ղարաբաղ-Զանգեզուրը»⁷⁴ Հայաստանի կառավարությունը բողոք է ներկայացնում Անդրկովկասու գոնվող դաշնակից պետությունների հրամանատարությանը և պահանջու միշոցներ ձեռնարկել ու փակել Աղրբեշանի զավթողական քաղաքա կանության ճանապարհը։ Աղրբեշանի կառավարությունն էլ իր հերթի պահանջներ է ներկայացնում Հայաստանի կառավարությանը։ Եվ ի՞նչ երկու կառավարությունների թղթապանակներն օր օրի հարստանում են իրար մեղադրող և իրար հակասող փաստաթղթերով։

1920 թվականի գարնան շեմին վիճակն ավելի է ծանրանում Արցա խում։ Սուլթանովն իր կառավարության անունից մի վերջին անգամ Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդից պահանջում է վերջնականապես վճռել Աղրբեշանին ենթարկվելու հարցը։ Նրան պատասխանելու համար Ազգային խորհուրդը որոշում է հրավիրել նոր՝ 8-րդ համագումար Այն տեղի է ունենում փետրվարի 28-ից մինչև մարտի 5-ը Վարանդայի Շոշ գյուղում։ Համագումարը խիստ գատապարտեց արցախահայության դեմ մուսավաթական Աղրբեշանի ստուժությունները և պահանջեց ճշտու թրագործել օգոստոսյան համաձյանագիրը, երկրամասում վերջ տալ կոտորածներին, այլապես «նման դեպքերի կրկնությունը կստիպի լեռնային Ղարաբաղի հայությանը իրենց կյանքն ու պատիվը պաշտպանելու համար դիմել համապատասխան միշոցների»⁷⁵։ Համագումարը լիովին արտահայտվեց մայր Հայաստանի հետ վերամիավորվելու օգտին։ Արցախի հայությունը ալլընտրանք չուներ։

Աղրբեշանի կառավարությունը խիստ դժգոհ էր Ղարաբաղի հայության ութերորդ համագումարի որոշումներից։ Սուլթանովը և նրա տերերը հասկանալով, որ ահարեկումով ոչնչի շեն հասնում, վճռեցին Արցախ Զանգեզուր հարցը լուծելու համար անհապաղ բնաշնչել արցախահայությանը։ Բարվից համապատասխան ցուցումներ ստանալով, նրանք սկսեցին անդամագին պատրաստություններ տեսնել։ Նախ ամրացրին Շուշին և Խանքենդ ավանը։ Մուսավաթական զորամասերը գրավեցին Ասկերանի անցուղին և դրանով իսկ ապահովեցին Աղրբեշանի կապը Շուշիի հետ։ Սուլթանովը փորձեց զորք մտցնել նաև Զիվանշիրի Ավան Ցուզբաշյանի կալվածքը՝ Մարգուշավան։ Շրջանի հայկական գյուղերի 86 ներկայացու ցիւներ հավաքվելով Մարտակերտում, միաձայն որոշում ընդունեցին մերժել Աղրբեշանի այդ անօրեն պահանջը, որը կոպտորեն խախտում էր

74 Նույն տեղ, ֆ. 200, ց. 1, գ. 249, թ. 139.
75 «Հայրենիք», 1923, թ. 11, էջ 814.

օգոստոսյան համաձայնագրի 16-րդ կետը։ Սուլթանովի պահանջով նորանոր զորամասեր էին կենտրոնացվում ոչ միայն Զիվանշիրի սահման ներում, այլև Ասկերանում, Խանքենդում, Շուշիում, Կարյաղինոյում, Ջերայիլում, Աղդամում և այլուր։

Նախապատրաստվում էին նաև արցախցիները։ Հետյաստանից այստեղ եկած արցախցի գործիչները կազմակերպեցին ինքնապաշտպանության դրկաներ, որոնց շաբաթ տեղավորված էր Վարանդայի Սարուշին գյուղում։ Այստեղ լուր է ստացվում, որ Աղրբեշանի զինված ուժերը պատրաստվում են մուսուլմանական ամանորի գիշերը (մարտի 23-ին) ընդհանուր հարձակում սկսել Արցախի դեմ։ Անհրաժեշտ էր նախապատրաստվել զիմագրության։ Սակայն զգացվում էր ուզմամթերքի և սննդամթերքի խիստ պակաս։ Սուլթանովը պատվիրում է Շուշի քաղաքի մուսուլման բնակիչներին պատրաստ լինել և սպասել իր աղդանշանին՝ քաղաքի հայկական մասը հրդեհելու և ավերելու համար։

Արցախի դեմ աղրբեշանական ուժերի հարձակումը սկսվեց 1920 թ. մարտի 22-ի երեկոյան։ Գանձակից մինչև Մուսուլմանլար-Զանգեզուր տեղի էին ունենում պատերազմական գործողություններ։ Մուսավաթական զինված ուժերը թուրք պահների հրամանատարությամբ փորձեցին թարթառի ուղղությամբ ներխուժել Զրաբերդի շրջանը։ Զիվանշիրի հայ պաշտպանները զիմադրում էին հերոսաբար և հետ շպրտեցին թշնամուն։ Զրաբերդը մնաց անառիկ։

Մուսավաթական բանակի հիմնական ուժերը կենտրոնացվել էին Աղդամ-Ասկերան-Խանքենդ-Շուշի խճուղու և Քիրս-Շումի-Խծարերդ ուղղություններով։ Այստեղ առանձնապես կատաղի էին գործում Սուլթանովի կազմակերպած քրդական «համիդիե» զոկատները։

Գանձակեցի Դակի Ղազարի զոկատը, որն ուներ 350 զինվոր և ընդհանուր երեքօրյա ուզմամթերք ու սննդի պաշար, մարտի 27-ին և 29-ին Քյաթուկ գյուղի կողմից անընդհատ գործում է հակառակորդի ամրացած ուժերի վրա։ Ասկերանի ուղղությամբ գործող հայկական զորքերի շտաբը պետ Հարություն Թումյանը հետագայում գրում է. «Ասկերանի ուղղությամբ թշնամին նետել էր 30 հազարից ոչ պակաս կանոնավոր և անկանոն ուժեր։ Հայերը կովում էին, 300 կմ ավելի երկարությամբ սահմանի ամբողջ տարածության վրա»⁷⁶։ Այդ օրերին Ասկերանի ռազմաճակատում գործող զորամասերի պարենավորման գործը հիանալի էր կազմակերպում Մարտիրոս Արզումանյանը։

Ապրիլի 2-ի կոիմները Ասկերանի ճակատում իրենց թափով և կատա-

76 Մատենադարան..., III մաս, էջ 21.

զությամբ գերազանցեցին նախորդ օրերի կոփվները: Թայց ահա ապրիլ 3-ը գարձավ ապստամբ Արցախի համար ուն օր: Թշնամին իր գերազանց ուժերով ճեղքեց ճակատը և շարժվեց գեպի Շուշի: Արցախը բաժանվեց երկու մասի՝ Վարանդա, Դիզակ և Խաչեն, Զրաբերդ և Գյուլիստան: Աղբյուղաշանը հաստատ որոշել էր այս անգամ ամրող Արցախն առնել իր զենքի տակ, ճգմել հայ բնակչությանը, ապա զավթել Զանգեզուրը, իսկ կարմիր բանակի արշավանքի դեպքում ամրանալ այդտեղ ու դիմագրություն ցուց տալ:

Դալի Ղազարը խնդրում է իրեն փամփուշտ հասցնել: Թյաթուկ բերքերից խլված երկու հրանոթները: Փորձված հրետանավոր Դաստարի դիպուկ կրակոցները անակնկալի բերեցին թշնամուն: Աղբյուղաշանը նորանոր ուժերով համալրում էր գործող բանակը: Այդ օրերին Ղարաբաղի հայության դեմ հանված մուսավաթական կանոնավոր ու անկանոն զինված ուժերի ընդհանուր թիվը հասնում էր մի քանի տասնյակ հազար մարդու: Դալի Ղազարը կորուստներ շտալու համար իր ջոկատին հրամայում է նահանջել, իսկ ինքը մնում է և կովում մինչեւ վերջին փամփուշտը, որով վերջ է տալիս իր կյանքին:

Խանքենդի ուղղությամբ հերոսարար կովում էին գնդապետ Զ. Մեսյանի 400 զինվորները: Մեսյանին օգնում էին Ալեքսան Դային և սպա Հայանը: Նրանք գրավում են Խանքենդը, շրջապատում զորանոցները և զինաթափ անում աղբյուղանցի ասկյարներին:

Դիզակի ապօմանակատում հայ պաշտպանների հրամանատարն էր Հովհան Ստեփանյանը: Նրա օգնականն էր Սասունցի Մանուկը: Նրանք մոտ 450 զինվորներով կարողանում են ճանապարհ բացել գեպի Զանգեղուր՝ դուրս գալով շրջափակումից:

Այդ օրերին Արցախ աշխարհի ամենաողբերգական իրադարձությունները տեղի ունեցան Շուշի քաղաքում: Սովորանովն այստեղ, որ գարձել էր իր աթոռանիստը, նախապատրաստվում էր մեծ շուփով նշելու 1920 թվականի նովրուգ-բայրամը՝ ամանորը: Զորահանդեսին մասնակցելու համար Շուշի բերվեցին բազական թվով զորամասեր: Այստեղ էին եկել նաև մոտակա շրջաններից թաթարների ներկայացուցիչները և թուրք սպաներ: Սովորանովը յուր ստանալով, որ քաղաք է թափանցել հայկական մի ջոմատնել ասկյարներից զենք խել, հրամայում է «սրի ու հրի» ասկյալների գլխավորությամբ թափվում է քաղաքի հայկական մոլեռանդ խուժանը մասերը, հրդեհում, կոտորում բնակչությանը: Այդ սարսափելի օրը՝

յարտի 23-ին, սպանվում են հազարավոր տղամարդիկ, կանայք, երեխներ: Փրկվածները ցած իշած մառախուղի քողի տակ փախչում էին դեպի Վարանդա և Դիզակ: Այս վայրերում բնակչության մեծ կուտակումների և շրջափակման պայմաններում սովոր և տարափոխիկ հիվանդություններ են առաջանում, որոնք մարդկացին շատ կյանքեր խլեցին: Նրանք, ովքեր հասցրին փախչել Շուշիից, գերվեցին և հանձնվեցին ասկյարների ոհմակին: Թիֆլիսում տպագրվող «Սլովո» թերթը պատմում է, «Քաղաքի հայկական մասում չի մնացել քարր քարի վրա: Մուսուլմանական խուժանը մարտի 24-ին (պետք է լինի 23-ին—Հ. Ա.) ներս է խուժել այդ մասը և սկսել սպանել հայ բնակիչներին... Քաղաքի հայկական մասը մարտի 24-ի երեկոյան ներկայացնում էր իրենից կրակի մի ժողով: Ամենուրեք լսում էին ճիշեր, հառաջանքներ և լաց... Հայկական մասից ոլինչ չի մնացել... Ունապարհներին փոքած են սպանվածների դիակներուն, Այդ օրերին Շուշիում զոհվեցին Ալեքսանդր Սատուրյանը (Ռուբենի), Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը, թժիկ Յարամիշյանը, բանաստեղծներ Մ. Զանումյանը, Փիրզանյանը, ուսուցիչներ Թավրիզյանը, Տեր-Գարբրիջյանը, մտավորականության և մշակույթի շատ ներկայացուցիչներ: Ոչ ստույգ տվյալներով զոհվածների թիվը հասնում էր տասը հազարի: Քաղաքում մնացած հայերին քշում են թաթարական քաղաքամասը, զոկում երեխաներին, կանանց ու ծերունիներին, ոմանց էլ տանում բանտ: Այդ գեհենի ականատես Կոստանդին Հարությունյանը պատմում է, որ բանտում իրենց չեն կերակրում, ծեծում էին ու բռնությունների դիմում⁷⁸:

Այդ վանդալիզմի մասին ահա թե ինչ են պատմում իրենք՝ թաթար ասկյարները իրենց հարազատներին գրած նամակներում: Նրանցից մեկը ապրիլի 8-ին Շուշիից գրում է մորը: «Ալղամից գուրս եկանք և մինչեւ Շուշի-ղալան գրավեցինք, ինչքան հայերի գյուղեր կային՝ այրեցինք ու իրենց էլ կոտորեցինք... Շուշի-ղալայում ինչքան հայեր կային՝ կոտորեցինք, կանանց էլ բանտարկեցինք, որոնց շատ նեղություններ էինք տալիս»⁷⁹: Արիթիվային այդ նույն փաստաթղթում մեջ է բերվում մեկ ուրիշ նամակ: ասկյար Խմայիլ Ալմանդանքեկովը Բաքվում գտնվող եղբորը գրում է: «Տեսածք էրմանիստանը (խոսքը վերաբերում է Շուշի հայկական մասին—Հ. Ա.) այրվում է, հինգ կամ տասը տուն պահեցին: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բալորին կոտորե-

⁷⁷ «СЛОВО», 16 апреля 1920 г.

⁷⁸Տե՛ս ՀՀ ՊԿԸ, ֆ. 314, գ. 1, գ. 33, թ. 228—229.

⁷⁹ Խովն տեղը, ֆ. 200, գ. 1, գ. 563, թ. 113.

շին, մինչև անգամ ավետարանը, խալիֆին (եպիսկոպոսին)... նշանագործակիրին սպանելուց հետո գլուխները կտրում, բազարներում պտտեցնել էին տալիս»⁸⁰: «Այս կողմերում այլևս ոչ մի հայ չեք գտնի, — շարունակած է նամակագիրը, — և ոչ էլ այնպիսի թուրքի կարող եք հանդիպել, որ հարյուր հազարից պակաս թալան բերած չինի... Այս ժամին զորքը, թնդանոթները, գնդացիրները, խալիֆը (նկատի ունի Խալիֆ փաշային-Հ. Ա.)՝ բոլորն այսուղ են, մտադիր են Գորիսի կողմը գնալ, տեսնենք ին կողմն ինչպես է լինում...»⁸¹.

Հայաստանի կառավարությունը վճռեց անհապաղ օգնության հասնել արցախահայությանը: Նա նախ՝ դաշնակից պետությունների ներկայացուցիչներին հանգամանորեն տեղեկացրեց Արցախում տիրող ընդհանուր վիճակին: Այնուհետև՝ Զանգեզուրում գտնվող Հայկական զորամասերին կարգադրեց պատրաստվել Արցախ մտնելու:

Դաշնակից պետությունների ներկայացուցիչների միջնորդությամբ Քիֆիսում շտապ կերպով հարվիրվեց Անդրկովկասի երեք հանրապետությունների կոնֆերանս, որը հիմնականում քննության առավ հարեան Հանրապետությունների սահմանների, մասնավորապես Արցախի հարցը: Աղբեկանի մուսավաթական կառավարությունը հենց սկզբից ձգտում էր ձախողել կոնֆերանսը, անգամ փորձում էր դաշնակից պետությունների ներկայացուցիչների կողմից ստեղծված հանձնածողովին թույլ շտալ Արցախ մտնելու: Այլևս հապաղելու կինը դավաճանություն Արցախի հայության հանդեպ: Եվ ահա Հայաստանի Հանրապետության կառավարության կարգադրությամբ 1920 թվականի ապրիլի 14-ին Զանգեզուրի կողմից Արցախի Վարանդա գավառը մտան Դրոյի (Դրաստամատ Կանայիան), իսկ Ղափանի կողմից Դիզակ մտան Նժդեհի (Դարեգին Տեր-Հարությունյան) գորամասերը: Արցախահայությունը հայ ազատարարներին ամենուր դիմավորում էր ցնծությամբ, ամեն ինչում աշակցում նրանց: Եվ այսպես՝ երկար պայքարից ու տառապանքներից հետո Արցախը վերամիավորվեց մայր հայրենիքի հետ: Նահանգապետ Սուլթանովը շփորձեց դիմադրություն ցույց տալ Հայաստանի Հանրապետության գինված ուժերին՝ գերադասելով իր ասկյալներով շրջափակված մնալ Շուշիում:

Այդ օրերին կազմվեց Արցախի ժամանակավոր կառավարություն, որի կազմի մեջ մտան տարբեր կուսակցությունների ներկայացուցիչները:

Կառավարությունն իր առաջին իսկ նիստում, որ տեղի ունեցավ 1920 թ. ապրիլի 23-ին, քննարկելով արցախահայության կողմնորոշման

հարցը, որոշեց պաշտպանել Արցախը մայր հայրենիքի հետ վերամիավորելու երկրամասի հայ բնակչության արդարացի պահանջը: Աշխատանքի և երկրագործության բաժանմունքի վարիչ Արշավիր Թամալյանը իր կողություն առաց: «Ներկա պահին Ղարաբաղի հայության ձգտումը հայկական կողմնորոշումն է. երբեք և ոչ մի գեպքում Աղբեկանի հետ կապահական կողմնորոշումն է. երբեք և ոչ մի գեպքում Աղբեկանի հայությունը լինելու»: Ներփին գործերի վարիչ Աստանական կողմնորոշումը կապահատուր Ավետիսյանն իր ելույթում ընդգծեց, որ «Հայկական կողմնորոշումը պետք է բացարձակապես հայտարարվի, նույնիսկ այն դեպքում, որումը պետք է բացարձակապես հայտարարվի, նույնիսկ այն դեպքում, եթե ուսական մեծ բանակը (հսկադրը նկատի ունի 11-րդ բանակը՝ Հ. Ա.) կարշավի Կովկաս: Նրա առաջ էլ պիտի գրվի այդ պահանջը... Մեր ժողովով կողմնորոշումը պետք է պարզ լինի. նույնիսկ սոցիալիստական կարգերի միջոցին Ղարաբաղը և Զանգեզուրը Հայաստանի հետ պետք է լինեն: Ահա և տողեր արդարադատության վարիչ Նիկոլայ Խախանյանի կողությունը. «Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյությունը պահպանելու միջոցը Հայաստանն է...»: Հարություն Թումյանը պահանջեց, որ «Ղարաբաղը կառավարվի Ազգային խորհրդի միջոցով, ունենալով Հայաստանի կառավարության բոլոր մարմինները»⁸²:

Ապրիլի 25-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում հրավիրված Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը միաձայն ընդունեց և հոչակեց հետևյալ որոշումը:

1. Գեղյալ հայտարարել արցախահայության 7-րդ համագումարի անունից Աղբեկանի կառավարության հետ կնքված ժամանակավոր համաձայնությունը՝ ելնելով այն բանից, որ այն խախտվել է Աղբեկանի զորքերի կողմից Շուշիում և գյուղերում հայ բնակչության դեմ կազմակերպված հարձակմամբ:

2. Հոշակել կենացին Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը որպես նրա անբաժան մաս:

3. Ենդրել Հայաստանի Հանրապետության Մոսկվայում գտնվող պատվիրակությանը՝ համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը⁸³:

Ասկած է պարզ ու հստակ:

Այդ օրերին ժամանակավոր կառավարության կոչով համագումարներ և ժողովներ էին տեղի ունենում Արցախի գավառներում, գավառակներում և գյուղերում: Ապրիլի 27-ին Զիվանշիրի ներքին և գերին մասերի հայկա-

80 Նույն տեղը:

81 Նույն տեղը:

կան գյուղերի 86 ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած ժողովն արձանագրեց, որ Աղրբեշանի կառավարությունը կոպիտ կերպով խախտել է Հարաբաղի հայության 7-րդ համագումարի ընդունած համաձայնագիրը: Այսպիս, մուսավաթական զինված ուժերի և մուսուլմանական ընակշության ձեռքով ավերվել են 3000 բնակիչ ունեցող Մարզուավան, Մարզա և այլ գյուղեր: Հետևապես ջիվանշիրցիներն իրենց իրավունք են վերապահում շրնդունել Աղրբեշանի իշխանությունը⁸⁴, երկու դաշտի ապրիլի 29-ին՝ Աղրբեշանում խորհրդացին կարգեր հաստատվելու հետո հաշորդ օրը՝ Մարտակերտում հրավիրված եալենի, Զրաբերդի և Գյուլիստանի հայ գյուղացիության համագումարը միաձայն սրոշեց «քննունել Հայաստանի Հանրապետության կողմնորոշումը» և ոչ մի դեպքում և ոչ մի պայմանով չենթակի Աղրբեշանի... կառավարությանը⁸⁵:

Արցախի ժամանակավոր կառավարությունը իր նիստում բազմից անդադառնալով կողմնորոշման հարցին՝ միշտ էլ հանգել է այն եղանակացության, որ «երբեք և ոչ մի պայմանով» հնարավոր չէ «գտնվել Աղրբեշանի սահմաններում» և որ արցախահայությունը «պետք է միան ընդհանուր հայությանը՝ կազմելով Հայկական Հանրապետության անքան մասը»: Արցախը պաշտոնապես ընդունում է Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը, հիմնը, պատմը: Նիստերից մեկում որոշվում է Արցախը ենթարկել Զանգեզուրի նահանգապետությանը և այսպիսով՝ Արցախն ու Զանգեզուրը միասին կազմեն Հայաստանի Հանրապետության մի մասը:

1920 թ. ապրիլի 28-ին Աղրբեշանում խորհրդացին կարգեր հաստատվելուց հետո, ապրիլի 29-ին և 30-ին, հեղկոմներ ստեղծվեցին Շուշիում, Կարյագինյոյում, Աղդամում և այլուր: Կարմիր բանակի զորամասերի մոտենալը Արցախի սահմաններին Սովորանովին ստիպում է դիմակավորվել: Ապրիլի 29-ին նա ստեղծում է Ղարաբաղի հեղկոմ և իրեն հռչակում նրա նախագահ, Դա խոր զայրույթ առաջացրեց արցախահայության շըրվորների անունից հեռագրեր են ուղարկվում Վ. Ի. Լենինին և Աղրբեշանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին: Մայիսի 14-ին լուծարքի ենթարկեց Սովորանովի հիմնած հեղկոմը և նրա փոխարեն ստեղծվեց նոր հեղկոմ, իսկ Սովորանովը ձերբակալվեց և տարվեց Բաքու: Թվում էր, թե Հայության այդ դահճճը կենթարկվի արժանի պատժի: Սակայն Աղրհեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովի միջնորդությամբ նա ազատվեց

⁸⁴ ՏԵ՛՛ Խոյն տեղը, գ. 563, թ. 193.

⁸⁵ Փաստաթուղթ № 12.

րանտից և ապահով տեղափոխվեց Պարսկաստան, որտեղ շարունակեց իր հականայ և Հակախորհրդացին գործունեությունը:

Մարդիկ սպասում էին, որ Աղրբեշանում խորհրդացին կարգերի հաստատումով վերջ կտրվի Արցախի և Զանգեզուրի նկատմամբ Աղրբեշանի զավթողական քաղաքականությանը: Բայց այդպես չեղավ. արցախահայության գոյամարտը թեակոխից նոր ու թերեւս ավելի գժվարին շրջան: 1920 թվականի ապրիլի 30-ին Խորհրդացին Աղրբեշանի արտաքին գործերի ժողկում Մ. Հուսեյնովը Հայաստանի կառավարությանն է հղում հետևյալ հեռագիրը. «Աղրբեշանի Խորհրդացին Հանրապետության բանվորագյուղական կառավարությունը, հանձննս հեղափոխական կոմիտեի պահնջում է՝ նախ մաքրել ձեր գորքերից Ղարաբաղի ու Զանգեզուրի տարածքը, երկրորդ՝ քաշվել դեպի ձեր սահմանները, երրորդ՝ դարձեցնել ազգամիջյան կոտորածները: Հակառակ գեպքում Աղրբեշանի Սոցիալիստական Խորհրդացին Հանրապետության հեղափոխական կոմիտեն իրեն կհամարի Հայաստանի Հանրապետության հետ պատերազմական գրության մեջ: Վերջնագրի պատասխանի համար տրվում է երեք օր ժամանակամիջոց»⁸⁶: Մեկ օր անց Հայաստանի արտաքին գործերի նախարարի անունով ստացվում է երկրորդ վերջնագիրը, որի տակ ստորագրել էին Օրջոնիկիձեն, Կիրովը, Մեխոնոշշինը և Լեռնդովսկին:

Ցավալի է նշել, որ ազգերի ինքնորոշման իրավունքը հռչակած քաղաքական գործինները առաջին իսկ պատեհ առիթով շեն զլանում անտեսել այդ իրավունքը: Այդ մասին է վկայում նրանց վերջնագիրը: Այնտեղ յասնագորապես ասված էր. «...ԽենֆՈՀ անունից Հայաստանի կառավարությանն առաջարկում ենք անհապաղ դադարեցնել ամեն տեսակի ուազմական գործողությունները Խորհրդացին Աղրբեշանի տարածքում և ձեր զորքերը գորս բերել նրա սահմաններից: Դա պետք է կատարվի այս առաջակությունն ստանալուց հետո՝ քանչըրս ժամկան ընթացքում: Հակառակ պարագայում այն կիրագործվի Խուսաստանի կարմիր բանակի ուժերով, և դրա հետևանքների համար, ողջ պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի կառավարության վրա»⁸⁷:

Եվ այսպես, սույն վերջնագրով Հայաստանի Հանրապետությունից պահնջում է հայկական զորքերը, որոնք պաշտպանում են ինքնորոշման իրավունքը մայր երկրին միացած Արցախը, գորս բերել «Աղրբեշանի սահմաններից»: Նշանակում է, Արցախը առանց այլնայլության ուրիշ տարածք է նկատվում:

⁸⁶ ՀՀ ՀԺԸԿ, գ. 4033, գ. 3, գ. 4, թ. 1:

⁸⁷ ՀՀ ԳԳՆ, գ. 276, գ. 1, գ. 218, թ. 137:

Աղբբեշանի խորհրդային կառավարությունն իր հերթին մայիսի 8-ի Հայաստանի կառավարությանն ուղղած ռադիոհեռությունը կտրուկ պահանջում է հայկական զորամասերը դուրս բերել Ղարաբաղի սահմաններից: Հայաստանի կառավարությունը պատասխան հեռագրով հայտարարեց, որ Աղբբեշանի կառավարությունը ստուահարում է Ղարաբաղի և Զանգեզուրի աշխատավորների իրավունքներն ու կամքը: Հայաստանի կառավարության այդ օրերից պահպանված մի շարք փաստաթղթերում մերկացված է Խորհրդային Աղբբեշանի կառավարության քաղաքականությունը, որը նպատակ ուներ ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունը և իրագործել մուսավաթական Աղբբեշանի փայտայած ձգումը՝ միանալ Թուքբիային: Մայիսի 12-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից Աղբբեշանի ժողովրդին և արտաքին գործի ժողովով Մ. Հուսեյնովին (պատճենը՝ Լենինին և Զիշերինին) ուղարկված համար 2898 պատասխանում ասված է. «...Ձեր կառավարության հարձակումները Հայաստանի կառավարության դեմ ստիպում են հայտնել Ձեզ, որ ագրբեշանական հեղաշրջման իսկական իմաստը ըմբռնված և փահանգած է հայ ժողովրդի և նրա կառավարության կողմից ինչպես որ հարկն է, Այդ հեղաշրջումը իրեն խանրեցական մուսավաթական կառավարության փոփոխում, սոցիալիստական հեղափոխության կառավարության կողմից Աղբբեշանի պետական և քաղաքական կյանքում ըստ էության ոչ մի փոփոխություն չի մտցրել: Այսպես կոչված սոցիալիստական այդ կառավարության առաջին քայլն ուղղվեց Ղարաբաղի և Զանգեզուրի հայ աշխատավոր գյուղացիությանը Աղբբեշանի իշխանությանը և նթարկելուն, հակառակ ժողովրդի կամքին: Հայաստանին ուղղված վերնադիրը ձեր կառավարության հաստատման երկրորդ օրն իսկ իր ագրեսիվ քայլությունը չի մասնաւում մուսավաթական կառավարության նման նոտաներից, եթե նկատի առնենք նաև Ձեր կառավարության և տաճկական իմաստի ալիքմի ղեկավարներ Մուստաֆա Փեմալի... ձեր երկրի պետական կյանքի կազմակերպողներ էնվեր, Խալիլ և Նուրի փաշաների միջև գոյություն ունեցող կապն ու դաշինքը, այն փաշաների, որոնք իրենց արատավորել են Տաճկաստանում ու Կովկասում կազմակերպված հայկական սարսափելի կոտորածներով, այն ժամանակ բնական կինի, որ Հայաստանի կառավարությունը չի կարող Աղբբեշանի այժմյան կառավարության համապատասխան հիմքում համապատասխան է 11-րդ բանակի հրամանաւորության կամքանշը և 11-րդ բանակի հրամանաւորության կամքանշը և 11-րդ բանակի հրամանաւորության պահանջը և վճար Արցախի հետ կապված բոլոր

բյուների մասին, որ աեղի ունեցան նույիքի, Արեշի, Դանձակի, Շամախու, Ղարաբաղի և Գողթանի խաղաղ հայ ազգաբնակչության նկատմամբ²³: 1920 թ. մայիսի սկզբին 11-րդ կարմիր բանակի 32-րդ հրաձգային զիվիզիայի զորամասերը նվաճից շարժվեցին գեղի Արցախ՝ առանց հարցնելու արցախահայության կամքն ու ցանկությունը: Այդ օրերին 11-րդ կարմիր բանակի պատվիրտակությունը Սեր-Դարբիելյանի գիւղությամբ Վարանդացազ գյուղում հանգիպում ունեցավ Դրոյի հետ և կարականապես պահանջեց Հայկական զորամասերը գուրս բերել Արցախից: Դրոյ կանայանը պատասխանեց, որ այդ քայլը հակառակ է Խորհրդային Խուսառատանի հայտարարութ ազգերի ինքնորոշման ըստիրականըին: Արցախահայությունը զերամիավորվել է մայր հայրենիքի հետ, իսկ հիմա հարց է գրվում նրան անշատել ու միացնել Աղբբեշանին: Ուշագրավ է նաև այն փաստը, որ այդ օրերին Արցախում տեղադրված մուսավաթական նախկին բանակի գրեթե բալոր առկյարներին, որոնք արցախահայության գեմ շատ վայրագություններ էին գործել, ընդունում էին 11-րդ բանակի շարքերը՝ շատոց զերամիանդերձավորելով նրանց:

1920 թվականի մայիսի 12-ին Շուշի մասզ 11-րդ կարմիր բանակի 32-րդ գիւղիայի 281-րդ գումար՝ հրամանաւոր Արցախում և զինկում Դայգալովի զեկավարությամբ: Մայիսի 18-ին Շուշի եկամ ինքը՝ Կովկասին հակատի ուղամական խորհրդի նախագահ Ս. Կ. Օրշանիկիձեն, որը կատարվածի մասին մայիսի 22-ին Բաքվից հեռագրեց Վ. Ի. Լենինին:

Այսպիսով, 11-րդ կարմիր բանակի հրամանաւորության կողմից Արցախ հայտարարվեց Խորհրդանի մասը: Դա լիովին անհրադացեց էր, ազգերի ինքնորոշման ոկրտությունի կողիտ խախտում:

Արցախի ժամանեակազոր կառավարությունը որոշեց հրավիրել գավառական համագումարներ և քննարկել սենեգծաված իրադրության մեջ արցախիների կողմնորոշման հարցերը: Մայիսի 14-ին Հաղորդի գյուղում տեղի ունեցած Վարանգայի շրջանային համագումարը խիստ քննադատության ենթարկեց 11-րդ բանակի մասությունը հետև Արցախում ստեղծված իրողությունները և հրաժարվեց ընդունել Արցախը Աղբբեշանի մաս նաև աշելու վերաբերյալ 11-րդ բանակի հրամանաւորության պահանջը:

Տող գյուղում աեղի ունեցած Դիզակի շրջանային համագումարը նույնպես գատապարտեց Աղբբեշանի կառավարության և 11-րդ բանակի հրամանաւորության պահանջը և վճար Արցախի հետ կապված բոլոր

²³ Անդ աւզը, թ. 200, ց. 1, գ. 581, թ. 44—45.

²⁴ Տ 55-րդ Ժունաթուագը թ. 15.

«Խնդիրների լուծումը կատարել ոչ թե անշատ և առանձին, այլ Հայութանի Հանրապետության հետ միասին»⁸⁰,

1920 թ. մայիսի 22-ին տեղի ունեցավ Ղարաբաղի ժամանակավոր նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը: Արշավիր Թամալյան «թերեւ կարողանան փրկել տեղական բոլշևիկները՝ իշխանություն իրենց ձեռքը վերցնով և Ղարաբաղը հայտարարելով Խորհրդայիշանը նշեց՝ «Քանի որ այլևայլ պայմաններ կապել են մեզ Հայաստանի հետ, մենք կարող ենք նրա հետ լինել: Այդ մասին պետք է հայտենալ առաջարկել Արցախի աշխատավոր կառավարությունը խնդիր թյանը, միաժամանակ հայտարարեց, որ Արցախի հայությունը որոշել է գրեթե և ոչ մի պայմանով իր բախտը չկապել նույնիսկ՝ Խորհրդայիշ Արցախը, որ առեղծել է հեղափոխական Ռուսաստանը, շարունակելով պաքական հայուն վիճակի:

Սակայն հանգամանքները այնպիսի զարգացում ստացան (Խորհրդական Ռուսաստանի ներկայացուցիչների երկալը, Հայաստանում բոլոր շեղաշըման մասին տարածված լուրերը և այլն), որ Դրսի լեռան փեշերով վերագրած Գորիս՝ ամբողջ զինանոցը և պարենի պատասխանական հանդիպությունը ավելի ուժեղացնել, մինչև կստեղծվի քա-

Հաջորդ օրը Թաղավարդ գյուղում տեղի ունեցած Արցախի հայության 10-րդ համագումարը կեռնային Ղարաբաղը հայտարարեց Խորհրդայիշն, հունիսի վերջը հեղկում՝ Սաքռ Համբարձումյանի նախագահությամբ: Մինչեւ գյուղերաւագության այնպիսի հետագա ամսագումարը կազմակերպվեց Արցախի բոլոր գավառներում և

Արցախահայության այն հույսը, սակայն, թե խորհրդայիշն կարգերի վերում, շուտով հօգու ցնդեց: Խորհրդայիշն Ադրբեջանի քաղաքականութելակերպը, միայն այն տարրերությամբ, որ այս նոր կարգերի օրոք

⁸⁰ Փաստաթուղթ Խ 14,

⁸¹ Տե՛ս Փաստաթուղթ Խ 12,

շինտերնացիոնալիզմի» գրոշի տակ փրուն ճառեր ու կարգախոսներ էին արտասանվում: Հենց այդ ամենն ի նկատի ունեին, երբ Թիֆլիսի արախացիների հայրենակցական ընկերության հանձնարարությամբ Սիմոն Գիրումյանը և Արամազիս Երզնկյանը 1920 թվականի հունիսի 9-ին Վ. Ի. Փիրումյանը և Արամազիս Երզնկյանը պատմում էին Արցախի քաղաքական և տնտեսական վիճակի, Ադրբեջանի խորհրդայիշն կառավագարական՝ Ղարաբաղին տիրանալու նկարումների մասին: Զէ՛ որ «ուղղության՝ Ղարաբաղին տիրանալու նկարումների և բռնի միջնական բաղաքականությունը մինչև այժմ Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու քաղաքականությունը մինչև այժմ Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու քաղաքականությունը: Եղել է Թուրքիայի, Անտանտի և մուսավաթի քաղաքականությունը: Նրանք իննդիր են դառնամ հնարավորություն տալ Արցախի գյուղացիունական տականը՝ ուրի հայեցողությամբ կազմակերպելու կյանքը, աշխատավորությանը՝ ուրի հայեցողությամբ կազմակերպելու կյանքը, աշխատավորությանը՝ աններին տալ իսկական ինքնորոշում: Այդ գյուղացիության կամքից աններին մի որոշում կդիմում որպես բռնություն և կզրկի նրան ինքափառ այն իրավունքից, որը ծանր պայմաններում երեք տարի պաշտոնական առաջարգը, որ առեղծել է հեղափոխական Ռուսաստանը, շարունակելով պաքական հայուն վիճակի:

Հայտնի է, որ դեռևս 1919 թվականի հունիսի 3-ին 11-րդ կարմիր բանակի ռազմական խորհրդի անդամ Ս. Մ. Կիրովը՝ նշելով մասավարականների պահանջների անհիմն լինելը, Վ. Ի. Լենինին հաղորդում է՝ թականների կառավարությունը՝ Ղարաբաղը ու Զանգեզուրը լին ճանաշում որ «Հայկական մարզեր» Ղարաբաղը և Զանգեզուրը լին ճանաշում Ադրբեջանի կառավարությունը⁸²: Այդպես էր նաև հիմա՝ 1920 թվականի Ադրբեջանի կառավարությունը⁸³: Այդպես էր նաև հիմա՝ 1920 թվականի Ադրբեջանի կառավարությունը տարածքում խորածուանը, երբ արդեն Ադրբեջանի Հանրապետության տարածքում խորհրդայիշն իշխանություն էր հաստատվել և Ղարաբաղ ու Զանգեզուր էին մտել 11-րդ բանակի գորամասերը:

Ադրբեջանի Հանրապետության ղեկավարները, ի դեմս հեղկումի նախագահ Ն. Նարիմանովի, արտաքին գործերի կոմիսար Մ. Հուսեյնովի և ուրիշների, բռնել էին կեղծիքի, կուսակցական և պետական ղեկավարելու ուրիշների, բռնել էին կարծիք «մշակելու» և ներին մոլորության մեջ գցելու, հասարակական կարծիք հայության Արցախի, Զանգեզուրի, նախիջևանի և այլ տարածքների հայության նկատմամբ ուժ ու բռնություն գործադրելու քաղաքականություն: 1920 թվականի ամռանը Ն. Նարիմանովը Վ. Ի. Լենինին ուղարկած հեռագրում անմակում վճռականորեն հայտարարում էր, թե Ղարաբաղը, նախիջևանը և Զանգեզուրը, որոնք ինտերվենտները լին կարողացել շատ առաջարկան պետք է մտնեն Ադրբեջանի կազմի մեջ: Հակուպացնել, այսուհետև պետք է մտնեն Ադրբեջանի կազմի մեջ:

⁸² ՀՀ ՀՀԿ Փառագիր, ֆ. 1022, ց. 4, գ. 50, թ. 1—12:

⁸³ С. М. Киров. Статьи, речи, документы, т. I, М., 1936, ст. 144:

յաստանի Հանրապետության պատվիրակությունը է. Շանթի գլխավորությամբ 1920 թ. հունիսին ժամանեց Մոսկվա՝ բանակցելու Խորհրդային Ռուսաստանի հետ։ Հովհաննին է. Շանթի պատվիրակության հետ Գ. Վ. Զիշերինի բանակցությունների ժամանակ Բաքվից Մոսկվա՝ Վ. Ի. Լենինի, Գ. Վ. Զիշերինի հասցեով (պատճենը՝ Վլադիկավկազ, Ա. Կ. Օրջոնիկիձեին) ուղարկված հեռագրում ասված է. «Ինչ վերաբերում է իրեն վիճելի Զանգեզուրին և Ղարաբաղյն, որոնք արդեն մտել են Աղրբեշանի կազմի մեջ, վճռականորեն հայտարարում ենք, որ այդ շրջանները անվիճելիորեն այսուհետեւ ևս պետք է մնան Աղրբեշանի կազմում։»

Դուլֆայի և Նախիջևանի շրջանները... ինչպես ռազմական տեսակետից, այնպես էլ Թուրքիայի հետ անմիջական կապի նպատակով պետք է գրավվեն մեր զորքերի կողմից և միացվեն Աղրբեշանին։ Մեր կողմից մենք դաշնակցական կառավարության հետ ամեն մի բանակցություն համարում ենք ավելորդ, իսկ Թուրքահայաստանի հարցը ձեր մտադրված ձևով՝ անժամանակաց⁹⁴. Այդ հեռագրի հեղինակներն էին Ն. Նարիմանովը, Բ. Մդիքանին, Ա. Միկոյանը։ Նեղն ընկած Գ. Զիշերինը ստիպված է լինում դիմել Ս.-Օրջոնիկիձեին՝ խնդրելով, որ նա ազդի Աղրբեշանի ղեկավարների վրա և սանձի նրանց ախորժակը, նարիմանովին շերմորեն պաշտպանում է Խորհրդային Ռուսաստանի ազգությունների կոմիսար Ի. Ստալինը։ Նա Ս. Օրջոնիկիձեին՝ ուղարկած հեռագրով թելադրում է իր կամքը. «Եմ կարծիքն այն է, որ պետք է որոշակիորեն պաշտպանել կողմերից մեկին, տվյալ գեպում, իհարկե, Աղրբեշանին՝ Թուրքիայի հետ միասին»⁹⁵.

Բոլցեկիյան կուսակցության և Խորհրդային պետության մի շարք գործիչներ (Ս. Կիրով, Ս. Օրջոնիկիձե, Գ. Զիշերին, Բ. Լեգրան, Ալ. Մյասնիկյան և ուրիշներ) արդարացնորեն գտնում էին, որ Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը և ուրիշ մի շարք հայարնակ տարածքներ պատմականորեն կազմում են Հայաստանի անքակտելի մասը և, հետևապես, պետք է վերամիավորվեն նրա հետ։ Այդ խնդրում համեմատարար վճռական էր գործում Ռուսաստանի Հանրապետության արտաքին գործերի կոմիսար Գ. Զիշերինը։ Նա 1920 թվականի հունիսի 21-ին Վ. Ի. Լենինի այն հարցումին, թե «չի՞ կարելի արդյոք նարիմանովի հետ գործն ավարտել խաղաղությամբ», պատասխանում է. «Ղարաբաղը բաւ հայկական բնակավայր է»⁹⁶. Դրանից մի քանի օր առաջ՝ հունիսի 19-ին, Ս. Օրջո-

նիկիձեին ուղարկած հեռագրում Զիշերինը գրում է. «Ղարաբաղը, Զանգեզուրը, Շուշին, Նախիջևանը, Զովֆան չպետք է միանան ո՛վ Հայաստանին, ո՛վ էլ Աղրբեշանին, այլ պետք է գտնվեն ուստական օկուպացիոն զորքերի հակողության տակ՝ այնտեղ ստեղծելով խորհուրդներ, քանի որ այլ վճիռը կձախողի խաղաղության մեր քաղաքականությունը»⁹⁷. Այդ տեսակետը արդարացնելու համար Զիշերինը հովհանի 7-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Ա. Օհանջանյանին ուղարկած հեռագրում գրել է. «Կստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեն վիճելի տարածքային հարցերի հանգիստ ու անշառ քննումը»⁹⁸.

Նարիմանովը պանթուրքական քաղաքականությունից հրաժարվելու միտու շաներից Գ. Զիշերինին մեղադրելով «անհուսալի խառնաշփոթ» ստեղծելու մեջ, 1920 թ. հովհաննին Վրաստանում Աղրբեշանի ներկայացուցիչ հետ հեռախոսային խոսակցության ժամանակ պահանջում է անհրաժեշտ հարկադրական միջոցներ ձեռնարկել վիճելի մարզի հայ բնակչության նկատմամբ, որպեսզի նա կողմնորոշվի Աղրբեշանին միանալու օգտին։ Այդ մասին շատ բնորոշ արտահայտվել է Հայաստանի Հանրապետության Բաքվի ղետպանը 1920 թ. օգոստոսի 8-ին իր կառավարությանն ուղարկած հաղորդագրության մեջ։ Նա գրում է, թե Նարիմանովը «շունի նույնիսկ թաթի ցեղին հատուկ վարվեցողության եղանակը» և նա «շատ ակնհայտորեն երևան է բերում իր հակահարկան տրամադրությունը և լի աշխատում այդ թաքցնել քաղաքավարության քողի տակ։ Նա շատ հաճախ մոռանում է, որ կոմունիստ է, իր ազգային թրքական պատկերը ցայտուն կերպով հրապարակ է հանում։ Անշուշտ, մյուսները դրանից ավելի կոմունիստ և ինտերնացիոնալ չեն, բայց իրենց մերժումները և հակարանները այդքան ցինիկ կերպով չեն արտահայտում»⁹⁹.

Խորհրդային Աղրբեշանի նվաճողական քաղաքականությունը դատապարտելու և դրանք խափանելու նպատակով է, որ Գ. Զիշերինը 1920 թ. հունիսի 29-ին Լենինին գրել է. «Գործերի նոր վիճակը իր արտահայտությունը պետք է գտնի նաև Անդրկովկասի մեր պլաններում և մեզ ստիպի ավելի զգույշ վերաբերվել Օրջոնիկիձեի, Մդիքանու, Նարիմանովի և այլոց հարձակողական պլաններին։ Այդ ընկերները սկզբում ձգտում էին զենքի ուժով խորհրդայնացնել Վրաստանն ու Հայաստանը և խստ հիասթափվեցին, երբ մեր Կենտկոմը այդ մերժեց։ Արտաքին գործերի

⁹⁴ Ադր. ԽՍՀ 22Ե ՊԿԱ, գ. 400, գ. 69, թ. 182.

⁹⁵ ЦГАОР СССР, ф. 130, оп. 4, д. 469, л. 142.

⁹⁶ Центральный партиархив Октябрьской революции СССР (далее ЦПА ИМЛ), ф. 2, д. 1451, л. 2.

⁹⁷ Նոյեմբեր, գ. 64, ց. 2, գ. 5, թ. 19.

⁹⁸ Նոյեմբեր, գ. 11, թ. 13.

⁹⁹ ՀՀ 22 ՊԿԱ, գ. 200, ց. 1, գ. 4, թ. 17.

կոմիսարն այնուհետև նշում է, որ Նարիմանովը չի հրաժարվում Վրաստանի և Հայաստանի ղեմ ուղղված հարձակողական տակտիկայից: «Այդ կոնֆլիկտի վերջին փուլը, — շարունակում է նա, — Աղբեզանի կողմից պահանջներ ներկայացնելն էր հսկայական տարածքների նկատմամբ, որոնք մշտապես պատկանել են Հայաստանին և փաստորեն գտնվում են Հայաստանի Հանրապետության ձեռքում: Աղբեզանի կառավարությունը պահանջ է ներկայացնել Ղարաբաղի, Զանգեզուրի և Շարուր-Դարձագյաղի գովառների նկատմամբ՝ Նախիջևանի, Օրդուրադի և Ջուֆայի հետ միասին: Այդ տարածքի մեծ մասը փաստորեն գտնվում է Հայաստանի Հանրապետության ձեռքում»: Չիշերինը չի թաքցնում, որ Նարիմանովը ցանկանում է այդ տարածքները գրավել խորհրդային զորքերի միջոցով: Իրոք այդպես էլ եղավ. փաստորեն Արցախը գորագրավվեց 11-րդ բանակի կողմից: Արտաքին գործերի կոմիսարը գտնում է, որ չի կարելի «Հայաստանից վերցնել նրա տարածքի մի մասը և տալ Աղբեզանին, այդ նշանակում է մեր արևելյան քաղաքականությանը տալ միանգամայն կեղծ բնույթ... Մասնավորապես Հայաստանի նկատմամբ նման քաղաքականությունն անուղղելի հարգած կհասցնի կոմունիզմի գործին»¹⁰⁰:

Հուկիսի թիւն Գ. Չիշերինը հեռագրում է Ս. Օրջոնիկիձեին. «Մեզ քազմից հայտարարում էին, որ իր Ղարաբաղն ու Զանգեզուրը մեր ժամանակավոր օկուպացիոն իշխանության տակ թողնելը, դրանք Աղբեզանին տալու փոխարեն, կխորտակի խորհրդային իշխանությունը թաքում: Հաղորդեցեք պարզ ու կոնկրետ կերպով, թե բանը ինչումն է: Եթե բանը մահմեղական ազգայնամոլների զավթողական ձգտումները հոգանագործեն է, ապա դա վատ քաղաքականություն է, այդ ուղղությամբ կնպաստենք առակ ազգայնական բնագդների զարգացմանը, կհավասարվենք մուսավաթականներին և դրանով իսկ կօգնենք նրանց...»¹⁰¹:

Այս և նման մի շարք անհերքերի փաստեր ունենալով իր ձեռքի տակ՝ ՌԿ(Բ)Կ կենտրոնի քաղրյուրոն 1920 թ. հուկիսի 7-ին ընդունեց մի որոշում, որը վերաբերում էր Կովկասում վարվող քաղաքականությանը: Այդ որոշում-Հրահանգի 8-րդ կետով Կովկասում աշխատող կոմունիստներին պարտավորեցնում էին կարմիր բանակի զորամասերի կողմից զրադեցրած տարածքների բնակչությանը բացատրել և համոզել, որ այդ միջոցառումը միայն ժամանակավոր բնույթ է կրում, որի նպատակն է կանխել ազգամիջյան կոտորածները և հավաստիացնում է, որ տարածք-

ների պատկանելության հարցը կլուծի խառը հանձնաժողովը, որը կղեկավարվի այդ տարածքների էթնիկական կազմի ցանկությամբ¹⁰²: Միանգամայն հստակ ու պարզ է ասկած, որ կպաշտպանվի ազգերի ինքնորոշման ռկարունքը: Մնում էր միայն բարեխղճորեն իրագործել կարելոր նշանակություն ունեցող այդ որոշումը:

Սակայն Աղբեզանի ղեկավարությունը՝ Ն. Նարիմանովի գլխավորությամբ, ի շիք գարձրեց այդ որոշում-հրահանգը: Օգտագործելով պրոպագանդայի բոլոր հնարավոր միջոցները՝ նա ջանում էր այն համոզումը ստեղծել, թե իր Ղարաբաղը հնուց ի վեր եղել է աղբեզանական տարածք և քանի որ տնտեսապես սերտորեն կապված է Դաշտային Ղարաբաղի և Գանրապետության այլ շրջանների, մանավանդ արդյունաբերական թաքվի հետ, ապա անհնարին է այն անշատել Աղբեզանից: Այդ նույնը պնդում է նաև պատմաբանն Դ. Գուլիելը: Նա փորձում է հիմնավորել Հանրապետության ղեկավարների հավակնությունները Ղարաբաղի նըկատմամբ և ուրիշ բան չգտնելով՝ մեջտեղ է քաշում նույն տնտեսական գործունը: Դ. Գուլիելի կարծիքով նպատակահարմար չէ, որ Ղարաբաղը միանա տնտեսապես թույլ զարգացած Հայաստանի հետ, քանի որ վերշինս անկարող կինի օգնել ուտքի կանգնելու տնտեսապես քայլայված, ավերված Ղարաբաղին: Արդեն այն ժամանակ մեկողի հրելով ազգային ինքնորոշման իրավունքը՝ Գուլիելները առաջին գիծ են քաշում սոցիալական հարցերը: Խսկ երբ հարցը վերաբերում էր Նախիջևանին, այդ նույն սոցիալական հարցերը հետ էին մղվում, առաջ քաշելով երկրամասի բնակչության գերակշիռ մասի ազգային հատկանիշը:

1920 թ. օգոստոսի 10-ին (հիշեցնենք, որ դա Սկրի պայմանագրի ստորագրման օրն է) համաձայնագիր կնքվեց Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև, ըստ որի խորհրդային զորքերը զրագում են վիճելի տարածքները՝ կեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը՝ մինչև դրանց հետագա ճակատագրի վերջնական լուծումը:

Մինչ այս, մինչ այն, Խորհրդային Սկրի պայմանագրի ղեկավարները՝ Ն. Նարիմանովը և մյուսները, հետևողականորեն իրականացնում էին խորամանք մի ծրագիր: Արցախի գրեթե բոլոր ղեկավար գիրքերում առաջ էին քաշում ազգությամբ աղբեզանցիներ, և երկրամասի ղեկավար մարմինների ղեկը առանց ազմուկ-աղաղակի անցնում էր աղբեզանական իշխանությունների ձեռքը: Դրանում որոշ դեր խաղացին մի քանի հանգա-

¹⁰⁰ ЦПА ИМЛ, ф. ЦК КПСС, общий отдел, VI сектор, д. 44—3/За,

¹⁰¹ ЦПА ИМЛ, ф. 64, оп. 2, д. 5, л. 52,

¹⁰² Տե՛ս ЦПА ИМЛ, ф. ЦК КПСС, общий отдел, VI сектор, д. 44, 3/3-а, л. 70.

մանքներ: Այդ ժամանակ պատմական Արցախի տարածքը բաժանված էր ջերայիլի, Շուշի և Ջրվանշիրի գավառների, որոնք տարածվում էին մինչև Արաքս և Կուր գետերը: Այսպիսով, այդ գավառների դաշտային և լեռնային տարածքները մի ամբողջություն էին կազմում, որտեղ արդեն արցախահայությունը գերակշիռ տոկոս լինել չէր կարող: Եվ հետո Լեռնային Ղարաբաղի հարցում նարիմանովի քաղաքականությունը պաշտպանում էին Ա. Միկոյանը, Լ. Միրզոյանը, Հ. Նազարեթյանը, Ա. Ղարագյանը և ուրիշ հայ անհեռատես գործիչներ:

Նարիմանովի շքախումը չէր խորշում նաև կաշառքի, ահարեկման և նման այլ արգահատելի միջոցներից:

Հայտնի է, որ նարիմանովի գործակալ Ասադ Կարամը, որը 1920 թվականի ամսանը կարճ ժամանակով աշխատել է որպես Ղարաբաղի հեղկոմի նախագահ, Զանգեզուրի հեղկոմին ուղարկած նամակում խոստովանում է, թե ինչպես ինքը Աղրբեզանի իշխանություններից ստացած 200 միլիոն ռուբլ պետք է շանար կաշառել հայ մարդկանց և նրանց միջոցով իրագործել Ղարաբաղի և Զանգեզուրի հայ բնակչության ինքնապաշտպանական գործողությունների ձախողումը: Նա խորհրդածություններ էր անում այն մասին, որ հարկավոր է մի կողմ թողնել «մարդասիրությունը», քանի որ «դրանով շի կարելի պետություն ստեղծել, երկրներ նվաճել»¹⁰³: Ինչպես պարզորոշ երևում է այդ խոստովանություններից, Աղրբեզանը կառավարողները լավ էին յուրացրել թուրք-Բարարական գործելակերպի բոլոր ձևերն ու եղանակները:

Հայության համար դժվարին այդ միջոցին քեմալական Թուրքիան գործեց մի քայլ, որի նպատակն էր օգնել աղրբեզանական իշխանություններին՝ նախիշեանի, Զանգեզուրի և Արցախի հարցը լուծելու հօգուտ իրենց. 1920 թվականի սեպտեմբերի վերջին թուրքական զորքերը, արհամարհելով Սկրի պայմանագիրը, ներխուժեցին Հայաստանի տարածքը՝ իրենց ճանապահներն սփռելով մահ և ավերածություններ:

Ստեղծված իրադրության մեջ ՌԽՖՍՀ-ն հանդես էր գալիս միջնորդի դերում, ինչպես երևում է Գ. Զիլերինի՝ 1920 թ. նոյեմբերի 5-ի լեզուանին հղած նամակից, դեռ պարզ շիմանալով, թե Թուրքիան ինչ նպատակով է հարձակել Հայաստանի վրա:

Այդ միտքն է արտահայտում նաև Սոսկվայում մենշևիկյան Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Մախարաձեն 1920 թ. հոկ-

տեմբերի 19-ին իր կառավարության ուղարկած հեռագրում: Թուրքական հրամանատարության այն հայտարարությունը, թե իրենք գնում են հայ ժողովրդին ազատագրելու դաշնակներից, հավանական է, շփոթության մեջ էր զցել շատերին: Հիշենք, որ Հայաստան մտած թուրք դաշիճները գործում էին իրեն նոր գաղափարներ կրող «կարմիրներ»: Դահիճ Կարաբերիրը առաջնորդում էր ասկյարների «կարմիր» գնդերը: Դժվար չեւզակի կապ տեսնել Հայաստանի նկատմամբ նարիմանովի և Թուրքիայի վարած քաղաքականության միջև: Նարիմանովը ձգուում էր «կարմիր թուրքերի» օգնությամբ վերջնականապես տիրանալ նախիշեանին, Եառությալ արալագյաղին, Զանգեզուրին և Արցախին:

Հայտնի է, որ Սուստաֆա Քեմալը դեռևս 1920 թ. հունիսի 1-ին Մոսկվա ուղարկած առաջին ուղերձում խնդրում էր իրեն տրամադրել սոսկի, զենք և զինամթերք՝ իրեն թե Արևմտյան ուղամաճակատում Անտանտի գեմ կովելու համար: Քեմալի խնդրանքը դրականորեն լուծվեց:

Հայաստանի Հանրապետության գինված ուժերը անկարող էին դիմադրել Թուրքական առաջացող բանակներին:

Օրհասական այս պահն ավարտվեց 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով, և դրանից հետո Արցախի հարցի շուրջ տեղի ունեցող վիճաբանությունները նոր փուլ մտան: Հայաստանի հեղկոմի հասցեով ուղարկված հեռագրերում և նամակներում արցախցիները հույս էին հայտնում, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով իրենց մղած եռամյա պայքարը վերջնականապես կապակի հաղթանակով և իրականություն կդառնա մայր հայրենիքի հետ վերամիավորվելու արցախցիների բաղձանքը:

Երբ Թաքվում ստացվեցին Հայաստանի հեղկոմի հեռագրերը Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու մասին, Աղրբեզանի կոմկուսի կենտրոնի քաղբյուրոյի և կազմբյուրոյի նոյեմբերի 30-ի համատեղ նիստում ընդունվեց սրոշում, որով Աղրբեղկոմի նախագահ նարիմանովին հանձնարարվեց հեղկոմի անունից հոչակագիր կագմել ու մատնանեել, որ Խորհրդային Աղրբեզանի և Խորհրդային Հայաստանի միջև վերանում են բոլոր տարածքային վեճերը: Որոշման մեջ ասված էր. «Աղրբեզանի բանվորագյուղացիական կառավարությունը, ստանալով ապստամբած գյուղացիների անունից Հայաստանը սոցիալիստական խորհրդային հանրապետություն հայտարարելու ուրախալի լուրը, ողջունում է եղբայրական ժողովրդի հաղթանակը: Այսօրվանից Հայաստանի և Աղրբեզանի միջև եղած սահմանային վեճերը հայտարարվում են վերա-

¹⁰³ ԱՊԱ ԻՄԼ, ֆ. 64, օպ. 1, ձ. 10, լ. 9.

շաժ: Հեռային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության մասը¹⁰⁴:

Դեկտեմբերի 1-ին Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում, որտեղ նախագահում էր Ալիքեյգար Կարաևը, նարիմանովը հռչակում է Ադրբեյջանի ԽՍՀ հեղկոմի հաշակագիրը Հայաստանում խորհրդային կարգերի հաղթանակի առթիվ: Հաշակագիրն ազգարարում էր, որ «այսուհետեւ տարածքային ոչ մի հարց չի կարող պատճառ դառնալ երկու դարավոր հարկան ժողովուրիների՝ հայերի և մուսուլմանների փոխադարձ արյունահղության համար»¹⁰⁵:

Բաքվի խորհրդի այս նիստում ելույթ ունեցավ նաև Ա. Օրջոնիկիձեն: Նա շնորհավորեց խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում և պատմական իրադարձություն համարեց Ադրբեյջանի հեղկոմի գեկարացիան, որի համաձայն էր Հեռային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը անցնում էին Հայաստանին: Ինչպես տեսնում եք, Ադրբեյջանի կոմիտեի կենտկոմի քաղաքուրոյի և կազմուրոյի նոյեմբերի 30-ի որոշման և Օրջոնիկիձեի ելույթի միջև ըստ էության տարրերություն չկա, մինչդեռ նարիմանովի ստորագրած հռչակագրի մեջ, որ տպագրվել է Բաքվի «Կոմունիստ» թերթում, կատարվել է «ուղղում», այսինքն՝ արցախցիները կարող են իրենց հարցը վճռել հանրաքվեի միջոցով: Դժվար է կռահել՝ այդ ժամանակ Ադրբեյջանի կառավարությունն անկեղծ էր, թե՛ լոկ խաղ էր խաղում և մոլորության մեջ գցում շատ-շատերին: Համենայն գեպս թե Հայաստանում և թե Արցախում միամտարար հավատացին նարիմանովի այդ հերթական աճպարարությանը, շնորհակալական հեռագրեր էին ուղարկում, նրան անվանում մեծ լենինյան և ինտերնացիոնալիստ:

Հետագա իրադարձությունները, սակայն, ցույց տվեցին, որ նարիմանովը հավատարիմ է մնացել ինքն իրեն, և Բաքվում տեղի ունեցած հանդիսությունների ժամանակ նրա արած հայտարարությունը սոսկ միջոց էր մոլորեցնելու հասարակական կարծիքը և միջոց շահելու, մինչև որ կատար նոր գործելակերպ:

Խորհրդային Հայաստանը ծանր օրեր էր ապրում: 1920 թվականի վերջերին, 1921-ի սկզբներին հանրապետության ներքին ու արտաքին լարված կացությունը հանրապետություն չտվեց գործնական քայլերի դիմելու՝ հայկական այն հողերը, որոնք Բաքվի խորհրդի 1920 թ. նոյեմբերի

104 «Կոմունիստ» (Երևան), 2 գեկտեմբերի 1920, նույն «Կոմмунист» (Երևան), 2 դեկտեմբերի, 3 դեկտեմբերի 1920.

105 «Կոմունիստ», 2 գեկտեմբերի 1920.

30-ի գեկլարացիայով Հայաստանի մաս հռչակվեցին, Հայաստանի հետ վերամիավորելու ուղղությամբ:

Օգտագործելով պահը, երբ համաշխարհային հեղափոխությունը ամեն զնով առաջ տանելու կողմնակիցները դեպի մուսուլմանական Արևելք կողմնորոշվեցին և քաղաքական այդ նոր հաշվարկում գլխավոր դերը հատկացրին քեմալական Թուրքիային, Ադրբեյջանի հեղկոմի նախագահ նարիմանովը եռանդուն գործունեություն ծավալեց իր իսկ հրապարակած հոչակագրի սկզբունքներին հակառակ՝ ամեն ինչ անելով, որպեսզի Հայաստանից հարավորին չափ տարածքային գիշումներ արվեն հօգուտ Թուրքիայի և Ադրբեյջանի: Այդ աշխատանքը, անշուշտ, իր ներգործությունն ունեցավ այն գործիչների վրա, ովքեր պատրաստվում էին քեմալական Թուրքիայի հետ Մուկվայում կայանալիք բանակցություններին:

Խորհրդա-թուրքական պայմանագրի նախագիծը, որը մշակվել էր դեռևս 1920 թվականի հուլիս-օգոստոսին տեղի ունեցած ուսւ-թուրքական առաջին կոնֆերանսի ժամանակ, վերանայելու նպատակով ստեղծված քաղաքական, իրավաբանական և խմբագրական հանձնաժողովները լուրջ դժվարությունների հանդիպեցին մանավանդ թուրքական կողմի ներկայացրած տարածքային պահանջների քննարկման ժամանակ: Թուրքերը պհանջում էին Ղարսի և Բաթումի մարզերը, Սուլմալուի գառավը և Ախալցխայի ու Ախալգալաքի շրջանները: Քեմալականների ուշադրության կենտրոնում էր գտնվում առանձնապես նախիջևանը, որտեղ մինչ այդ թուրքերի և մուսավաթականների մեղքով կազմակերպվել էին ազգամիջյան ընդհարումներ: Դրանց հետեւանքով զգալի թվով հայեր ստիպված էին հեռանալ հայրենի երկրից:

1921 թ. մարտի 10-ին կոնֆերանսն սկսեց քննարկել սահմանների հարցը: Թուրքական կողմից մասնակցում էին Յուսուփ Քեմալ բեյը, Ռզա Նուրի բեյը և Ալի Փառուդ փաշան, իսկ խորհրդային կողմից՝ Գ. Զիլերինը և Զելալեդզին Կորիմազովը: Նիստում նախագահում էր Յուսուփ Քեմալ բեյը: Եվ այսպես, քննարկվում էր Խորհրդային Հայաստանի սահմանների, նրա տարածքի հետ ուղղակիորեն առնչվող հարցը, իսկ նիստին չեր մասնակցում Հայաստանի ներկայացուցիչը, Ընդհանրապես շրույլատրվեց կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու Խորհրդային Հայաստանի պատվիրակությանը: Կնքված պայմանագրի համաձայն Կարսի մարզից, Սուլմալուից բացի, Հայաստանից անշատվեց նաև նախիջևանը, 5,5 հազար քառ. կիլոմետր տարածքով, Թուրքիայի որոշած սահմանագծով, երկրորդ կողմին՝ այսինքն Հայաստանին շվերահանձնելու պայմանով: Այն դարձավ ինքնավար միավոր Ադրբեյջանի կազմում: Այս

ամենը միշագգային նորմերի կոպիտ ոտնահարում է: Իսկ դրանում մեջք ունեին ազգությունների կոմիսարիատը՝ Ստալինը, Սկավառը և ուրիշներ:

Թուրքիայի պատվիրակության անդամ, Մուսկվայում Թուրքիայի դեսպան, գեներալ Ալի Ֆուադ Զերբսոյը իր հուշերում գրում է, որ Ստալինը իրենց վատահեցրել է, որ կոնֆերանսում հայկական հարցը չի քընարկվի, և ավելացրել. «Դուք Հայաստանի հարցը ինքներդ լուծեցիք: Եթե դեռ լուծվելիք ինչ-որ բան կա, դա ես վճռեք ինքներդ, բայց վերջական ժամկետի մասին մեզ տեղյակ պահեք»¹⁰⁶:

Նախիչեանի հարցը վճռելուց հետո Հերթը հասավ Արցախին: Այդ առթիվ վիճաբանություններն ավելի բորբոքվեցին 1921 թվականի հունիս և հուլիս ամիսներին: Հունիսի 3-ին տեղի ունեցավ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը, որին մասնակցեցին Ս. Օրջոնիկիձեն, Ֆ. Մախարաձեն, Ն. Նարիմանովը, Ա. Մյասնիկյանը և ուրիշներ: Միաձայն որոշում է ընդունվում «Հայաստանի Հանրապետության դեկլարացիայում նշել, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է Հայաստանին»¹⁰⁷: Փաստորեն Կավրյուրոյի սույն որոշումը ի շիբ էր դարձնում 1920 թ. դեկտեմբերի 1-ին նարիմանովի ստորագրած և հաջորդ օրը հրապարակված դեկլարացիայում առաջ քաշված Լեռնային Ղարաբաղի հարցը հանրաքվեի միջոցով որոշելու վերաբերյալ առաջարկը, մինչդեռ Աղրբեշանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Թ. Քոչարին և նախկին ԽՄԿԿ Կենտկոմին առնթեր մարքսիզմ-լեռնիզմի ինստիտուտի աղրբեշանական մասնաճյուղի գիրեկտոր, պատմական գիտությունների գոկտոր Դ. Գուլիկը իրենց հոդվածներում¹⁰⁸ շտեսնելու են տալիս այս կարևոր որոշումը և առաջ քաշում բացահայտորեն կեղծ և հակագիտական տեսակետ: Այդ հոդվածներից փլում է միայն կեղտաշրի հոտ: Նրանք մոլորության մեջ գտնելով ընթերցողներին, փորձում են ապացուցել, թե իբրև Լեռնային Ղարաբաղը 1918 թվականի Բաթումի պայմանագրից հետո մինչև Խորհրդային կարգերի հաստատումը գտնվել է մուսավաթական Աղրբեշանի տիրապետության տակ և հետո, կամավոր, հանրաքվեի միջոցով մնացել է Խորհրդային Աղրբեշանի կազմում: Արցախյան գոյամարտի սույն պատմությունը հանդիսանում է այդ ամբոխավրության պատասխանը:

1921 թ. հունիսի 12-ին Խորհրդային Հայաստանի ընդունած դեկրե-

¹⁰⁶ Ալի Ֆաւադ Զերբսոյ. Մոսկվա հաթերապը. Ստամբուլ, 1958, էջ 140.

¹⁰⁷ ЦГА, ֆ. 64, օլ. 2, ձ. 1, լ. 77.

¹⁰⁸ Տ. Կոչար. Необходимо уточнение, «Бакинский рабочий», 8 июня 1989. Д. Гулиев. Следовать истине, а не амбициям. «Бакинский рабочий», 19 июня 1989.

տում ասված է. «Աղրբեշանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հեղկոմի դեկլարացիայի և Հայաստանի ու Աղրբեշանի սոցիալիստական խորհրդային հանրապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմյանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անրաժան մասը»¹⁰⁹: Դեկրետում պարզորդ ասված է, որ այն ընդունվել է Աղրբեշանի հեղկոմի դեկլարացիայի հիման վրա: Այսպիսով, Կավրյուրոյի հունիսի 3-ի որոշումը և Խորհրդային Հայաստանի հունիսի 12-ի դեկրետը հստակորեն հաստատում էին այն, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին է վերադարձվել՝ Խորհրդային Աղրբեշանի և Խորհրդային Հայաստանի կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ:

Այդ օրերին Հայաստանի կառավարության կողմից Ասքանազ Մովսիսյանը նշանակվեց արտակարգ լիազոր Ղարաբաղում: Նա Թիֆլիսից Աղրբեշանի ներկայացուցիչ Ալիհեղյար Կարակի հետ մեկնեց Ղարաբաղ: Սակայն Եվլախ կայարանում Կարակը Մոավյանին առաջարկեց գնալ Բաքու և այնտեղ Նարիմանովի հետ պարզել հարցերը: Այդ հրահանգը Կարակը Նարիմանովից ստացել է Թիֆլիսից ճանապարհվելուց անմիջապես առաջ: Մոավյանը մերժեց Կարակի առաջարկությունը և մենակ շարունակեց ճանապարհը դեպի Ղարաբաղ, որտեղ նրան ընդունեցին մեծ ցնծությամբ: Շուշիում և այլուր տեղի ունեցան միտինգներ: Մի քանի օր հետո, երբ Մոավյանը վերադարձավ Թիֆլիս, «Կարմիր աստղ» թերթը տպագրեց նրա հետևյալ հայտարարությունը. «Համաձայն Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի հայտարարության, Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի անբաժան մասն է դառնում: Մեր միսիան դեպի Ղարաբաղ նպատակ ունի այդ կցումը մեր երկրին դարձնել իրական և անմիջական ներկայությամբ կանոնավորել Ղարաբաղի ներքին կյանքը: Միաժամանակ քաղաքական հսկողություն ունենալ Զանգեզուրի ուղղությամբ գործող զինվորական ուժերի վրա: Ղարաբաղն ու Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի զարդը կլինեն, որովհետև, եթե մեր երկրի այդ անբաժան մասերի բանվորներն ու գյուղացիները հարկավոր հանգիստ ստանան, միջոցներ տրվի նրանց զբաղվելու շինարարական խաղաղ աշխատանքով, ապա կուտուրական, տնտեսական զարգացման մեծ կարևորություններ են բացվում մեր այդ երկրամասի առաջ»¹¹⁰:

Հայաստանի հունիսի 12-ի դեկրետը հստակորեն հաստատում էին այն,

¹⁰⁹ «Խորհրդային Հայաստան», 19 հունիս 1921.

¹¹⁰ «Կոմմունիզմ (Բաքու), 5 հունիս 1921».

ավելի շիկացավ: Նարիմանովը միանգամից բացեց իր խաղաքարտերը և պնդեց, թե Լեռնային Ղարաբաղը պետք է մնա Աղրբեջանի կազմում: Կանգ առավ Անդրկովկասի Հանրապետությունների սահմանները որոշող հանձնաժողովի աշխատանքը: Այդ առթիվ Օրջոնիկիձեն և Կիրովը հունիսի 26-ին հեռագրում են նարիմանովին: Հեռագրում ասված է. «Հայաստանի սահմանները որոշելու համար վարչող բանակցությունների ընդհատումը Զանգեզուրում գոյություն ունեցող իրադրության պայմաններում խիստ աննպաստ տպավորություն է գործում... ենդում ենք շտապ հրավիրել քաղբյուրու և ժողովում լուծել Ղարաբաղի հարցը, այն հաշվով, որ վաղը՝ հունիսի 27-ին կարելի լինի բանակցություններն ավարտել: Եթե հետաքրքրում են մեր կարծիքով, ապա դա հետևյալն է. ի շահ բռլոր բախումները վերջնականացեն լուծելուն և իսկական բարեկամական հարաբերությունները հաստատելուն՝ լեռնային Ղարաբաղի հարցը լուծելիս պետք է ղեկավարվել այսպիսի սկզբունքով: ոչ մի հայկական գյուղ չպետք է միացվի Աղրբեջանին, ինչպես և ոչ մի մուտումանական գյուղ չի կարելի միացնել Հայաստանին»¹¹¹.

Սակայն նարիմանովը և նրա համախոհները գործեցին այս սթափ կարծիքին հակառակ: Աղրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն և կառավարությունը հունիսի 27-ի համատեղ նիստում որոշում ընդունեցին Ղարաբաղը Հանձնել Հայաստանին՝ իրեն հիմնավորում այդ ապօրինի որոշման մեջտեղ բերելով այսպես կոչված տնտեսական գործոնը: Այդ նիստում Աղրբեջանի ժողովում խախագահ Ն. Նարիմանովը սպառնաց, որ եթե Լեռնային Ղարաբաղը չմտցվի Աղրբեջանի կազմի մեջ, հնարավոր հետևանքների համար ինքը հրաժարվում է պատասխանատվությունից: Ահա որտեղից են սկիզբ առնում Աղրբեջանի այսօրվաղեկավարների ահարեկչական արտահայտությունները:

Լեռնային Ղարաբաղի հարցի լուժման համար շտապ կարգով, 1921 թվի հունիսի 4-ին հրավիրվեց ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի արտակարգ նիստ, որին ներկա լինելու համար Նալշիկից Թիֆլիս ժամանեց ազգությունների կոմիսար Ի. Ստալինը: Զայների մեծամասնությամբ որոշվում է լեռնային Ղարաբաղը թողնել Խորհրդային Հայաստանի կազմում: Նարիմանովը բողոքեց այդ որոշման գեմ: Հաջորդ օրը հրավիրվեց նոր նիստ, որը վերանայեց երեկոյան նիստում ընդունված հիշյալ որոշումը և համաձայնեց ընդունել նարիմանովի առաջարկը: Որոշման մեջ առվում է, որ և ներկա մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի ար-

տեսական կապից, ինչուային Ղարաբաղը թողնել Աղրբեջանական ԽՍՀ սահմաններում նրան տալով մարզային լայն ինքնավարություն, վարչական կենտրոն ունենալով ինքնավար մարզի կազմի մեջ մտնող Շուշի քաղաքը»¹¹²: Որոշումից խիստ գժոհն էին թե՝ արցախցիները, և թե՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմը, որի 1921 թ. հունիսի 16-ի նիստում ընդունած որոշման մեջ հստակորեն ասված է, որ Հայաստանի կենտկոմը համաձայն չէ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 5-ի որոշման հետ¹¹³, Կովկասյան բյուրոյի նիստի բնութագիրը Ալ. Մյասնիկյանը տվեց Հայաստանի կոմկուսի առաջին համագումարում, որը տեղի ունեցավ 1922 թվականի հունվարի 2-րդ կեսին: Նա ի լուր բոլորի հայտարարեց: «Աղրբեջանն ասում էր, որ եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա նավթ չենք տա»¹¹⁴: Ահա թե որտեղից է սկիզբ առնում Հայաստանի և Արցախի տնտեսական շրջափակման գաղափարը:

Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 5-ի որոշումը միանգամայն ապօրինի էր և չի կարելի հիմնավոր համարել: Կավրյուրոն երբեք էլ իրավասու չէր նման կարելոր հարց վճռելու: Զէ որ նա օրենսդրական մարմին չէր և ամենաշատը կարող էր կարծիք հայտնել հարցի վերաբերյալ: Ընդամենը ութ հոգուց բաղկացած Կավրյուրոն ի՞նչ իրավունքով, առանց հաշվի առնելու հայ ժողովրդի կարծիքը, առանց Ղարաբաղի հայության ներկայացուցիչների մասնակցության, նման ապօրինի որոշում ընդունեց և Հայաստանի անկապտելի մասը կազմող Արցախի տարածքը նման անբարո մի որոշմամբ հանձնեց Աղրբեջանին: Այդ միակողմանի որոշումով անտեսվեցին հարցի ազգային և պատմական հանգամանքները և ցույց տրվեց, որ Կավրյուրոն գործել էր հակառակ ազգերի ինքնորոշման սկզբունքի:

Մայր Հայաստանի հետ վերամիավորման համար արցախահայության մզած պայքարի կարենոր էշերից են 1920 թվականի աշնանից մինչև 1921 թվականի ապրիլը Արցախի Դիզակ և Վարանդա գավառներում տեղի ունեցած ժողովրդական շարժումները, որը գլխավորում էր Թևան Ստեփանյանը:

Թևան Ստեփանյանը ծնվել է 1892 թվականին Դիզակի շրջանի Տումի գյուղում: Մասնակցել է առաջին աշխարհամարտին և հասել վախտմիստրի (հեծյալ ատորաբաժնման ավագ) աստիճանի: Պատերազմից վերադառնալով հայրենի գյուղ, կազմակերպում է մի փոքրաթիվ շոկատ-

¹¹² Նույն տեղը, գ. 64, թ. 1, գ. 1, թ. 116.

¹¹³ Տե՛ս ՀՀԿԳԿ, գ. 1, թ. 1, գ. 30, թ. 5.

¹¹⁴ Նույն տեղը, գ. 2, թ. 1, թ. 23.

Դիզակի արևելյան գյուղերը թուրք-թաթարների հարձակումներից պաշտպանելու համար: Իսկ եռոր 1920 թվականի ամռանը կարմիր բանակի զրամացները մտնում են Դիզակի գյուղերը և խորհրդային մարմինների օգնությամբ սկսում իրավութել բռնազրավումների քաղաքականությունը, Թևան Ստեփանյանը բողոքում է դրա դեմ: Նրան ձերբակալում են և բանտարկում: Թևանին հաջողվում է փախչել, իր շուրջը համախմբել բռնազրավումների քաղաքականությունից և խորհրդային կարգերից դժուն մարդկանց ու պայքար ծավալել տեղական կուսակցական, խորհրդային մարմինների և կարմիր բանակի զորամասերի դեմ: Նրանց հաջողվում է գրավել Տումի, Մեծ Թաղեր, Տող, Ազոխ և Հարեւան մի շարք գյուղեր: Դրաված գյուղերում ցրում են տեղական իշխանությունները և պատժում բռնոր նրանց, ովքեր ի շարն են գործադրել իրենց իրավունքները,

Թևանի ջոկատը գրավում է գրեթե ամբողջ Դիզակն ու Վարանդան և մոտենում Կարյագինոյին, Աղդամին և Շուշին: Աղբեջանի կառավարությունը տաճապի մեջ էր: Նա ամենից շատ վախենում էր այդ պայքարի ազգային ազատագրական բնույթից, մանավանդ որ Թևան Ստեփանյանը սերտ կապի մեջ էր Սյունիքի հերոսամարտերի կազմակերպիչ Գարեգին Նժդեհի հետ: Արցախում բռնկված ազգային ազատագրական այդ նոր պայքարին փաստորեն ուղղություն էր տալիս Գարեգին Նժդեհը: 1921 թվականի հունվարի սկզբին Թաքվից Գորիս է գնում Գրիգոր Վարդանյանի գլխավորած խորհրդային պատվիրակությունը: Նա նժդեհից պահանջում է «Պաղարեցնել ապստամբական կոփվները Ղարաբաղում»: Այդ բանը Նժդեհից պահանջում են նաև Շուշիի կայազորի պետ Վացիկովին, 84-րդ բրիգադի հրամանատար Սեմյոնովը և 11-րդ կարմիր բանակի հրամանատար Հեկերը: Նժդեհը պատասխանում է, որ ինքն ընդառաջենով արցախահայության ձգումներին, այն է՝ վերամիավորվել մայր Հայաստանի հետ, իր պարտքն է համարում ազակցություն ցույց տալ նրանց: Նա հետագայում գրել է. «Լեռնային Ղարաբաղի հետ կապված էի դեռևս 1920 թ. նոյեմբերի կեսերին, Գորիսը գրավելուց մի քանի օր հետո:

Այդ օրերին, որոշ հրահանգներ ստանալու նպատակով Սյունիք՝ է անցնում Դիզակի խմբապետ Թևանը, Նրա վերադարձից հետո Տաթև են հասնում Դիզակի երկու ներկայացուցիչները՝ ղեկավար, ռազմամթերք ու մի զորամաս խնդրելու առաքելությամբ...»¹¹⁵.

Արցախում բռնկված հակառագրեցանական և հակախորհրդային շարժումը ճնշելու համար այստեղ կենտրոնացվեցին 11-րդ կարմիր

¹¹⁵ «Հայրենիք», 1925, № 9, էջ 84.

բանակի 28-րդ գիվիզիայի 250, 251 և 252-րդ գնդերը ու մի քանի բրիգադներ: Բացի այդ, Դիզակում, Կարյագինոյում, Շուշիում և այլուր կազմակերպվում են կոմունիստների զոկատներ, որոնք գործում են կարմիր բանակի գորամասերի հետ համատեղ:

Գարեգին նժդեհի նպատակն էր՝ Արցախն ու Զանգեզուրը վերամիավորել և ստեղծել մի վարչական միավոր, մինչև կպարզվեր Հայաստանի Հանրապետության հարցը: Ազատագրական պայքարն ընդունվում է Զանգեզուրի և Արցախի գրեթե ամբողջ տարածքը: Իսկ դա արդեն լրջորեն անհանգուացնում է Աղբեջանի կառավարությանն ու 11-րդ կարմիր բանակի հրամանատարությանը: Շուշիի գավառային հեղկոմի նախագահ և Ղարաբաղի արտակարգ կոմիսարի տեղակալ Շամիլ Մահմուգբեկովը 1920 թ. դեկտեմբերի 31-ին 11-րդ կարմիր բանակի հեղափոխական ուազմական խորհրդին և Անդրեվկոմին ուղարկած հեռագրում խնդիր է դնում ապստամբ ուժերի դեմ պայքարելու համար Շուշիի ուազմական պահեստից 1000 հրացան տրամադրել Մինքնդի և Շուշիի գավառային միլիցիային, պարտիզանական և հատուկ նշանակման ջոկատներին¹¹⁶:

Հասկանալի է, որ եռհրդային Աղբեջանի կողմից Արցախում պաշտոնավորած տարրերը ձգում էին առաջին հերթին զինել թուրք-թաթարական նոր խմբեր և նրանց օգտագործել Զանգեզուրի և Արցախի հայության դեմ:

1921 թվականի ապրիլի կեսերին պայքարը նոր թափ ընդունեց: Զանգեզուրից եկած զորամասի պետ Տեր-Պետրոսյանը ապրիլի 8-ին Նժդեհին հաղորդում է, որ ապստամբների վիճակը ժանր է: Նժդեհը հետագայում տագնապով հիշում է. «Կարմիրները որոշեցին երկու կրակի մեջ առնել և ոչնչացնել մեր Դիզակի զորամասը: Եվ շուշացավ նաև»¹¹⁷: 1921 թ. ապրիլի 15-ի լուսարացին կարմիր բանակի զորամասերը և կոմունիստական ջոկատները անցան ընդհանուր հարձակման: Այդ ժամանակ Թևան Ստեփանյանի հիմնական ուազմական կետերն էին Շաղաղ, Աղջաբենդ, Թաղեր, Խժաբերդ գյուղերը:

Մեծ Թաղեր և Տումի գյուղերի ուղղությամբ շարժվող կարմիր բանակի զորամասերը ապստամբների շեշտակի հարվածից ապրիլի 16-ին նահանջեցին: Օգովելով ստեղծված իրադրությունից և Նժդեհից ստանալով նոր օժանդակ ուժեր, ապստամբները ապրիլի 17—18-ին հարձակման նախաձեռնությունը վեցրին իրենց ձեռքը, սակայն չկարողացան ճեղքել ընդհանուր ճակատը: Թևանը Նժդեհից նոր օգնություն է

¹¹⁶ ՏԵ՛ Աղբ. ԽՍՀ ՀՀԸՆ ՊԿԱ, ֆ. 420, լ. 1, գ. 3, թ. 84.

¹¹⁷ «Հայրենիք», 1925, № 9, էջ 85.

խնդրում։ Արշակ Բալասանյանը, որը ղեկավարում էր կոմունիստական գումարտակը, հետագայում գրում է, որ ապստամբներն ստանալով «օգնական ուժեր» և ազ թիկ ուղամաճակատում մեր կրած անհաջողություններից օգտվելով... ցուցաբերեցին մեծ ակտիվություն և կրկնեցին իրենց հարձակումները կոմունիստական գումարտակի դիրքերի վրա, բայց կորցնելով մարտական սպա Մուկուչին և ուրիշների... նահանջեցին իրենց բազան՝ Աղջաբենդ»¹¹⁸. Այդ օրերին ապստամբները կորցրեցին Եփեմ խանին, Փարսադան Շուշանցին և իրենց կոմիսարին, որին կոչում էին Հայրիկ։ Կարմիր բանակի զորամասերը Տող-Տումի ուղղությամբ ապրիլի 18-ին անցնելով հարձակման, թեժ մարտերից հետո գրավեցին Թևանի շտաբը։ Հաջորդ օրը, ապրիլի 19-ին, ընկավ ապստամբների վերջին կետը՝ Խծաբերդը։ Թևանի ջոկատն անցավ Զանգեզուր և միացավ Նժդեհին։

Ահա այսպիսի վախճան ունեցավ 1920—1921 թվականներին Արցախում տեղի ունեցած ժողովրդական շարժումը։

Արցախահայությունը խիստ գժոռն էր Անդրերկրկոմի վերոհիշյալ սրոշումից։ Նրանք բազմաթիվ բողոքներ ուղարկեցին Անդրերկրկոմ՝ պահանջելով հարցը վերանայել և Լեռնային Ղարաբաղը վերամիավորել մայր Հայրենիքի՝ Հայաստանի հետ։ Աղբեկանի կառավարության և կոմկուսի Կենտկոմի մի շարք ներկայացուցիչներ ուղարկվեցին Լեռնային Ղարաբաղ՝ տարհամողելու նրա զայրացած բնակչությանը։ Առանձնապես ակտիվ էին գործում Հանրապետության նախարարների խորհրդի նախագահի տեղակալ և արհմիությունների խորհրդի նախագահ Լեռն Միրզոյանը և Հանրապետության ուղամածովային կոմիսար Ալիհեղյար Կարակը։ Վերջինս օգտվելով իր պաշտոնից, սպառնում էր ուժ գործադրել, եթե Ղարաբաղի հայությունը հակառակի Աղբեկանի կամքին։

Հենց այդ օրերին էլ առաջ քաշվեց Արցախին ինքնավարություն տալու հարցը, որովհետև այլ կերպ անհնար էր համոզել տեղի արցախցիներին՝ հաշտվել երկրամասը Աղբեկանի կազմում թողնելու մտքին։ Աղբեկանցի պատմաբաններից Ձ. և Թ. Գուլինները և արիշներ պնդում են, թե իբր Արցախի բնակչությունը համաձայն էր մնալ Աղբեկանի կազմում։ Եվ որպես փաստ թմբկահարում են 1921 թ. օգոստոսի մեկին Վարանդայի Հաղորտի գյուղում տեղի ունեցած խորհուրդների պատճերի համագումարի ընդունմը։ Մեզ հայտնի չէ, թե այդ համագումարի որոշման ինչ տապահական կ արդարական է համարված է կազմում մի կուսակցությունը։

Համագումարի արձանագրության մի օրինակը պահպում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվի 485-րդ ֆոնդում։ Միշարք հարցերի հետ միասին համագումարը քննության է առել նաև Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարցը։ Համագումարին ներկա գտնվող կեռն Միրզոյանը հայտարարում է, թե այդ հարցի քննարկումը նպատակահարմար է, որովհետև կեռնային Ղարաբաղը ամեն տեսակետից կապված է Բաքվի հետ։ Պատգամավոր Պետրոսյանը համագումարի մասնակիցների անոնից հայտարարում է, որ ոչ չի ցանկանում այդ կարծիքը պաշտպանել, որովհետև «բոլորին լավ հայտնի է եղության Հայաստանի հետ միավորված լինելու գյուղացիության ցանկությունը»¹¹⁹, Ահա այսպիսի էլ ավարտվում է համագումարը, առանց որոշում ընդունելու։ Նույն ձեռվ են ընթացել նաև Լեռնային Ղարաբաղի և մյուս շրջանների համագումարները։ Սա է ամրող ճշմարտությունը։ Իսկ թե կեռն Միրզոյանն ինչ է գեկուցել Բաքու, դա մնում է անհայտ։ Հաշորդ՝ 1922—23 թթ. Աղբեկանի կոմկուսի Կենտկոմի արդեն առաջին քարտուղար Ալիհեղյար Կարակը և Կենտկոմի երկրորդ քարտուղար, միաժամանակ Բաքվի քաղկոմի առաջին քարտուղար կեռն Միրզոյանը տարրեր առիթներով հաճախակի էին լինում Ղարաբաղում, արցախցիներին խոստանում բաց թողնել նավթ, աղ, կտորեղեն, շաքար և այլ մթերքներ, դաշտավայրերից արտատեղիներ հատկացնել, միայն թե նրանք համաձայնվեն Արցախը համարել Աղբեկանի կազմում։ Աղբեկանի կառավարությունը հույս ուներ, թե կեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու միջոցով կմարի մայր Հայաստանի հետ վերամիավորվելու արցախցիների արդարացի պահանջը։ Լեռնային Ղարաբաղի պատմաբերկադիտական թանգարանում պահպում են Ասկերանի շրջանի Փիրզամալցի Սուլեյման Գրիգորի Միրզաբեկյանցի հուշերը։ Ահա թե ինչ է պատմում նա 1922 թ. նոյեմբերին դարձյալ Արցախ ժամանած Ա. Կառակի և Լ. Միրզոյանի առաքելության մասին։ Նրանք շտապ կարգով Շուշի են հրավիրում Արցախի բոլոր խորհուրդների նախագահներին ու քարտուղարներին։ Կարակը բացատրելով հավաքի նպատակը, հայտարարում է, թե կենտրոնից Մուսկվայից իրենց երաշխավորել են տեղական խորհրդային իշխանությունների հետ քննարկել հանրապետությունների առանձին շրջանները և մարզերը խոշորացնելու (միավորելու) հարցը՝ ենենելով տնտեսական ու ազգային հատկանիշներից։ Նա արցախցիների առջե պահանջ է դնում պահպանել տնտեսական կապերը Բաքվի հետ, քանի որ Ռուսաստանին կապող բոլոր ճանապարհներն անցնում են

¹¹⁸ Լեռնային Ղարաբաղ Հանրապետության պետական արխիվ, ֆ. 3, ց. 1, գ. 60, թ. 108.

¹¹⁹ Նույն տեղը, ֆ. 485, ց. 1, գ. 14, թ. 68—69.

Նվախով և Թաքվով. Ղարաբաղը Թաքվից է նավթ ստանում, իսկ Հայաստանի հետ հաղորդակցության միջոցներից զուրկ է և այլն:

Կարակի ելույթից հետո, ինչպես գրում է Միրզաքեյանցը, «դահլիճում սկսվում են աղմուկ, ունկիկներ և նման առաջարկության դեմ ելույթներ, նկատելի էր, որ խորհրդակցության մասնակիցները ձայների բացարձակ մեծամասնությամբ համաձայն չեն այդպիսի տարբերակով միավորմանը»: Ելույթ ունեցողները այն միտքն էին պաշտպանում, որ երբեք ցանկալի չէ Արցախը թողնել Աղրբեջանի կազմում: Լեռն Միրզոյանն իր ելույթում կրկնում է այն մաշված տեսակետը, թե իրը տնտեսական տեսակետից նպատակահարմար է Արցախը թողնել Աղրբեջանի կազմում: Այդ ժամանակ «գահհիճնում ընկեր Միրզոյանի հասցեին խորհրդակցության մասնակիցների կողմից հնչում էին սուր ունկիկներ», — պատմում է Միրզաքեյանցը: Ինչպես նա վկայում է, մեծամասնությունը Կարակի և Միրզոյանի առաջարկությունների վերաբերյալ բացասարար է արտահայտվում և պաշտպանում խորհրդային Հայաստանի հետ վերամիավորվելու տարրերակը: Կարակը և Միրզոյանը երեք օր շարունակ «մշակում» են խորհրդակցության մասնակիցներին, նրանց նկատմամբ ուժ գործադրում: Դրանից հետո միայն ձայների շատ փոքր առավելությամբ որոշում են Արցախը թողնել Աղրբեջանի կազմում՝ ինքնավարմարդի իրավունքով¹²⁰:

Արցախի բնակչությունը խիստ վրդոված էր այդ որոշումից, որովհետեւ նրանք գյուղխորհրդի նախագահներին ու քարտուղարներին նման բան չէին լիազորել և վերջիններս իրավունք չունեին որևէ փաստաթուղթ ստորագրել արցախահայության անունից: Ալիհեյդար Կարակի և Լեռն Միրզոյանի հանցավոր արարքները հասցրին այն բանին, որ Արցախին, իրեն վերշական միավորի, առնչվող բոլոր հարցերի լուծումը թողնվեց Աղրբեջանի գեկավարության տնօրինությանը: Այդ ժամանակ Ղարաբաղի հայկական գավառները կտրված էին միմյանցից, նրանց տնտեսական, ազգային, մշակութային հարցերը ու ոքի չէին հետաքրքրում: 1922 թվականի հունիսի 3-ին Շուշիի կուսակցական գավառական կոմիտեի ընդլայնված նիստը խնդիր դրեց Ղարաբաղի հայկական շրջանները միացնել մեկ վարչական միավորի մեջ:

Արցախում հանրաքվեի անցակացման միտքը հետզհետե համակում էր երկրամասի բոլոր աշխատավորներին: Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը պաշտպանում էր հանրաքվեի անցակացման վերաբերյալ համաշխարհային ճա-

նաշում գտած գեմոկրատական սկզբունքը: Նա գտնում էր, որ ինքնորոշման իրավունքը «նշանակում է հարցի լուծում հենց ոչ թե կենտրոնական պալամենտի կողմից, այլ անջատվող փոքրամասնության պառամենտի, սեյմի հանրաքվեի միջոցով»¹²¹: Մինչդեռ այդ մասին լիովին մոռացել էին Անդրեակոմում, էլ չենք խոսում գաղութատիրական Աղրբեջանի մասին:

1922—23 թվականների ձմռանը Անդրեակոմում, Աղրբեջանում և Ղարաբաղի կուսակցական կոմիտեում բազմիցս քննարկվեց Արցախի լեռնային շրջանները վարչական մի ամբողջության մեջ միավորելու հարցը: Վերշական սորոշվեց միավորել և ստեղծել առանձին հայկական ինքնավար մարզ, մասնավանդ որ Ղարաբաղի լեռնային շրջանների բնակչության 94,4 տոկոսը հայեր էին:

1922 թ. դեկտեմբերի 15-ի Աղրբեջանի կոմկուսի կենտրոնի նախագահության որոշմամբ ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի գործերի կոմիտե՝ Արմենակ Ղարաբյողյանի նախագահությամբ, որը Հլու-Հնազանդ կատարում էր Թաքվից ստացված բոլոր հրամանները և ակտիվորել նպաստում Արցախը Աղրբեջանին բռնակցելուն:

1923 թ. հունիսի 9-ին հանրապետության թերթերում հրապարակվեց Աղրբեջանի կենտրոնակումի նախագահի տեղակալ Մ. Բ. Կասումովի հունիսի 7-ի ստորագրած դեկրետը՝ «Լեռնային Ղարաբաղի Խնդնավար Մարզ կազմելու մասին»¹²²: Հունիսի 24-ին Աղրբեջանի կենտրոնակումի նոր դեկրետով վերացվեց Ղարաբաղի գործերի գծով կոմիտեն և փոխարեն ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի ժամանակավոր հեղափոխական կոմիտե (նախագահ՝ Արմենակ Ղարաբյողյան), որը լուծարվեց նույն թվականի նոյեմբերի 9-ին՝ մարզային խորհրդի առաջին համագումարն ավարտվելուց հետո: Նույն ամսին Աղրբ. ԽՍՀ կենտրոնակումի նախագահությունը և Ժողովությունը լՂԻՄ-ի վեհին փաթաթեցին մի կանոնադրություն, ըստ որի սահմանվեցին մարզի տարածքը, ինչպես և պետական մարմինների համակարգը: Հաջորդ տարում, 1924 թվականի հունիսին, «Խորհրդային Ղարաբաղ» թերթում և հանրապետական ժամանակավորվեց լՂԻՄ-ի սահմանադրությունը, որը գրվել և հաստատվել էր Աղրբեջանի կենտրոնակումում¹²³: Դա մի խղճուկ փաստա-

121 Վ. Ի. Լենին, Ելժ, հ. 24, էջ 276—277.

122 «Կոմունիստ», 9 հունիս 1923:

123 Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 24 հունիս 1924:

թուրք էր, որի նմանը դժվար է գտնել, Առաջին հոդվածը հոշակում էր, որ «Ենքնավար լեռնային Ղարաբաղը կազմում է Աղրբեշանի Խորհրդային Հանրապետության բազկացուցիչ մասը»: Այստեղ չկար ինքնավարության որևէ իրավական բանաձեռում: Մի այլ հոդվածում թվարկվում էր, թե որ բնակավայրերն են մտնում մարզի տարածքի մեջ: Մարզի հայության իրավունքներն ամբողջովին անտեսող կամ ոտնահարող այդ սահմանադրության կոչեցյալը պարտադրվեց արցախցիներին՝ առանց նրանց կամքքն ու ցանկությունը հարցնելու:

Լեռնային Ղարաբաղի ինքնավարության դեկրետի համաձայն ստեղծվեց խաղոր հանձնաժողով, որի որոշմամբ մարզի տարածքի մեջ թողնվեցին Շուշիի գավառի երկու տեղամասերը, Զիվանշիրի և Կարյագինոյի գավառների լեռնային գյուղերը՝ մոտ 440 հազար հեկտար տարածքով, Շուշի քաղաքը, 248 բնակավայրեր:

1923 թ. սեպտեմբերի 20-ին հանքենդն (Վաշագան Բարեպաշտի հիմնադրած Վարարակն բնակավայրը) վերանվանվեց Ստեփանակերտ, որը և դարձավ մարզի կենտրոնը:

Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցի շուրջը այսօր հեքիաթներ են հորինում Աղրբեշանում: Աղաղակում են՝ տեսեք, անցյալում ստանահարված լեռնային Ղարաբաղի աշխատավորների սոցիալական ու ազգային իրավունքները ունց էինք վերականգնում: Եվ ի՞նչ: Նախ՝ մարզի անվանումից չնշվեց հայկական անվանումը, հետո մարզի սահմաններից դուրս թողնվեցին Արցախի հյուսիսային մասերը՝ պատմական Գյուլիստանի տիրույթը՝ ներկայիս Շահումյանի շրջանը և Խանլարի շրջանի ամենաբերորդ մասը: Սահմաններն այնպես գծեցին, որ լեռնային Ղարաբաղն անշատվեց Հայաստանից և նրա հետ տարածքային կապերը խզվեցին: Եվ այդ ամենը Աղրբեշանի կառավարության պահանջով, Արմենակ Ղարաբաղույանի և ուրիշների, այդ թվում Անդրերկրկոմում նստած դեկավարների թողտվությամբ, որոնք աչք էին փակել և «բարեկամություն» ու «ինտերնացիոնալիզմ» էին խաղում: Դեռ այն ժամանակ մի շարք դեկավարներ, առաջին հերթին Սուլեյման Շաղունցը, եկան այն եզրակացության, որ լեռնային Ղարաբաղը Աղրբեշանի կազմում թողնելը պարզաբեր հանցագործություն է: Այսօր Աղրբեշանում աղաղակում են, թե իբր Ղարաբաղի ինքնավարության դեկրետը սիրով են ընդունել մարզի աշխատավորները և 1923 թ. ամռանը անցկացված հանրաքվեի ժամանակ միաձայն արտահայտվել են Աղրբեշանի կազմում մնալու օգտին: Ճշմարտությունն այն է, որ մարզի բնակչության ճնշող մեծամա-

նությունը դժգոհ էր երկրամասը Աղրբեշանի կազմում թողնելու անհիմն ու ապօրինի սրոշումից: Գուշիները և այլոք պնդում են, թե իբր մարզում հանրաքվե է անցկացվել, և բնակչությունը գրականորեն է արտահայտվել Աղրբեշանի կազմում մնալու օգտին: Ճշմարտությունն այն է, որ մարզում ոչ մի հանրաքվե էլ չի անցկացվել, այլ հրավիրվել են անկուսակցական կոնֆերանսներ, որտեղ խոսվել է Արցախին ինքնավարություն տալու գեկրիտի շուրջը: Դա էլ համարվել է հանրաքվե¹²⁴, իսկ թե այդ մասին Բաքվին ինչ է հաղորդել լեռնային Ղարաբաղի կուսակցության շրջանային կոմիտեի քարտուղար Սերո Մանուցյանը, ոս արդեն լավ գիտեն Զ. և Դ. Գուշիները և պատմության մյուս կեղծարարները:

¹²⁴ Այդ մասին առև Հրանմամյան, 1923 թվականին լեռնային Ղարաբաղում անցկացված հանրաքվեի (անդրեսնում) հարցի շարքը, ժերեկոյան ծրագիր, 1 գեկաների 1900.

ԳՈՅԱՎԱՅՐԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

Աղրբեշանի ճնշման դեմ արցախահայության մղած պայքարը երբեք էլ չկեց: 1928 թվականին տեղի ունեցած լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի կուսակցական կազմակերպության հինգերորդ կոնֆերանսի ամբողության կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Արտավազդ Սահակյանը մարզի աշխատավորների անունից հայտարարեց. «Մեզ մոտ՝ Անդրկովկասի պայմաններում, Աղդ. ԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում ազգային հարցի լուծումը ունի քաղաքական կարևոր նշանակություն և նրա ճիշտ լուծումը չի կարող շաղցել մարզի ընդհանուր քաղաքական սփռումի վրա»¹: Եվ ինչ, Աղրբեշանի ղեկավարությունը արցախցիների այդ ճիշտ մեկնարանումը կապում է հակախորհրդային ուժերի և ազգայնամոլոների հետ: Այդ կոնֆերանսում ելույթ ունենալով, Աղրբեշանի կոմկուսի Կենտկոմի ներկայացուցիչ Արտավազդ փորձում է մրոտել Արցախի ազնիվ զավակներին, որոնք իրեւ «սերմանում են ազգամիջյան տարածայնությունների և ազգայնական շովինիզմի գաղափարներ»²: Հետո խիստ հալածանքներ սկսվեցին Արտավազդ Սահակյանի, Թևադրոս Միրզաբեկյանի և մարզի կուսակցական, տնտեսական ու պետական մի շարք ազնիվ աշխատողների նկատմամբ:

Արցախը մայր հայրենիքին վերամիավորելու ուղղությամբ մտահոգված էին նաև Հայաստանում: Երեսնական թվականներին Աղասի Խանչյանը, հայ մտավորականությունը բազմից են բարձրացրել Արցախը Հայաստանի հետ վերամիավորվելու հարցը: Նաև արցախցիների խնդրանքով է, որ 1945 թվականի նոյեմբերին Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և հանրապետության կառավարությունը հարց բարձրացրին Համեր (բ) կ Կենտկոմի և միութենական կառավարության առջև ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու առաջարկով: Հայաստանի կոմկուսակցության կենտկոմի այն ժամանակա առաջին քարտուղար Գր. Հարու-

թյունյանի ստորագրությամբ ի. Ստալինին ուղարկված նամակում առված է, որ Հայաստանի տարածքին հարող լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզը, որը 1923 թվականից մտնում է Աղրբեշանական ԽՍՀ-ի կազմի մեջ և որի 153 հազար բնակիչներից 137 հազարը հայեր են, Հայաստանի վերամիավորելը մտեծապես կնպաստեր նրա զարգացմանը և կրարելավեր տնտեսության ղեկավարումը» և «մայրենի լեզվով բնակչության կուլտուր-մասսայական և քաղաքական սպասարկումը կուտեղանար Հայաստանի հանրապետական մարմինների կողմից ղեկավարման գեպքում»: Կենտկոմի քարտուղարը համոզված է, որ «Հայաստանի կազմի մեջ լեռնային Ղարաբաղի մարզի մտնելը տեղական՝ կաղրերին հնարավորություն կտար շարունակել բարձրագույն կրթությունը մայրենի լեզվով Հայաստանի բուհերում: Մյուս կողմից, Հայկական ԽՍՀ-ն կկարողանար ազգային կաղրեր ստանալ լեռնային Ղարաբաղի մարզից, որոնք աշքի են ընկնում իրենց գործարարությամբ...»: Գր. Հարությունյանը հավաստիացնում է, որ հանրապետությունը լիովին կվերականգնի Շոշի քաղաքը³:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Գր. Հարությունյանը այդ հարցով կրկին ի. Ստալինին դիմեց 1949 թվականին՝ կապված սփյուռքահարերի հայրենադարձության հետ: Սակայն այս անգամ ևս հարցը շքնարկվեց:

Վերադարձ մարմիններին նման բողոք-նամակներ ուղարկվել են նաև 60—70-ական թվականներին: Բայց ո՞վ էր լսողը: Մարզում ազ ու ճախ ստահարվում է այն ամենը, ինչ ազգային է, արցախական, ասել է թե՝ հայկական: 1977 թ. «Պորոբլեմի միրա ի սոցիալիզմա» հանդեսում երևաց հնդիկ Սարադա Միտրայի և քուրդ Աղել Խարայի «Մենք տեսել ենք ազգերի եղբայրություն» վերտառությամբ ուսպորտամբ, որն ամբողջովին ներկված է ալիև-կեորկովյան խարեւությամբ: Հեղինակները լինելով Արցախում, այն ժամանակա լՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Բ. Ս. Կենրկովին հարցում են, թե ինչու լեռնային Ղարաբաղի մարզը չի մտնում ՀԽՍՀ-ի կազմի մեջ, որից բաժանված է ընդամենը մի նեղ հողաշերտով: Վերջինս կրկնում է 20-ական թվականներից եկող և այդ օրերի իր հովանավորների՝ Հեյդար Ալիևի և Մյուսների ժամանակա տեսակետը: Լեռնային Ղարաբաղը տնտեսապես կապված է Աղրբեշանի շրջանների հետ, մինչեւ Հայաստանից անշատված է բարձր լեռներով: Իսկ այն հարցին, թե մարզի բնակիչները բոլորն են գա բնակլել, Կեորկովը պատասխանում է: «Իհարկե, պահանջվել է գաստիարակչական մեծ աշ-

¹ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի աղրբեշանական մասնաճյուղի կուսակցական արելիվ, ֆ. 89, ց. 1, գ. 486, թ. 7:

² Նույն տեղը, թ. 28:

³ՏՏ ՀՀ ՀՔԿԿԴԱ, թ. 1, ց. 25, գ. 41, թ. 1:

խառանք: Կային մարդկե, որոնք ասել են. «Թող ես վատ ապրեմ, բայց կապված լինեմ Հայաստանի հետո»:

Կեռուզը զա համարում է արցախցիների «հետամնացության և շհասկանալու հետևանք»: Այնուհետև ճգնում է ապացուցել, թե իբր Աղրբեջանի կոմկուտի Կենտկոմի զեկավարությամբ «Ղարաբաղում վերացել է գոյություն ունեցած ազգային անհավասարությունը և օրակարգից չնշվել է Ղարաբաղի պրոբլեմը»⁴, իսկ 1977 թվականի ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահության արձանագրության մեջ «Ղարաբաղի շնչված պրոբլեմի» մասին գրվել է. «Գետը է կեռնային Ղարաբաղը (Հայերեն՝ «Արցախ») վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին, Այն գեպքում ամեն ինչ կա իր օրինական տեղը»:

Արցախյան այդ «չնշված պրոբլեմը» յոթանասուն տարվա վերք ու տառապանք ունի: Նրա ճակատագիրը ոչնչով բարվոք չէ գաղութային որևէ ժողովրդի ճակատագրից: Մինչդեռ Արցախը խորհրդային նախկին երկրի այն տարածքն էր, որի զավակները հրաշքներ են գործել մեծ Հայրենականում՝ տարով 21 հերոս, որից մեկը կրկնակի, շորս մարշալ, տասնյակ գններալներ: Արցախի զավակներից 45 հազարը (երկրամասի բնակչության երկու երրորդը) մեկնեց ռազմաճակատ, որոնցից 20 հազարը տուն վերադարձավ հուշարձան դարձած: Արցախը այն երկրամասն է, որը երկու է Հեղափոխական մի ամբողջ սերունդ, տաղանդների մի փայլուն համատեղություն՝ պետական ականավոր գործիչներ ինչպես Թևոսյան և Սաքո Համբարձումյան, գրող Մուրացան, պատմաբան Լեռ, գրականագետներ Հայկ Գյուլիքեմյան և Արսեն Տերտերյան, արվեստի գործիչներ Մելիք-Փաշան և Վազարշ Վազարշյան, գիտնականներ Նիկոլայ Զինին, Խոսիֆ Տեր-Աստվածատրյան, Աշոտ Հովհաննիսյան, Արտեմ Տեր-Խաչատրյան, Նիկոլայ Ենիկոլոպյան, Անդրանիկ Իռոսիֆյան և Հարյուրավոր ուրիշներ:

ՀԴՀ տարածքը կազմում է 4,4 հազար քառակուտի կիլոմետր, որտեղ ապրում է մոտ 200 հազար մարդ: Երկրամասի արդյունաբերական պոտենցիալը կազմում է հանրապետության պոտենցիալի հազվի երկու տոկոսը, գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 3 տոկոսը: Այդպիսի ցածր մակարդակը հետևանք է այն բանի, որ մարզի ձեռնարկությունների կապերը հանրապետության ձեռնարկությունների հետ միակազմանի բնույթ էին կրում, որը և առաջիններին դառնում էր ժամանակակից ապահովությունը:

աննպաստ վիճակի մեջ: Մարզի արդյունաբերական ամենախոշոր ձեռնարկություններից մեկը՝ մետաքսի կոմբինատը, տարեկան կորցնում էր 60 միլիոն ռուբլի միայն այն պատճառով, որ դրված էր Շաքիի մետաքսի կոմբինատից կախման մեջ, ուր ուղարկվում էր նրա արտադրանքը ներկայական նպատակով:

Եթե 1970 թվականին կապիտալ ներդրումները մեկ մարդու հաշվով հանրապետությունում կազմել են 243, նախիջևանի ինքնավար Հանրապետությունում՝ 267, ապա 1977-ում՝ ընդամենը 153 ռուբլի: Այդ նույն ցուցանիշը 1986 թվականին համապատասխանաբար կազմել է 473, 334, 178 ռուբլի⁵:

Եթուային Ղարաբաղում մեկ շնչի հաշվով տարեկան արտադրվում է 62,2 կգ միս, հանրապետությունում՝ 23,8 կգ, մինչդեռ մարզի յուրաքանչյուր շնչին հասնում է 20 կգ միս, իսկ հանրապետությունում՝ 36 կգ: Խիստ դժվար է հայթայթվում անասնակերը, վատ են ոռոգման աշխատանքները, անմիխսիթար, վիճակում է գտնվում գյուղատնտեսական տեխնիկան, Բնակչության ջրամատակարարումը ամենացավոտ հրցերից մեկն է: Մարզի 218 բնակավայրերից միայն 25-ը կարելի է շրով ապահոված համարել: 77 կոլտնտեսություններից և սովորողներից միայն հինգն են գաղնված մատակարարված: Դժվար է գտնել մարզային տնտեսության մի բնագավառ, որը կախման մեջ վկիներ հանրապետական մարմիններից: Բոլոր օգակներում կոպտորեն խախտված են ինքնավար մարզի իրավունքները: Բանը հասել է նրան, որ մինչև անգամ Աղրբեջանի իշխանությունների կողմից կազմված ԼՂԻՄ կանոնադրության մեջ չի գրված, թե որն է ինքնավար մարզի լեզուն: Միտումնավոր անտեսվել է ազգային կադրերի պատրաստման գործը: Տասնյակ տարիներ շարունակ ոչ մի երիտասարդ մի ուղարկվել երկրի բուհերում մասնագիտություն ձեռք բերելու: Մարզը շոնի հայերեն լեզվով հրատարակություն, մինչև վերջերս գրված էր մայր Հայաստանից մայրենի լեզվով հեռուստահաղորդումներ դիտելու և հայերեն ուղղուհաղորդումներ լսելու հնարավորությունից:

Աղրբեջանը տասնամյակներ շարունակ հետապնդել է մի նպատակ՝ ունենալ Արցախ առանց հայ բնակչության: Հայաթափության քաղաքականությունը ավելի բացահայտ դարձավ 70—80-ական թվականներին, երբ հանրապետությունում իշխում էին Հ. Ալիքը և Կ. Բաղիրովը: 1979

⁴ «Проблемы мира и социализма», 1977, № 6, ст. 12.

⁵ Протокол заседания Президиума Сов. Мин. СССР от 23 ноября 1977 г., № 61, 11—4133, или «Правда о Нагорном Карабахе», Степанакерт, 1989, ст. 59.

* Այս և հետագա մի շաբաթ ավալներ բազմած են Վ. Բ. Արյունյան, «События в Нагорном Карабахе, хроника, часть I, февраль 1988 г.—январь 1990 г.», Ереван, 1990.

թվականի մարդահամարի տվյալներով՝ 1970—1979 թվականներին մարդում աղբբեշանական բնակչությունն ավելացել է 37 տոկոսով, իսկ հայկական բնակչությունը՝ 1,7 տոկոսով։ Դրան համապատասխան վերջին 15 տարում մարզում գգալիորեն ավելացել են աղբբեշանալեզու ուսումնական հիմնարկները։ Մարզում ընդամենը աղբբեշանական բնակչությամբ 10 տարեսություն կա, բայց աղբբեշանական լեզվով գործում է տեխնիկում, որն ունի 729 սովորող։

Անմիտիթար վիճակում են գտնվում մարզի պատմաճարտարապետական հուշարձանները, որոնց թիվը անցնում է 1600-ից։ Իրավամբ, կեռնային Ղարաբաղը մի թանգարան է բաց երկնքի տակ։ Աղբբեշանուատանամյակներ շարունակ շանում են այդ հուշարձանները յուրացնել և համարել աղվանա-աղբբեշանական։ Վերջին երեսուն տարում՝ մարզի հայկական հուշարձանների ոչնչացումը կրել է մասսայական բնույթի համարել աղվանա-աղբբեշանական։ Վերջին երեսուն տարում՝ մարզի հայկական հուշարձանների ոչնչացումը կրել է մասսայական բնույթի մինչև 1988 թվականը մարզում փակվել է հայկական 46 դպրոց, որոնց թվում երկու միջնակարգ, 17 ուժամյա և 27 տարրական։ Բժշկական սպասարկման տեսակետից մարզը գտնվում է երկրի ամենահետին տեղերից մեկում։ Ճանաչում ստանալու հնարավորություններից գրկված էին մարզի գրողները, քանդակագործները, նկարիչները, ճարտարապետները։

Արցախահայությունը շեր կարող հաշտվել նման ստրկական վիճակի հետ, այն մխացող կրակ էր, որից մի օր պիտի բոց բռնկեր։ Եվ բռնկվեց։ Դա 1988 թվականի փետրվարին էր։ Իսկ մինչ այդ 1986—1987 թվականներին արցախահայերը ստորագրություններ հավաքեցին լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետությանը վերամիավորելու օգտին և ուղարկեցին վերադաս իշխանություններին։ 1987 թվականի դեկտեմբերից մինչև 1988 թվականի փետրվարն ընկած ժամանակաշրջանում շորս անգամ պատվիրակություն մեկնեց Մոսկվա, որոնց ընդունեցին կուսակցական և պետական մարմինների ղեկավարները, լսեցին ու լուցին։ 1988 թվականի հունվար-փետրվար ամիսներին մարզի բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովորողներում, ուսումնական հաստատություններում տեղի ունեցան կոլեկտիվների ընդհանուր ժողովներ, սկզբնական կուսակցական կազմակերպությունների նիստեր, գյուղական, ավանային, քաղաքային և շրջանային խորհուրդների նստաշրջաններ, որոնցում բնակչության պահանջով քննարկվեցին լեռնային

Ղարաբաղի հնգնակար Մարզը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը։ Եվ բոլոր տեղերում էլ միանման որոշումներ ընդունվեցին՝ խնդրել վերադաս մարմիններին հարցը լուծել գրականորեն։ Այդ որոշումները պաշտպանեցին Ստեփանակերտի կուսակցության քաղկոմի, Մարտակերտի, Ասկերանի, Հաղպութի և Մարտունու կուսակցության շրջկոմների բյուրոներն ու պլենումները։ Մարզի բնակչությունից, աշխատանքային կոլեկտիվներից, կուսակցական և պետական կազմակերպություններից հարյուրավոր հեռագրեր և նամակներ ուղարկվեցին կենտրոնական մարմիններին՝ խնդրելով կեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի Հանրապետության հետ։

Արցախի պրոբլեմը, որը վերածնվեց վերակառուցման հորածանուտներից, դեմ առավ այդ նույն վերակառուցման ճանապարհին ընկած ժայռաբեկորներին։ Աննկուն արցախցիները մայր ժողովրդի հետ միասին ավելի քան շորս տարի է, ինչ հերոսաբար մաքառում են և դիմակայում բոլոր տեսակի խոշրնդատները՝ շրջափակում, երկրաշրթ, լրատվության սաղրիլ միջոցներ, կուսակցական ու պետական վերադաս մարմինների քար անտարբերություն։

1988 թվականի փետրվարի 20-ից սկսած արցախյան գոյամարտը նոր էտապ մտավ։ Այդ օրը ժողովրդական դեպուտատների լՂԻՄ 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց լՂԻՄ-ը Աղբբեշանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու համար Աղբբեշանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդելու մասին։ Նույն թվականի հունիսի 21-ի և հուլիսի 12-ի լՂԻՄ ժողովրդական դեպուտատների խորհրդի նստաշրջանները, ենելով ազգերի ինքնորշման սկզբանքներից, որոշումներ ընդունեցին մարզը գուրս բերել Աղբբեշանի Հանրապետության ենթակայությանից։ Այդ որոշումները լիովին համապատասխանում են։ Վերակառուցման ոգուն Արցախցիները փորձեցին անօրինել սեփական ճակատագիրը, մինչդեռ դա հանդիպեց ինչպես Աղբբեշանի Հանրապետության, այնպես էլ կենտրոնական իշխանության խիստ դիմագրությանը։ Կենտրոնը անպատրաստ էր խորհրդական բարեւանելու հարցի կարեռությունը։ լՂԻՄ-ի մարզային խորհրդի նստաշրջանի առթիվ ԽՄԿԿ Կենտրոնի 1988 թ. մարտի 21-ի հապճեղ ընդունած որոշումը՝ լՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ, արձագանք շգտագ ոչ Արցախում և ոչ էլ Հայաստանի հան-

? ՏԵ՛ Փաստաթուղթ Հ 16.

։ ՏԵ՛ Փաստաթուղթ Հ 17 և 18.

րապետությունում, որովհետև այդ որոշումը չէր ելնում ռեգիոնուաստեղծված սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակից:

ՀՂԻՄ-ի մարզիորհրդի նստաշրջանի որոշումը քննարկվեց Հայկական և Աղրբեշանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների նստաշրջաններում։ Հարցի քննարկման ժամանակ ի հայտ եկան սահմանադրության մեջ տեղ գտած հակասություններն ու ձեականությունները։ Աղրբեշանում և կենտրոնում շհասկացան, որ ազգի ինքնորոշման իրավունքը պետք է վեր դասվի պետական ինքնորոշման սկզբունքից։

Այդ իրադարձությունների առաջին արձագանքը եղավ 1988 թվականի փետրվարի 27—29-ին Սումգայիթում կազմակերպված հայերի ցեղասպանությունը։ Այդ օրերին վայրագ ամբոխի կողմից գաղանարար սպանվեցին 26 հայ, 400-ը մարմնական ծանր վնասներ ստացան, վառվեցին և թալանվեցին 200 բնակարան, ավերվեցին 50 սոցիալ-մշակութային օբյեկտներ, ոչնչացվեցին 40 ավտոտրանսպորտային միջոցներ։ Գետությանը հասցվեց ավելի քան յոթ միլիոն ռուբլու վնաս։

Սումգայիթում, որին հաջորդեց Կիրովաբադը, Խոչշալուն, Շուշին, Բաքուն, Գետաշենը, Հադրութը, Եահումյանը և Աղրբեշանի հայաբնակ մյուս վայրերը, տեղի ունեցած հայերի ցեղասպանությանը շտրվեց քաղաքական գնահատական։ Մ. Ս. Գորբաշովը դիմելով Աղրբեշանի և Հայաստանի ժողովուրդներին, փորձեց տալ սոսկ ստեղծված իրավիճակը, իրականությունն ու հանցարությունը սքողող գնահատական։ Նույն կերպ վարվեց 1988 թվականի հուլիսի 18-ին գումարված Գերագույն խորհրդի նախագահության նիստը։

Երկանում, Հայաստանի մյուս քաղաքներում, ամրող Արցախում տեղի ունեցան միտինգներ ու ցույցեր, որոնց մասնակիցներն իրենց բողոքն ու ցասումն արտահայտեցին «սումգայիթ» կազմակերպողների դեմ։ Կենտրոնական վարչակարգի կողմից Սումգայիթի ցեղասպանության նկատմամբ արձագանքը պարզապես հանցավոր էր։ Դա ազգերի ինքնորոշման իրավունքի ակնհայտ խախտում էր ու ոտնահարում։ Ազգերի ինքնորոշման սկզբունքը, ըստ Վ. Ի. Լենինի, պետք է ընկած լինի ազգամիջյան հարաբերությունների հարցերի լուծման հիմքում։ Դեռևս 1914 թվականին նա գրել է. «...եթե մենք ուզում ենք հասկանալ ազգերի ինքնորոշման նշանակությունը, իրավաբանական դեֆինիցիաների խաղ շնաղալով, վերացական սահմաններ չշնորհնելով», այլ վերլուծելով ազգային շարժումների պատմատեսական պայմանները, ապա մենք անխուսափելիորեն կհանգենք մի եղակացության։ ազգերի ինքնորոշում ասելով հասկացվում է նրանց պետական անշատումն օտարազգի

կոլեկտիվներից, հասկացվում է ինքնորույն ազգային պետության գոյացում»⁹, Վաղիմիր Իլյիշը ծալլրում է բոլոր նրանց, ովքեր փորձում են ազգերի ինքնորոշման հարցի քաղաքական լուծումը փոխարինել տնտեսական, մշակութային և այլ հասկացություններով ու կատեգորիաներով։ «Ազգերի ինքնորոշում ասելով,— գրել է նա,— հասկացվում է հենց բաղամական ինքնորոշումը, այսինքն՝ անշատման, ազգային ինքնուրույն պետություն կազմելու իրավունքը»¹⁰, Վաղիմիր Իլյիշը պաշտպանում է ազգերի իրավահավասարության սկզբունքը, «Մենք պահանջում ենք,— գրել է նա,— բոլոր ազգերի անպայման իրավահավասարության պետության մեջ և ամեն մի ազգային փոքրամասնության իրավունքների անպայման պաշտպանություն»¹¹։

Վ. Ի. Լենինը շեշտելով, որ ինքնորոշման դեպքում սահմանները որոշվում են բնակչության կամքով»¹², հանդես է գալիս ինքնորոշման իրավունքի հիման վրա սահմանները փոփոխելու պատրվակներ որոնելու դեմ։ Նա գտնում է, որ «անեքսիա կարել է և պետք է համարել միայն տարածքի այն միացումը, որ կատարվում է նրա բնակչության կամքին նակառակել։ Այլ խոսքով՝ անեքսիայի հասկացությունն անխզելիորեն կապվում է ազգերի ինքնորոշման հասկացության հետ»¹³, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ «սոցիալիզմի օրոք ազգերի ինքնորոշումն իրագործելուց հրաժարվելը դավաճանություն կլինի սոցիալիզմին»¹⁴։

Սոցիալիզմի օրոք, ըստ Վաղիմիր Իլյիշի, ազգերի ինքնորոշման ինդրում պետք է հստակորեն պարզ լինի «...դեմոկրատիան ազգային հարցում (այսինքն՝ ազգերի ինքնորոշումը)»¹⁵։ Վ. Ի. Լենինի մի այլ բնորոշմամբ «բռնության դեմ նաև ազգերի դեմոկրատական միավորման, «Անշատման ազատությունը», դեմոկրատիզմի բարձրագույն արտահայտությունն է»¹⁶։

Երկրի վերադաս իշխանությունները բացահայտորեն խաչ են քաշել ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքի վրա, ծեռուց նետել մարդու ազատության միշազգային իրենց իսկ ստորագրած որոշումներին։ Հենց դրա դեմ էլ իրենց արդար բողոքն են արտահայտում զարարազյան շարժ-

⁹ Վ. Ի. Լենին, նժ, հ. 25, էջ 311.

¹⁰ Նոյն տեղը, հ. 24, էջ 302.

¹¹ Նոյն տեղը, հ. 23, էջ 256.

¹² Նոյն տեղը, հ. 31, էջ 534.

¹³ Նոյն տեղը, հ. 27, էջ 563.

¹⁴ Նոյն տեղը, հ. 30, էջ 22.

¹⁵ Նոյն տեղը, էջ 116.

¹⁶ Նոյն տեղը, հ. 27, էջ 538.

ման երկունքից ծնված «Կոռնկ» («Միացում»), «Ղարաբաղ» կոմիտեն-ները, Հայոց համազգային շարժումը, աշխարհի ամրող հայությունը, բոլոր առաջադեմ մարդկեցին:

Թվում էր, թե 1988 թվականի հունիսի 18-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը կվերացներ լարվածությունը ուղղիուում: Այդ նիստում ունեցած իր ելույթում կեռնային Ղարաբաղի կուսակցության մարդկումի այն ժամանակվա առաջին քարտուղար Հ. Ա. Պողոսյանը ասաց, որ արցախյան պրորեմբ պահանջում է ամենից առաջ քաղաքական լուծում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի դեպուտատներից կազմված հատուկ հանձնաժողովը, որ խնդիր ուներ ուսումնասիրել ուղղիում ստեղծված իրավիճակը և նպաստել լարվածության հետագա թուլացմանը, ազելի խորացրեց լարվածությունը: Կենտրոնական հեռուստատեսությունը, ուղիուն, մամուլը, լրատվության մյուս միջոցները շարունակում էին խեղաթյուրել զարարացյան շարժման էությունն ու բնույթը, թաքցնել Սումգայիթում և այլուր իրագործված բարբարոսությունները, կարականապես հրաժարվում էին քաղաքական գնահատական տալ այդ իրադարձություններին, փորձում մասնատել ընդհանուր, նախօրոք կազմակերպված հանցագործությունը և դատավարություններն անցկացնել երկրի տարբեր քաղաքներում: Առաջ քաշվեց ոչ հաղթողի և ոչ էլ պարտվողի, և առաջանական երր շվերաձևելու միանգամայն սնանկ տեսակետը, երկու հանրապետությունների ժողովուրդներին խոստանում էին զարարացյան պրորեմի փոխզիշումային լուծում: Երևանի Թատերական հրապարակում, Ստեփանակերտի Վ. Ի. Լենինի անվան հրապարակում ցույց երեն ու միտինգները մասսայական, համաժողովրդական բնույթ էին ընդունում և ընդգրկում հանրապետության և կեռնային Ղարաբաղի ամրող բնակչությանը: Աղբբեշանի զեկավարությունը կենտրոնական իշխանությունների միակողմանի դիրքորոշման օգնությամբ բոլոր շանքերը գործադրում էր թաքցնելու Սումգայիթի ցեղասպանության իսկական կազմակերպիչներին և մարդկանց համոզել, նրանց գիտակցության մեջ ամրապնդել, թե իր այդ ոճագործությունը կատարել են մի խումբ ծայրահեղականներ և Հայաստանից գաղթած աղբբեշանցիները. մինչեւ անգամ որոշ մտավորականներ (Զ. Բոնիաթով և ուրիշներ) հայտարարում են. թե «սումգայիթը» կազմակերպել են Հայերը: Ուրեմն, Հայերն իրենց նկատմամբ ցեղասպանություն են կազմակերպել: Ահա թե ինչի է ընդունակ ցինիզմը: Աղբբեշանում արցանցիներին համարում են երախտամոռներ (հետաքրքիր է իրենց ո՞ր լավությունը մոռանալու համար): լուտանքներ են թափում Հայաստանի «ծայրահեղականների», Զորի Բալուտանքներ են թափում Հայաստանի «Ղարաբաղ» կո-

լայանի, Սիլվա Կապուտիկյանի, «Ղարաբաղ» կոմիտեի անդամների, «Կոռնկ» ակտիվիստների, Արցախի և Հայաստանի ժողովրդական դեպուտատների, երկրի մի շարք մտավորականների՝ Ա. Սահարովի, Ֆ. Մտորովյայի և ուրիշների հասցեին: Նրանք հայ ժողովրդին մեղադրում են նրա համար, որ նա սատար է կանգնել արցախահայության արդար պայքարին: Սումգայիթի մարդասպանները մինչև անգամ հոչակվեցին Աղբբեշանի ազգային հերոսներ: Ամենուր տարածում են Աղբբեշանը բոլոր այլածիններից մաքրելու և կեռնային Ղարաբաղի ինքնավարությունը վերացնելու կոչեր:

1988 թվականի աշնանից դարարացյան շարժումը, որը սկսվել էր որպես կեռնային Ղարաբաղի մարզինորհութիւն որոշումների պաշտպանության շարժում, դուրս եկավ իր շրջանակներից և դարձավ ակտիվ քաղաքական գործունեություն:

Այս ազելի մեծ թափ ստացավ 1988 թվականի նոյեմբերին և դեկտեմբերի սկզբին: Աղբբեշանից տեղահան արկեցին հարյուր հազարավոր հայեր: Կենտրոնական իշխանությունները ռազմական դրություն մացրին թաքվում և երևանում: Ահա ճգնաժամի այդ ամենալարված ժամանակ Հայաստանում 1988 թ. գեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ աշխարհացունց երկրաշարժ, որը նոր շափանիշ մացրեց ստեղծված բարդ իրավիճակում: Հայ ժողովրդի արտի մորմոքը «մեղմելու» համար աղետի գոտի ժամանեց Մ. Ս. Գորբաչովը, ու նրա գնալուց անմիջապես հետո Արցախուանիրակալվեցին զարարացյան շարժման ակտիվիստ Ա. Մանուչարովը, իսկ երևանում՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները: Հայ ժողովրդի ողբերգության նկատմամբ իրական, սրտացավ վերաբերմունքի փոխարին Աղբբեշանի տարածքով սկսեցին հանրապետություն ժամանել շարդված գնացքներ: Այդ օրերին վշտաբեկ հայությանը սատար դարձան վրաց, մյուս եղբայրակից և աշխարհի շատ ժողովուրդներ: Նրանց անկեղծ, սրտացավ օգնությունը երրեք շի մոռանա հայ ժողովուրդը: Արցախցիներն էլ մի պահ մոռացան իրենց ցավը ու զանում էին օգտակար լինել Հայաստանին, իրենց վրա վերցնելով նրա տառապանքների և հնգերի մի մասը: Արցախից 400 հոգի անմիջապես մեկնեցին աղետի գոտի՝ փրկարարական աշխատանքներ կատարելու, աղետյալներին օգնելու համար հինգ միլիոն ուռելի հանգանակվեց: Աղետի գոտի ուղարկվեցին նաև հագուստեղեն, դեղորայք և այլ անհրաժեշտ ապրանքներ: Իսկ Հայաստանում այդ վշտալի օրերին նույնիսկ հայ ժողովրդը պետության զեկավարին հիշեցրեց Ղարաբաղը, զաղթականների շուծված պրորեմը, Սումգայիթը, Գերագույն խորհրդի նախագահության նիստը, «Ղարաբաղ» կո-

միտեր անդամների անօրինական ձերբակալությունը, մատնացույց արեցին իրենց հասցեին կենտրոնական լրատվության միջացների զրպարտանքներու ու վիրավորանքները, անհարկի պարետային ժամի առկայությունը և արյուն ժորող սրտի այլ խնդիրներ։

ԽՍՀԾ Գերագույն խորհրդի 1989 թվականի հունվարի 12-ի հրամանագրով ԼՂԻՄ-ում մտցվեց կառավարման հատուկ ձև. սկսվեց արցախյան՝ գոյամարտի նոր փուլ։ Դադարեցվեցին մարզի ժողովրդական պատգամավորների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացւմը։ Ինչպես նաև կուսակցության մարզային կոմիտեի գործունեությունը։ Որոշման մեջ ասված է, որ կոմիտեն օժտված է ինքնավար մարզի ժողովրդական գեպատաների խորհրդի լիազորություններով։ Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Հատուկ կառավարման կոմիտեն չկարողացավ կայունացնել վիճակը։ Պատճառն այն է, որ մարզը թողնվեց Աղրբեջանական ԽՍՀ-ի կազմում և Հաճուկ կառավարման կոմիտեն չըներ իշխանության ամրող լիրավություն։ Աղրբեջանի ղեկավարությունը շարունակում է վարել մարզի հայ բնակչության դուրսմղման քաղաքականություն, իսկ մարզի աղրբեջանական բնակավայրերում կենտրոնացնում է Ռւզբեկստանից գաղթած թուրք-մեսխեթցիներին և Հայաստանից տեղափոխված աղրբեջանցիներին։ Արագացնում է այդ բնակավայրերում արտադրական ու սոցիալական ոլորտի օբյեկտների կառուցումը։ Մարզում շեն վերացվում ազգամիջյան բնդհարումները, աղրբեջանական գյուղերում կուտակվում է զինամթերք։

Ունգիստում վիճակը կարգավորելու համար ԼՂԻՄ ուղարկվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նոր հանձնաժողով, որի եղբակացությունն արդեն թելադրված էր կենտրոնից: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի ամքինից Արցախի և Հայաստանի դեպուտատների ելույթներում հնչում է արցախահայության տափապար: Խորհրդային հասարակությանը հայտնի դարձավ, որ արցախյան պրոլետի էությունը հայ ժողովրդի բռնությամբ անշատված մի մասի ինքնորոշման իրավունքի ճանաշման մեջ է: Այդ ամենից հետո դարձյալ ճիշտ և անհրաժեշտ եղբակացություններ շարվեցին: Կենտրոնական իշխանությունները բացահայտուր ոտնահարում էին ինքնորոշման իրավունքը, որը նույնիսկ չի պնդում վերամիավորում Հայաստանին, այլ համաձայնություն է արտահայտել Ղարաբաղը դուրս բերել Աղորեցանի կազմից և ենթարկել կենտրոնին: Կենտրոնում չէին լցում հասկանալ, որ Ղարաբաղի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքի մերժումը, երան բռնությամբ

Ազգային և մշակութային պահպանական է ԽՍՀՄ սահմանադրության և միջազգային պարտավորությունների կողից խախտում¹⁷։ Արցանակին անդիշում և համարձակ պայքարը 1989 թվականի մայիսին կրկին ծննց քաղաքական անհաջողություն՝ երկարաժամ գրածով, որը շարունակվեց երեք ամիս։ Թրանից գույքը գալու ելքը արդարացիները գուան իրենց հերոսական անցյալում...

1989 թվականի օգոստոսի 16-ին Ստեփանակերտի Մ. Գորկու անվան Հայկական պետական գրամատիկական թատրոնի շենքում տեղի սննդավայր է բռնական համակարգության լիազոր ներկայացուցիչների համար։ Եկած պատվիրակներն ընտրվել էին մարզի տեղական խորհրդական կուսակցաններում, կուսակցական, կամերիտական և արհմարտինական կազմակերպությունների պլենումներում։ Համագումարը ընտրեց Ազգային խորհրդի, որը ժողովրդական ինքնակառավարման մարմին է։ «Ազգային խորհրդի և նրա նախագահության, — առված է համագումարի ընդունած սրոշման մեջ, — առաջնահերթ նպատակը իրավիճակի կայունացումն է, ազգամիջյան ընդհարումների կանցըմը, վերակառուցման ընթացքին ակտիվ աշակցումը, հրապարակայնության, գիմնարատիայի համակողմանի զարգացումը, լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը»¹⁸։ Համագումարը ընդունեց գեկլարացիա և դիմում հառակ շրջանի պարետին, խորհրդային բանակի և ԽՍՀՄ ստորաբանումների սպաններին և զինվորներին, ինչպես և դիմում աղբյուշանական կան ժողովրդին՝ հարգելու Ղարաբաղի հայոց տարրական իրավանքը։

Հիպոք ներկայացուցիչների համագումարի հրավիրումը և Ազգային խորհրդի ստեղծումը հարկադրական քայլ էր և միանգամայն գեմակրատական։ Ի պատասխան արցախցիների այդ քայլի, Ազգբեշանի ԽՍՀ Գերագույն խորհուրդը 1989 թ. սեպտեմբերի 15-ին ընդունեց «Ազգբեշանի ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Խնքնավար Մարզի գործիքան մասին» և սեպտեմբերի 23-ին՝ «Ազգբեշանական ԽՍՀ ինքնիշխանության մասին» որոշումները։ Ազգբեշանում քաջակերպելով վերադաս իշխանությունների հռվանավորչական քաղաքականությանից, ազգային սփյականությունը հռչակեցին Արցախն ու Նախիջևանը՝ հինգուրց հայկական այդ տարածքները։ Այս որոշումների քաջաքական նպատակն է արգելք գնել Լեռնային Ղարաբաղի հայութ քայլաքական լուծման ճանապարհին։

ՂԻՄ Ազգային խորհրդով և նրա կողմից ընտրված նախագահ-

17 Տե՛ս Գ. Բագրեզի, Խթնության իրավունքը ուղղամշյան պրոբլեմների գծո-
կառական լուծումները Հրեժի է. Երևան, 1990, էջ 74–75.

18 Физика Равиля № 19:

թյունը ձգտում է երկրամասը դրվս բերել ստեղծված ճգնաժամից: Կիազոր ներկայացուցիչների առաջին համագումարը աշխարհին հայտնեց «ՂիՄ-ը հետևողականորեն Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորելով հասնելու իր վճռականության մասին», խստագույնս մերժեց «մարզի ներքին գործերին Ադրբեյջանի կառավարության կողմից միշամտություն ցույց տալու յուրաքանչյուր դրանքի քաղաքականությունը»¹⁹: Համագումարը ՂիՄ-ը հողակեց անկախ խորհրդային տարածք և գուշացրեց, որ «ինքնավոր մարզի գործերին աղբքեցանական հանրապետության միշամտությունը գնահատվելու է որպես ազբեսիայի ակտ և կտտանա համարժեք պատասխան»²⁰:

1989 թվականի հոկտեմբերի 19-ին տեղի ունեցած ՂիՄ Ազգային խորհրդի նիստը քննարկելով «Ինքնորոշված ՂիՄ-ը Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու՝ մարզի հայ բնակչության արտահայտած կամքի գործական իրականացման միջոցառումների մասին» հարցը, ընդունեց որոշում, որում դատապարտվում է ՌԿ(բ)կ Կենտկոմի Կովկասյան բյումիանգաման անօրին որոշումը, որը «Ադրբեյջանին թույլ տվեց անեթրագույն խորհրդային կառավարության և խոնդրում է «Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ ստեղծել համատեղ հանձնաժողով ՂիՄ-ը Հայկ. ԽՍՀ կազմի մեջ մտցնելու ուղղությամբ գործական միջոցներ իրականացնելու համար»²¹: Ազգային խորհրդային միաժամանակ «դատապարտեց զինվորական շարասյան պրովոկացիոն գործողությունները, որոնք ողբերգական իրադրությունների են հանգեցրել Ստեփանակերտում 1989 թվականի հոկտեմբերի 10-ին»²², ՌԿ(բ)կ Կենտկոմի Կովկասյան բյումիանգի 1921 թ. հոկտիսի 5-ի որոշումը անօրինական ճանաչեց նաև Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդադրության իր 1990 թվականի փետրվարի 13-ին ընդունած որոշումով²³:

1989 թվականի նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդային ընդունեց «կեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզում իրադրության նորմալացնելու միջոցառումների մասին» հապճեպ որոշումը, որը շի արտահայտամ հայ ժողովրդի ձգտումը: Ի պատասխան այդ շիմնավորված և

¹⁹ «Եկեղեցին Ղարաբաղի հերեավար Մարզի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի նյութերը», Ստեփանակերտ, 1989, էջ 28,

²⁰ Նույն տեղը:

²¹ «Խորհրդային Ղարաբաղ», 21 հոկտեմբերի 1989,

²² Նույն տեղը:

²³Տե՛ս Փաստաթուղթ թ 21,

չայ ճողովրդի շահերը ոտնահարող որոշման, ինչպես և ընդառաջելով արցախահայության և Արցախի Ազգային խորհրդի խնդրանքին, 1989 թվականի դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն և կեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստը ընդունեց Հայկական ԽՍՀ-ի և կեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին որոշումը, ըստ որի «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդադրության աշխատաված է կառավարադիր 1988 թվականի փետրվարի 20-ի և հոկտիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում»²⁴: Համատեղ նստաշրջանը ընդունեց նաև «կեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 28-ի որոշման մասին և «կեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի բանաձեռի առթիվ ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության հայտարարության մասին» որոշումները²⁵:

Իրադրությունը ուղիղութեամ ավելի է բարդանում: Ադրբեյջանի ժողովրդական ճակատի ելուզակները ավերում են Խորհրդային Միության հարավային սահմանները գրեթե 800 կմ երկարությամբ, իսկ 1990 թվականի հունվարի 12-ից թաքվում իրագործում են հայ և ուսախոս ժողովրդների նկատմամբ ցեղասպանության նոր ակտ: Թարրարուսները կատարում են շտեսնված վայրագություններ, վառում հարյուրավոր տըներ, զավանաբար ոչնչացնում խաղաղ բնակչությանը, թալանում նրանց ունեցվածքը, զավթում բնակարանները: Այդ ամենի պատասխանատվությունը նախ և առաջ ընկնում է խորհրդային պետության խղճի վրա, որը ժամանակին չկատարեց իր քաղաքացիների կյանքի պաշտպանության վերաբերյալ սահմանադրական պարտականությունները, ինչպես նաև Ադրբեյջանի կուսակցական-պետական պաշտոնյաների և երկրի ուղմական բարձրաստիճան զեկավարության խղճի վրա, որոնք հայերի շարդի կան բարձրաստիճան զեկավարության խղճի վրա, որոնք հայերի շարադր սարսափելի օրերին մատը մատին շվիեցին մարդակեր այդ հորդաների վայրագությունները կամեցնելու համար:

- ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1990 թ. հունվարի 15-ի հրամանի համաձայն կեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզում, որը ուղիղունի ամենայն կառավարադիր հայտառական պատասխանությունները, ինչպես և Հայկական ԽՍՀ հաղաղ տարածքն էր, նրան հարող շրջաններում և Հայկական ԽՍՀ

²⁴ Փաստաթուղթ թ 20:

²⁵ «Խորհրդային Հայաստան», 8 դեկտեմբերի 1989:

Գորիսի շրջանում հայտարարվեց արտակարգ դրություն։ Փանի որ Աղբյուրի շրջանում խորհրդային իշխանության գոյությունը հարցականի տակ էր դրված, ուստի հունվարի 19-ից թափվում են մացվեց արտակարգ դրություն։

Աղքարեցանի ծայրահեղականները Հայաստանի Հանրապետության գեմ սկսեցին բացահայտ ռազմական գործողությունները։ Նրանք գնդակում են սահմանամերձ գյուղերը և ավերում կառույցները։ Հայ ժողովրդի ինքնապաշտպանական ջրկատներն արժանի հակառակված հասցեին վանդալներին։ Հանրապետությունը կրկին, ինչպես 1989 թվականի աշնանը, ընկապվ շրջափակման մեջ և կրեց ավելի քան 70 միլիոն ռուբլու վիճակ։ Աղքարեցանցի ելուզակները բացահայտ ռազմական գործողությունների դիմեցին նաև Արցախի Հյուսիսում՝ Գետաշենի և Տաղաշենի շրջանում։

1990 թվականի փետրվարի և մարտի սկզբին ԽՍՀՄ Գերագույն խոր-
հըրդի երրորդ նստաշրջանը երեք դռնփակ նիստերում քննարկեց Աղքա-
րեղանական ԽՍՀ-ի և Հայկական ԽՍՀ-ի գրության հարցը, իսկ մարտի
5-ին ընդունվեց «Աղքարեղանական ԽՍՀ-ում և Հայկական ԽՍՀ-ում տիրող
դրության և այդ ռեգիոնում իրադրությունը նորմալացնելու միջոցա-
ռումների մասին» որոշումը²⁶, որը, ըստ էսպիյան, ոչնչով չէր նպաստում
ռեգիոնում լարվածության վերացմանը։ Սպասվում էր, որ կեռնային
Ղարաբաղի վերաբերյալ կոնկրետ և արդարացի որոշում կընդունվի, սա-
կայն ոչինչ շարժեց։

Հեռային Ղարաբաղստ արտակարգ գրություն մացնելը փաստորեն դարձավ արցախյան գոյամարտի նոր փուլը, որը շատ ծանր հետևանք ներ ունեցավ: Դագարեցվեց Հատուկ կոմիտեի գործունեությունը և նրա ֆուկցիաներն իրենց վրա վերցրին զինվորականները, մի բան, որը դեմոկրատիայի ամենակոպիտ խախտում էր և օրինականացրեց մարզի երկու տարուց ավելի տևող շրջափակումը: Այդ դառնաւթյուններն Արցախը ճաշակել է դեռևս 1918—1920 թթ.: Խորհրդային իշխանության պայմաններում շրջափակումը չէր կարող տեղի ունենալ առանց վերադաս իշխանությունների լուակյաց համաձայնության:

Արցախյան գոյամարտի այս նոր փուլում Աղբբեշանը և կենտրոնը բոլոր շանքերը գործադրում են օր առաջ հետազանդեցնել արցախահայությանը և Արցախը կրկին բռնակցել Աղբբեշանին։ Օգտվելով նրանից, որ կեռնային Ղարաբաղում վերացվել է Հատուկ կառավարման կոմիտեն և մարզում մտցվել արտակարգ դրություն, Աղբբեշանի ղեկավարությունը

ամեն կերպ ձգտում է արցախահարության վզին փաթաթել ԼՂՄ-ի վերաբերյալ ԽՍՀՄ Գերազույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի օրապահաւումը: Այդ օրերին Բաքվում շուտափույթ ստեղծվեց կազմկոմիտե՝ Ադրբեջանի կոմիտայի Կենտկոմի երկրարդ քարտուղար, ոչ հեռու անցյալում Աֆղանստանում իր դաժանություններով հայտնի և Բաքվի հունվարյան իրադարձությունների հանցավոր Վիկտոր Պոլյանիչկոյի գըլխավորությամբ: Այդ ապօրինածին կազմկոմիտեն խորհրդային վիճակն ուժերի օգնությամբ հռնվարի 28-ին մտավ Ստեփանակերտ և իր համար նոտավայր ընտրեց կուտակցության մարզկոմի շենքը: Արցախիցիները կտրականապես մերժեցին այդ կոմիտեի հետ որևէ կապի մեջ մտնելը և դա համարեցին ամոթալի ու անբարոյական: Արցախում և նրան հարակից շրջաններում տեղաբաշխված շորբրոդ բանակի զորամասերը, ներքին գործերի նախարարության պատժի ջոկատները, ինչպես և նորաստեղծ Հատուկ նշանակության ադրբեջանական միլիցիան (օմօն) ամբողջովին դրվեցին կազմկոմիտեի ենթակայության տակ: Հատուկ շրջանի պարետ գններալ Վ. Սահոնովը հյու-Հնազանդ կատարում էր կենտրոնի, ինչպես և Պոլյանիչկոյի բոլոր պահանջները, որոնք նպատակ ունեին նվաստացնել արցախահայությանը, բարոյալքել և ենթարկել անասելի տանջանքների: Խորհրդային երկրի զինված ուժերի և Ադրբեջանի օմօնականների կողմից անմարդկային և բարբարոսական գործողություններ կատարվեցին մարզի Ազգուու, Մյուրիշեն, Սոս, Մաճկալաշեն, Քաջավան և այլ գյուղերում: Անձնագրային ռեժիմը ստուգելու և զենք առզրավելու անվան տակ նրանք ավերեցին տասնյակ գյուղեր, հարյուրավոր բնակարաններ, պետական և հասարակական շինություններ, մարզի տասնյակ կոլտնտեսային և պետական տնտեսությունների զրկեցին հազարավոր հեկտար հողատարածություններից: Վերջին երկու տարում մարզի կրած մասսար անցնում է մի քանի հարյուր միլիոն ոռոգություն:

Աղքաբեցանը խորհրդային զինվորականներին օգտագործում է նաև հայկական ինքնավար մարզում աղքաբեցանական բնակչության օգտին ժողովրդագրական իրավիճակը փոփոխելու պլանների իրազործման նպատակով։ Լայն շինարարություն է ծավալվում մարդի աղքաբեցանական բնակավայրերում, այդ այն դեպքում, երբ տասնյակ հազարավոր բռնագաղթված հայեր շարունակում են մնալ առանց բնակարանների։

Ղեռային Ղարաբաղն այսօր դարձնել է աշխարհի ամենաողբերգական տարածքը, ուր անողոքարար ոտնահարվում են մարդու իրավունքները և կյանքի պաշտպանությունը։ Խորհրդային զենքի ուժով դատարկվեցին Գետաշենի՝ Կուշշի-Արմավիր, Ազատ, Կամո, Գետաշեն,

Մարտունաշեն, Շահումյանի շրջանի էրքեղ, Թուզլովի, Մանաշիդ, Հաղպատի շրջանի Առաքել, Զիլան, Բինիաթլու, Թարագուլի, Մյուզքուղարա, Սամձոր, Խանձաձոր, Արեշատ, Արփագյաղուկ, Սպիտակաշեն, Սարիշեն, Ցոր և Շուշիի շրջանի Մեծշեն, Սաղկաձոր, Եղժահող, Հինշեն գյուղերը:

Այսօր, երբ աշխարհի առաջ «սումֆայիթ», «բնոշալու», «շուշի», «կիրովարադ», «մինչեւառու», «բարու», «գետաշեն», «ոսկեպար», «բերդաձոր», «հաղորդիթ», «շահումյան» է կազմակերպվում, շպետք է զարմանալ, որովհետև 1988 թ. կազմակերպված «սումֆայիթը» և 1990 թ. կազմակերպված «բարու» հանդիսանում են 1905—1906 թթ. Շուշիամ, 1918 թ. սեպտեմբերին Թաքվում, 1918—1920 թթ. Արեշում, Նուխիում, Գյանջայում և Աղդրեցանի Հայարենակ մյուս վայրերում հայ բնակչության նկատմամբ թուրք-թաթարների կողմից իրագործված ցեղասպանության շարունակությունը: Էլ շենք խոսում 1915 թ. Արևմտյան Հայաստանում իրագործված ցեղասպանության մասին, որի շարունակությունը հանդիսացան 1918—1923 թվականների կոտարածները:

Խորհրդային երկրում 1991 թվականի ամռանը և աշնանը տեղի ունեցան իրադարձություններ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Արցախի Հիմնահարցի հետ: Օգոստոսի 19—21-ը երկրում բարձրացավ խոռվությունը ՊԱԿ-ի նախագահ Արյուշկովի, ներքին գործերի նախարար Պաւոյի, Գերագույն խորհրդի նախագահ Լուկյանովի, փոխպետքինստ Յանակի, պաշտպանության նախարար Յազովի և այլոց գլխավորությամբ: Խոռվարների նպատակն էր երկրում հաստատել ռազմական իշխանություն և գեմոկրատիան խեղդել արյան մեջ: Ռուսաստանի պրեզիդենտ Բ. Ելցինի գիտավորությամբ ժողովրդական ուժերը գիմակայեցին և խոռվությունը պարտության մատնեցին: Այդ երեք օրը ցնցեց ամբողջ աշխարհը: Սեպտեմբերի 2—5-ը տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների արտաւերթ հինգերորդ համագումարը դատապարտեց խոռվությունը և ըստ էության լուծարեց ԽՍՀՄ-ը, որի գործընթացն ավարտվեց 1991 թ. գեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում և գեկտեմբերի 30-ին Մինսկում տեղի ունեցած Անկախ Պետությունների Ընկերակցության (ԱՊԸ) զեկավարների խորհրդակցությունների ընդունած որոշումներով: Կայսրապետությունը իր գիրքերը զիշեց ազատ պետությունների համագործակցությանը: Կենտրոնը, որը չորս տարի շարունակ ճնշում էր գործում արցախահայության վրա և այնքան դառնություններ պատճառել նրանց, փուլ եկավ և Արցախի Հիմնահարցի լուժման համար նոր հնարավորություններ բացվեցին:

Հայաստանի Հանրապետությունում սեպտեմբերի 21-ին անցկացվեց հանրաքվե: Այդ օրը հայ ժողովուրդը միակամ վճռեց իր ապագան: ան-

կամ ժողովրդական Հայաստանի օգտին քվեարկեց քվեարկության կականումը ունեցող բաղաքացիների 94,39 տոկոսը: Հայ ժողովուրդը կարողացվ միջազգային համակեցության նորմերի սահմաններում իր կամքը՝ անկախ ու ժողովրդակարական պետություն ստեղծելու մասին հայուն աշխարհին: Հայ ժողովրդի ԱՅՈ-ն ցնծությամբ բնդունվեց Արևախում: Սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդը ընդունեց «Հայաստանի Հանրապետության անկախության հաշակման մասին» որոշումը, ըստ որի Հայաստանի Հանրապետության Անկախ Պետություն: Բյունը հոշակվեց Հայաստանի Հանրապետության Անկախ Պետություն: Հայ ժողովուրդը մի անգամ ևս աշխարհին ցույց տվեց իր անհողողող կամքը, իր արիությունն ու վճականությունը:

Մինչ այդ, օգոստոսի 29-ին, տեղի ունեցած Աղբեկանի Հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը ընդունեց «1918—1920 թթ. պետական անկախության վերականգնման» մասին որոշում: Ի պատասխան դրան, սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը՝ բոլոր մակարդակ-շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը՝ բոլոր մասնակցությամբ, ընդունեց որոշում Լեռնային Ղարաբաղի նիքնավար Մարզի և դրան կից Շահումյանի շրջանի սահմաններում լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) հոշակելու մասին: Արցախցիների այդ քայլը նոր աղմուկ առաջացրեց Աղբեկանում: Աղբեկանական ելուզակները մասսայական հարձակումներն ուժեղացրին Շահումյանում, Մարտունու և Ասկերանի շրջաններում: Նրանք ամենուր ստացան արժանի հակահարված:

Ստեղծված նոր իրագործությունում Արցախի Հիմնահարցի լուծման միջնորդի և երաշխավորի գեր ստանձնեցին Ռուսաստանի պրեզիդենտ Բորիս Ելցինը և Ղազախստանի պրեզիդենտ Նուրսուլիման նազարեակ: Արանք սեպտեմբերի 20-ին ժամանեցին Թաքու, ապա՝ Գանձակ, Ստեփանակերտ և Երևան: Աղբեկանի, Հայաստանի և ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների հետ բանակցությունները սեպտեմբերի 23-ին շարունակվեցին ֆելքոնովուրդուկի «Դուբրովայա ռոշշա» հանգույան տանը և ընդունվեց կոմյունիկե՝ Բ. Ն. Ելցինի և Ն. Ա. Նազարեակի միջնորդական առաքելությունը. որեց բանակցությունների միջոցով Արցախի Հիմնահարցի լուծմանը սկիզբը, Սակայն Աղբեկանը ամեն կերպ խոշնդրություն է ընդունված կոմյունիկեի իրագործմանը:

1991 թ. գեկտեմբերի 10-ին Արցախում անցկացվեց հանրաքվե, որի մասնակիցները պատասխանեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատգամական մասին Աղբեկանի հակահարված:

թյան հետագա կարգավիճակի վերաբերյալ հարցին, Քվեարկությանը մասնակցած մոտ 109 հազար արցախցիների 99,9 տոկոսը դրական պատասխան է տվել «Համաձայն եթ, արդյոք, որ հռչակված լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, որը ինքնուրույնաբար է որոշում ուղիղ պետությունների, ընկերակցությունների հետ իր համագործակցության ձևերը» հարցին:

Աղբբեշանը ստացավ մի ապահով կու:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ ՎԵՐՉԱՐԱԿԻ ՓՈՆԱՐԻ.

Հայ ժողովուրդը տարածքներ է կորցնում, տալիս մարդկային զռհեր, զրկում հարյուրավոր միլիոնների հասնող նյութական արժեքներից, ինչո՞ւ, որտե՞ղ սխալվեցինք, ինչո՞ւ չկարողացանք օգտվել լիձնոված հնարավորությունից:

Фурдебенք պարզաբանել:

Արցախցիները, որ ավելի քան յոթանասուն տարի շարունակ պայքարել են մայր Հայաստանի հետ վերամիավորվելու համար, պայքարի այս նոր շրջանում միամտաբար հավատացին գորբաշովյան վերակառուցման գաղափարին, կեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի որոշումը և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ու կեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1889 թ. գեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը ՀԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի վերամիավորման մասին մեր ժամանակի ամենալուսավոր իրադարձություններից են, Սակայն վերամիավորման համար սկսված շարժման մասնակիցների կողմից լըմբոնվեց, որ խորհրդային կայսրապետական երկրում փոքր ժողովուրդները դատապարտված են անհավասարության և նրանց ուժերը անհամաշափելի են կայսրապետության ուժերին: Արցախցիները շտապում էին որ առաջ հասնել իրենց բաղձակի ծանկությանը և ազատվել Ադրբեջանի գաղութատիրական ճիրաններից, նրանք մինչեւ անգամ սումգայիթյան օրերին պատասխան քայլեր չձեռնարկեցին՝ լինելով համոզված, որ արդարությունը իրենց կողմն է, և որ Բաքուն ու Մասկով հասկանան իրենց ցավերն ու տառապանքները:

Մայր Հայաստանի հետ վերամիավորվելու համար Արցախում ըստ կըսված շարժումը ղեկավարում էր «Կոռունի» կոմիտեն, որի մեջ մտան տարրեր հայացքների և ձգտումների տեր անձնավորություններ, լճացման տարիներին «թրծված» կուսակցական և պետական մարմինների մի շարք աշխատողներ, որոնք ժամանակին խաղում էին «կեռոկովյան» թիմում, մտնելով շարժման մեջ և նրանում ղեկավար գիրք զրավելով,

ընդհանուր պայքարին մոտենում էին «կոմունիստական մտածելակեր-
պով» և շարժումը խթանում ոչ թե գեղի գեմոկրատական ուղին, այլ՝
ընդհակառակը, ամեն կերպ հետ էին պահում այդ ուղղուց։ Արցախում
կոմունիստական իշխանությունը մնաց գրեթե անխոցելի, շատ պաշ-
տոնյաներ մնացին իրենց զբաղեցրած աթոռներում։ Հենց դա էր պատ-
ճառներից մեկը, որ «Կոռևնկր» շկարողացավ բարձրանալ, կանգնել ար-
ցախահայության գեմոկրատական շարժման գլուխ։ Նրան հաշորդած
Ազգային խորհուրդը շկարողացավ խուսափել «Կոռևնկր» սխալներից ու
բացթողումներից։ Այդ պատճառով էլ Ազգային խորհուրդը ևս դարձավ
անսործունակա:

Արցախիների մտքով երբեք չէր անցնում, որ խորհրդային իշխանության պայմաններում և խորհրդային զինված ուժերի առկայության դեպքում ազգամիջյան ընդհարումները հնարավոր կլինեն: Խսկ երբ գահակացան, արգեն ուշ էր, որովհետև հակառակ կողմը առանց որևէ արգելքի հազարավոր միավոր զենքով զինված էր, դրան էլ գումարած արգելքի հազարավոր միավոր զենքով զինված էր, դրան էլ գումարած այն, որ խորհրդային զինված ուժերը բացահայտ պաշտպանում էին նըրանց և օժանդակում:

Արցախն Ազգի բարեկանի մագիլներից դուրս բերելու և ազատ զարգանալու ճանապարհին Հնարավոր քայլեր կատարում էր Ա. Վոլսկու գլխավորած կոմիտեն, որի ղեմ միւսնույն համառությամբ պայքարում էին և Ազգային պատմությամբ պայքարում էին և Հայաստանում։ Արցախում կարծում էին, թե Ա. Վոլսկին դանդաղում է, չի արագացնում Հայաստանի հետ էին, թե Ա. Վոլսկին դանդաղում է, չի արագացնում Հայաստանի այն մտքին էին, թե Վոլսկին գերամիավորման ընթացքը, Հայաստանում այն մտքին էին, թե Վոլսկին գերամիավորման ընթացքը, Հայաստանում այն մտքին էին, որ Վոլսկին դեռքեւ էլ մտադիր չէ Արցախը դուրս բերել Ազգային պալմից, իսկ Ազգային պալմից էլ տեսնում էին, որ Վոլսկու ձեռնարկած քայլերը տանում են դեպի Արցախի ինքնուրույնություն և նրան անշատում Ազգային պալմից, Ահա թե ինչու Ա. Վոլսկու կոմիտեն երեք կողմից էլ կրում էր բերանից, Դրանից օգտվեց կենտրոնը և շտապեց փոխել իրադրությունը։

Գրիթե չորս տարի է, ինչ Արցախը գտնվում է տառապահ
և լրատվական շրջափակման մեջ: Փակված է Գորիս—Ստեփանակերտ
ավտոճանապարհը, Ստեփանակերտի օդանավակայանը գտնվում է օմո-
նականների ձեռքին, Եղվախի—Ստեփանակերտ երկարությունը տերը ու
տիրակալը Ազրբեջանն է: Տարեցտարի մարզի էկոնոմիկան քայլայվում
է, երկրի այլ վայրերից ուղարկվող մթերքներն ու հումքը թալանվում են
Աղրբեջանի տարածքում, չկան վառելանյութ, պահեստամասեր: Նման
պայմաններում արցախցիները գիմում էին գործադաւլների, որը տաս-

նյակ միլիոնների վնաս բերեց մարզի տնտեսությանը:

Պատմությունը սովորեցնում է, որ յուրաքանչյուր թիզ հող պաշտպանելու համար պետք է ուժի ելնել և դիմադրել. Դրա լավագույն օրինակն է գետաշենցիների, մարտունաշենցիների և շահումյանցիների հերոսական պայքարը: Քերդածորցիների երեք տարվա դիմադրությունը համոզում է, որ կարելի է հաջողության հասնել, եթե գործում է վճռականությունը, խսկ երբ այն բացակայում է, ապա հետևանքները լինում են անուղղելի: 1991 թ. հունիսի 18-ին «Արցախ» հայրենակցական միության նախաձեռնությամբ ծրեանում կազմակերպված մամուկի ասուլիսում բերդածորցի Սվետլանա Գևորգյանը, որը Քերդածորի ողբերգության վկաներից է, հարցնում է, թե ինչո՞ւ Բերդածորը գերշին պահին շդիմադրեց, չը՞ որ այդ հնարավորությունը կար, ո՞վ հրամայեց հանձնվել, և ինչո՞ւ...

Կամ ուրիշ օրինակ. Հագրութիւն հարավային գյուղերը դատարկվեցին առանց զիմադրության. Այստեղ առկա էր նաև դավաճանության փաստը, ինչպես դա տեղի ունեցավ Կուչշի-Արմավիրում, Կամոյում և Ազատում, Սակայն երբ Հին Թաղերի և Խծաբերդի բնակիչները ոտքի ելան և կենաց ու մահու պայքար մղեցին, հակառակորդը նահանջեց, Հին Թաղերն ու Խծաբերդը մնացին անառիկ:

Արցախահայության դեմ գործում էին ոչ միայն Աղբբեշանի օմօնականները և ելուզակները, այլև խորհրդային 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի զորամասերը, ներքին գործերի նախարարության ներքին ուժերը և ՊԱԿ-ի գործակալները: Նրանք հլու-հնազանդ ծառայում էին Աղբբեշանին և կատարում նրա հրամանները: Այդպես էր նաև 1920 թ. 11-րդ «ազատարար» բանակը, որն իրեն դրել էր Աղբբեշանի հեղկումի ենթակայության տակ, ոկուպացրեց Արցախը և այն հայտարարեց Աղբբեշանի տարածք:

1991 թ. մայիսին գորրաշովյան-մութալիբովյան շհայտարարված պատերազմն իր մեջ առավ Արցախին ու Հայաստանը, եվ դա կատարվում էր իրավական պետություն դառնալու ձգողող խորհրդային կոչվող երկրում։ Խորհրդային բանակի հզոր տեխնիկան, հրանոթները, ուղղաթիռներն ու ինքնաթիռները, զենքի այլ տեսակներ ուղղված էին ամենից առաջ արցախահայերի, Հայաստանի խաղաղ աշխատավորների դեմ, որոնց միակ «մեղքը» այն է, որ պաշտպանում են իրենց տան պատիվը, իրենց կյանքը, իրենց հողը, ունեցվածքը։ Խորհրդային երկրի բանակը գործում էր ընդդեմ խորհրդային բաղաքացիների, նրանց զենքի ուժով տեղահանում, սպանում, գերում, խոշտանգում, մինչև անգամ գերված մարդկանց վաճառում։

Հահամյանի շրջանում խաղաղ բնակչության գեմ օգտագործվեցին ԵՄ-21, СУ-27 ռմբակոծիչներ, Т-80 լազերային նշանառությամբ, ԵԹР, ԵՄՊ, ԵՐԴՄ, ռազմական ՄԱՐ ինքնաթիւներ, ամեն տեսակի թնդանոթներ, ՄԿ-17 ուղղաթիւներ և այլն. Վերիշենի վրա անգամ օգտագործեցին 4 հատ ժամանակակից «Կատյուշա», 40 փողանի, որի մեջ արկը 1 քառ. Կմ տարածության վրա ոչնչացնում է ամեն ինչ: Մարտի ժամանակ,— պատմում են էրքչում հերոսարար կովողներ վանյա Գզրյանը, Սևան Օհանջանյանը և Արտակ Հարությունյանը, որոնք հետո վիրավորվեցին Վերիշենի մարտերում,— արտասովոր մի քանի էինք նկատել. իրենք (խոսքը վերաբերում է օմօնականներին—Հ. Ա.) իրենց վիրավորի վկից անմիջապես պարան էին կապում և մերենային կապած արագ փախցնում: Հետո մեզ պարզ դարձավ այդ գաղտնիքը: Այդ օմօն կոլվածը սովորական բանակի զինվորներն էին, օմօնի համապատասխան վիրավորները մեր ձեռքը լընկնեն, և գաղտնիքը բացահայտվի, իրենք այդ ձեռվ էին «Փրկում» վիրավորներին: Այդ բացահայտվի, իրենք այդ ձեռվ էին «Փրկում» վիրավորներին: Այդ օմօնի կազմում, հաստատում ենք որպես ականատես, 19—20 տարեկան խորհրդային բանակի տղաներն էին»:

Պայքարի ամբողջ ժամանակաշրջանում արցախցիները հազարավոր համակներ, գիմումներ, հեռագրեր և այլ փաստաթղթեր են ուղարկել Մոսկվա և աշխարհի այլ տեղեր, հավատալով, որ կավի իրենց ճիշտ Սակայն այդ գիմումները հենց այն վկից դատապարտված էին անուշագրության: Արցախցիները ուշ հասկացան երկրի բարձրաստիճան այլերի վճռության: Արցախցիները դատապարտված է մահվան. իսկ Աղրբեջանում ապրուի վճիռը. Արցախը դատապարտված է մահվան. Ասենք, դա պարզ էր դեռ ալիսյան իշխանության ժամանակվանից:

Տասնամյակներ շարունակ արցախիների ըմբռատվյուած զայտնի թաքրիւմ և Աղրբեշանի այլ բնակավայրերում ապրող հարյուր հայն զարավոր հայեր, որոնց մեծամասնությունը ծնունդով արցախիներ էին Այդ նրանք կապուցին Մինգեղատւը, Սումգայիթը, Հարյուրավոր այլ

բնակավայրեր, շենացրին թաքուն, առանց մտածելու, որ մի օր փախըստական կդառնան. Հայրենի Արցախ վերադարձան շուրջ երեսուն հազար մարդ: Այստեղ բռնագաղթվածների նկատմամբ հոգատարությունը հասնամ էր նվազագույնի: Սակայն նրանցից շատերը լցանկացան կիսելի իրենց հայրենակիցների ծանր բեռք: Արդյունքում ստացվեց այն, որ շուրջ տասը հազար փախստականներ թողերին առանաւաճ. Հուր-

ինչպես ասվել է, կենտրոնի դիրքորոշումը միանգամայն հստակ էր, Արցախի որպես խաղաթուղթ պահել իր ձեռքին և ճնշում գործադրել թե Հայաստանի և թե՛ Աղբեջանի վրա. Դատելով անցյալի իրադարձություններից, մասնավանդ 1920—23 թթ. Արցախը Աղբեջանին բռնակցելու վերաբերյալ կուսակցական և պետական մարմինների անհիմն որոշումներից, ինչպես նաև խորհրդային իշխանության հետագա տարիներին Արցախի հարցի նկատմամբ կենտրոնի դիրքորոշումից, հստակորեն կարելի է ասել, որ կենտրոնը միշտ էլ վարել է թուրքամետ քաղաքականություն և հայ ժողովրդի շահերը զոհաբերել թուրք-ազգերների օստին:

Ծարժման սկզբից մինչև հիմա ոչ մի կազմակերպություն կամ պետական մարմին, ներառյալ Հայաստանի Հանրապետության ֆերագույն խորհուրդը, չի ունեցել և չունի Արցախի փրկության վերաբերյալ որևէ հստակ ծրագիր։ Մինչդեռ բոլորի համար պարզ է, որ եթե վիճակը Արցախի հարցը, իսկ դա համահայկական հարց է, ապա չէր լինի ոչ «Ղարաբաղ» կոմիտե, ոչ էլ Հայոց համազգային շարժում։ Հայ ժողովրդի ազգային-դեմոկրատական շարժման հիմնահարցը Արցախյան պրոլետն է, Արցախի փրկությունը։ Դա չպետք է մոռանալ:

Երբ Արցախն իր հիմնահարցը բարձրացրեց, Երևանի և Հայաստանի մյուս բնակավայրերում մարդիկ արթնացան խոր նիրհից, բռունցքների անտառ գոյացավ Հրապարակներում։ Արցախ, էկոլոգիա և ղեմոկրատիա՝ ահա այս ապհանչները մարդկանց տարան Ազատության Հրապարակ և սկիզբ առան երթերը, միտինզները, ցուցերն ու նստացուցերը, հաշողուներն ու գործադուլները, ծնվեց նաև Անկախության կարգախոսը։ Ոմանք էլ օգտվելով փոթորկվող ժղովրդական պայքարից, մարդկանց կոչ են անում կողմնորոշման փոփոխություն՝ ուսանականից դեպի թուրական։ Մինչդեռ բոլորին հայտնի է, որ միայն վերջին հարյուր տասում ավելի քան երկու միլիոն հայ է ոչնչացվել թուրքի ձեռքով։ Երբեք էլ դեմ շնորհ հարևաններին ձեռք մեկնելու քաղաքականությանը, բայց իրք հարևանդ թուրքն է, պետք է զգույշ լինել,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ 1990 թ. մայիսին տեղի ունեցած ընտրությունների ժամանակ Հայաց համազգային շարժումը հաղթանակ տարավ, նողուպրդր գնաց «Ղարաբաղ» կոմիտեի հետևից, որովհետև հավատում էր նրան: Նույն թվականի օգոստոսի 24-ին Հայաստանի Հանրապետության խորհրդարանը ընդունեց Հայաստանի Անկախության մասին հռչակագիրը, ըստ որի Հանրապետությունում հռչակվում է անկախ պետականիքան Հաստատման գործընթացի սկիզբը: ՀՀ Գերագույն խորհրդարանը հռչակելու առաջին քայլերը կատարեց հռչակագրի պահանջներն իրականացնելու ուղղությամբ: 1991 թ. մարտի մեկին որոշում ընդունվեց Հայաստանի տարածքում շանցկացնել ԽՀԸՄ-ի պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ի Հանրագվեն, այլ այն անցկացնել 1991 թ. սեպտեմբերի 21-ին: Զնայած այդ բոլորին, այնուամենայնիվ, Արցախի հիմնահարցի լուծումը առաջ չկնաց: ՀՀ-ն և որոշ ուժեր հույսեր էին փայփայում, թե 1990 թ. սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած Աղբբեշանի խորհրդարանի ընտրությունների ժամանակ հաղթանակ կտաներ Աղբբեշանի Ազգային ճակատը (հենց Ազգային ճակատը հանդիսացավ Աղբբեշանում իրագործված հայերի շարդի և նրանց բռնականացնեցման հիմնական կազմակերպիչը) և հնարավորություն կստեղծվեր գաղթեցման հիմնական ազգային կազմակերպիչը) և հնարավորություն կստեղծվեր բանակցությունների միջոցով կարգավորել արցախյան ճգնաժամը: Բանակցությունների կողմից և կենտրոնի ամենաակտիվ աջակցությամբ Ա. Մութալիբրովը բարտացավ պրեզիդենտական աթոռ: Աղբբեշանում կոմունիստական վարչության համար կենտրոնի համար խիստ անհրաժեշտ էր: Դրա լավագույն համար կենտրոնի համար խիստ անհրաժեշտ էր: Դրա համար էլ նա կեռուային Ղարաբաղը նվիրաբերեց Աղբբեշանին, Մութալի կողմէ իր հայրենակիցներին վստահեցրեց, որ եթե քվեարկեն Միության կազմում մնալու օգտին, ապա Ղարաբաղի հարցը Մոսկվան կլուծի հօգուտ Աղբբեշանի:

Բանակցությունների միջոցով Արցախի քաղաքական հարցը լուսոււմ է կարելի է ընդունելի համարել, 22 գև 1991 թ. հունիսի 16-ի «Էեռնային Ղարաբաղի Խնքնավար Մարզի աշխատավորության լիազոր ներկայացուցիչների քաղաքական նախաձեռնության մասին» Հայտարարության մեջ (ՂԻՄ լիազոր ներկայացուցիչների ժողովը՝ նման Հայտարարությամբ՝ հանդես է եկել 1991-ի մայիսի 16-ին) կոնկրետ ասված է, որ պաշտպանում են բանակցությունների քաղաքականությունը, Ավելի քան երկու ամիս Աղբբեշանը հրաժարվում էր նման բանակցությունների գնալ, որովհետև նրան հարկավոր էր խորհրդային զինված ուժերի օգնությամբ

Նոր ճնշումներ գործադրել հայ ժողովրդի վրա և նոր տարածքներ զավթել: Այդ քաղաքականության հիմնական նպատակն էր Հայաստանի Հանրապետությանը ստիպել հրաժարվել անկախության գործընթացից և մասնակցել միութենական պայմանագրի նախագծի քննարկմանը:

Կենտրոնի հետ առնակատումը հասցրել է նրան, որ միայն 1991 թվականի գարնանը հայ ժողովուրդը կորցրել է ավելի քան 1200 քառ. կմ տարածք, տվել հարյուրավոր զոհեր, փախստականների թիվը ավելացել է տասը հազարով։ Այդ ամենի համար ո՞վ պիտի պատասխան տա...

Արցախահայության գոյամարտը շարունակվում է։ Այնտեղ ազգային-ազատագրական պատերզմ է։ Սատար կանգնե՞նք հերոսաբար մարտըն-չող արցախցիներին։

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ԷՀԵՐԻՑ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՓԱՍՏԱՔՂԹԵՐ

三

ԱՐՑԱԽԻ ԶԻՎԱՆՇԵՐ ԳԱՎԱԲԻ ՀԱՅ ԲՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊՈՍԿԱՆՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Ելիզավետպոլի նահանգի Զիվանշիրի գավառի 40.000 հայ ազգա-
քնակշոթյան ներկայացուցիչներս 1918 թվականի դեկտեմբերի 12-ին
հավաքվելով... ժողովի և քննարկելով թուրքական արշավանքների ու
աղքարեցանական հանրապետության բանդաների մշտական հարձակում-
ների՝ մեզ պարտադրած տնտեսական ու քաղաքական ժանր գրությանն
առնվզող մի շարք հարցեր, որոշեցինք Արարատյան Հանրապետության
կառավարությանը դիմել հետևյալ խնդրանքով. ահա արդեն երկու տարի
Զիվանշիրի գավառի հայ բնակիչներս կտրված ենք արտաքին ու ներքին
ջանքարհեց, քանի որ երկաթուղային ու խճուղային ճանապարհների
մերձակայքում մուսուլմանական բնակչությունն ամեն կերպ խոշընդոտում
է դրանցից մեր օգտվելուն, մենք հինավուրց Գանձասարի լեռներում,
հազիվ կարողացել ենք պահպանել միայն մեր ֆիզիկական գոյությունը,
երբ թուրքական զորքերը արշավեցին Ալեքսանդրապոլի վրա և մոտե-
նում էին Ելիզավետպոլի նահանգին, տեղի գինյալ թաթարները ստքի
ելան՝ Զիվանշիրը հայերից մաքրելու և այն աղբբեշանական հանրապե-
տության բաղկացուցիչ մաս գարձնելու նպատակով։ Հարևան գյուղերում
թաթարներն սկսել են իրար մեջ բաժանել հայերի տները, գեղեցիկ աղ-
թիկներին ու կանանց և այդ մասին անպատճառությամբ հայտարարում
են մեզ։

ոմեցվածքը, քանդելով մշակութային կառույցները, հրի ճարակ դարձնելով ամեն բան:

Դեպի Շուշի ընթացող զորքի հետևից գնում էին տեղական թաթարների հազարավոր խմբեր՝ գրավված գյուղերն ու քաղաքները քարութանդաւունելով:

Գրավելով քաղաքը՝ թշնամին եանքենդում և Ասկերանում հիմնեց զինվորական պարեկություններ, որոնք պարզապես թալանում էին անցութարձող հայերին, խուզարկության ժամանակ հրանցից բռնագրավելով արժեքավոր բոլոր իրերն ու դրամը... նաև սնանկացրեց Հայկական գյուղեր՝ պահանջելով անհաշիվ քանակությամբ հացահատիկ ու այլ բնամթերքներ, իսկ հետագայում՝ նաև գեղեցիկ կանանց ու աղջիկների:

Թերված փաստերը նկատի ունենալով և ականատես լինելով գաղանարարո այն արարքներին, որ գրավված գյուղերում հայերի դեմ գործադրում էին թուրքերն ու աղորեցանցիները. ջիվանշիրցիներս նորեն հաստատ որոշեցինք մեռնել և շնչազանդվել նրանց:

Շուշի քաղաքի անկումից հետո, թուրք-աղորեցանական գնդացրային միացյալ մի չոկատ հարձակվեց Զիվանշիրի վրա... Մարտակերտ գյուղի ուղղությամբ շարժվող նրանց առաջազնա զինախմբի դեմ մարտի ելան հայկական կազմակերպված ուժերը, գլխովին շախաշինցին ու հետ շպրտեցին ոսոխին: Որպես ուղեցույցներ, այդ բանդան գլխավորում էին նահանգական բժիշկ Դ. Լեմբերանսկին, «Վայրի դիվիզիայի»¹ սպա Շիրին բեկը և հայտնի ավազակ Շահմալին, որոնք գերեվարեցին երեք հայի և. գաղանորեն գնդակահարեցին նրանց:

Արդեն զինաթափ ներք. Գետաշենում, թշնամիները, նախնական կալանքի ենթարկելով գյուղի պատվարժան դեմքերին՝ տարան թարթառ կայարան, որտեղ գտնվում էր իրենց գլխավոր շտաբը, ուր հայկական ուժերի թվաքանակի և տեխնիկական միջոցների մասին տեղեկություններ կորզելու նպատակով տանջահարելիս սպանեցին նրանց:

Ենելով վերոհիշյալ փաստերից և նկատի ունենալով դաշնակիցների մուտքը Կովկաս, որ թելաղրվում է առաջիկայում ժողովուրդներին խաղաղեցնելու և կարգուկանոն սահմանելու անհրաժեշտությամբ,— մինչեւ կոնֆերանսի հրավիրումը², որտեղ պետք է վճռվի նաև մեր ճակատա-

1 «Վայրի դիվիզիա» կազմակերպվել է առաջին աշխարհամարտի տարիներին, կովկասյան մամնեղականերից:

2 Ակնարկը վերաբերում է առաջին աշխարհամարտի արդյունքները քննող Փարիզի խաղաղության կոնֆերանսին, որը տեղի ունեցավ 1919—1920 թվականներին: Կոնֆերանսի օրակարգում մտցված էր նաև Արցախի հարցը:

գրը.— Համաժողովը միաձայն որոշեց, որպես նույնազգիներ, խնդրել Հայաստանի կառավարությանը առաջիկա կոնֆերանսում Մեծ տերությունների ներկայացուցիչներին հանձնել Արարատյան Հանրապետության հետ միավորվելով՝ Զիվանշիրի գավառի հայ բնակչության աղերսները, այսուհետև մեզ շիողնել աղբրեշտանական հանրապետության լծի տակ, ինչը որ կլինի մեր կամքին հակառակ, և մենք երբեք կենդանի շենք հանձնվի հայ ազգի բնաշնչման այդ մասնագետներին:

Նույնպիսի դրություն է նաև Երիզավետպոլի մյուս գավառներում, որոնց հայ բնակչության ցանկություններն ու ձգտումները նույնն են, ինչ որ մերը:

(Սույն համախոսակնը, հաստատված Զիվանշիրի գավառի հայկական գյուղերի համայնքների և Արցախի հայոց Ազգային խորհրդի կնիքներով, ուղարկվել է Հայաստանի կառավարությանը—Հ. Ա.)

ՀԽԳ—ՀՀ ՊՊԿ, ֆ. 200, ց. 1, գ. 49, թ. 46—51, ձեռագիր, սկզբնագիր, սուսերեն:

Հ 2

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՐՑԱԽԻ
ՔԵՄԻ ԱՐԱՋՆՈՐԴ ՎԱՀԱՆ ԵՊԻՄԱԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՈՒՂԱՐԿՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Պատերազմի վերջին երկու տարում Արցախում դրությունն այնքան ծանր էր՝ գլխավորապես տնտեսական կողմից, որ մեր կրթական հիմնարկները, գլխավորապես թիմական դպրոցը, վտանգի ենթարկվեցին: Այդ կրթարանները պահելու համար ժողովուրդը ուժ չուներ, իսպառ ցամաքեցին սովորական եկամուտի աղբյուրները: Բաքուն, որ Արցախի գյուղերին և կենդանության զարկերակն էր ու մեր դպրոցներին մեծապես նպաստողը, նա ևս վտանգվեց: Մինչև անդորրության և խաղաղ կյանքի նավահանգիստ գուրս գալը, ազգային այս հիմնարկները պահպանելու և մատաղ սերնդին կորստից փրկելու համար մնում է մի ելք, հույսի մի ժանապարհ, որին պետք է ձեռք կարկառվի: Եվ այս հույսը մեր փայտայած Հայաստանի Հանրապետությունն է, որին ստիպված եմ ձեռք մեկնելու:

Ուստի խոնարհ հարգանք հայտնելով մեծարելի հանրապետությանդ վերոգրյալը՝ խնդրում եմ, եթե հնարավոր է, օժանդակություն ցույց տալ մեր վիճակի գարուցներին:

Արցախն ուներ 60 գյուղական դպրոց, որոնցից և ոչ մեկն այսօր

գոյություն շռնի: Գոյություն շռնեն նաև քաղաքում եղած եկեղեցական-ժիական հինգ դպրոցները: Այս օրերին միայն թեմական դպրոցը բացվեց, բայց առանց միջոցի: Որքա՞ն կարող է լինել Հանրապետության նպաստը Արցախի կրթական գործին՝ չեմ կարող որոշել, իսկ որքան է որ լինի այն, նույն հաշվով և ուժերով էլ մենք բաց կանենք դպրոցի դռները:

Թեպետե գիտեմ, որ Հայաստանի Հանրապետությունը, որպես մի նորածին կառավարություն, որն ունի ավելի մեծ հոգսեր ու կարիքներ, բայց և այնպես հավատացած եմ, որ կրթական գործը պետք է թանկ լինի Հանրապետության համար և նա չի խնայի ըստ հնարավորության օգնության ձեռք մեկնելու մեր կրթական հիմնարկներին:

Ողջունելով Հանրապետությանդ և փափագելով նրա հավիտենականությունը, մնում եմ խոնարհ և շերմեռանդ աղոթարար՝

ՎԱՀԱՆ ԵԳԻՍԿՈՊՈՍ

Եռշի, գեկտեմբեր, 1918

ՀԽՄՔ — 22 գգԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 5, ձեռագիր, սկզբնագիր:

№ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ¹

Հունվար, 1919.

Զանգեզուրում և Արցախում ժամանակավոր վարչություն ստեղծելու վերաբերյալ կառավարությունը սույն հունվարի 21-ին կայացած նիստում որոշեց.

1. Զանգեզուրի և Արցախի հայարնակ շրջանները, կազմելով Հայաստանի Հանրապետության անրաժան մասը, կառավարվում են Հանրապետության կենտրոնական կառավարության կողմից հաստատված մարմինների միջոցով և Հայաստանում գործող օրենքների հիման վրա:

2. Հաղորդակցության դժվարությունների պատճառով ժամանակավորապես երկրի ընդհանուր վարչությունը հանձնվում է գոյություն

¹ Հայաստանի կառավարության սրաշմամբ 1919 թվականի հունվարի 21-ին ստեղծվեց Զանգեզուրի և Արցախի գեներալ-համագետաթություն, որը, սակայն, հնարավորություն չունեցավ իրականացնել իր խնդիրները:

ունեցող «Ճանգեզուրի հայկական Ազգային խորհրդին», որը կոչվելու է «Ճանգեզուր-Արցախի շրջանային խորհրդ»...

3. Խորհրդը երկիրը ժամանակավորապես կառավարում է Հայաստանի Հանրապետության անունից և նրանից ստացված լիազորություններով:

4. Խորհրդի ներկա մասը պետք է լրացվի Արցախի հայկական մասերի ներկայացուցիչներով, ինչպես նաև շրջանում ապրող թուրք զգաքրնակ-լության ներկայացուցիչներով, համապատասխան իրենց թվին:

5. Խորհրդի կազմը պետք է ներկայացվի Հանրապետության կենտրոնական կառավարության հաստատմանը:

6. Մինչև նոր կարգ հաստատվելը, երկրի բոլոր պետական հաստատությունները և պաշտոնյանները ենթարկվում են խորհրդակներին...

7. Երկրի եկամուտները (պետական հարկերը և ուրիշ պետական հասույթները) ժամանակավոր պետքերի համար, պակասը լրացվում է Հանրապետության գանձարանից:

8. Փետրվար ամսվա պետական ժախսերը հոգալու համար Հանրապետության գանձարանից հատկացվում է 400.000 ռուբլի...

11. Հանրապետության կառավարությունը գորիս է ուղարկում մի պետական կոմիսար իրեն իր ներկայացուցիչը Զանգեզուր-Արցախի հայկական շրջանների համար:

12. Պետական կոմիսարին հանձնարարվում է Հսկողության սահմանել Խորհրդի գործունեության օրինականության վրա և հարկ եղած գեպում ցուցունքներ անել Խորհրդային կառավարության անունից...

Մինիստր-նախագահ՝
[Ա. ԱՏԻԽԵՏԱՆ]

ՀԽՄՔ — 22 գգԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 5, ձեռագիր, պատճեն:

1919 թվականի հունվարի 30-ին № 267-րդ գործությամբ Հանրապետության կառավարությունը Զանգեզուրի Ազգային խորհրդին հայտնում է, որ Զանգեզուր-Արցախի հայկական շրջանի պետական կոմիսար է նշանակված շտաբ-կապիտան Արսեն Շահմազյանը:

ՀԽՄՔ — 22 գգԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 5, ձեռագիր, պատճեն:

ԱՐՑԱԽԻ ԶՐԱԲԵՐԴ ԳՎԱՐՈՒ ԺԱՄԱՆԱԿՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՏԻՆԱՍՆԵՐԻ ԿՈՄԻՍԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ
ՆԱՄԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱԾ
ՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

17-44-1213

Նախարարների պարոն նախագահ.

1917 թվականի հոյեմբերից ուստական գորքերի և պաշտոնյաների մնացորդների հեռանալուց հետո Արցախը մնաց առանց իշխանության. Մի շաբաթ քաղաքական կուսակցություններից Շուշի քաղաքում առաջ եկած Ազգային խորհուրդը, որը վարում էր քաղաքի բոլոր ազգային գործերը, շուտով փոխվեց քաղաքացիական մի կոմիտեի, որը և շարունակեց վարել ազգային բոլոր գործերը: Նույնը առաջ եկավ նաև քաղաքի թուրք բնակչության մեջ...

Այս երկու՝ հայ և թուրք կոմիտեների ներկայացուցիչներից կազմվեց մի ազգամիջյան կոմիտե, որը վարում էր ազգամիջյան գործերը; Կոմիտեն ուներ երկու ազգություններից հավասար թվով կազմ, որի նախագահը հայ էր, իսկ տեղակալը՝ թուրք: Շուշի քաղաքն այսպես կառավարվեց մինչև 1918 թ. Հուլիսի 16-ը: Մինչդեռ Արցախի հայկական չորս գավառները՝ Վարանդան, Դիզակը, Խաչենը և Զրաբերդը մինչ այդ ապրում էին առանց որևէ վարչության:

Դեռևս հին կարգերի օրոք պատերազմից փախած դասալիք զինվորները թուրքերի ղեկավարությամբ կազմելով ավագակային խմբեր, ալան-թալանը հասցրին շտեսնված շափերի։ Թուրք ավագակները օրը ցերեկով վաճառքի էին հանում հայ գեղջուկի լծկանն ու կթանը, ոչխարն ու այժը, հավն ու հորթը։ Գյուղից գյուղ գնալը կապված էր մեծ վտանգի հետ։ Տարիներով ծնողներից ու զավակներից կարված ուազմաճակատից վերադարձող զինվորները այդ ավագակային խմբերի կողմից վնդակահարվում էին և թալանվում։

Դրությունը դարձել էր անտանելի, լցվել էր ժողովրդի համբերության բաժակը, զգացվում էր մի իշխանության կարիք: Եվ ահա այդ ժամանակ Շուշիում տեղի ունեցավ հայ գյուղացիների համագումար, որն ընտրեց յոթ հոգուց բաղկացած մի մարմին, որի իրավասությանը տրվեց վարչական, դատական և պարենավորման գործերը: Սկսվեց ամեն ինչ կարգավորվել, ափազաները հայածվեցին, լոտեաները պնդակահառմեցին.

կանոնը վերականգնվեց, կյանքը մտավ իր սովորական հունի մեջ:

Բայց ահա 1918 թ. սեպտեմբերի 20-ին տաճկական հրամագալար
նորի փաշայի օգնական, Թաքվի տիխրահոչակ «Հերոս» Զամիլ Զահիդ
բիլը Արցախի Հայոց Հոգևոր առաջնորդին մի վերջնագործ առաջարկում
է երեք օրվա ընթացքում բոլոր զենքերը հանձնել տաճկական հրամա-
կանատարությանը և անձնատուր լինել: Նա միևնույն ժամանակ հայերին
խոստանում է կյանքի և գույքի ապահովություն: Արցախի հայկական
իշխանությունն իսկույն հրավիրում է արտակարգ համագումար: Իսկ
Հայոց Հոգևոր առաջնորդն ու Շուշիի քաղաքավուխը Զամիլ Զահիդ բեյի
մոտ են ուղարկում մի պատվիրակություն՝ խնդրելով վերջնագործ ժամ-
կեաց երկարացնել մինչև տասը օր: Համագումարը Զամիլ Զահիդ բեյի
վերջնագիրը քննարկում է և ընդունում որոշում, ըստ որի տաճկական
հրամանատարության առաջ խնդիր է դրվում զենքը չհավաքել և թույլ
համար պատվիրակություն մեկնի թաքո՛ բանակցություններ վա-
րելու Աղբբեկանի կառավարության հետ: Տաճկական հրամանատարը
մերժում է այդ որոշումը և մյուս օրը, սեպտեմբերի 21-ին, հանկարծակի
հարձակվում և ավերում Փիրշամալ, Քյաթուկ, Խանաբադ, Նախիջևանիկ
և Հիմիս գյուղերը:

Դրությունը բարդանում է: Խաչեն ու Ծովակի պատրաստված թշնամուն անձնատուր լինել, իսկ Վարանդան և Զրաբերդ՝ զենքով դիմաց ամուսնությունը լինում է: Զրաբերդի գավառը ներխուժած տաճկամագրել: Այդպիս էլ լինում է: Զրաբերդի գավառը ներխուժած տաճկամագրել: Այդպիս էլ լինում է: Սովորաբաղի և Լուսավագի աղբքեջանական գորքերը Մարտակերտի, Սովորաբաղի և Լուսավագի տափաստաններում երեք անգամ ենթարկվում են զրաբերդցիների գործափառություններում մի գոհ, բայց թշնամուն զոհեր պատճառելով, հին, որոնք շտալով ոչ մի զոհ, բայց թշնամուն զոհեր պատճառելով, նրանց քշում են մինչև Թարթառ կայանը: Թշնամին երեք անգամ էլ պարունակած ու ամոթահար նահանջում է:

Իսկ Վարանդայում տաճիկների 300 հոգուց բաղկացած մի խումբ շախչախվում է հայերի շեշտակի կրակից ու թողնելով երկու թնդանորթ, տապանակ հոգի փամփուշտ, ձիեր, զորիներ, հազիվ երկու-երեք երկու գնդացիր, շատ փամփուշտ, ապա հազիվ երկու-երեք տապանակ հոգի փախչում և ազատվում է:

Այսուհետև Արցախի Հայոթյան համար ստեղծվում է ազգի շահը գրություն: Նրանք ընկան շրջափակման մեջ և կտրվեցին արտաքին աշդություն: Դրանք ընկան շրջափակման մեջ և կտրվեցին արտաքին աշդություն: Նրանք ընկան շրջափակման մեջ և կտրվեցին արտաքին աշդություն:

¹ Συζήτωση στην Απαρχή μας στη Σρι Λάνκα την περίοδο που αποτελείται από την περίοδο της διαμόρφωσης της ιδέας της Εθνικής Κοινωνίας και της Αποτελεσματικότητας της Εθνικής Κοινωνίας.

րաստ կոչ էր անում՝ մեռնել, բայց երբեք անձնատուր Ախնել Աղբիշանին:

Սպասողական դրությունը շարունակվեց մինչև նոյեմբերի կեսերը, երբ լուր հասավ, թե անգլիացիները մտել են Բաքու։ Նրանք երեացին նաև Շուշիում մայոր Գիբոնի գլխավորությամբ։ Վերջինս տեղեկանալով արցախահայության նախկին ժամանակավոր իշխանության մասին, ցանկություն հայտնեց երկրամասը կառավարել նույնանման ժամանակավոր իշխանության միջոցով։ Տեղի է ունենում հրամանատարների և քաղաքական գործիչների համատեղ ժողով, որը Արցախի բաժանեց վարչական շորս շրջանների՝ Վարանդա, Դիզակ, Խաչեն և Զրաբերդ, որոնք ղեկավարվում էին ժողովրդական ժամանակավոր իշխանությունների միջոցով։ Յուրաքանչյուր շրջան մի ներկայացուցիչ է ուղարկում Շուշի, որոնք և անգլիական միսիային կից կազմում են կենտրոն...

Հայաստանի Հանրապետության նախարարների պարուն նախագահի համար միանգամայն պետք է պարզ լինի, որ եթե Փարիզի խաղաղության կոնֆերանսի վճիռը լինի հօգուտ Արցախի, ապա նա իսկույն իրեն կհայտարարի Հայաստանի անրաժան մասը, իսկ եթե կոնֆերանսի վճիռը լինի անխոհեմությունից բխած՝ հօգուտ Աղբեջանի, այն ժամանակ Արցախի հայությունը կանգնած կլինի ապստամբության շեմին, որի հետևանքը այժմ անկարելի է կանխատեսել...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԺՄԹ – 22 ԿԿԿԱ, գ. 199, լ. 1, գ. 38, թ. 11–12, ձեռագիր, սկզբնագիր։

№ 5

ԱՐՑԱԽԱՀՍՏՈՒԹՅԱՆ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԳԵՎԸ ԱՐՑԱԽԸ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԲՈՒԱԿՑԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԻ ԴԵՄ

19—II—1919

Կանգնած լինելով ժողովրդի ինքնորոշման սկզբունքի վրա՝ Արցախի հայ ազգարնակչությունը հարգանքով է վերաբերվում ղեպի հարևան թուրք ժողովրդի ինքնորոշման իրավունքը և դրա հետ միաժամանակ կառավարության փորձերի դեմ, որոնցով ցանկանում է ողնչացնել այդ ըսկը զրությունը հայկական Արցախի նկատմամբ, որը երբեք չի ընդունել և չի ընդունում իր վրա Աղբեջանի իշխանությունը։ Համագումարը պնդում է իր իրավունքների պաշտպանության վրա՝ թե Կովկասում գտնված դաշնակից պետությունների ներկայացուցիչների և թե Եվրոպայի խաղարար համագումարի առաջ։

Այս բողոքն ուղարկվում է նաև Բաքվի դաշնակից պետությունների

հրամանատարության, գեներալ Թոմսոնին, Աղբեջանի կառավարության և Եվրոպայի խաղարար համագումարի հայ պատգամավորներին։

Համագումարի նախագահ՝ Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Քարտուղար՝ ԱՌՈՒՍԱՍՏԱՆ

ԽՄԲ «Արեւ» (Բաքու), 1919, Խ 17։

№ 6

ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՂԻՇԵ ԻՇԽԱՆՑԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԱԽԳԵԶՈՒՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳԵՆԵՐԱԼ-ԿՈՄԻՍԱՐ ԱՐՍԵՆ ՇԱՀՆԱԶԱՆԻՆԻ

19 մարտի 1919,
Խ 333, գ. Եռչի

Ինչպես ձեզ հայտնի է, անցյալ փետրվարի կեսերից (ն.թ.) Աղբեջանի կառավարությունը Բաքվի անգլիական զորքերի հրամանատար գեն. Թոմսոնի համաձայնությամբ նշանակել է Ղարաբաղի և Զանգեզուրի գեներալ-նահանգապետի պաշտոնով թժ. Խոսրովիք Սուլթանովին։ Այդ նույն ժամանակում Շուշիում տեղի ունեցավ Ղարաբաղի արցախահայության շորորդ համագումարը, որը ամենարուն կերպով գրավոր բողոքեց անգլիական այստեղի միսիային, հեռագործ գեն. Թոմսոնին, ադրբեջանական կառավարությանը, Բաքվի հայոց Ազգային խորհրդին և Արարատյան Հանրապետությանը՝ ադրբեջանական ոտնձգությունների գեմ։ Համագումարը պարզ ու որոշ կերպով հայտնում է իր բողոքագրերով։ Որ Ղարաբաղի հայությունը երբեք չի ենթարկվել ադրբեջանական կառավարությանը, նույնիսկ տաճկական կանոնավոր զորքերը չեն կարողացել ընկերել գյուղացիությանը։

Ղարաբաղի շորս շրջաններում, ղեպերի սրոշ հաջորդականության շնորհիվ, հանդես են եկել նոր ուժեր, որոնք և ղեկավարել են ուղամիկ ուժերը, պաշտպանել գավառի հայությունը վերահաս վտանգից։ Դիզակի, Վարանդայի, Խաչենի և Զրաբերդի հրամանատարները փաստապես շրջաններում ամբողջ իշխանությունը կենտրոնացրել են իրենց ձեռքը և կառավարել են ժողովուրդը՝ մինչև անգլիական միսիայի տեղս գալը։ Հրամանատարները գործել են գեներալ-մայոր Անդրանիկի հրագալը։ Հրամանատարները գործել են գեներալ-մայոր Անդրանիկի հրագալը։ Համագումարը պարզ ուղարկվում էր իր ղեպի Ղարաբաղ՝ ժողովուրդը սրտատրով սպասում էր իր Հերոսապետին և ուղում էր տեսնել նրան իր մեջ։ Սակայն Բաքվի անգլիական հրամանատար Թոմսոնը, լսելով ադրբեջանական կառավարության աղաջանքը, իսկույն ուղարկեց

հատուկ միսիա և գեն. մայոր Անդրանիկի առաջխաղացումը կանգնեցրեց Հագարայի ամբողջին:

Այնուհետև անգիտական հրամանատարությունը Ղարաբաղի հայ և թուրք ազգաբնակչությանը հայտարարեց, որ ինքը պետք է երկու վերականգնի կարգ ու խաղաղություն, արգելում է այլևս որևէ զորաշարժ կատարելը Ղարաբաղի սահմաններում, իսկ երկու կողմերը պետք է դադարեցնեն թշնամական գործողությունները իրարու դեմ: Ղարաբաղի հայությունը, իր սովորական օրինապահությամբ, ճշմարտությամբ կատարեց գաշնակիցների հրամանը, այնինչ տեղական թուրքերն ու ադրբեջանական կառավարությունը շարունակեցին իրենց ունագությունները: Ամենայն օր տեղի էին ունենում հայ-թուրքական սահմանագծի վրա որոշ գեմոննտրացիաներ տաճիկ սպաների ղեկավարությամբ, անհատական սպանություններ և մի քանի անգամ հարձակումներ՝ եծաբերդ, Քուրաբաղ, Ճարտար և այլ հայկական գյուղերի վրա: Այդ ամենի մասին թե հրամանատարները և թե Ազգային խորհուրդը բուռն կերպով բողոքել են տեղվույս միսիային և գեներալ Թոմասոնին գրավոր կերպով:

Մեր բոլոր բողոքները մնացել են ձայն բարբառո հանապատի:

Ոչ անցյալ տարվա ղեկտեմբերից մինչև սույն տարվա փետրվար գործող ժամ: Ազգ. խորհուրդը, ոչ էլ շորորդ համագումարից ընտրված ներկա խորհուրդը հնարավորություն շեն ունեցել ներկայացուցիչներ ուղարկելու ծրան՝ իրազեկ դարձնելու Արարատյան Հանրապետությանը մեր շրջանի իրադարձության մասին: Բայց պետք է խոստովանել, որ Արարատյան Հանրապետությունը հանցավոր ու դատապարտելի անտարբերություն է ցույց տվել ցայժմ դեպի Ղարաբաղը, որը հայկական բնագավառներից մեկն է և որի ազգաբնակչության մոտ 90 տոկոսը հայությունն է կազմում: Արարատյան Հանրապետությունը իր ժամանակին շկարողացավ բրունել պահը և ուղարկել տեղու իր ներկայացուցչին՝ անհրաժեշտ դրամական միջոցներով: Արարատյան Հանրապետությունը պետք է ի նկատի ունենար մի հանգամանք, որ առանց դրամական միջոցների անկարելի է ձեռք բերել մի շրջան, որը նրա անմիջական տիրապետությանը չի ենթարկվել զանազան արգելառիթ պայմանների շնորհիվ: Այսօր մենք տեսնում ենք, թե ինչպես Ազգային գործի միջոցով... տիրում է Ղարաբաղի կենտրոնին, իսկ հետագայում փորձեր կանի ձեռք բերել նաև գավառը...

Հայ պաշտոնյաները ցայժմ իրենց ոռնիկները ստացել են գանձարանից, համոզված լինելով, որ գանձարանի գումարներն ադրբեջանա-

կան չեն, այլ, ինչպես իր ժամանակին հայտարարվել է, թե պաշտոնյաները ոռնիկ ստանում են Կովկասյան նախկին կոմիսարիատի լիկվիդացիոն գումարներից: Այժմ մենք բոլորովին հակառակ պատեկերն ենք տեսնում: Ազգային գեներալ-նահանգապետն արգելել է ոռնիկ տալ նրանց, ովքեր իր կառավարության իշխանությունը շեն ճանաչում, և հետին թվով ստորագրություններ է հավաքում պաշտոնյաներից, թե իրը վերջիններս ծառայում էին Ազգային անցյալ տարվա հունիսի 1-ից և այսուհետև ևս պիտի ծառային «զանասիրությամբ և եռանդով»: Բայց ոչ ոքի համար գաղտնի չէ, որ Ազգային տաճիկները մուտք չի գործել Ղարաբաղ, միայն տաճիկները անցյալ տարվա հոկտեմբերի 8-ից (ն. տ.) կարճ ժամանակով տիրապետել են միմիայն Շուշիին և Խանքենդ ավանին, իսկ երբ նրանք հեռացել են, այլևս Ազգայինը ոչ մի հնարավորություն չի ունեցել ինքը տիրապետելու, ուստի և բացարձակ կեղծիք է կատարում, որի առթիվ խորհուրդն իր բուռն բողոքը պիտի ներկայացնե տեղուուս միսիային և գեներալ Թոմասոնին:

Ղարաբաղի հայությունը վերցին երեք ամիսների ընթացքում իր հայցը բնեղու էր Արարատյան Հանրապետության վրա, սպասելով, որ վերջինս լուրջ քայլերի կդիմե օրառաջ իր ազդեցությունը տարածելու նաև Ղարաբաղում, սակայն նրա հույսները կարծեք խորտակվում էին, որովհետև Արարատյան Հանրապետությունը միանգամայն մոռացության էր ավել Ղարաբաղը: Արարատյան Հանրապետությունը շատ է ուշացրել Ղարաբաղում և Զանգեզուրում գեներալ-կոմիսարություն հաստատել և այշուափ ուշացնելը մեծապես վնասել է գործին: Այդ հանգամանքից օգտագում էր Ազգային միսիայի կառավարությունը, որն արթու էր և իր սուր աշքերով նկատելով մեր թուրքությունը հունվարի վերջերին շորս հարյուրյակ վայրենի դիվիզիայով գիշերանց գրավեց Խանքենդ ավանը: Ժամանակավոր Ազգային խորհուրդը իր ժամանակին հարցապնդում արագ միսիական միսիային այդ դեպի առթիվ, սակայն վերջինս անորոշ պատասխաններ տվագի:

Մի բան միայն մեզ համար պարզվել է, որ Ազգայինը օգտագործում է յուրաքանչյուր պատեհ հանգամանք՝ գրավելու Ղարաբաղը: Այսպիսի պայմաններում գեն. մայոր Անդրանիկի հեռանալը Զանգեզուրից ավելի ևս արագացնում է Ազգայինի գործի հաշողությունը: Ամեն կերպ պիտի աշխատել, որ գեն. մայոր Անդրանիկը շուտ չհեռանա Զանգեզուրից, որովհետև մենք կանգնած ենք նոր անակնականների առաջ: Ամենայն կացնելու հայկական Ղարաբաղը: Այս այս ամենը ի նկատի ունենալով՝

գեն. մայոր Անդրանիկին ոչ միայն շպետք է թողնել, որ հեռանա ջանգի. զուրից, այլև բոլոր հարավոր միջոցները պիտի գործադրել, որպեսզի նա անցնի Հարաբաղ՝ ուշադրություն շղարձնելով անգիտական միսիայի հարկադրանքներին... Մենք համոզված ենք, որ եթե գեն. մայոր Անդրանիկը գա Հարաբաղ, անգիտական միսիան նրան չի հարկադրի հեռանալ մեր շրջանից: Պիտի շմուանալ մի հանգամանք ես, որ տաճիկների ներու խուժելուց հետո, երբ ամրող գավառը ասպատակվել էր՝ պյուղացիության ովկորող գեն. մայոր Անդրանիկն է եղել...

Թացի այդ բոլորից, պիտի նկատել մի հանգամանք ես, որ Հարաբաղի ուղմիկ ուժերը ընդհանուր ղեկավար չունեն: Երջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի և Ջրաբերդի հրամանատարներից և ոչ մեկը չի կարող կենտրոնացնել իր ձեռքում հայ զինվորությունը: Ցուրաքանչյուրը իր շրջանում մի կերպ կարողացել է ղեկավարել զինվորներին, իսկ անգիտական միսիայի տեղու գալուց հետո շափազանց թուլացել է ինքնապաշտպանության գործը: Տաճիկների՝ մեր սահմանները ներս խուժելուց հետո հրամանատարները կարողացել են իրենց հետեւից քարշ տալ մասսային, որովհետև ժողովորդը հոգերանական այնպիսի դրություն էր ապրում; որ զգում էր կարիքը մի ղեկավարի՝ ով էլ որ լինի նա: Այժմ այդ դրությունը վերացել է շնորհիվ այն հանգամանքի, որ մեր ժողովրդին հատուկ է, երբ որևէ տեղից ակնկալություն ունի կամ հույսը այս կամ այն շափով դնում է որևէ մեկի վրա: Անգիտական միսիան տեղու գալուց հետո ժողովրդի եռանդը մեծապես ընկել է, որովհետև նա իր հույսը դրել է միսիայի վրա: Արարատյան Հանրապետությունը ցայժմ չի ուղարկել տեղու մի ղեկավար ուժ, որի ներկայությունը մեծապես զարկ կտար ժողովրդի համախմբման, մանավանդ այժմ, երբ որոշ անպատախանատու անձինք շնորհիվ իրենց դիրքի, որ վայելում են միսիայի մոտ, տարածայնություն են սերմանում գործոն ուժերի մեջ: Երջանների ղեկավար ուղամիկ ուժերի միջև գործելակերպի համանանություն և համերաշխություն գոյություն չունի: Որոշ պայմանների շնորհիվ նրանք նետվել են ասպարեզ և այժմ տարված են ավելի շուտ իրար բզկտելով, քան ընդհանուր գործի հաջողության նպատակով: Քանի ուշ չէ, պետք է ուղարկել տեղու մի հմտություն, եթե ոչ գեներալ, գոնե գնդապետ, որը կկարողանա սանձ գնել բոլորին: Պիտի միանգամայն համոզված լինիք, որ ացանց այդ ղեկավար ուժի անհնարին է միացնել ի մի բոլոր գործոն զինվորական ուժերը: Բոլորիս համար ավելի քան պարզ է, որ մենք մեր ուշադրությունը ներկայումս գերազանցորեն պիտի դարձնենք ինքնապաշտպանական գործի վրա, այսինքն՝ երկրի ուսալ ուժերի վրա...

Այս բոլորից հետո գալիս ենք ասելու, թե Հարաբաղը Հայաստանի Հանրապետության միացնելը, որը Հարաբաղի հայության միակ և բուռն ցանկությունն ու նպատակն է, հնարավոր կլինի այն գեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը ունել միջոցների կողմի...

Հայաստանի Հանրապետությունը պիտի համոզված լինի, որ եթե խաղարար կոնֆերանսում անգամ որոշվի Հարաբաղի հարցը հօգուտ Հանրապետության, Աղբբեզանը չի հանդուրժելու և ամեն կերպ աշխատելու է կոնֆլիկտ ստեղծել: Ահա այդ ամենն ի նկատի ունենալով պիտի այժմվանից նախագուշական միջոցներ ձեռք առնել:

Աղբբեզանական կառավարությունը օրեցօր խանքենդում կենտրոնացնում է նորանոր ուժեր և մեծաքանակ ուղմամմթերք: Այդ ամենը նա կատարում է որոշ ծրագրով և նպատակով... Անգիտական հրամանատարությունը կապել է մեր ձեռքերն ու ոտքերը, մենք չենք կարողանում հակազել Աղբբեզանին, որովհետև գերի ենք դարձել օրինապահության և բացի այդ, տեղական ուժերը բոլորովին անկազմակերպ վիճակի մեջ են և ոչինչ չի կարելի անել նրանցով...

Քանի դեռ ուշ չէ, Հայաստանի Հանրապետությունը լուրջ միջոցների պիտի դիմե՝ կասեցնելու Աղբբեզանի առաջխաղացումը, եթե այսուհետև և Հայաստանի Հանրապետությունը զաքարեական լուրիթյուն պահպանելու լինի, Հարաբաղի հայությունը այդ համարելու է դավաճանական ակտ՝ ուղղված հայկական Հարաբաղի դիմ:

Նախագահ՝ (ստորագրություն) Ե. ԽԵԱՆՑԱՆ
Քարտուզար՝ ՄԵԼԻՔ ՇԱԱՑԱՆ

ՀԿՄՀ — 22 ՊԵԿ, գ. 200, թ. 1, գ. 243, թ. 55—57, ձեռագիր, սկզբանգիր:

№ 7

ԱՐՑԱԽԱՅԱՅԱՅՈՒԹՅԱՆ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԳԵՆԵՐԱԼ ՇԱՏԵԼՎՈՐԻՒՆ

24—IV—1919, ՇԱՀ

Կատարելապես դեմ Ալինելով մեր հարևան թուրք ժողովրդի ինքնարումանը և ելնելով այն բանից, որ բոլոր տարածքային վիճակի հարցերը պետք է իրենց վերանական լուծումը ստանան խաղարար կոնֆերանսում, պետք է իրենց զաքարեական հայությունը ինքնորոշման նույնպիսի իրավունք վերապահում է և իրեն:

Հարաբաղի հայության վրա Աղբբեզանի գեներալ-նահանգապետության իշխանությունը տարածելու նկրտումների առթիվ, Արցախի հայության

Քյան 5-րդ համագումարը անհրաժեշտ է համարում հայտնել, որ Աղրբեցանը միշտ աշակից և գործակից է հղել Տաճկաստանի կողմից ընդհանուրապես հայերի և մասնավորապես Արցախի հայության դեմ ուղղված գաղանություններին, որպիսին մնում է և այժմ:

Աղրբեցանը ինչպես միշտ, այնպես էլ այժմ կողմնակից է տաճկական կողմնորոշմանը:

Տաճիկներին Անդրկովկաս է հրավիրել Աղրբեցանը: Նա է ամեն կերպ նպաստել պատերազմական ճակատի թիկունքում կատարված ստորդավաճանությանը, որի հետևանքով կազմալուծվել է Անդրկովկասը և որը հարավորություն է տվել տաճիկների մուտքը մեր երկրամասի խորքերը: Այդ «պետությունը» գեռես չի դադարել հրազել տաճիկների այստեղ վերադառնալու մասին և շարունակում է սիստեմատիկաբար հալածել հայերին:

Տնտեսական այն բոյկոտը, որ կյանքի մեջ է մտցված տաճկական փաշաների այստեղ գալուց ի վեց, Աղրբեցանի կառավարությունը հայերին ճնշելու համար դարձել է պետական սիստեմ:

Ավագակությունները, թալանը, մարդասպանությունները, ճանապարհներին առանձին հայերի որսալը հանդիսանում են նորմալ միջոցներ Աղրբեցանի նպատակների իրականացման համար:

Այդ բոլոր բռնությունները կատարվում են այն ժամանակ, երբ Արցախի հայությունը գեռես չի ենթարկված այդ կառավարությանը, երբ գեռ մեր կողքին կանգնած են զզոր Անզիայի ներկայացուցիչները, որոնք կոշված են պաշտպանելու մեջ:

Մենք համոզված ենք, որ արդեն Աղրբեցանը իր մեծ եղբոր՝ Տաճկաստանի օրինակին հետևելով, ձգտում է բնաշնչել հայերին, որպես միակ կուտուրական ու գեղի Եվրոպան և ոչ թե դեպի Արևելք ձգտող ժողովրդի, մասնաւոր Արցախի հայերին, որոնք մինչև հիմտ պաշտպանել են իրենց ազատությունը և գեռես շեն ենթարկվել ավերածության ու բարբարությունների:

Բացի դրանից, համագումարը գտնում է, որ Արցախի հայության քաղաքական, պատմական, կուլտուր-իրավական և մանավանդ տնտեսական պայմանները չեն կարող ոչ մի դեպքում հիմք ծառայել հայ ժողովրդի շինքին փաթաթելու Աղրբեցանի թեկուզ ժամանակավոր իշխանության վարչական ձևեր:

Այդ ամենի հիման վրա Արցախի հայության 5-րդ համագումարը անհարին է համարում ընդունել Աղրբեցանի հետ առնչություն ունեցող որևէ իշխանության վարչական ձևեր:

Ինչ վերաբերում է ճանապարհների հաղորդակցության վերականգնմանը, համագումարի տեսակետով դա ոչ մի առնշություն չունի Աղրբեցանի գեներալ-նահանգապետության իշխանությունը ճանաշելու հետ, որովհետև Անդրկովկասի հաղորդակցության բոլոր ճանապարհների ազատ երթևեկության ապահովությունը կենսական անհրաժեշտություն է Անդրկովկասի համար, որը իրենից մի տնտեսական ամրողություն է ներկայացնում:

Մենք համոզված ենք, որ տնտեսական նորմալ կենցաղի համար Անդրկովկասում հաստատվող խաղաղությունը մեր երկրամասում առաջ կրերի այդ անհրաժեշտ պայմանները:

Քոչի հարցը² բարեհաջող լուծում է ստացել Հայկական Արցախի սահմաններում գեռ այն ժամանակ, երբ Արցախը պաշարված էր տաճկապարհանական հրոսակախմբերով, վերջիններիս թափվի գեմ սկսած արշավանքի օրերին:

Այդ հարցը ներկայումս չէր ունենա այն սրությունը, եթե Արցախի հայությանը բռնի կերպով շտորհերին ճանաշել Աղրբեցանի իշխանությունը:

Ընդումին, ներկայացնելով համագումարի պատգամավորների միաձայն ընդունած և բոլորի կողմից ստորագրված մերժում-բանաձեւ, Աղրբեցանի գեներալ-նահանգապետության ժամանակավոր իշխանությունը ճանաշելու մասին, Արցախի 5-րդ համագումարը հայտնում է, որ նա իր որոշումը հիմնել է իրեն ընտրող ժողովրդի անհողողությունը ու հաստատուն կամքի վրա, որում անգիտական հրամանատարությունը եթե կամենա, կարող է համոզվել համաժողովրդական հանրաքերի (ուֆերենդում) միջոցով:

Միանգամայն պարզ գիտակցելով, որ նման կարևոր քաղաքական հարցերի լուծման ժամանակ շափազանց խոշոր նշանակություն և ուժունեն կուլտուր-տնտեսական գործուները, 5-րդ համագումարը խորապես համոզված է, որ Մեծ Բրիտանիան հանձինս իր կովկասյան հրամանատարության բռնի կերպով չի ստիպի ընդունել Աղրբեցանի խանական կարևորությունը գեն է շպրտել գեռ հարյուր տարի առաջ:

Արցախի հայության 5-րդ համագումարը երկրորդ անգամ լսելով գենն. Շատելվորդի հրամայական պահանջը՝ ընդունել Աղրբեցանի իշխանությունը և քննելով այն շարժառիթները, որոնցով պայմանավորված է նույն կանունը և գործունեանը անհնարին է գտնում այդ պահանջը, այնուամենայնիվ միանգամայն անհնարին է գտնում փոխելու իր մշտական որոշումը, որը թելադրված է Արցախի ամրող

Հայության անհողողդ կամքով, որին դավաճանել ոչ մի դեպքում չեն ուզում և չեն կարող համագումարի անդամները և որոնք ոչ մի պատասխանատվություն չեն կարող վերցնել իրենց վրա Աղբերջանի իշխանության բռնի հաստատման հետեւանքով գալիք արյունոտ փորձությունների համար:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱՅԱՅՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԲԱՆԱԶԵՎՔ

Զարաբաղի Հայության հինգերորդ համագումարը 1919 թ. ապրիլի 23-ին յուր անպաշտոն նիստում լսելով Անգլիական Հրամանատարության ներկայացուցիչ գեներալ Շատելվորդի Արցախի ժամանակավոր իշխանության վարչական ծրագիրը և այն քննելով նույն համագումարի ապրիլի 24-ի պաշտոնական նիստում, որոշեց.

1. Միանդամայն կողմնակից և ծարավի է կարգի և խաղաղության վերահստատմանը Արցախում:

2. Թողոր ցանկությամբ և անկեղծությամբ ընդառաջ գնալով անգլիական Հրամանատարության առաջարկին՝ խաղաղ բարեկամական հարաբերություն պահպանել հարեւան թուրք ժողովրդի հետ, որը միշտ էլ իրագործել է Արցախի Հայությունը.

3. Ի նկատի ունենալով, որ Արցախի վերաբերյալ տարածքային և սահմանային հարցերը պետք է վերջնական լուծում ստանան խաղարար կոնֆերանսում, ինչպես ինքը գեներալ Շատելվորդը Հայութարարեց այդ մասին, Արցախի Հայության հինգերորդ համագումարը գտնում է, որ այդ ծրագիրը չի համապատասխանում հայ ժողովրդի ցանկությանը և կենսական շահերին, ինչպիսի համախոսականներ և, գրավոր հրամայական մանդատներ տվել է նա իր ընտրած պատգամավորներին:

Համագումարը անընդունելի է համարում Աղբերջանի հետ որևէ առընչություն ունեցող որևէ վարչական ծրագիր և այդ ծրագրի բռնի իրականացումը կյանքի մեջ համարում է անխուսափելի պատճառ՝ ստեղծելու ազգամիջյան լուրջ խռովություններ ու արյունահեղություններ. որի պատասխանատվությունը իր վրա վերցնել ոչ մի դեպքում չի կարող Արցախի Հայության հինգերորդ համագումարը:

Ստորագրել են դիվանի ամբողջ կազմն ու 48 պատգամավորներ:

Արցախի Հայության հինգերորդ համագումար
- ընթթ - ՀՀ ՊՊՆ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 27, տպագիր, պատճեն:

1 Որոշ ազգյուրերում նշված է, որ Շատելվորդը 1919 թվականի ապրիլին ունեցել է գեներալի, իսկ որոշ ազգյուրերում էլ՝ գեղապես աստիճան:

2 Խոսքը վերաբերում է թագավագերի ոչխարենք հոտերը Արցախի տարածքով ուրաքանչակում:

№ 8

ԱՐՑԱԽՈՒՄ ՏԻՐՈՂ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԶԵԿՈՒԹՅԱԳԻՐԸ

Հունիս, 1919

Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը Աղբերջանի իշխանության նկատմամբ ունեցած իր քաղաքական վարքագիծը մշակելիս միշտ ելակետ է ընդունել Արցախի հարցը, միևնույն ժամանակ հասկանալով, որ Արցախի հարցի վճռումը դուրս է մեր խորհուրդի իրավասության սահմաններից: Ազգային խորհուրդը նաև գումար է, որ ինքը որոշակի պատասխանատվություն է կրում Աղբերջանի տարածքում ապրող փոքրամասնություն կազմող Հայության ճակատագրի նկատմամբ:

Դժբախտաբար պայմաններն այնպես էին դասավորվել, որ Բաքվի Ազգային խորհուրդը Հայաստանի կառավարությունից կոնկրետ ցուցումներ ու հրահանգներ շեր ստանում այս կամ այն գիրքը բռնելու և այս կամ այն քայլերը կատարելու համար: Այդ իսկ պատճառով էլ Ազգային խորհուրդը միշտ էլ խուսափել է իր իրավասության սահմաններից դուրս որևէ ակտիվ գործունեսությունից և բավարարվել է միայն պասսիվ վերաբերմունքով, որը ոչ մի դեպքում չի շոշափել հայ բնակչության կենսական շահերը և Արցախի խնդրում երթեր չի վնասել Հայաստանի կառավարության քաղաքական ձգումներին...

Ազգային խորհուրդը թե՛ Աղբերջանի կառավարության և թե՛ անգլիական Հրամանատարության հետ ունեցած իր բանակցությունների ընթացքում միշտ էլ նախապայմանը համարել է Արցախի հարցը: Նա միշտ էլ շեշտել է, որ Աղբերջանի կառավարությունը պետք է խուսափի Արցախի Հայության նկատմամբ հարձակողական քայլեր կատարելուց և նրա խնդրի վճռումը թողնի status quo-ի վիճակի մեջ մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսի վերջնական որոշումը: Թե գեներալ Թոմսոնը և թե Աղբերջանի Հանրապետության մինիստր-նախագահ Խան Խոյսկին միշտ էլ հանդիսավոր կերպով խոստացել են, որ Արցախի նկատմամբ հարձակության դաշտավագոր կերպով խոստացել են, որ Արցախի նկատմամբ հարձակության դաշտավագոր կերպով խոստացել են:

107

զական քայլեր շեն կատարմի: Հիշեցնենք նաև այն, որ Աղբեկանի պառլամենտում Արցախի հարցի վերաբերյալ հայ պառլամենտականների դիրքը ունեցել է որոշ նշանակություն: Որպես դրա ապացույց, հիշենք հետևյալ փաստը. ընթացիկ տարվա ապրիլի վերջին, երբ Ռւաւորեկովի գլխավորած Աղբեկանի կառավարության նոր կարինետը կառավարության գեկլարացիայի մեջ մտցրեց Արցախի հարցը՝ այն համարելով Աղբեկանի Հանրապետության սեփականությունն, Ազգային խորհրդի հրահանգով հայ նախարարները՝ պահանջեցին գեկլարացիայից հանել այդ կետը, հակառակ դեպքում իրենք հրաժարական կտան: Աղբեկանի կառավարությունը նահանջեց և վերացրեց այդ կետը:

Բաքվի Ազգային խորհուրդը իր քաղաքական գործունեության ընթացքում միշտ լսել է Արցախի հայության ձայնը: Եռոշից և Զանգեզուրից հաճախակի պատվիրակություններ էին գալիս Բաքու և իրենց գրավոր կամ բանավոր զեկուցագրերով նկարագրում հետզհետե բարդացող իրադարձությունները: Ազգային խորհուրդը ոչ միայն խուսափել է իր կամքն ու ցանկությունը Արցախի հայությանը թելադրելուց, այլև, ընդհակառակը, հնարավոր բոլոր միջոցներով բարոյապես աշակցել է նրանց և նյութական օժանդակություն ցույց տվելու: Առաջին անգամ ՀՀ Դաշնակցության Բաքվի Կենտրոնական կոմիտեն Արցախ է փոխադրել շորս հարյուր հազար (400.000) ռուբլի, երկրորդ անգամ Բաքվի Ազգային խորհրդի միջոցով Արցախի Ազգային խորհրդին ուղարկվել է հինգ հարյուր հազար (500.000) ռուբլի, իսկ երրորդ անգամ՝ հարյուր վարչուն հազար (160.000) ռուբլի: Բայց դրանք կաթիլներ էին ծով կարիքների դիմաց: Բաքվի խորհուրդը ինքը ևս լինելով ծանրաբեռնված և բազմաթիվ անհետաձեռի կարիքների մեջ, դժբախտաբար չի կարողանում Արցախի համար իր շափազանց սուլ միջոցներից անել ավելին, քան արել է:

Սակայն քանի գնում, այնքան թուլանում էր արցախցիների դիրքը և Արցախի հայության նկատմամբ ավելի զավթողական բնույթ ընդունում Աղբեկանի կառավարության վարած քաղաքականությունը: Կարող ենք ասել, որ Զանգեզուրից գեներալ Անդրանիկի հեռանալը Արցախի հարցում հանդիսացավ ճակատագրական կետ: Անդրանիկը իր գորամասով մի կողմից հանդիսանում էր Արցախի որոշ մասեր ներխուժած Աղբեկանի իշխանության դեմ հակակշիռ և սպառնացող ուժ, իսկ մյուս կողմից էլ Արցախի հայությունը լավատես և վստահ էր իր դիմադրության վրա՝ ունենալով զորեղ ու ապահով թիկունք: Աղբեկանի կառավարությունն էլ Արցախի նկատմամբ վարած իր քաղաքականության մեջ համեմատաբար մեղմ ու զգույշ էր:

Այդ տեսակետից բնորոշ է Ազգային խորհրդի նախագահի հետ ունեցած տեսակցության ժամանակ Արցախի հարցի վերաբերյալ՝ Ֆ. Խան Խոյսկու արտահայտած միտքը. «Մենք ոչ մի մտադրություն չունենք Արցախի հարցում դիմելու զավթողական քաղաքականության, թեև հավատացած ենք, որ Արցախի հայությունը ճշտությամբ կրնդուներ Աղբեկանի իշխանությունը, եթե Արցախի Անդրանիկի սպառնալիքները»: Ազգային խորհրդի նախագահը նրան առարկել ու հարցրել է, թե Արցախի Աղբեկանի կառավարությունը մտադիր է զավթողական քայլեր կատարել հատկապես Անդրանիկի դեմ, և Խոյսկին պատասխանել է. «Մենք այդպիսի մտադրություն չգունենք, առավել որ զավթողական քաղաքականությունը հաճելի չէ անգիտական հրամանատարությանը, որի հովանավորությունն է վայելում Անդրանիկը»:

Սակայն Անդրանիկի հեռանալը, կամ ուրիշ խոսքով՝ Արցախի մի մասի մերկացումը ուղղմանակատի հայկական կազմակերպված ուժերի կողմից ոչ միայն թուլացնում է մյուս մասերի դիմադրությունը և նրանց համար ստեղծում անապահով վիճակ, այլև այդ մասերի կապն ու հարաբերությունները խզում է Զանգեզուրի և Հայաստանի Հանրապետության հետ: Այսպիսով, հայկական և մուսուլմանական ռեալ ուժերի փոխհարաբերություններն ընթանում են հակառակ ուղղություն և դասավորություն: Հայերն իրենց ինքնապաշտպանողական դիմադրությամբ ողքան թուլանում, կզզիանում ու խեղճանում են, ընդհակառակը, այնքան աճում, ուժեղանում, ընդարձակվում և ամրապնդվում են Աղբեկանի ուժն ու ազդեցությունը և նրա հարձակողական քաղաքականությունը համարձակ ընթացք ստանում:

Այս բոլորից հետո զարմանալու ոչինչ չկա, երբ Աղբեկանի կառավարությունը շխուսափեց ապառնալիքների քաղաքականությունից անցնել ակարիվ գործողությունների, կանգ շառնել անգամ արյունահեղության և կազմակերպված կոտորածի առաջ: Թե Արցախի հարցում երեք-չորս ամսվա ընթացքում որքան համարձակ և ինքնապստահ թուլքներով է առաջ գնացել Աղբեկանի զավթողական քաղաքականությունը, դրա պերճախոս ապացույցը կարող է հանդիսանալ Արցախի վերջին արյունահեղ անցքերից հետո Ազգային խորհրդի նախագահության անդամների խոսակցությունը մինիստր-նախագահի հետ: Ուսուլքեկովը առանց քաշվելու նրանց հայտարարել է հետևյալը. «Որքան էլ ցավակի լինի Արցախի վերջին անցքերը, իմացած եղեք, որ դրանք վերջինը չեն լինելու, եթե Արցախի հայկական զավառամասերը շարունակեն իրենց դիմադրությունը և ժխտական դիրքը Աղբեկանի իշխանության դեմ: Նման բախումները

անխուսափելի են լինելու, ուստի Ազգային խորհուրդը պետք է իր ներ կայացուցիչների միջոցով հորդորի արցախիներին ընդունելու մեր իշխանությունը, իսկ մյուս կողմից էլ Հայաստանի Հանրապետության առաջ միջնորդի՝ Արցախի հարցում չհամարի մեր ձգտումներին»:

Ստեղծված գրության ահավորությունը և հնարավոր անակնկալների երևոյթը թաքվի հայոց Ազգային խորհրդին ստիպում է քննության առներ կատարված անցքերն ու պահի լրջությունը և հունիսի 10-ին ընդունել հետեւյալ որոշումը. «...Ն նկատի ունենալով, որ Հայկական Արցախը նվաճելու գործում Աղրբեջանի կառավարության զավթողական քաղաքականությունը ավելի ու ավելի է ուժեղանում, որ այդ քաղաքականությունը քաղաքում թև գյուղում արդեն տվել է իր տիտուր արդյունքները՝ արյունահեղ ընդհարումներով և մասսայական կոտորածներով, Ազգային խորհուրդը իրեն պարտավոր է զգում պահի ամրող լրջությունը պարզել Հայաստանի կառավարության առաջ և խնդրել, որ նա Արցախի հարցում ձեռնարկի իրենից կախված բոլոր միջոցառումները և կանխի ապագայի բոլոր բարդությունները»:

Ազգային խորհուրդը հունիսի 23-ին լսելով Արցախ մեկնած Աղրբեջանի պալամեննախի հայ անդամների զեկուցումը, երկրորդ անգամ որոշում ընդունեց Արցախի հարցի վերաբերյալ... Դրությունը, նշված է այդ որոշման մեջ, Արցախում քանի գնում, այնքան ավելի ու ավելի է ժանրանում, իսկ վերջերս տեղի ունեցած արյունահեղությունների պատճառով արցախահայության վիճակը դարձել է անտանելի: Փաստուն Արցախում ստեղծվել է հետեւյալ վիճակը:

1. **Թե Շուշի քաղաքում և թե գավառների որոշ մասերում Աղրբեջանի իշխանության ներկայությունը և նրանց ազդեցությունը հետզհետե ամրանում է:** Այդ իշխանության ներկայացուցիչ գեներալ-նահանգապետ Սուլթանովին հաջողվել է 5—6 ամսվա ընթացքում Արցախի կարևոր մասերում ոչ միայն պատկառելի քանակությամբ զորքեր կենտրոնացնել, այլև կազմակերպել կամավորական խմբեր, զինել ողջ մուսուլման ազգարնակշությանը, մասնավորապես քոչվորներին:

2. **Սուլթանովը Արցախը կտրել է Զանգեզուրից, երկաթե օղակով շրջապատել է Դիլզակն ու Վարանդան, բռնել է Ասկերանի գիծը և թուրք զորքի մշտական ահարեկման տակ դրել Ասկերանի շրջանի հայ գյուղացիներին, որոնք անկարող են տնից դուրս գալ և գնալ աշխատանքի՝ առանց ունեցվածքի հափշտակման և կյանքի վտանգման երկյուղ ունենալու: Աղրբեջանի իշխանությունը դրանով իսկ ստեղծեց մի վիճակ, որի**

ռազմական առաջխաղացումներն ու գործողությունները չեն հանդիպի որևէ արգելիքի:

3. Աղրբեջանի գեներալ-նահանգապետը զինվորական այդ ուժի և ռազմական պատրաստակամության հետ զուգընթացարար օժտված է ֆինանսական առաջ միջոցներով և երրորդ ուժի կողմից դիպլոմատիկական անպայման աջակցությամբ: Աղրբեջանի կառավարությունը Արցախի համար միանվագ բաց թողնելով 25 միլիոն ռուբլի, միաժամանակ իր ներկայացուցչին բաց է թողել անսահման քանակությամբ վարկ իր նախագծած ծրագիրը իրականացնելու համար: Դրա վրա ավելացնենք այն անուրանալի փաստը, որ անգլիական հրամանատարությունը ընդունելով գեներալ-նահանգապետի իշխանության օրինականությունը և աջակցելով այդ օրինականության ամրապնդմանն ու տարածմանը, Արցախի հարցում հսկայական ծառայություն է մատուցում Աղրբեջանի կառավարությանը..

Այդ ամենի հանդեպ անմիտիթար է Հայկական Արցախի վիճակը, որը համառոտակի կարելի է ներկայացնել հետեւյալ գծերով:

1. Արցախահայությունը, որպես ազգային հատված, ունի ինքնապաշտպանության և դիմագրության բոլոր առավելություններն ու գործուները, սակայն լինելով լեռներում փակված ու կղզիացած... Աղրբեջանի պետության ժամանակակից ամրագության գործողությունների հանդեպ կազմում է փոքրամասնություն:

2. Արցախահայությունը կղզիացած է, որովհետև նա կտրված լինելով Զանգեզուրից, հնարավորություն չունի կապ հաստատելու ավելի ազատ, պատրաստ ու ուժեղ հայության հետ, ինչպիսին Զանգեզուրի հայությունն է և նրա միջոցով հարաբերություն ունենալ հայկական կառավարության հետ և ցանկացած դեպքում նրանից օգնություն ստանալ: Նա կղզիացած է մինչև այն ստիճան, որ չի կարող իր գոյության կարիքները և ինքնապաշտպանության պահանջները ցանկացած դեպքում ազատորեն լսելի դարձնել նույնիսկ թաքվի հայությանը և նրա խորհրդին:

3. Արցախահայությունը ճնշված է, որովհետև նրա ազգային ինքնավար մարմինները զրկված են բացահայտ գոյություն ունենալու պայմաններից: Նրանք ներկայում կազմալուծված և տարածված են գավառներում: Արցախի Ազգային խորհրդի անդամները միայն սուլթանադակներով են կապ պահպանում Շուշի հետ: Ազգային հասարակական ինքնագործունեության յուրաքանչյուր արտահայտություն դրված է զապանակի մեջ և հսկողության տակ: Արցախի հայությունը այդպիսի ճնշումների է ենթարկվում ոչ միայն Աղրբեջանի իշխանության, այլև անգլիական

Հրամանատարության կողմից, իհարկե, այնշափով, որշափով նա համառում է իր հակաադրեցանական ըմբոստության մեջ:

4. Արցախահայությունը ընկճված է... որովհետև Ադրբեցանի իշխանությունը իր ձեռքում է կենտրոնացրել ֆինանսական բոլոր միջացները և տնտեսապետրական ազբյուրների շրջանառությունը, նեղում, պատին է սեղմում հայկական բոլոր շերտերին, իսկ վերջիններիս վարչական և գինվորական մարմինները զրկված լինելով եկամուտների կանոնավոր և հաստատուն աղբյուրներից... հազիվ քարշ են տալիս իրենց խզճուկ գոյությունը: Դրան ավելացնենք նաև այն, որ ահարեկված հայությունը շդարողանալով ազատորեն կատարել իր հողային աշխատանքները, պիտի կրկնակի տուժի ու տնտեսապես խեղճանաւ: Դեռ շենք խոսում թուրքերի կողմից հայտարարված տնտեսական այն բոյկոտի մասին, որը գոյություն ունի մայիսի վերջից ի վեր:

5. Արցախահայությունը անպատրաստ է; որովհետև նա կարող է տալ... միայն 2000 զինված մարդ, որոնցից լուրաքանչյուրն ունի 70—80 փամփուշտ: Ըստ տեղեկությունների, գյուղացիները զինված են հին հասարակ սիստեմի հրացաններով: Ահա Արցախի այդ անպատրաստ ու անկազմակերպ ուժերը կանգնած են Ադրբեցանի մեծաթիվ ու կանոնավոր զորքերի, կամավորական խմբերի և լիովին զինված մուազման ազգարնակլության գեմ...»

Ամենագլխավոր հանգամանքը, որ արցախահայությանը նետել է հուսահատության դիրքը, դա այն է, որ նա այլևս դրսից ոչ մի օգնություն չի սպասում, մյուս կողմից էլ անգլիացիները կոտրել են հայերի ամեն մի հույս ու հավատ: Մինչև հունիսի 4—5-ի դեպքերը Արցախի հայերը կարծում էին, թե անգլիական հրամանատարությունը պահանջելով ճանաշել Ադրբեցանի իշխանությունը, բարոյական սպասնալիքի սաղրանքներից դենք չեն անցնի և ոչ մի դեպքում թույլ չեն տա արյունահեղություն ու կոտորած: Իսկ հիմա արցախցիները լիովին հիանափակվել են և ստիպված են իրենց գլխի ճարը տեսնել սեփական ձեռներեցությամբ...»

ՀԽՄԹ—ՀՀ ՀՔԿՊԿ, գ. 4033, ց. 5, գ. 561, թ. 168—172, ձեռապիր, սկզբնապիր:

1. Եռոք վերաբերում է Ադրբեցանի Հանրապետության ազգությամբ հայ նախարարներին:

2. Յան Եռյակին 1919 թ. առանձին գրակեցնում էր Ադրբեցանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնը:

3. 1919 թ. հունիսի 4—5-ը Արցախամ տեղի ունեցած արյունահեղությունները ստուգելու համար Ադրբեցանի խորհրդարանի կողմից այնուղ է ուղարկվում մի հանձնաժողով բաղկացած խորհրդարանի անդամ մի քանի հայերից և թուրքերից:

Լույսը նոր բացված՝ Աղդամ իշնող հայ գյուղացիների տուտը բացվեց: Նրանք գալիս էին անվերջ շարաններով, կային և մեծ թվով կանայք՝ ստաբորիկ, ցնցոտիններով: Ո՞վ էր տեսել, որ հայ կինը Աղդամ գար գնումներ անելու: Բայց այժմ սովոր ստիպում էր, և նրանք եկել էին՝ որը բաւկված իսուրջինով, կամ մի քանի հոգի մի էշ վարձած: Շուտով պարզվեց, որ թուրքերը տնտեսական բոյկոտ են հայտարարել և հայերին ոչինչ չեն տալիս, ով կարող էր՝ ծածուկ մի քիչ բան էր առնում ու շտապում Աղդամը թողնելու, որովհետև մթնոլորտը ծանրացել էր... Աղդամում շուտով մի բան էլ պարզվեց. այս կամ այն թուրքը հայի ձեռքից խում էր նրա էշը, ծին և եղբ, պնդելով, թե իրենն է եղել և հայը ժամանակներ առաջ գողացել է: Բողոքողը ծեծվում էր, և բողոքը իսկի տեղ էլ չեր հասնում...»

Ասկերանում թուրք պահաներն ինձ կանգնեցրին, հարցուփորձ արին և բաց թողեցին: Սիրտս պայման էր վշտից, Ասկերանում՝ թուրք պահանհկ... Այն Ասկերանում, որ կանգնեցնում էր ամբողջ թուրքական գրունները, որ հաստատող պատվարի նման Հայկական Ղարաբաղը գրանցնում էր անմատչելի և որից թուրքերը այնքան էին վախենում, որ Ասկերանից անցնելը տղամարդկություն էին համարում:

Խոշալվում վարժեցնում էին նոր հավաքած ասկյարներին, իսկ եան-

*1919 թվականը արցախահայության պատմության մեջ ամենասպեկտական շըրշաններից մեկն էր: 1918 թ. նոյեմբերին Արցախ մտած անգլիական գաղութարարների ամենաակտիվ օնությամբ մուսավաթական Ազգային բարեկամությունը ամենագեցնելու ընթացք Արցախը:

Արցախահայության ազատագրական պայքարին օնություն ցուց տալու նպատակվ թարգմի հայոց Ազգային խորհուրդը հայրենի Արցախի և ուղարկում Միասնական Դարրիելի Տերականին (գրական կեզծանունը՝ Արամայիս, ծնվել է 1912 թ. Փիրզամալ գյուղում, մահացել է 1954-ին՝ Աթայի երկրամասում): Արամայիսը գրող էր, հաստատական բարձրի: Հայտնի էր, որ նա զենքը ձեռքին մարտնչել է Արևայտան Հայաստանում թուրքերի գեմ և Արցախում՝ թուրք-թաթարների գեմ:

1919 թ. ապրիլի վերջին մինչև նոյեմբերի թվականի հունիսի սկիզբը Արամայիսը լինելով Արցախում, պահել է օրագիր, որը նոյեմբերի թվականի գեկետներին ուղարկել է կեսոյն: Այն վերաբերյալ է «Ղարաբաղի ողբերգությունը (համառու նյութեր պատմության համար)»: Այդ օրագրից բերդու հատվածներում պահպանվել է հայերին գրելաձեզ, միայն կատարել ենք մասնակի շակումներ և ավել որոշ բացատրություններ:

քենդ ավանի զորանոցը արդեն դարձել էր Աղբբեշանի զորքերի զորանոց...
Փամբ 11-ին հասա Շուշի: Տեղեկացա, որ համագումարի¹ վերջին
նիստը պետք է տեղի ունենա երեկոյան: Օգտվելով հանգամանքից, որ
ցերեկային նիստը դեռ շարունակվում է թեմական դպրոցի դահլիճում,
ուղղվեցի դեպի այստեղ:

Համագումարը հավաքվել էր պատասխանելու գեներալ Շատելվոր-
դին²:

Այդ գեներալը տարօրինակ դիրք էր բռնել դեպի Ղարաբաղն ու Զան-
գեղուրք... Նա վճռել էր, ինչ զնով էլ լինի, 300.000 հայության դնել նո-
րածնունդ Աղբբեշանի լծի տակ՝ Հայաստանը զրկելով մի ընդունակ,
առողջ տարրից...

Ապրիլ 28

Համագումարը ցրվելու էր պատրաստվում, երբ կեսօրից հետո թաք-
վից Շուշի եկավ Հայաստանի Հանրապետության զինվորական ներկայա-
ցուցիչ Միշա Արգումանյանը՝ անգիտական միսիային կից լինելու...³

Արգումանյանն ինձ ասաց, որ... իրեն ներկայացուցիչ նշանակելու դեմ
Սուլթանովը⁴ Աղբբեշանի կառավարության միջոցավ բռղոքել և խնդրել
է, որ նշանակեն ուրիշին...

Ապրիլ 29

Թեև Շատելվորդը հայտարարել էր, թե Ղարաբաղի հայոց Ազգային
խորհրդի գոյությունը այլևս ընդունելի չէ և անգիտական միսիան ոչ մի
հարաբերության մեջ չպիտի մտնի նրա հետ, և չնայած Ազգային խոր-
հրդարար ցրված էր համարվում ու նրա անդամները՝ անձնապես վտանգ-
ված՝ այնուամենայնիվ, Ազգային խորհրդը շարունակում էր իր գործը
վարել անկեզալ կերպով:

Ազգային խորհրդում բոլոր խնդիրների վերաբերմամբ կատարյալ
համեմաշխություն էր տիրում... և կանգնած էր այն տեսակետին, որ
Ղարաբաղը Հայաստանի անքածան մասն է, որ ձգձողական քաղաքա-
կանությունը պետք է շարունակել, մինչև որ արտաքին աշխարհում Ղա-
րաբաղի խնդիրը դրական լուծում ստանա, թեև բոլորն էլ գաղտնի կեր-
պով խոստովանում էին, որ Ղարաբաղի դրությունը վատ է...

Մի ուրիշ բան էլ էր նկատվում. Ազգային խորհրդարանը ամբողջ ուժե-
րով աշխատում էր, որպեսզի հայ-թրքական ընդհարումներ լինեին...

Ապրիլ 30

Այսօր առավոտյան Դիզակի շրջանի հրամանատարի⁵ օգնականից
ստացվեց մի շտափ հաղորդագրություն, թե թուրքերը մեծ ուժերով հար-
ձակվել են Դոլանլար հայկական գյուղի վրա...

Ազգային խորհրդը շտաբին կարգադրում է հարկավոր օգնություն
հասցնել:

Մայիսի 1

...Միշան անգլիական միսիայի ներկայացուցիչ հետ ավտոմոբիլով
ճանապարհվում է Գորիս՝ քոչի խնդիրը հարթելու: Մեզ հասած տեղեկու-
թյունների համաձայն, Զանգեզուրը բացարձակապես մերժել էր քոչը
բաց թողնել Զանգեզուրի ասհմաններից ներս, և այդ հանգամանքը ոտու-
ծերք էր զցել մեր «դաշնակից» անգլիացիներին: Նրանք չէին կարողանաւ մ
հանդուժել, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը համառորին պնդում են Հա-
յաստանին պատկանելու իրենց ցանկության վրա...

Մայիսի 4

Կեսօրին մոտ հրամանատար Լալայանից տեղեկություն ստացվեց,
որ Դոլանլարի վրա կատարվող հարձակումները վերջնականապես հետ են
մղված:

Մայիսի 4

Միշան վերադարձավ Գորիսից: Նրա տված տեղեկությունները ճը-
շող էին... Անգլիացիք դիմում են Ազգային խորհրդին ու պահանջում, որ
քոչը բաց թողնեն, բայց Ազգային խորհրդը մերժում է, հենքելով հա-
մագումարի⁷ կամքի վրա... Քոչը բաց թողնել՝ նշանակում է Զանգեզուրի
թիկունքն անցկացնել զինված թշնամի տարր, որ հարմար բռպեին Զան-
գեզուրը կարող է մեծապես վտանգել: Ոչ քոչը բաց կթողնեն, ոչ էլ
Աղբբեշանի մասին լսել անգամ կուզեն...

Միշային Գորիս ճանապարհելիս պատվիրել էին Հայաստանից Ղա-
րաբաղի համար ուղարկված... մեկ միլիոն երկու հարյուր հազար ուսուլին
բերի, քանի որ նստած են առանց փողի, մինչդեռ Սուլթանովը Ղարաբաղ
է մտել 25 միլիոն ոսուրլով: Նրա համար Աղբբեշանի գանձարանում բաց
է արգում անսահման վարկ: Ղարաբաղը նվաճելու համար զանազան
նշանավոր կետերում նա զինական բռունցքներ է պատրաստում...

Մայիսի 5

Օրբստօրե գրությունը ծանրանում է, ալան-թալանը անց է կացել
շափ ու սահմանից, հայերը շունչ քաշել շեն կարողանում: Բողոքագրերով,
գանգատներով ժանրաբեռնվել է Ազգային խորհրդի գրասեղաններ... Քանի
որ Ազգային խորհրդը անգիտական միսիայի հետ անմիջապես հարա-
բերության մեջ մտնել չի կարող, ուստի գանգատները Միշան էր ներ-

կայացնում... Թայց ոչ մի հետեւանք, կամ էլ պատասխանում են, թե դիմեցեք գեներալ-նահանգապետ Սուլթանովին... Այսպիսի պայման. Ներում ի՞նչ անել, մենք էլ չգիտենք, մի բան միայն պարզ էր, որ Հայաստանի կառավարությունը վերջապես պետք է իր ձեռքն առնի Ղարաբաղի գաւառ և... դիվանագիտական ճանապարհներով կամ այլ կերպ լրածի այդ ծանր խնդիրը:

Այսօր մի քանի նորություններ լսվեց Շուշիում... 1. Շուշի է գալիս ամերիկական միսիան հայերին օգնություն հասցնելու մեծ ծրագրով... 2. Սուզբանովը կարգադրել է, որ գանձարանը հայկական մասից տեղափոխեն թուրքական մասը... 3. Իրբեք Զանգեզորի մերժման հետևանք, Սուզբանովը անգլիական միսիայի հետ խորհրդակցելով, որոշել է... քոչը տեղափորել Ղարաբաղի սահմաններում, այսինքն՝ Ղարաբաղը՝ ենթարկել մորիխի ավերաժության, որովհետև անառունները մորիխի պես Ղարաբաղի հայության արտն ու խոտք պետք է ոչնչացնեն, իսկ ավագակաբարու տարրը զինված քոչվորներին միացած պետք է մտնի Ղարաբաղի հայության մեջ:

Մալիսի Յ
...Սուլթանովը դիմել է անգլիական միսիային, թե հայկական մասում անարխիային վերջ տալու համար կարևոր է... այնտեղ Ադրբեյջանի ասկյարներից շրջիկ պահակներ դնել...

Ստեսական բոյկոտը թեև ոչ ամբողջ թափով, բայց և այնպես զգալի կերպով առաջ է գնում՝ հայերին դնելով նեղ դրության մեջ։ Ղարաբաղի հայությունը պատերազմից բոլոր արհավիրքները տանելուց հետո էլ ենթարկվել է տաճկա-աղբբեշանական ներխուժմանը։ Սակայն նա սոված... կարողացել էր իր քաղաքական ազատությունը պաշտպանել այնքան, մինչև որ անգիտացիք եկել էին ու խանդավառությամբ ընդունվել հայերի կողմից, որովհետև ընդհանուր համոզունքն այնպես էր, թե իրեն անգիտացիների մուտքով վերջ կտանան հայկական տառապանքները։ Սակայն այժմ հակառակն էր ստացվում, թշնամի Աղբբեշանը կուշտ էր, լավ զինված ու անգիտացիների կողմից առանձին հոգատարության առարկա դարձած, իսկ «դաշնակից» հայերը՝ դարձյալ սոված, անզեն ու ենթակա Աղբբեշանի ու անգիտական հրամանատարության շնչման։ Այդ բոլորի վրա էլ՝ բոյկոտ, որը շափագանց նեղ դրության մեջ էր դնում հայերին։

Միշան Երևանից հեռագիր ստացավ ի պատճախան Ղարաբաղի նկատմամբ իր հարցի... Գրված էր, թե Հայաստանի կառավարությունը երբեք, ոչ մի տեղ և ոչ ոքի ոչ մի խոստում չի տվել¹⁰: Դրանով հերքվում էր Շատելվորդի պնդումը, թե իրու Հայաստանը Ղարաբաղը զիշել է Աղըրբեջանին:

Մայիսի 10
Սայրագյուղերից խումբ-խումբ մարդիկ են եկել Ազգային խորհուրդ ու գանգատվում են, թե չեն կարողանում թրքական հրոսակախմբերից շունչ քաշել, որ անհատական սպանություններն ու թալանը վերջ շունեն: Բրիտանական հրամանատարությունը լուսմ է և խոստանում այդ մասին գործել Սուլթանովին, սակայն, ասելով, թե հայերի կողմից յուրաքանչյուր ակտիվ քայլ կդիտվի որպես Մեծ Բրիտանիայի դեմ ուղղված գործողություն: Հստ երկույթին որոշված էր տնտեսական բոյկոտի, շարունակվող ավագակությունների և ալան-թալանի միջոցով խեղճել Ղարաբաղը ու ստիպել, որ նա ընդունի Ազգային խորհուրդը...

Մայիսի 11
Շուշի եկավ գեներալ Շատելվորդը։ Նրա գալուց լավ ոչինչ չենք սպասում։ Համոզված ենք, որ խեղդելու է, և ուրիշ ոչինչ՝ Կեսօրից հետո, ժամը 3-ին, եկավ նաև Իշխան Հովսեփի Արդությանը։ Պարզվեց, որ նա եկել է իրրե Հայաստանի ներկայացուցիչ՝ Ղարաբաղի խնդիրը և Զանգեզուրում քոչի հարցը հարթելու։ Մեր... հրատապ հարցին, թե ի՞նչ է մտածում Հայաստանը Ղարաբաղը փրկելու մասին (ախր զենք, ռազմամթերք, հաց չունենք, Աղքաբեշանն իր թնադանոթներով ու զորաշարժերով, անգլիական միսիան իր եռանդուն պահանջներով մեր հոգին հանեցին...)։ Այսպիսի պատասխանեց, թե կմտածեն... Արդությանի նման պատասխանը մեր սիրտը դաղեց...

Ժամը երեքն անց կեսին Շատելվորդն իր մոտ կամչոց օրդու-
մանյանին: Ժամը 5-ին նա վերադարձավ հուզված ու զայրացած: Նրանց
միջև տեղի էր ունեցել հետևյալ խոսակցությունը,

— Վաղն առավոտյան ավտոմոբիլը պատրաստ կլինի հյուրանոցը առաջ ուղիղ ժամը 7-ին պետք է թողնեք Շուշին ու հեռանաք Թիֆլիս—Երևան

Միշտ սկզբում անակնկալի է գալիս, հետո... զարսացած տակ չ-
լիս.

— Պուգ ինձ աքսորում եք, բայց իսչի՞ զատառագէ՞ չ-է, — վահած վաղաքականության, թե՞ կան ուրիշ պատճառներ:

— Որովհետեւ, — պատասխանում է գեներալը, — դուք ձեզ հետ Հայաստանից փող եք բերել Ղարաբաղում ազիտացիա անելու Աղբքաջանի դեմ և, երկրորդ, երր դուք գնացել եք Գորիս, այնտեղ չեք հայտարարել, թե Հայաստանի կառավարությունը Ղարաբաղը պիտի է Առողջապահութեան

Միշան մեղադրանքի երկրորդ կետի նկատմամբ պատասխանում է.

— Ου Φηρίσιοι μ αγηματική θεωρία της πολιτικής ανάπτυξης στην Ελλάδα, προκειμένου να δημιουργηθεί ένα νέο σύστημα διοίκησης της χώρας.

Այդ ասելով, Երևանի հեռագիրը հանում, ցույց է տալիս Շատելվորդին: Շատելվորդը զայրացած բացական, ում է:

— Հայաստանի կառավարությունը երկդիմի քաղաքականություն է վարում։ Այս խնդրում մեղավորը մահապատժի կարժանանա և առհասարակ Ղարաբաղի շուրջը կատարվող գործերը, որոնք տարվում են անգլիական հրամանատարության ծրագրին հակառակ, կարող են արժանանալ հազարավոր հայերի կյանք։

Արգումանյանը զարմացած մնում է «դաշնակցի» երեսին նայելիս:

— Ես կհեռագրեմ, որ վերադարձող գաղթականներին թողնեն Ղարսում և Նախիջևանում, մինչև... Ղարաբաղը ընդունի Ադրբեջանի իշխանությունը, — շարունակում է Շատելվորդը, — Հայաստանի կառավարությունը ընդունել է այդ, մանավանդ, որ բոլորը ժամանակավոր է, մինչև որ Խաղարար կոնֆերանսն իր վճիռը կտա...

Պարզ տեսնում ենք, որ անգլիական հրմանատարությունը կառչել է Ղարաբաղի կոկորդից և ի գանկանում բաց թոռնել:

Մայիսի 12

Քանի գնում, դրությունն ավելի է ծանրանում... Ղարաբաղի հարցում Հայաստանի կառավարության բոնած դիրքը ինձ միանգամայն ապշեցրել է... Աղրբեջանը շի խնայում միլիոնները, փողը հոսում է զրի պես, կաշառվածները վիստում են ամեն անկյունում, իսկ մենք փող չունենք, որ սպային հացի փող տանք...»

Մեր Կողքին Աղբեկչանն ամեն օր ուժեղանում է... Արդեն կազմակերպված զորք ունի... ռազմամթերքի անհուն պաշար, Խանքենդում՝ թնդանոթներ, Շուշիում՝ գնդացիրներ, Ասկերանում՝ գնդացիրներ, ոտից գլուխ զինված թրքություն և այդ բոլորի վրա ավելացրած հացի առատություն, ճանապարհների ազատություն ու... անգիտական հրամանատարության շափականց բարեհաճ վերաբեռնումը:

Ծատելվորդն ու Արդությանը վաղը պետք է գնան Զանգեզուր՝ բոյի

Մայիսի 13

...Որ անգիտական հրամանատարությունը... որոշել էր Ղարաբաղը շռպեցնել, դրանում ոչ մի կասկած չկա: Ճանապարհները՝ փակ, ալանքալանը՝ ամենասովորական երևոյթ, բոյկոտը մեզ խեղդելիս... Մի՞թե Գերմանիային տապալող, Դարդանելը պատող Անգլիան պիտի վախենար ինչ-որ նորածին Ադրբեջանից և մի՞թե միայն մի անգամ անգիտացի ներկայացուցչի ոտն սպառնորեն գետնին զարկելուց չէին բացվի ճանապարհները, չէր կերանա բոյկոտը, ժակուծուկերը չէին մտնի բոլոր թալանշիները Սովորանովի հետ միասին: Եվ եթե Շատելվորդն ու մյուսները այդ չէին անում, ապա պարզապես նրանց ընկերակցում չին...

Umweltwiss. 15

Ծատելվորդը զերադարձավ Գորիկից... Տեսնողներն ասում են, որ շատ թթված դեմք ուներ: Նրա հետ Գորիս գնացող անգլիացի սպաններից մեկն ասել է, թե ճանապարհին, Տեղ գյուղի մոտ, հայկական մի գորաբաժին, թվով 50 հոգի, փակել է Ծատելվորդի ճանապարհն ու չի թողել առաջ, անցնելու, մինչև որ կարողացել են համոզել:

Սուլիմանովի հետ տեսնվելուց հետո Շատելվորդը մի թուղթ ուղարկում Միշա Արզումանյանին՝ պատվիրելով, որ առավոտյան ժամ 7-ին թողնի Շուշին...

Umwelt 1

...Ժամը 9-ին Շատելվորդից մի տուսակ ստացվեց, որով Միջայի կանչում էր իր մոտ կեսօրից հետո, ժամը երկուան անց կեսին... Երե կոյան... եկավ Միջան ու պատմեց, որ... Շատելվորդը պնդում է, ո ինքը պետք է անպայման հեռանա... .

Դրությունը մղձավանշային է: Մայրագլուղերում Հայերը շունչ քաշը շեն կարողանում, շարունակ դիրքեր են պահում՝ զրկվելով դաշտայի

աշխատանքներից, Սանր պայմաններում են նաև սահմանամերձ թուրք գյուղերը, որոնք հայերից վախենալով չեն կարողանում դաշտ դուրս գալ: Աղբյուջանական գրգռիչները անվերջ զբաղված են թույն թափելով. և թրթական մասսան որքան հլու է իրենց բեկերին...

Այսօր բռղոքներ գնացին անգլիական միսիա, բայց Շատելվորդը լընդունեց, առաջարկելով դիմել Սուլթանովին: Եթե ուզմամթերք ունենայինք, մենք գիտեինք, թե ում պետք է դիմել, բայց... Պատարկ ձեռքբորդ ի՞նչ անենք... Անզոր կարողությունը խեղուում էր մեզ...

Uwzjpwk 19

Առավոտյան ժամը 7-ին Միջա Արգումանյանը իր քարտուղարի հետ (Գովա Տեր-Օհանյան) դուրս եկավ Շուշուց... Պարզ է, իհարկե, թե նրա հեռանալով թուրքերը որքան կրեթևանան և որքան կճնշվեն հայերը:

Մայիսի 29

Բոյկոտը սարի պես ծանրացել է Ղարաբաղի վրա և խեղդում է տընտեսապես։ Ժողովուրդը մնացել է շշմած... Առհասարակ նկատելի է, որ Ղարաբաղում անգիտացիների բռնած դիրքը տանում է դեպի արյունահեղության։

Արդությանի միջամտությունը ևս դրական ռչինչ շավեց։ Բոյկոտի նկատմամբ «այնտեղ» պատասխանեցին, թե դա Ադրբեյջանի ներքին գործն է։

Մայիսի 21

Արդությանն էլ այսօք ճանապարհվեց դեպի Թիֆլիս—Երևան, և մենք, առաջպատճեն մասն մնացինք մենակ՝ ապավինած միայն մեր նիհար ուսերին. Հույս շունենալով, թե գրսից շուտով որևէ միջամտություն կլինի Ղարաբաղի դրությունը մեղմացնելու Արդությանը իր աշքերով տեսավ մեր ծանր կացությունը...

Uwježdzieć 23

Գավառներից ներկայացուցիչներ էին եկել լովել Ազգային խորհուրդ և խորպատմ էին մի ժամանելու:

— Այլևս այսպիս շարունակել չենք կարող, — պնդում էին նրանք, — կամ վերջապես կորիվ հայտարարեցինք, թող կովեն, ինչ էլ լինի, կամ որևէ համաձայնություն կայացրեք: Ոչ հաց ունենք, ոչ հալալ ջուր: Դյուղից գյուղ անցնել չենք կարող: Մինչև ե՞րբ պետք է այսպիս ձգձգվի, ի՞նչ է անում Հայաստանը...

Մայիսի 21
Բոյկոտի սարսափելի ծանրությունը, անգլիացիների բռնած դիրքը,
Սովորականովի սատանայական դավադրությունները Ղարաբաղի շուրջը
օդը հեղձուցիչ էին դարձրել... Գավառից եկածները... խնդիրը կարով
կերպով դրին:

— Բոլոր պատասխանաւովությունը մեզնից զարցանուզ, այսուհետեւ որ եթե բոյկոտը շփերացվի, մենք էլ քուը շպիտի բաց բողնենք...
Հարկավոր է դարձյալ շարունակել անիծված «ձգձգողական քաղաքականությունը»:

Մայիսի 25

Այսօր առավոտյան լուր ստացանք, թե թուրքերը Սազի կամրջը սպանել են մի հայի ու տարել նրա գենքերը: Միևնույն ժամանակ հաղորդեցին, թե Փահլուր գյուղի շրջակայթում վխտում են բազմաթիվ զինված թուրքեր, որոնք դարձն մտած թալանում են ձեռքն ընկած հային, հայտարարելով, թե իրենց պատվիրված է անխնա թալանել պատհող հայերին, առանց սպանելու... Մայիսի 2

Մայիսի 2

Ամերիկյան միսիան էլ մեր բախտից է եկել. մի կողմից էլ նա մեզ նեղացնում, ցանկանում է կարիքավորներին տրվելիք մի կոռհացի մեջ անպայման քաղաքականություն մտցնել, ադրբեջանակագործության առաջ տանել և, ինչպես ասում են, Շատելվորդի ազգեցոթյան տակ...

Մայիսի

...Այսօր մեր սուբհանդակը լուր բերեց, թե քովզ արդեն Ասկերանի անցել ու բարձրանում է վերև։ Ազգային խորհրդի հրահանգի համաձայն համերու պատուին հանգիստ են պահում իրենց։

Մենք հաստատ աղբյուրներից գիտեսք, որ այդ մասունքը կազմակերպողն Աղքաբեշանն է, իսկ զեկավարողը՝ Քյազիմ ֆաշշան։ Ամասին գիտեր և անգլիական միսիան։ Խնչպես մենք, նույնպես և այլ լիացիները տեղեկություն էին ստացել, թե Էնվեր բեյը գտնվում է Սանկովի կայսարականությունում, կամ Հաջիսանլվում...

...Դիզակից սուրհանդակը շտապ հաղորդագրություն բերեց հրամանատարի օգնականից՝ ուղարկած Ազգային խորհրդին ու անգլիական միավային, որ տաճիկ սպաները Աղբեջանի ասկյարների ու զինված բազմաթիվ թուրքերի գլուխ անցած հարձակում են գործել Խծաբերդ գյուղի վրա: Նա խնդրում էր շտապ գեղորայք ու ֆեղջեր ուղարկել գյուղում տեղավորված վիրավորներին օգնելու համար: Իսկ կռիվը շարունակվում է...

Սայիսի 31
...Ժամը 3-ին տեղեկություն հասավ, որ Խծաբերդի մոտ թուրքերը շարդմել են ու դիակները թողնելով հետ փախել: Շրջանը խաղաղ է, բայց ասկյարների մեծ զորաշարժեր են նկատվում զանազան ուղղությամբ:

Գիշերը բավականաշափ զորք է մտցվել Շուշի ևս... բավականաշափ բրդեր էլ են հավաքվել, իսկ հանքենդու մոտերքը խրամատներ են փորում ուստ սպաների հակողությամբ:

Հունիսի 1
...Մեզ տեղեկություններ հասան, թե նահանգապետի տան շուրջը հաւառմ կա, քաղաքի հայ-թրքական սահմանի ամբողջ երկարությամբ դիրքեր են պատրաստում, ասկյարները գալիս են դեպի այդ դիրքերը և գնացրենք հանում զանազան ուղղությամբ:

Հունիսի 3
Աղբեջանի զարքերը շրջապատել են քաղաքը: Ի՞նչ է Սուլթանովի նպատակը, առառանան գիտե, բայց որ նա դիվային ծրագիր ունի մշակած, բոլորին հայտնի է: Քաղաքի ժողովուրդը իրեն շատ ճնշված է զգում ու անպաշտապան, իսկ գավառին՝ զայրացած:

Ասկյարները իրենց դիրքերը բերել, հասցրել են մինչ Քերծին գլուխ և մոտեցել... հայկական թաղին: Շատերը սարսափած... փախչում են դեպի անգլիական ու ամերիկյան միսիան...

Քերծին գլուխ հանեցինք մեր փոքրաթիվ զինվորներից քսան հոգի՝ Քարին տակ տանող ուղին պաշտպանելու: Այդտեղ հայ ու թուրք պահաներն իրարից բաժանվում են հազիվ 60—70 քայլ տարածությամբ...

Տեղեկացանք... որ բազմաթիվ սայլեր ուազմամթերքով բեռնավորված ճանապարհեցին դեպի Շուշի: Աղդամից նոր զորքեր են մտել Խանքենդ...

Առավոտյան գնացի Ազգային խորհրդի գրասենյակ: Միրտս տիտուր է, շատ պարզ տեսնում եմ, որ ճգնաժամը մոտեցել է, որ հարվածող բռունցքը բարձրացել է մեր գլխին, և մենք հետ մղելու կարողություն չունենք... Եկած տեղեկությունները սպառնալից են: Աղբեջանը լարել է ուժերը... Ղարաբաղը պինդ է կանգնած: Խաչենը և Վարանդայի մի մասն է միայն, որ անզեն են... Վարանդայի մի մասը, Դիզակն ու Զիվանցիը որոշ քանակությամբ զենք ունեն, ուստի և տրամադրությունը մարտական է, զինված մարդու հոգեբանությունն այլ տեսակ է լինում, իսկ երբ զենքը ձեռքից առնում են, նա կորցնում է հոգու հավասարակշռությունը: Ձենք ունեցող գավառները տղամարդու պես պատրաստ էին կուրծք տալու, և եթե գոնե յուրաքանչյուր հրացանին 300 փամփուշտ ունենալինք, բոլոր ճակատներում նախահարձակ կլինեինք, հուսալով, որ նախքան Ղարաբաղի մեռնելը նա մահացու հարված պիտի տա արյուն սիրող թշնամուն: Գոնե դրսից մի հուսադրող ձայն լսեինք...

...Ժամը ուղիղ 10 և կեսն էր: Հանկարծ Քերծի գլխից մի քանի հրացաններ պայթեցին, և դա ազդանշան էր դժոխային գործողության: Կես բոպե շանցած՝ քաղաքի թրքական մասից, ասկյարների բոլոր դիրքերից սկսվեց մի սոսկալի հրաձգություն, որին մասնակցում էին և Սուլթանովի եղբոր... բերած բազմաթիվ կատաղի բուրդ ձիավորները... Խանությունները, որոնք բաց էին, իսկույն կողոպտվեցին: Հայկական մասում ոչ մի թուրք չկար, կարծես նախօրոք զգուշացված՝ նրանք քաշվել էին ներս, իսկ թրքական մասում բավականաշափ հայ մշակներ ու արհեստավորներ կային, որոնց քաղցը ստիպել էր գնալ թուրքերի համար օրավարձով աշխատելու: Նրանք, իհարկե, կմորթվեն... Ժամը 12-ի մոտերքը գնդակոծությունը հասավ աներեակայելի շափերի: Հայերի թաղերում յուրաքանչյուր փողոց տնքում էր թուրքերի անհաշիվ գնդակների տարափի տակ: Պատերին քսվելով՝ ժողովուրդը կամաց-կամաց հավաքվեց վանքի բակը: Ակզրում փափառ ավելի սիրտ առած այս ու այն կողմից ձայներ տարածվեցին, թե իրենք շեն կարող ոչ մի տեղից օգնություն ունենալ...

Արշավիր Թամալյան— Մեր աշխատանքներն ընթանում են ճգնաժամին վիճակում և հիմնականում զրազված ենք ժողովրդի ֆիզիկական գործունը գրիկելու զորժուվ։ Ներկայումս ստեղծված է հետեւյալ քաղաքական դրությունը. բոլշևիկները եկել մատեցել են մեր սահմաններին և ցանկանում են մեր տարածքով անցել զեպի տաճկական սահմանները, որպեսզի նրանց պաշտպանեն անդրիացիներից։ Մենք բավականին ուժ լսնենք պահանջելու մեր անձեռնմխելիությունը։ Հարկադրական նահանջի զեպքում մեր ժողովուրդը ստիպված կլինի իր վերաբերմունքը արտահայտել Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ։ Ժողովուրդը բոլշևիկներին դեմ չէ, սակայն նրանց այստեղից հեռանալու վանդը մեզանից պահանջում է զորամասեր ստեղծել, որպեսզի հետագայում պրովկացիայի զոհ շտանանք-և անհրաժեշտության դեպքում մեր ինքնապաշտպանությունը դնենք իր բարձրության վրա։ Դրությունը թերևս կարողանան գրիկել տեղական բոլշևիկները՝ իշխանությունը իրենց ձեռքը վերցնելով և կարարադը հայտարարելով Խորհրդային Ռուսաստանի մասը, այլ ոչ թե Ազգրեզանի... Հայերի կողմնորոշումը պետք է լինի առաջիկան և ոչ աղրբեջանական։ Այս տեսակետը պետք է պաշտպանի մեր կուսակցությունը և այն առաջարկի համագումարին։ Եթե համագումարը լրնդունի, ապա կառավարությունը պետք է հրաժարական տա։

Թիգիկ Լյալպիկ Տեր-Գրիգորյան— Առանց որևէ օգնության մենք չենք կարող կայուն գրություն ստեղծել։ Հարկավոր է հրավիրել տեղական բոլշևիկներին, խորհրդակցել նրանց հետ, պարզել ամեն բան, նոր միայն որոշում ընդունել, թե ինչ դիրք պետք է բռնել։

Առավածառութ Ավետիսյան — Մեր բոլոր քայլերը պետք է շատ զգուշ լինեն: Արտաքին գրությունը բոլշևիկների համար այնքան էլ նը-պատավագոր չէ: Յուրաքանչյուր պահի կարող ենք հայտնվել մենակ և կանգնել մեծ վտանգի առաջ: Այսպիսի պայմաններում մենք չենք կարող քաղաքական անշատ գիծ գարել: Ռուսաստանից ոչ մի առաջարկություն չենք ստացել... Ներկայիս իրադրությունը պահանջում է, որ մեր կողմնորշումը կռնկրեալ լինի: Ի նկատի ունենալով, որ մենք կարող ենք միշտ վտանգի մեջ լինել քանի որ բոլշևիկները Աղրբեշանի և Տաճկաստանի բարեկամությունից չեն կարող ազատվել և ճշմարիտ բոլշևիկյան կառավարություն ստեղծել, հետեւապես մենք պետք է մեր բոլոր ուժերը լարենք, որպեսզի նոր կյանքը չտեղադրվի հայր գերեզմանի վրա... Իսկ եթե վիճակված է մենակ, ապա պետք է միայն պայքարով մենակ: Հնարավոր է ռուսական զորքը նահանջի և հայր բնաշնչումը արագացնի: Եթե Աղրբեշանը թարգից շարժվի գեղի Գանձակ, այն ժամանակ իր պետական հեղինակությունը բարձրացնելու համար նա կարող է խփել Արցախին և Զանգեզուրին: Թուլլ առնք իրականանա Աղրբեշանի և Տաճկաստանի տարածքների միացումը: Այդ գեղքում Արցախն ու Զանգեզուրը կանչառվեն Հայաստանից և կմնան Աղրբեշանին բռնակցված: Այդ հանգամանքը պետք է ստիպի, որ Արցախ—Զանգեզուրի տարածքը Աղրբեշանից գուրս լինի, որը և նորհրդային Ռուսաստանի պահանջն է: Քանի որ վանկ կա, ուստի այդ կռնկրեալ պահանջին պետք է պատասխանենք՝ մենք ձեզ հետ ենք, բայց ոչ Աղրբեշանի: Արցախահայությունը իր համագումարներում քանից այդ է արտահայտել... Այդ ժամանի վճռականորեն պետք է հայտնենք դրսից եկող սուստ տեսարաններին: Քանի որ Հայաստանը դեմ չէ բոլշևիկներին, քանի որ մեր գրամներն ու այլ պայմանները կապված են Հայաստանի հետ, մենք կարող ենք միայն նրա հետ լինել: Այդ ժամանի պետք է հայտարարել նորհրդային Ռուսաստանին...

Նիկոլայ Խախանեյան — Ներկայումս մեզ համար ամենակարևոր ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանումն է: Իսկ դա մեզնից պահանջում է միանալ Հայաստանին: Դա ոչ միայն սկզբունքային, այլև տակարկական տեսակեալ է... Ստեղծվել է քաղաքական նոր գրություն: Բոլշևիկները մտածել են մեզ: Անարյուն տակարկական տեսակեալը պահանջել ենք տաճիկներից, անդիլացիներից և Աղրբեշանից: Հիմա հարց է առաջանաւ: բոլշևիկների գրությունը կոզմասում ինքանո՞վ կարող է կայուն լինել: Որպեսզի բոլոր պարտգաներում կարողանանք ժողովրդի

ֆիզիկական գոյությունը պահպանենք իշխանությունը և այդ մասին հայտարարելու որպէսներէ բոլշևիկները կարող են ավելի վազ շարժել Արցախի ժողովրդին: Դրա համար անհրաժեշտ է, որ մենք վազօրոք պատրաստ լինենք այդ վիճակի հանդեպ և կանխենք, ուսանց մեր ինքնապաշտպանությունը խթանելու: Դրանում պետք է համոզինք նաև Դրոյին... Փանի գեր բոլշևիկները վերջնականապես շեն հաստատվել Արցախում, քանի գեր շիտեղծված քաղաքական կայսն գրություն, պետք է բոլշևիկներից պահանջել շխախտել մեր ինքնապաշտպանությունը: Պետք է նրանց հիշենել, որ ոչ մի հեղինակավոր մարմին երբեք չի հայտարարել Արցախը Աղրբեշանին կցված, որպէսնեակ նման բան գոյություն չունի: Պետք է ընդունել Արցախը միայն Հայաստանի հետ: Իսկ ինչ վերաբերում է նրան, որ արցախահայերը երբեք չեն ընդունել և ճանաչել Աղրբեշանին, զա պացուցվում է նախընթաց իրադրություններով...

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակավոր կառավարությունը գտնում է, որ ստեղծված քաղաքական այպիսի պայմաններում պետք է ունենալ միայն մի կարևոր ինդիք՝ գրիկել արցախահայության ֆիզիկական գոյությունը: Արցախահայության բոլոր համագումարների ընդունած որոշումները բխել են հենց այդ պահանջից...

Հայ ժողովուրդը, որ միշտ ակնկալել է Ռուսաստանի մեծ հեղափոխությունը, որը բերել է ժողովուրդների ազատություն և սկզբից ևեր պաշտպանել է աղքերի ինքնորոշման գողափարը, ոզդունում է նրա բանի մտանալը Արցախի սահմաններին: Հենց դա էլ ստիպել է, որ հայ ժողովուրդը կարևոր նշանակություն տա իր ինքնապաշտպանության կազմակերպմանը: Հայ ժողովուրդը որոշել է երբեք և ոչ մի պայմանով իր բախտը շկապել նույնիսկ նորհրդային Աղրբեշանի՝ հետև նա պատրաստ է ընդունել քաղաքական այն հասարակարգը, որը ստեղծել է հեղափոխական Ռուսաստանը, միևնույն ժամանակ շարունակելով պվելի ստեղացնել իր ինքնապաշտպանությունը, մինչև կստեղծվի քաղաքական կայսն գրություն:

Ապա որոշվեց արցախահայության հաջորդ՝ 10-րդ համագումարը հրավիրել մայիսի 26-ին:

Նախագահ
Ժարտուզը (սուրագրություն)

1 1920 թ. մարտի նրանքում տեղի ունեցած իրադարձությունները քննելու համար նախահագում էր Թիֆլիսում հրավիրել Անդրկովկասի երեք հանրապետությունների կոնֆերանս:

2 Ազգայիշակամ մասսավարական կառավարության նապալումից հետո հեղկուները և ստեղծում մի շաբթ գտվաներում, այդ թվում և Շուշիում: Հեղկունի նախագահը Սովորովն էր: Այդ հեղկունի անունից պատրաստվում է մի կոչ և ուղարկվում տեղերը, այդ թվում և Արցախի ժամանակավոր կառավարությանը: Խոսքը այդ կոչի մասին է:

Խ. 13

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1920 թ. ապրիլի 29-ին, գյուղ
Մարտակերտ

Կայացավ Խաչենի, Զրաբերդի և Գյուլիստանի հայ գյուղացիության համագումարը: Հիշյալ երեք շրջանների 70 գյուղերից համագումարին օրինական մանդատներով մասնակցում են 62 պատգամավոր: Մտուցիչ հանձնաժողով է ընտրվում ստուգելու պատգամավորների մանդատները, որի կազմում ընտրվում են 3: Երիցյանը, Արշ. Հովհակիմյանը և Համբարձում Աղարարյանը: Հանձնաժողովի զեկուցումից երևում է, որ Զրաբերդի 38 գյուղերից համագումարին մասնակցում են 34 գյուղերի պատգամավորներ, Խաչենի 19 գյուղերից՝ 16 և Գյուլիստանի 13 գյուղերից՝ 13, բոլորն էլ օրինական մանդատներով: Հանձնաժողովի զեկուցումը լսեցուց հետո համագումարը որոշում է իրեն իրավազոր համարել և անցնել նախագահության ընտրության: Բացարձակ մեծամասնությամբ նախագահ է ընտրվում Ար. Վերդիյանը, քարտուղար՝ Յ. Երիցյանը: Նախագահը բաց անելով համագումարի նիստը, զեկուցում է, որ ներկա համագումարի նույնական է Թիֆլիսում կայանալիք կովկասյան հանրապետությունների կոնֆերանսին ուղարկել մի ներկայացուցիչ:

Համագումարին առաջարկվում է նաև հետեւյալ օրակարգը: Հայաստանի և Աղրբեշանի հանրապետություններից որի՞ կողմնորոշումն ենք ընդունում:

Մտքերի և կարծիքների փոխանակությունից հետո համագումարը միաձայն որոշում է ընդունել Հայաստանի Հանրապետության կողմորոշումը և ոչ մի դեպքում ոչ մի պայմանով շենթարկվել Աղրբեշանի... կառավարությանը: Այնուհետև անցնում են ներկայացուցչի ընտրությանը: Առաջարկվում է ներսես նախիրյանի թեկնաժողությունը: Ներսես նախիրյանը առաջարկում է ընտրությունը անցկացնել փակ-գաղտնի: Գաղտնի

թիւարկությամբ ներսես նախիրյանը 59 ձայնով ընտրվում է սրպիս Խաչենի, Զրաբերդի և Գյուլիստանի գյուղացիության ներկայացուցիչ Թիֆլիսում կայանալիք կովկասյան հանրապետությունների կանֆերանսին մասնակցելու և ներկայացնելու համագումարի քաղաքական իշխանությունը կազմում է մատիկ անցյալին անցուգարձի ընդհանուր քաղաքական պատկերը: Ինչ բանագոր և թիւ գրավոր: Համագումարը ավելորդ չի համարում սույն արձանագրությանը կցել այն աղաղակող փաստերը, որոնք հիմք են ծառայում անընդունելի համարել Աղրբեշանի հակաժողովրդական-հակահայկական տիրապետությունը Արցախի հայ ժողովրդի վրա: Աղրբեշանի կառավարությունը խախտելով Արցախի հայության 7-րդ համագումարի հետ կորած համաձայնության էական կետերը, միշտ էլ ցուցաբերել է ազբիկի, հակահայկական քաղաքականություն:

1. Հայկական տարածքով գեպի Զանգեզուր զորաշարժ է կատարել առանց գեն. նահանգապետության կից խորհրդի գիտության և համաձայնության, ճանապարհներին մարդկանց լծել են ասյլերին, հափշտակել ձիեր, գոմեշներ և եղներ, կատարել ավերումներ:

2. 7-րդ համագումարից հետո 3—4 անգամ ուժեղացրել են Խանքենդի և Շուշու զորամասերը, ծանրաբեռնել հայ աշխատավորությանը և տներում և բարի կերուխում սարքելով և կանանց բռնաբարելով, դրանով իսկ անհար դարձրել հայ կանանց փողոցներով անցուղարձի:

3. Քանիցս գավառապետի և մի ումն ենթագնդապետ Տունգինի ու նահանգապետի օգնական Քալանթարյանի միջոցով պահանջներ են ներկայացվել Մարգուշավանում (Ցուզաշն) զորամաս կենտրոնացնելու համար...

4. 7-րդ համագումարի հետ կնքած համաձայնությամբ փոխանակ թուրքերի ձեռքով ավերված Զայրալիշեն, Կրկժան, Պուլանլար և այլ գյուղերի վերականգնելու, ընդհակառակը, Խանքենդի և Զամիշլուի հայության դեմ այնպիսի սոսկալի ուժ ստեղծվեց, ըստ որի թույլ չէր տրվում ոչ զեմ այնպիսի սոսկալի ուժ էլ ունեցվածք վաճառել: Վերջում էլ կոտորածի, ալան-թաղթել և ոչ զեմ ունեցվածք վաճառել: Վերջում էլ կոտորածի, հանապետությունը բարեւ—Շուշի ճանապարհը և անհարին դարձավ Խաչենից, Զիվանշիրից և Վարանդայից քաղաք գնալը: Խորնիկական դարձավ այսուղղ-այսուղ հայ ճանապարհորդներին տասնյակներով կոտորելը, հայկական շարդեր (գենոցիդ) սարքելը (Խանքենդ, Շուշի, Աղդամ, Թարթառ...):

5. Ըստ համաձայնության փոխանակ հայ գաղթականների կարիքները հոգալու, ստեղծվեցին գաղթականների նոր շարաններ, հայ գաղթականների համար բաց թողած գումարները իրենք վատնեցին և ծախսեցին:

Թուրք գաղթականների համար, գրանով իսկ ատելություն և թշնամություն ստեղծելով երկու հարեանների միջև:

6. Այդ բոլորի արդյունքը եղավ այն, որ թուրք ժողովրդին հաճույք պատճենելու համար, բայրամի օրը, մարտի 23-ին, մեծ տան կատարեցին՝ Շուշին ավերելով, հազարավոր մարդկանց թրատելով և հայ կանաց ու աղջիկներին զորքին նվիրաբերելով։ Նրանք թնդանոթների և զեղացիրների տարափի տակ այրեցին և ավերեցին հետեւյալ քանակությամբ տներ-եալենում։

1. Խանածախ-150, 2. Ջամիշլու-20, 3. Ղլիշրաղ-210, 4. Բալուչա-220, 5. Մելաշեն-70, 6. Խրամորթ-90, 7. Խանարադ-230, 8. Քարագում-110, 9. Նորագուղ-190, 10. Մարգարաշեն-145, Զրաբերդում՝ 1, Ղազան-մ-70, 1. Մարաղա-210, 3. Մարգուառան-75, 4. Ներքին Գայլու-80, 5. Վերին Գայլու-110, 6. Բալիշ-300, Հիշատակված գյուղերի բնիկ տեղական ժողովրդից զատ 1917 գաղթած և բնակություն հաստատած բացի հիշատակած գյուղերում՝ Բրուզում, Ղևան-Արխում և Դամիրլատում, 7. Մարտզ-300, Մարաղա-60, 9. Ղահրիլար-65, 10. Հասան-Ղալա-100, 11. Սովուզան-60, 12. Երմջան-12, Գյուլիստանում՝ 1, Մանասի Շեն-700, 2. Ղարաշինար-240, 3. Գայրութ-45, 4. Խարիսափոր-60, 5. Ներքին-Շեն-150, 6. Վերին Շեն-250, 7. Պարիս-90, 8. Էրքեշ-170, 9. Արլաթ-70, Բոլորը թողանի և կրակի մատնեցին...

(Այսուհետև հաջորդում են բոլոր 61 պատճամավորների ստորագրությունները—Հ. Ա.)

Նախագահ՝ (ստորագրություն) Ա. Վերշինս
Քարտուղար՝ Յ. ԵՐԻՑՅԱՆ

ՀՄԴ—22 ԿՊԿ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 191—192, ներկայի, պատճեն։

№ 14

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1920 թ. մայիսի 14-ին Տող գյուղում տեղի ունեցած Դիզակի շրջանի հայ գյուղացիության համագումար, նախագահ՝ նիկոլայ Տեր-Գրիգորյան, քարտուղար՝ Նորայր Մովսիսյան։

Համագումարին ներկա էին Արցախի ժամանակավոր կառավարության ներկայացուցիչներ Նիկոլայ Խախանյանը և Արսեն Տեր-Հովհաննիսյանը։ Նրանք հաղորդում են տալիս Ադրբեջանի վերջնագրի մասին,

որով Արցախի հայությունից պահանջվում է հնիթարկվել Ադրբեջանի կապարությանը։

Ամսա հաստատվում է օրակարգը.

1. Քաղաքական դրությունը.

2. Ընթացիկ հարցեր։

Հստ էության քննարկվում է հետեւյալ խնդիրը՝ արցախահայության վերաբերմունքը Ադրբեջանի և Արարատյան կառավարությունների նկատմամբ։ Պատգամավորները իրենց ելույթներում շեշտում են, որ Ադրբեջանի ուղարկմատումը սոսկ մի պատրվակ է հայի գլխին նոր պատուհան սարքելու համար։ Նրանք պահանջում են ընդունել միայն Արարատյան կառավարությանը որպես մեր հարազատի և Զանգեզուրի հետ միասին մտնել նրա կազմի մեջ։

Միաձայն ընդունվում է հետեւյալ բանաձեկը.

Լսելով Արցախի ժամանակավոր կառավարության ներկայացուցչի կեկուցումը քաղաքական դրության և Շուշիի հեղկոմից ստացված գրության մասին, Դիզակի հայ գյուղացիության շրջանային համագումարը

1. ի նկատի ունինալով այն, որ Ադրբեջանում տեղի ունեցած վերջին փոփոխությունները անիշխանություն է և չի կրում բոլշևիկյան բնույթ, այլ պանխամական,

2. որ Ադրբեջանի նախկին կառավարության ղեկավարներ աղալար-ներն ու բեկերը անպատիժ մնացել են իրենց պաշտոններում,

3. որ Ադրբեջանի խորհրդային կառավարության գլուխ կանգնած են նախկին կառավարության քաղաքականությանը հետեւղ անձնավորությունները, որոնք առաջին հերթին դնում են Արցախ—Զանգեզուրի հարցը,

4. որ այդ հեղափոխությունը կատարվելուց հետո էլ այստեղ պահանջում են դիրքերը և լսվում հրացանների ու հրանոթների կրակոցներ, սուզթանովներն ու նորի փաշանները դեռևս գտնվում են իրենց պաշտոններում և քաղաքում մնացած հայերի նկատմամբ շարունակում են բըռնությունները,

ՎՃՌԵՑ

1. Հավանություն տալ Արցախի ժամանակավոր կառավարության կողմից Շուշիի հեղկոմի կոչին տրված պատասխանին.

2. Այսուհետև նման խնդիրների լուծումը կատարել ոչ թե անշատ ու առանձին, այլև Հայաստանի Հանրապետության հետ միասին։

(Ապա հաջորդում է համագումարին մասնակցած 42 պատգամավորների ստորագրությունները—Հ. Ա.)

Դրակի շրջանային համագումարի նախագահ՝ (ստորագրություն)

Շարտուղար՝ (ստորագրություն)

ՀԱՅԹ - ՀՀ ՀՊԿ 49 Ա, Տ. 4023, Տ. է, Գ. 461, Բ. 90-92, ձեռագիր, սկզբնագիր:

Խ 15

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1920 թ. մայիսի 14-ին Հաղորդի գյուղում տեղի սևեցավ Վարանդայի գյուղացիության համագումարը Արցախի ժամանակավոր կառավարությունից ներկա էին Արշավիր Քամալյանը և Հարություն Թումյանը: Երշանի 36 գյուղերից համագումարին մասնակցում են 51 պատգամավոր, որոնցից մանդատներ ունեն 30-ը:

Համագումարի նախագահ է ընտրվում Արամ Բաղդասարյանը, քարտուղարներ՝ Ակերտան Քոչարյանը և Դանիել Առաքելյանը:

Քննարկում են հետևյալ հարցերը:

1. Զեկուցում արտաքին քաղաքական գրության մասին.
2. Զեկուցում ներքին քաղաքականության մասին.
3. Պատգամավորների հաղորդումներ.
4. Հազարում Արցախի կառավարության գործունեության մասին.
5. Էնթագիկ հարցեր.

Արտաքին քաղաքական գրության մասին զեկուցում է Արշավիր Քամալյանը: Նա հայտնում է, որ ամսի 6-ին Շուշիի հեղափոխական կոմիտեից (անկու) ստացվել է երկու կոչ. մեկը ուղղված Արցախի կառավարությանը, իսկ մյուսը՝ Արցախի աշխատավոր գյուղացիությանը: Հեղափոխական կոմիտեն հայտնում է, որ Ադրբեյջանում տապալված է մուսավագական կառավարությունը և կազմվել է Խորհրդային Ադրբեյջան, որը և ճանաշվել է Խորհրդային Խուսաստանի կողմից: Հեղափոխական կոմիտեն առաջարկում է տապալել զաշնակցականների կառավարությունը, կազմել խորհրդային իշխանություն և Խորհրդային Ադրբեյջանի հետ միասին միանալ Խորհրդային Անառողիային... Հեղեղումը նաև հայտնում է, որ կամավորական բանակը ցրված է և, ըստ տեղեկությունների, կարմիր բանակը մոտեցել է Ադրբեյջանի և Վրաստանի սահմաններին: Այդ երեսույթին իր ազդեցությունն է ունեցել Ադրբեյջանի ներքին կյանքի վրա: Բարգում իշխանությունն անցել է տեղական բոլշևիկների ձեռքը, իսկ Ադրբեյջանի մյուս վայրերում, առանց հեղաշրջման, հաստատվում են

իսրբեցային կարգեր, որոնց մասնակցում են Ազրբեյջանի հին պաշտոնական ինքները և ներկայացուցիչները, ինչպես, օրինակ, Սուլթանովը Շուշիում: Մենք ենթագումար ենք, որ դա ժամանակավոր երևույթ է: Ազրբեյջանի զեկավարները բոլշևիկ անվան տակ ցանկանում են օգտվել ստեղծված հանգամանքից և իրազործել իրենց հին իմպերիալիստական և պանիրայական ծրագրությունը: Մենք պետք է զգույշ լինենք և սպասենք մինչև այն ժամանակ, եթե Արցախի սահմաններին կմտնենան Ռուսաստանի հեղափոխական կառավարության ուժերը: Այս ամենն էլ հիմք է ծառայել կազմարության պատասխանի համար:

Այսուհետեւ խոսում է Հարություն Թումյանը, որը նշում է, թե մենք զպետք է հավատանք ներկայիս թաւրք բալշևիկներին, որոնք բոլշևիկ անվան տակ մտադիր են իրագործել իրենց պանիրայական ծրագրությունը: Նա հայտնում է, որ Բարձրում կազմված խորհրդային կառավարության առաջին գործն է հանդիսացել վերջնագիր ներկայացնել Հայաստանի Հանրապետությանը և պահանջել վերջինս Արցախի և Զանգեզուրի սահմաններից գործ բերի իր ուժերը, որովհետև իրեք Արցախն ու Զանգեզուրը կազմում են Ազրբեյջանի անրաժան մասը և առաջիկայում պիտի միանան Ազրբեյջանի և ապա՝ Խորհրդային Անառողիայի հետ: Այսպիսով, Թուրքիայի նպատակն է Կազմականից մինչև Պոլիս կազմել մի մեծ սամանյան պետություն՝ ոչնչացնելով այդ երկրի մեջ ընկած Հայաստանը:

Այսուհետեւ արտահայտվում են մի շարք պատգամավորներ, որոնք պաշտպանում են կառավարության տվյալ պատասխանը:

Բոլշևիկ պատգամավորները հայտարարում են, թե իրենք չեն հավատանք Ազրբեյջանի ներկա խորհրդային իշխանությանը, որովհետև խորհրդային կառավարության մեջ տեղ չգտնուի ունենան սովորական նման հայակերները:

Քվեարկության է դրվում Արցախի կառավարության Շուշիի հեղկոմին տվյալ պատասխանը: Այն ընդունվում է միաձայն:

Պատգամավորները այնուհետև տեղեկություններ են հաղորդում իրենց գյուղերից: Նրանք բոլորն էլ ընդգծում են այն հանգամանքը, որ գյուղերում դեռևս իշխում է որոշ մարդկանց կամայականությունը, մանավանդ պարենավորման գործում: Գյուղացիները զգիտեն, թե որի պատասխանը տան: Նրանք հայտնում են, թե գյուղացիները պարտավոր են տալու իրենց վերջին կտոր հացը: Հաճախ պատահում են գեպքեր, եթե գյուղին միաժամանակ պահանջ են ներկայացվում մի քանի զորամասերի կողմից: Նրանք նաև հայտնում են, թե շատ վայրերում զորահավաքը կատարվում է այնպիսի ժամանակ, որը խանգարում է գյուղական աշխատանքներին:

Համագումարը կառավարության ուղարքությունը հրավիրում է այն բանի վրա, որ պյուղացիները խիստ կարիք ունեն նավթի, օճառի, կտորեղենի, աղի և այլ անհրաժեշտ մթերքների:

Հարություն Թումյանը պատգամավարներին առաջարկում է քիքնաց-նել գաղթականների ծանր դրությունը և իրենց վերջին կտոր հացը բաժա-նել նրանց հետ:

Համագումարի մասնակիցները ցանկություն են հայտնում, որ կառավարությունը հնարավորության սահմաններում հաճախակի հրավիրի Արցախի աշխատավորների համագումարներ և ժողովրդին իրազեկ պահի քաղաքական կարեռագույն հարցերի մասին:

Նախագահ՝ Ա. ՔԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Քարտուղար՝ Ա. ՔՈԶԱՐՅԱՆ

ՀԱՐՔ - ՀՀ ՀՊԳՓԿԱՆ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, մ. 64-65, ձեռագիր, սկզբնագիր:

N 16

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ 20-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ
ԽՈՐՀՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԱՏԱՐՁԱԿՆԵՐ**

ԱՐԱՇՎԻԼԸ

ԷՂԻՄ-Ը Աղրբեշանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ
հանձնելու համար Աղրբեշանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ գերազավայր
խորհուրդների առջև միջնորդելու մասին

20 գետրվարի 1988, Ստեփանակերտ

Հեկով և քննարկելով ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ խորհրդի դեպուտատների ելույթները և ՂԻՄ-ը Աղբբեշանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու համար Աղբբեշանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդների առջև միջնորդելու մասին», ժողովրդական դեպուտատների և եռային Պարաբաղի 20-րդ գումարման մարդացին խորհրդի արտահերթ նստաշրջանը ուղղում է.

Ընդուածքների կազմություններին, խնդրել Աղքարեցանական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին խորն ըստոնման զգացում դրսևորել կեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել կազմությունը Աղքարեցանական ԽՍՀ-ի կազմից

Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ՝ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Աղբյուշանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը:

ՀԱՅԹ - ՇԽՈՐՀԱՎԱՐԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ, 21 ԳԵՂՄՐՎԱՐԻ 19

M 1

ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ 20-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ
ԿՈՐՀՐԴԻ 1988 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԽՍԱՇՐՁԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

**ՄԱՐԶՈՒՄ ՍՏԵՂԾՎԱՇ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԻ ԿԱՅՈՒՏԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հեռնային Ղարաբաղի հնքնավար Մարգի ժողովրդական գեպուտատ-ների խորհուրդը ուղղեց.

1. Ղեռնայինն Ղարաբաղի Խընավար Մարզի ժողովրդական ղեպուտաների խորհուրդը 1988 թվականի փետրվարի 20-ի իր արտահերթ նստաշրջանում, ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել է Աղրբեկանական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Հայկական կան ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խորն ըմբռնման զգացում դրսեորել կեռնային Ղարաբաղի Հայ բնակչության իղձերին և լուսել լՂԻՄ-ը Աղրբեկանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցը միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ լՂԻՄ-Աղրբեկանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը:

լիության մասին նրանց պատասխանը ավելի շատ հիշեցնում է թռողիկ խուսափություն, քան խորհրդային սոցիալիստական հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինների իրավական ակտ։ Մասի որ հակառակ գեպօրում ազգերի ազատ ինքնորոշման, լինինյան սկզբունքի իրականացման ուղղված ակտի շնանաշումը ոչ մի կերպ չի համատեղվում խորհրդային սոցիալիստական հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինների կոչման հետ։

2. Հանային Ղարաբաղի Խնքնավար Մարզի ժողովրդական գեղաւատների խորհուրդը իր անհամաձայնությունն է հայտնում «Մարզը Աղբքաջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ին տալու վերաբերյալ ԷջիՄ ժողովրդական գեղաւատատների խորհրդի ժեղաստատների միջնարդության մասին» Աղբքաջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թվականի հունիսի 13-ի և Աղբքաջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 17-ի 7-րդ նստաշրջանի սրաշումներին և, հաշվի առնելով ստեղծված լրարված իրադրությունը, արտահայտելով Հանային Ղարաբաղի հայ բնակչության կամքը, ելնելով մեր միասնական միութենական բազմազգ պետության ազգային-պետական կառուցվածքի հիմքում ընկած ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին լինիյան սկզբունքի հետևողական իրականացման անհրաժեշտությունից, անհրաժեշտ է համարում մեկ անգամ ևս անմիջականորեն դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ խնդրելով ամենայն ուշադրությամբ քննարկել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի նստաշրջանի սրաշումը, որը համաձայնություն տվեց ԷջիՄ-ն ընդունել Հայկական ԽՍՀ կազմի մեջ և Աղբքաջանական ԽՍՀ-ի կազմից ԷջիՄ-ը Հայկական ԽՍՀ-ին տալու մասին» ժողովրդական գեղաւատատների մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի նստաշրջանի սրաշումը և դրականորեն լուծել հարցը:

Մարգում ստեղծված արտակարգ բարդ իրադրությունը կայունացնելու և աշխատանքային նորմալ սիթմը վերադարձնելու նպատակով խթնդրել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը մինչև Լեռնային Ղարաբաղի Հարցի վերջնական ու դրական լուծումը ժամանակավորապես, որպես արդի փուլում միակ բնողության տարրերակ, ամենակարճ ժամկետում ինքնազար մարզը հանել Ազգային հանձնական ԽՍՀ-ի կազմից և հանձնել ԽՍՀՄ կառավարության տնօրինությանը:

3. ԼՂԻՄ Ժողովրդական դեպուտատների խորհուրդը միջնորդում է ԽՍՀՄ Գիրազույն պատարանի առաջ, Հաշվի առնելով Ազգային և Սույն պայմանագրի բաղադրում անդի ունեցած իրադարձությունների քաղաքա-

4. Հավանություն տալ 19-րդ համարիութինական կուսացգառած գիմումի ֆերանսի հասցեով ներկա նստաշրջանի մասնակիցների դիմումի տեքստին:

5. ՀՂԻՄ ԺՊՂԱՎՐԴԱԿԱՆ ՊԵԱՊՈՒՏԱՎԱՍՏՆԵՐԻ ԽՈՐՃՈՒԾԻՔ ՀԱՐԴ և
ՊԱՎՈՐՆԵՐԻՆ կոչ է անում ամենուրեք՝ ձեռնարկությաններում, կազմա-
կերպություններում, կոլտնտեսություններում և սովորություններում վերա-
կանգնել նորմալ աշխատանքի որթը, մորիլիզացնել բոլոր շանքերը հա-
նուն ժողովրդական տնտեսության ճյուղերում գոյացած բացթողումների
վերացման, աշխատանքային նորմալացված որթմով դիմավորել 19-րդ
կուսկոնֆերանսը:

Ժաղավարական պետութաների ՀՀԿՄ խորհրդի գործկոմի նախագահ

ՀԱՅՈՒԹՅԱՆ Շ. Մ. ԳԵՏՐՈՒՄ

Գողովական գեղատառաների ԸՆՄ խորհրդի բարձկության

© 4. ылғасын

ՀԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ 24 Հունիսի 1985

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ 20-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 8-ՐԴ ՆՇԱՆՉՐՁԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԽՍՀ-Ի
ԿԱԶՄԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԼԻ ԽԵԹԱՎԱՐ ՄԱՐԶԻ
ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀՌԴԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

ԽՄԿԿ 27-րդ համագումարը հռչակել և հիմնավորել է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, խորհրդային դեմոկրատիայի հետագա անշեղ զարգացման և ծողովրդի սոցիալիստական ինքնակառավարման խորացման կուսակցության ստրատեգիական կուրսը. Դրանով իսկ դրվեց երկրի պետական և հասարակական կյանքի հեղափոխական վերակառուցման սկիզբը:

Վերակառուցման գարաջրչանի պրոբլեմները անհնարին է լուծել անձի պաշտամունքի և լճացման ժամանակաշրջանի հին մտածողության օնությամբ: Հեղափոխական վերակառուցումը իրեն համապատասխան հեղափոխական մտածողություն է պահանջում:

Ազգային հարաբերությունների ոլորտում մինչվերակառուցման շրջանի մտածողության արդյունքը հանդիսացավ ազգամիջյան հարաբերությունների իրական վիճակի խեղաթյուրված պատկերացումը, դրանց վարդագույն ներկումը: Ահա ինչու ԽՄԿԿ 27-րդ համագումարում, 19-րդ համամիտենական կոնֆերանսում ամենայն սրությամբ ընդգծվեց, որ մեր սվաճումները շեն կարող պատկերացում ստեղծել ազգային հարաբերությունների անպրոբլեմայնության մասին:

Խորհրդային մարդկանց շատ սերունդների շանքերի արդյունքը գարձավ հանրապետությունների եզակի միությունը: Նրա դրոշի վրա ԽՍՀՄ բոլոր ազգերի և ազգությունների աշխատավորության ինտերնացիոնալ միասնությունն է, ազգերի ինքնորոշման իրավունքը, ազգային կուլտուրաների վերածնունդն ու զարգացումը, նախկինում հետամնաց ազգային ռեգիոնների առաջադիմության, արագացումը, ազգամիջյան երկառակության հաղթահարումը:

Ինչպես արդարացիորեն նշված է ԽՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի բանաձեռւմ, խորհուրդների բազմազգ պետության ձևավորման նախնական փուլին հատուկ դինամիզմը էապես թուլացավ և խարխլվեց ազգային քաղաքականության լինինյան սկզբունքներից նահանջելու, անձի պաշտամունքի շրջանում օրինականության խախտումների, լճացման գաղափարախոսության և հոգերանության հետեանքով: Ազգային հարցի լուծման գործում ձեռք բերված նվաճումներին բացարձակ

բերվիթ էր տրվում, պատկերացումների էին ստեղծվում ազգային հարաբերությունների անպրոբլեմայնության մասին: Բավականաշափ հաշվի լին առնվում ինչպես առանձին հանրապետությունների և ինքնավար կազմավորումների, այնպես էլ ազգային խմբերի սոցիալ-տնտեսական, կովտուրական զարգացման պահանջները: Ազգերի ու ազգությունների զարգացման բուն ընթացքով առաջ քաշված ոչ քիչ սուլ հարցերը յուրամանակյա լուծում չէին ստանում: Դա հասցնում էր հասարակական անբարարվածության, որը երբեմն կոնֆլիկտային բնույթ էր ստանում:

ԽՄԿԿ-ն խնդիր է դնում ժամանակին ի հայտ բերել և լինինյան ազգային քաղաքականության սկզբունքների դիրքերից արդարացիորեն վճռել ազգամիջյան հարաբերությունների ոլորտում ծագող պրոբլեմները: Դա նշանակում է, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, վճռական և անհաշտ պայքար մղել ազգային անարդարության՝ մեր սոցիալիստական համերաշխության ամրապնդման ճանապարհի ամենախոշոր խոշընդունի դեմ:

Այս ոլորտում հասունացած խնդիրների շարքում հատուկ տեղ է գրավում Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը, որը ժագել է 1921 թվականի հունիսի 5-ին Ստալինի անմիջական մասնակցությամբ թույլ տրված ազգային անարդարությունից, երբ 94,6 տոկոս հայազգի բնիկ բնակչություն ունեցող Ղարաբաղը, առանց հաշվի առնելու ժողովրդի կամքը, մացցեց Աղրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ: Այդ պրոբլեմը սրվել և խորացվել է հետագա տասնամյակների ընթացքում, երբ Աղրբեջանի ղեկավարության կանխամտածված, պլանաշափ գործողությունների հետեանքով հանրապետության քաղաքներում և շրջաններում փակվում էին հայկական ուսումնական հաստատությունները, մշակույթի օջախները, ավերվում պատմական հուշարձանները, խեղաթյուրվում հայ ծողովրդի պատմությունը: Գոյատեման նպատակով հայերը հարկադրված թողնում էին իրենց նախնիների օջախը և ապաստան փնտրում Խորհրդային Միության տարբեր ուղղուններում:

Ազգային փոքրամասնության նկատմամբ նման քաղաքականությունը անհամատեղելի է լինինյան ազգային քաղաքականության սկզբունքների հետ: Այս աղավաղուները հսկայական վնաս են հասցրել մարզի հայազգի բնակչության, քաղաքական, բարոյական, սոցիալ-տնտեսական և հռվեր կյանքին:

Այս ամենը շարունակվում է նաև ներկայում, չնայած մեր մարզի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Մ. Ս. Գորբաչեանի կողմէ լուծում է ազգային պատմամիջյան շրջանում ազգամիջյան մասին:

շովի դիմումին և ԽՄԿԿ Կենտկոմի ու Մինիստրների խորհրդի ընդունառությանը:

Հեռային Պարաբաղի պրոբլեմը լուծել կարելի է միայն Ազրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ-ին միանալ միջնորդ։

Անելով շարադրվածից, ժողովրդական գեպուտատների և ռայականարարության համար Մարզի խորհուրդը սրբազնություն է.

1. Ζωγρής παπάς την περίοδο της επιτυχίας της στην αρχαία Αθήνα, ο οποίος ήταν ο πρώτος που διέταξε την κατασκευή της Ακρόπολης.

2. Հաշվի առնելով, որ վերջին ժամանակներս ինքնազար մարզությունը ժայրատիճան սրվել է, իսկ հանրապետական մարմինների գործադրությունը ավելի է ապահայումացնում իրավիճակը, ոչչափոր թյուն գարձնելով այն բանին, որ Աղրբեկանական ԽՍՀ-ի հետ կապեր գործնականում խզված են, ողողովրդական գեղութաների լՂԻՄ խորհրդը մարզի համար միակ ընդունելին համարում է կեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի նստաշրջանի որոշման իրավունքում:

3. Ժողովրդական գեպաւտատների լՂԻՄ խորհուրդը հույս է հայտնուա
սր Լեռնային Ղարաբաղի միացումը . Հայկական ԽԵՀ-ին ըմբռնուան
կընկալվի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու
թյան աշխատավորների և ժողովրդական կողմից:

4. Հանձնարարել ժողովդական գեպօւտաների Ենոնային Ղարաբաղ մարզային խորհրդի գործկոմին սահմանված կարգով միջնորդություն հարուցել Ենոնային Ղարաբաղի հնքնավար Մարզը Արցախի Հայկական հնքնավար Մարզի վերանվանվելու մասին:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԵՂԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՇԻԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴՐԻ ՄԱՐԳԱՆԿՐԵՐԻ ՎՐԵՄ ՀԱՄԱԳՈՎՐԾՎԱԾ

**Ժազովորական գեղաւուաների և ենային Ղարաբաղի մարզիորհետ
պործկոմի քարտուղար՝ Ռ. Վ. ԽԱԶԻՏՅԱՆ**

ՀԱՄԲ — «Խորհրդային Ղարաբաղ», 13 հունիսի 1988,
164

ԼՂԻՄ ԱԶԳԱԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՀԻԱԶՈՐ ԵԵՐԿԱՑԱՑՈՒԹՅՈՒՆԵՐԻ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

16 септември 1989

Լեռնային Ղարաբաղի ազգաքնակշության լիազոր ներկայացուցիչների համագումարը նշում է, որ խորհրդային ֆեղբացիայի հետագա զարգացման միջոցառումների հետևողական իրացումը, տեղական խորհուրդների իրական իրավունքների ընդլայնումը, իսկական ժողովրդապետության հաստատումը, հասարակական կյանքի գեմոկրատացումը կնապաստեն Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական ու սոցիալական հարցերի լուծմանը, ռեգիոնում կվերացնեն ազգամիջյան լարվածությունը:

ԽՍՀՄ Գերազույն խորհրդի 1989 թվականի օգոստոսի 1-ի որոշմասը
հանձնարարված է ամենուր՝ երկրամասերում և մարզերում անցկացնել
արտաշերթ նստաշրջաններ, քննարկել աեգիոնում իրավիճակը և հասարա-
կական-մասսայական շարժումների հետ համատեղ որոնել ու մշակել
գոյություն ունեցող դժվարությունները հաղթահարելու ուղիներն ու ձևերը

Ղեռային Ղարաբաղի բնակչությունը զրկված է այդ հարավորություններից, քանի որ անօրեն կերպով գագարեցված է ժողովուտաաների մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեությունը: Հատուկ կառավարման ձև մտցնելու մասին որաշումը անկենտունակ է գունըվել: ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեն՝ իրավական անորոշ կարգավիճակով, գրկվել է բնակչության վստահությունից և ի վիճակի շահագործության հարավահակը լՂԻՄ-ում ծայրահեղորեն բարդացել է սակայն իշխանության կենտրոնական մարմինների կողմից այն արժանի գնահատականի և պատշաճ վերաբերմունքի վի արժանանում: Ահա այս ամենից ենինով էլ, համագումարը, մինչև կառավարման որակապես նոր, սահմանադրական ձևի վերականգնումը, արձանագրում է Ազգային խրհրդի մարզային ինքնակառավարման ժողովրդական, ընտրովի մարմին ստեղծելու անհրաժեշտությունը:

Համագումարի պատգամավորները ափսոսանք են հայտնում, որ աղբքեցանական կողմը, հրաժարվելով համագումարին մասնակցելուց, չի օգտագործել փոխազարձ մերձեցման, երկխոսության, հասունացած հարցերը համատեղ, պառակենտական ուղիներով լուծելու իրական համարվորությունը: Այնուհանդերձ, համագումարը համոզված է, որ Ազգային խորհրդի ստեղծումը թույլ կտա մարզում կայունացնել իրավիճակը:

վերականգնել աշխատանքային ոփթմը, բարիդրացիական հարաբերություններ հաստատել ոեգիտնում ապրող բոլոր ազգությունների և ժողովուրդների ներկայացուցիչների միջև:

Հնդհանրացնելով տեղական խորհուրդների, կուսակցական, արհմիութենական, կոմիտական կազմակերպությունների անցած նստաշրջանների ու պլենումների, աշխատավորական կոլեկտիվների և հասարակական կազմակերպությունների ժողովների նյութերը, շարունակելով այն ամենը վճռականորեն հաղթահարելու ուղիները, ինչը սասանում է վերակառուցման հանդեպ մարդկանց հավատը, կեռնային Ղարաբաղի ազգարնակության լիազոր ներկայացուցիչների համագումարը, հենվելով ԽՍՀՄ սահմանադրության, համամիութենական 19-րդ կուսկոնֆերանսի և ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի՝ հասարակության հետագա դեմոկրատացման և ժողովրդապետության սկզբունքն ամրապնդելու հիմնադրությունների վրա, որոշում է:

1. Ենելով բնակչության կամքից, որ արտացոլված է ժողովրդական դեպուտատների շրջանային ու քաղաքային խորհուրդների, կուսակցության շրջանային ու քաղաքային կոմիտեների, արհմիութենական, կովերտական և հասարակական կազմակերպությունների շրջադաշտում պահպանային կայունացնելու գյուղական լիազորների ժողովների որոշումներում, մինչև ժողովրդական դեպուտատների մարզխորհուրդի և կուսակցության մարզի գործունեության վերականգնումը, համագումարն ընտրում է Ազգային խորհուրդ և ժողովրդի անունից նրան օժտում համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում մարզի կյանքի բոլոր ոլորտների ղեկավարման լիազորություններով:

Ազգային խորհուրդը ժողովրդական ինքնակառավարման դեմոկրատական մարմին է՝ ծնված վերակառուցմամբ ու ժողովրդական զանգվածների ստեղծագործությամբ, կոչված է «ԽՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին» քաղաքական հիմնակազմային սկզբունքը գործականում հանդիցնել իրական բովանդակության:

2. Ազգային խորհուրդը ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար իր կազմից ընտրում է նախագահություն: Ազգային խորհրդի և նրա նախագահության առաջնահերթ նպատակը իրավիճակի կայունացումն է, ազգամիջյան ընդհարումների կասեցումը, վերակառուցման ընթացքին ակտիվ աջակցումը, հրապարակախության դեմոկրատիայի համակողմանի զարգացումը, կեռնային Ղարաբաղի հարցի լուծումը:

Ազգային խորհուրդն ու նրա նախագահությունը կոմունիստների և

անկուսակցականների ժողովրդական միաձույլ մարմինն են, Ճանաչելով ԽՍՀԿ ծրագիրն ու կանոնադրությունը և գործելով խորհրդային օրենքների շրջանակներում, իր գիծը հանուն ժողովրդի շահերի անց է կացնում ժողովրդական գեպուտատների տեղական խորհուրդների, կուսակցական կոմիտեների, արհմիության, կոմերիտմիության, աշխատավորական կազմակերպությունների միջոցով: Ազգային խորհրդի և նրա նախագահության ժառայական պարտականություններն ու իրավասությունը որոշված են ներկա համագումարի կողմից հաստատված կարգայնությամբ:

3. Համագումարը հայտարում է ԼՂԻՄ-ը հետևողականորեն Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորվելուն հասնելու իր վճռականության մասին:

4. Համագումարը խստագույն կերպով մերժում է մարզի ներքին գործերին Աղբբեզանի կառավարության կողմից միջամտություն ցույց տալու յուրաքանչյուրի փորձ և ինքնավար մարզի հանդեպ անընդունելի է համարում թելադրանքի քաղաքականությունը:

5. Համագումարի պատգամավորները ողջունում են ժողովրդական դեպուտատների Շահումյանի (գյուղական) շրջանարդի նստաշրջանի՝ շրջանը ԼՂԻՄ-ի հետ վերամիավորելու մասին որշումը, և հավաստում են այդ հարցի լուծմանը աշակեցնելու պատրաստակամությունը:

6. Համագումարը մարզի բնակչությանը կոչ է անում գաղաքացնել գործադրությունները և Ազգային խորհրդին պարտավորեցնում է անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել մարզի ամրող տարածքում աշխատանքային նորմալ ոփթմը վերականգնելու համար:

7. Համագումարը հանձնարարում է Ազգային խորհրդին՝ առաջադրված խնդիրների իրականացման համար մշակել համապատասխան ծրագիր:

8. Որպես պետական իշխանության խորհրդանիշ, մարզի տարածքում ընդունել ԽՍՀՄ պետական դրոշը:

ՀԽՄՔ – Անձային Ղարաբաղի Խենավար՝ Մարզի ազգայինակալության լիազոր ներկայացնեցիների համագումարի նյութերը, Ստեփանեակերտ, 1989, էջ 24–36:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՑՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԼԵՇՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ**
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-Ի ԵՎ ԼԵՇՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱՄՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1 գետնամբերի 1989, Երևան

Հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արժագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը որոշում է այս գործությունը:

1. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Խնքանակար Մարզի ինքնորոշման փաստը՝ հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի և հունվարի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարը և նրա ընտրած Ազգային խորհուրդը՝ որպես միակ օրինական իշխանություն:

3. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հոչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը: Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա տարածվում են Հայկական ԽՍՀ քաղաքացիության իրավունքները:

4. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ստեղծում են համատեղ հանձնաժողով (իր աշխատանքային ապարատով): Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումն իրավորելու ուղղությամբ գործնական քայլեր մշակում համար:

5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը:

6. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին և ԼՂԻՄ Ազգային խորհրդի նախագահությանը հանձնարարվում է գործադրել ուղյան որոշումից բխող բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ իրականացնելու համար Հայկական ԽՍՀ-ի

և Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքների իրական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության
նախագահը՝ Հ. ՌՍԿԱՆՑԱՐ

Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄՔ՝ «Խորհրդային Հայտատան», 8 գետնամբերի 1989.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՑՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ԹԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ 1921 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 5-Ի ՈՐՈՇՈՒՄԸ ԱԽԹԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 գետրվարի 1990 թ., Երևան

Ելնելով նրանից, որ Լեռնային Ղարաբաղը՝ Արցախը, Հայաստանի անբաժան մասն է և երբեք չի պատկանել Ազգերեշանին, որ 1918—1921 թթ. Լեռնային Ղարաբաղը եղել է անկախ և ունեցել է իր պետականությունը՝ հանձին երկարամասի ժողովրդական կառավարության և հայոց Ազգային խորհրդի:

Ելնելով այս հանգամանքից, որ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը որպէս պաշտոնական և իրավասություն շռնեցող կուսակցական մարմնի՝ ԹԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունվարի 5-ի կամայական որոշմամբ, որը կայացվել է ոսկից պետության ազգային-պետական շինարարությանը մասնակցելու իրավունք շռնեցող սուբյեկտի կողմից և, հետեւաբար, դրսերպվել է որպես խորհրդային մեկ ազլ սուբյեկտների հանրապետության ներքին գործերին միջամտելու կոպիտ ակտ, որի հետևանքով ոտնահարգվել են ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքները, հաշվի չի առնվել երկրամասի 95 տակոս կազմող հայ բնակչության, ինչպես նաև Խորհրդային Հայտատանի բնակչության կամքը,

Ենվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի, ինչպես նաև ԹԿ(բ)Կ Կենտկոմի քաղյուրոյի 1820 թ. հունվարի 9-ի՝ Վ. Ի. Լենինի նախագահությամբ անցկացված նիստի որոշման վրա, որով Լեռնային Ղարա-

բաղի ճակատագիրը պետք է որոշվեր բնակչության էթնիկական կազմով և նրա կամքով, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 1921 թ. հունիսի 12-ի դեկրետի վրա, որը, կննելով Ադրբեյջանի Հեղկոմի դեկրատիվիայից և Հայաստանի ու Ադրբեյջանի սոցիալիստական Հանրապետությունների կառավարությունների միջև կայացած համաձայնությունից, կեռային Ղարաբաղը հոչակել է Հայաստանի Խորհրդային Հանրապետության անդաման մաս,

նշելով, որ կեռնային Ղարաբաղի հայ բնակչության պատ ինքնորոշ ման իրավունք ճանաչվել է նաև Ազգային հայության համար հայության համար 30-ի սրում ամբ Կոմիտասին 1. է - է.

Հաստատակամորեն հանդես գալով ազգերի ինքնորոշման իրավունքը սկզբունքների պաշտպանությամբ, որն ամրապնդված է ԽՍՀՄ կազմակորման պայմանագրով և ԽՍՀՄ սահմանադրությամբ՝ որպես բազմազանության պետության մեջ ազգամիջյան հարաբերությունների հիմք:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների հիմք,
պույն խորհուրդը որոշում է.

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուռոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը, որի հետևանքով խախտվել է Լեռնային Ղարաբաղի Հայության ինքնորոշման իրավունքը, անեքսիայի է ենթարկվել Հայկական ԽՍՀ տարածքի մի մասը և հայ ժողովուրդը բաժանվել է երկու հատվածի, համարել իրավասովոյունից զուրկ, միջազգային իրավունքի անհարիր և անօրինական:

Հայկական ԽՍՀ Քերապուլյան խորհրդի նախագահության
նախառանչ Հ. ՈՒԿՈՎԱՆԻ.

Հայկական ԽՍՀ Քերպույն խորհրդի նախագահության
քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅՐ - ԺԱՐՔՎԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ, 17 մինչև սկզբ 1890

№ 22

ԱՐԱՏԱՐՄԸ

Անհային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման հոչակագրի
ընդունման և երա պետական իշխանության ու կառավարման
ժամանակավոր մարմինների կազմավորման մասին
• Թուրք մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ ժողովրդական պատգամավորների կեռնային Ղարաբաղի մարզային և Եահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան արտահայտելով ժողովրդի կամքը, որը վավերացված է փաստորեն անկացված հանրաքեռում և ՂԻՄ-ի ու Եահումյանի շրջանի իշխանության մարմինների 1988—1991 թթ. որոշումներում, երա ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության ձգտում զեկավարվելով քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային լորտոների զարգացման հարցում ամրող բնակչության շահերով, հայ ժողովրդի միասնության ձգտումը համարելով ընական և օրինական, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան ուղղեց:

1. Հոչակագիրը ընդունել ներկայիս կեռային Ղարաբաղի հիքնավար Մարզի և գրան կից Շահումյանի շրջանի սահմաններում կեռային Ղարաբաղի Հանրապետություն (ՀՀ) հոչակելու մասին:

2. ՂԴԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդը՝ և նրա գործադիր կոմիտեն կեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության և կառավարման ժամանակավոր բարձրագույն մարմին Համարել մինչև Համաժողովրդական ընտրությունների անցկացումը և իշխանության ու կառավարման նոր Հանրապետական մարմինների կազմավորումը:

3. ՚Նողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործկոմին հանձնարարել՝ լայն համարակայնության ներգրավմամբ նախապատրաստել և մարզային խորհրդի քննարկմանը ներկայացնել ԼՂՀ պետական իշխանության կառավարման մարմինների կառուցվածքի ու պարտականությունների մասին կանոնադրություն:

4. Հեռային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մինչև 1/2 սահմանադրության և օրենքների ընդունումը գործում են ԽՍՀՄ սահմա-

նադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև ներկայումն գործող մյուս օրենքները, որոնք չեն հակառակ սույն հոչակարգի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին:

ՀՌ ԶԱԿԱԳԻՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ՝

արտահայտելով ժողովրդի կամքը, որը վավերացված է փաստորեն անցկացված հանրաբեկում և ԼՂԻՄ-ի ու Շահումյանի շրջանի իշխանության մարմինների 1988—1991 թթ. որոշումներում, նրա ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության ձգտումը,

արձանագրելով Աղրբեջանի Հանրապետության կողմից «1918—1920, թթ. պետական անկախության վերականգնման» հոչակումը,

հաշվի առնելով, որ Աղրբեջանում վարվող ապարտեհակի և խորականության քաղաքականությունը հանրապետությունում ստեղծել է հայ ժողովրդի հանդեպ ատելության և անհանդուրֆողականության մինուլութ, որը հանգեցրել է զինված ընդհարումների, մարդկային զոհերի, խաղաղ հայկական գյուղերի բնակիչների գանգվածային տեղահանության,

հիմնվելով ԽՍՀ Միության գործող օրենսդրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և համահավաք ապրող ազգային խմբերին իրավունք են տալիս ինքնուրույնարար լուծելու իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության գույք գալու դեպքում,

նշելով, որ Շահումյանի շրջանի տարածքը նույնպես բռնությամբ անշատվել է Լեռնային Ղարաբաղից և հայ ժողովրդի վերամիավորման ձգտումը համարելով բնական և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան,

ձգտելով հայ և աղրբեջանական ժողովուրդներին բարիդրացիական հարաբերությունները վերականգնել միմյանց իրավունքների փոխադարձ հարգման հիման վրա,

նկատի ունենալով երկրի իրադրության բարդությունն ու հակասակա-

նությունը, ապագա Միության, իշխանության ու կառավարման միութենական կառուցվածքների ճակատագրի անորոշությունը,

Հարգելով և հետևելով մարդու իրավունքների համընդհանուր հոչակարգի և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների միջազգային պահպանի, քաղաքացիական, քաղաքական ու մշակութային իրավունքների միջազգային պահպանի սկզբունքներին և հույս ունենալով միջազգային հանրության ըմբռնմանն ու աշակցությանը,

ՀՌ ԶԱԿՈՒՄ ԵՆ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ներկայիս Լեռնային Ղարաբաղի Խնքնավար Մարզի և գրանց կից Շահումյանի շրջանի սահմաններում (Համառոտ ՂՀ):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը օգտվում է ԽՍՀՄ սահմանադրությամբ և օրենսդրությամբ հանրապետություններին արված լիազորություններից և իրեն իրավունք է վերապահում ինքնուրույնարար որոշելու իր պետական-իրավական կարգավիճակը՝ երկրի և հանրապետությունների ղեկավարության հետ քաղաքական կոնսուլտացիաների ու բանակցությունների հիման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մինչև ՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը գործում են ԽՍՀՄ սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև՝ ներկայումս գործող մյուս օրենքները, որոնք չեն հակառակ սույն հոչակարգի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին:

ԲՈԼՈՐ ՄԱԿԱՐԴԱԿԱՆԵՐԻ ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎԱՐՈՒՅՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄՄՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎԱՐՈՒՅՆԵՐԻ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ

ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱՏԱՐՁԱՆ

ՀԿՄԸ — «Հայտառակի Հանրապետություն», 8 սեպտեմբերի 1991:

ՀՐԱՏԱՎՈՒՅԹ ԱՐՄԱՆԱԿԱՆ

ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՄԱՐԴԻ

ГРАНТ БАРСЕГОВИЧ АБРАМЯН
АРЦАХ: БОРЬБА ЗА ВЫЖИВАНИЕ
(На армянском языке)
Ереван «Гителик» 1991

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1917—1928 թթ. արցախյան իրավաբությաններից	3
Գոյապայքարը շարունակվում է	66
Մտարումներ՝ վերշարանի փոխարեն	84
Հավելված	91

Խմբագիր՝ Ա. Հ. Աղյան
Նկարիչ՝ Տ. Մ. Սասոյան
Տեխն. խմբագիր՝ Լ. Մ. Քաջայան
Վերառուցող սրբագրիչ՝ Մ. Մ. Արշակյան

Հանձնված է շարվածքի 20. 11. 91 թ.: Ստորագրված է տպագրության 20. 02. 92 թ.
Ֆորմա՝ 60×841/₁₆: Թույլ տպագրական Խ 2: Տառափեսակ՝ «Գրքի սովորական»:
Տպագրություն՝ բարձր, 10,23 պայմանական տպագր. մամ., 11,36 հրատ. մամ.: Տպա-
րանակ՝ 10,000: Պատվիր՝ 944: Գինը՝ 6 կ.:

«Գրտեկիր» հրատարակություն, Երևան-10, Արևիյան 8:

ՀՀ նախարարելու խորհրդին առընթեր «Գարեգին Արքա» հրատարակություն, Երևան-
23, Արշակունյաց 2: